Մանուկ Մնացականյան



È à ô ê ² ì à ð â Æ
Î ² Ü Â º Ô À

[պատմվածքների ժողովածու]

ԵՐԲ ՉԱՓԱՆԻՇԸ ԶՈՀԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆ Է

Նվիրումների գիրք է սա, իսկ նվիրումի յուրաքանչյուր գրական ստեղծագործություն եթե ոչ գեղագիտական չափանիշի փոփոխություն, եթե ոչ իջեցված չափանիշ, ապա գոնե ինչ-ինչ վերապահություն, թեկուզև բարձր, բայց չափանիշի վերապահված կիրառում է ենթադրում: Հղացում կոչվածը գրական այս ստեղծագործություններում փոխարինվում է կյանքից վերցված ավարտուն մի պատմությամբ (դեպքերի որոշակի շարադասություն, որոշակի ասելիք ու ենթատեքստ), ուր գեղագիտական նյութն այլևս չի թելադրում իրեն հատուկ հանգուցալուծումներն ու իր տրամաբանական ավարտը: Պատումի ընթացքն ու ավարտն անվերաձևելի իրողության տեսքով ֆիքսված են որպես գրողական առաջադրանք, և հեղինակի ճիգն այս դեպքում հետամուտ է ոչ թե նյութի պատմության, այլ պատմության նյութի ստեղծմանը: Եվ եթե միակողմանի չէ ճշմարիտ գրականության արարման դասական այս պատկերացումը, նվիրումի հեղինակները, ուրեմն, հակառակ ծայրից են սկսում իրենց գործը:

Թվում է այդ այդպես է, և ցանկության դեպքում այս ընդհանուր օրինաչափության հունը իր մեջ կարող է առնել նաև Մանուկ Մնացականյանի ժողովածուն: Բայց բանն այն է, որ գրգիռի նույն ակունքից են սկիզբ առել և նույն առանցքի շուրջն են պտտվում Մնացականյանի բոլոր նվիրումները (նաև այն գործերը, որոնց առնչությունը ընդհանուր թեմայի հետ անմիջական չէ)՝ արցախյան պայքարի այն ամբողջ հերոսականն ու ողբերգականը, որ ոչ մի կերպ չեն կարող ընկալվել, որպես հեղինակից ժամանակով ու տարածությամբ բաժանված պատմական սյուժեներ: Դրանք՝ «երկրորդ բերան» պատմվող այդ պատմությունները, հեղինակի ապրած օրվա մեջ, հեղինակի զգայական աշխարհում շարունակ հոլովվում են, թող որ ուրիշ մի օր և ուրիշների մասնակցությամբ հյուսված, բայց համանման պատմությունների մեջ ինքը եղել-ապրել է, դրանք նաև սեփական կենսագրության միջով անցնող Մնացականյան անհատի փորձառություններն են: Ասել է թե՝ «նվիրումների դիրքն» ամբողջությամբ իր՝ ականատեսի պատմություններն են, պահպանում են հղացման կենդանի թրթիռն ու կենսական նյութի անհատական ընկալումը, որ այս դեպքում վերաբերում է պատերազմի հայկական կողմի ազգային-բարոյական նկարագրին:

Իսկ այդ նկարագիրը «նվիրումների գիրքը» ներկայացնում է մոտավորապես այսպես.

Հողի, գոյության իրավունքի համար մղվող յուրաքանչյուր մարտ հերոսամարտ է, բայց այս մեկը, այս արցախյանը, այնուամենայնիվ, եզակի է: Այստեղ, Արցախում ուրիշ է հերոսության չափանիշը, ուրիշ են բարոյականության սահմանները, այլ է այստեղ հողի, երկնքի ու մարդու կապը: Այս հողի համար կռվողների մեջ դասալիքներ չկան, վախկոտներ, մատնիչներ, դավաճաններ չկան, չկա այն, առանց որի բարոյազանցություն-արյուն-ավեր նողկալի պատերազմը վերածվում է լեգենդի: Այստեղ քսան տարեկաններ կան, որ հինգ-վեց տարվա կռվի փորձ ունեն: Եվ, իհարկե, ավելորդ է ամբիոնի առաջ թափահարվելով կամ ականջին

մտերմիկ փսփսալով կռվողի մեջ ներարկել գիտակցությունն այն բանի, թե քո հողի ու քո օջախի համար է այս կռիվը: Դրա իմաստը չկա՝ հրեն իրենց տունն ու այգին խրամատից հարյուր մետրի վրա են: Եվ ոչ էլ տեղն է հերոսությունից խոսելու: Իսկ եթե, այնուամենայնիվ, տարբերանշան-խաչ է պետք որով պիտի առանձնացնես ու պատվես հերոսին, ուրեմն պապ ու տատի, հոր, մոր ու որդու, կռվողի ու եփող-թափողի՝ բոլորի վզից պիտի կախ տաս այդ խաչը: Այս է իրողությունը կամ գոնե իրողություն է արցախյան-ազատագրական պատերազմի այս ընկալումը: Եվ եթե այս ընկալումն արտացոլող Մ. Մնացականյանի պատմվածքը կամ՝ ակնարկը արցունք քամող հերոսական-սենտիմենտալ է, այդ է՝ արցունքը մերն է, և սենտիմենտալը մենք ենք: Դա մեր հոգեվիճակն է, որ ոչ թե պիտի որակավորվի կամ գնահատվի, այլ բացահայտվի: Իսկ եթե, այնուամենայնիվ, պատերազմը միադեմ չէ և ունի իր նողկալի դեմքը, դա էլ ուրիշ իրողություն է և գրողական ուրիշ առաջադրանք: Այդ ուրիշը գեղարվեստորեն իրացնողն էլ կգտնվի մեջ մեջ, և նրա ընթերցողն էլ կլինենք մենք:

Ակնարկում Մ. Մնացականյանը պատմական էքսկուրսներ չի անում, իր բախտագուշակությունը չի առաջարկում աշխարհի փակ դռների առաջ իրենց զենքին ապավինած արցախցիներին, չի փիլիսոփայում, գրողի կեցվածք չի բռնում: Անշպար ինքն է, որ ջանում է ակնարկի՝ հնարավորին չափ ապագեղարվեստականացված մթնոլորտում անաղարտ ներկայացնել իր բարձր, առաքինի, իր հեզ ու անկոտրում հերոսներին: Խոսում է, պատմում է, հուզվում է՝ ասես սրբի դուռ է եկել: Պատերազմական Արցախը դաժան իրողություն է, և ինքը թփրտում է տաք գրգիռների մեջ:

Պատմվածքում ինքը չկա: Պատումը անշտապ գծում է իր ճամփան, մանրամասներն ու պատկերները ճշգրիտ են ու անպաճույճ, շարադրանքը չի սեթևեթում, իսկ երկխոսությունները պահպանում են ականջով ստուգված բանավոր խոսքի կենդանի հնչերանգը: Արձակագրի վարպետությունն ապահովում է իր հանգուցալուծմանը գնացող խոսքի անկաշկանդ հոսքը:

«Լուսավորչի կանթեղը» պատմվածքում մինուճար նկարիչ որդին ծնողներին խղճալով խաբում է, թե ինստիտուտից էտյուդի են ուղարկում Շուշի, գնում է կռվելու: Նկարչի ուր լինելուն տեղյակ լրագրող հայրը կնոջը խղճալով, խաբում է, թե գործուղման է մեկնում Ղափան, ուղևորվում է Արցախ՝ որդուն գտնելու: Նկարչի մայրը ամուսնուն խղճալով, խաբում է ու անտեղյակ ձևանում՝ ուտելիքի պաշար կապելով որդու համար... Վտանգված, փորձության, մեջ հայտնված հայրենիքը փորձության է ենթարկում անհատներին՝ շրջանցելով սեռ ու տարիք, սոցիալական ծագում ու դաստիարակություն: Հայրենասիրությունն այլևս պայմանականություն չի ընդունում, բարոյականության միակ չափանիշն այլևս կյանքի զոհաբերությունն է: Եվ բարոյական նկարագիրն այս ընտանիքի անդամների այնքան անխառն-միասնական է, որ ասես մի մոր զավակներ ու մի մոր փեշի տակ մեծացած լինեն... Իսկ երբ հայրը գտնում է որդուն, վերջինիս թախանձանքով խաբում է հրամանատարին, թե ինքը նկարչի հոր ընկերն է, հրամանատարն էլ խաբելով միամիտ է ձևանում, թե հավատում է լրագրողի խոսքերին... Բարոյականության շղթան ձգվում է, արյունակցությունը իրար է կապում նույն հայրենիքի

զավակներին, և հավատավորների այս երթը բացում է սեփական ժողովրդի հարատևության գաղտնիքը:

Մ. Մնացականյանի այս ժողովածուն կենսական նյութի, ասելիքի և տրամադրության մի ամբողջական արտահայտություն է, իր տեսակի մեջ եզակի, եթե նկատի ունենանք շարունակվող պատերազմն ու մեր արձակի դժվար արձագանքն այդ՝ դեռևս խմորվող կենսական նյութին: Գուցե նյութը սառչեր, հայացքի համար տարածություն բացվեր, և արձակագիրը նոր խոսք ու երանգ հաղորդեր իր պատումներին: Գուցե, բայց այդ դեպքում էլ չէր լինի այն տաք անմիջականությունը, որ այս գրքի հմայքն է, արյունաքամվող հայրենիքի ցավից ծնված այն բարձր ու սարսուռ զգացմունքների դողէրոցքը, որ գրքի էջերից փոխանցվում է ընթերցողին:

Այսքանը, բայց խոսքի ավարտը սա չի լինելու: Ասացվածքը վկայում է, թե անգլիացին տանուլ է տալիս իր բոլոր ճակատամարտերը, վերջինից բացի: Ասել կուզի՝ վերջնական ավարի տերն է, տնօրինում է իր ճակատագիրը: Մերը ուրիշ է, մեր պատմությունը պարտությունների շղթա է, մեր հերոսներր պարտված բանակի քաջեր են: Եվ ասացվածքը հայերիս համար հակառակն էր պնդելու, հայը հաղթում է իր բոլոր ճակատամարտերը, վերջինից բացի: Դարձյա՞լ նույնն է կրկնվելու, հին ջուրն է ու հին ջրաղա՞ցը...

Հայաստանցին հուսով է, իսկ ղարաբաղցին համոզված, որ բախտի անիվը շրջվել է, որ գոնե այս անգամ նույնը չի կրկնվի,

ՖԵԼԻՔՍ ՄԵԼՈՅԱՆ

ԱՐՄԱՏ

Սումգայիթի զոհերի հիշատակին

Ազնվատոհմ խնձորենու շիվը պատվաստված էր վայրի արմատից քիչ վեր, ու քանի դեռ պատվաստի տեղը հողի հետ չէր շփվում՝ շիվն աճում, մեծանում էր ազնվական ծառի բոլոր կանոններով: Բայց, ահա, քամին հող բերեց, կուտակեց ծառաբնի շուրջը, պատվաստի տեղը թաղվեց հողի մեջ, ու վայրենությունն իսկույն խլրտաց արմատի հիշողության մեջ. նա վայրի շիվեր արձակեց և այդ շիվերին տալով իր ողջ կենսահյութը՝ նրանց տասնապատիկ արագ աճեցրեց: Եվ խեղդվեց, չորացավ ազնվատոհմ շիվը…

***

Բանաստեղծը՝ յոթանասունին մոտ, թոշնած այտերով, բայց դեռ տռուզ մի տղամարդ, սիրում էր առավոտյան վաղ արթնանալ, խոզանակով մաքրել ատամները, բերանից վանել ծխախոտի գարշահոտությունը, լվացվել ու առաջին սիգարետը վառելով, նստել գրասեղանի մոտ: Սուրճը՝ հետո: Սուրճը՝ երբ կինը կարթնանա, հուշիկ քայլերով, որպեսզի ամուսնուն չխանգարի, ննջարանից խոհանոց կգնա և քիչ անց մազերն ուսերին սփռած, ժպիտն երեսին, գոլորշի արձակող բաժակը ձեռքին զգույշ կբացի աշխատասենյակի դուռը.

– Սալամ, մոալիմ…

«Մոալիմ», այսինքն՝ ուսուցիչ, այսինքն՝ վարպետ էր անվանում կինը ամուսնուն, որովհետև բանաստե՞ղծ էր, թե՞ որ իրենից տարիքով բավականին մեծ էր և ավելի շուտ իրեն հայր կսազեր, թե՞ զգում էր՝ դա բանաստեղծին դուր էր գալիս… Իսկ գուցե, այդ բոլորը միասին առկա էին և ամփոփվում էին մի բառի մեջ՝ «մոալիմ»… Խալաթի տակից ընդգծվող կոնքերը մեղմիկ ճոճելով նա մոտենում, սեղանին էր դնում սուրճի բաժակը: Բանաստեղծը ճակատը ձեռքի ափից չէր կտրում, հայացքը դիմացի գրոտած թղթին՝ նա դանդաղ պարզում էր մյուս ձեռքն ու անսպասելի կսմթում կնոջ հետույքը:

- Էլի սկսեցի՞ր,– քիչ կոտրատվելով հետ էր մղվում կինը, - այ թե չարաճճին ես, հա~… - Այդ հետ քաշվելու պահը և այդ «չարաճճին» էր բանաստեղծին ամենից շատ դուր գալիս:

- Վարդս…, - շշնջում էր բանաստեղծը:

Հիմա այս ոչ մեծ քաղաքում, ուր եկել էր իր հիվանդ մորն այցելության, նա էլի առավոտյան վաղ էր արթնացել, լվացվել և այլևս իր անելիքը չիմանալով՝ իրեն մի տեսակ օտար էր զգում: Ճիշտ է՝ մոր տունն իր փուլերով էին կառուցել, իր խորհրդով էին ոչ մեծ այգու ծառերն ընտրվել, և ծառերի բերքից մայրաքաղաքի իր բնակարանն անմասն չէր մնում, բայց միևնույն է՝ իր տան տաք մթնոլորտը չկար, որի ներկայությունն արդեն բավական էր, որպեսզի մուսաները թրթռային նրա ուղեղում: Փոխարենը՝ ճաշասենյակի կահույքին շարված պլաստմասսայից

կաղապարված սառը, անհաղորդ արձանիկներն էին, որ հիմա արհեստական լույսի տակ ավելի արհեստական էին թվում:

- Ինչ տեսնում՝ բերում, տնկում է տանը,– փնթփնթաց բանաստեղծը և ձեռքերը մեջքին դնելով՝ գլուխը կախ, աննպատակ պտտվեց ճաշասենյակում: Դրսում դեռ մութ էր: Չնայած մոտալուտ գարունն իրեն արդեն զգացնել էր տալիս, բայց առավոտյան ծովի կողմերից փչող քամին դեռ սառնաշունչ էր, և նրա հպումից զնգզնգացող լուսամուտի ապակու ձայնը՝ մրսեցնող: Բանաստեղծը դող զգաց, մոտեցավ, շոշափեց ջեռուցման խողովակները, որ քաղաքի իշխանություններն իր պատվին էին մոտակա բնակելի շենքի կաթսայատնից անցկացրել: Խողովակը սառն էր:

- Էհ, - գլուխն օրորեց բանաստեղծը, - երկիրը երկիր չէ:

Նա խոհանոց գնաց, վառեց գազօջախը, ձեռքերը պարզեց բոցին, զգաց, թե ինչպես է տաքությունը ներծծվում մարմնի մեջ, և դրանից մարմինը հաճելի փշաքաղվեց: Նա վայելեց երանության այդ պահը, ապա ափերն իրար շփեց և նստելով խոհանոցի սեղանի մոտ՝ ծխեց: Լավ կլիներ, եթե բանաստեղծին սուրճ մատուցեին: Բայց մայրը դեռ քնած էր. նա երեկոյան երկու քնաբեր հաբ խմեց:

- Ախ, էս պառավները, - հիշելով՝ ինքն իր հետ խոսեց բանաստեղծը:– Ղեղի համար խելքն իրենցը չի:

Կինն էր բանաստեղծին ուղարկել մորն այցելության:

- Զարմանում եմ,– ասել էր,– ես որ մորդ չզանգահարեմ՝ դու նրան կհիշե՞ս...

- Ես ու դու մի մարդ ենք,– ասել էր բանաստեղծը:

- Գնա մորդ տեսության,– ասել էր կինը, - հիվանդ է:

- Ի՞նչ է եղել...

- Մեջքն է բռնվել:

- Մահանա,– քթի տակ ժպտացել էր բանաստեղծը, - ինձ է ուզում տեսնել:

- Դա քի՞չ է,– ասել էր կինը:

- Իսկ էն աղջի՞կն ուր է...

«Էն աղջիկը» բանաստեղծի՝ մորից հարազատ, հորից խորթ եղբոր աղջիկն էր, որ տատի հետ էր ապրում: Բանաստեղծը նրան չէր սիրում՝ շատ էր ինքնուրույն և իրասածի, բայց հանդուրժում էր, որովհետև մոր կողքին գտնվող միակ կենդանի շունչն էր:

– Էն աղջիկը,– ասել էր կինը,– գնացել է Մոսկվա՝ բան-ման առնելու: Միայն թե՝ շատ է հետաքրքիր՝ ո՞ւմ փողերով է առնում՝ հարբեցող հո՞ր...

Բանաստեղծը հասկանում էր, որ կինն իր փողերն է ակնարկում: Նա մորն անփող չէր թողնում: Եվ որպեսզի տհաճ խոսակցությունը չշարունակվի՝ գրկել էր կնոջ մեջքն ու ասել,

- Միասին գնանք, վարդս, մի օրով:

- Բա ուսանողնե՞րս...

«Այդ ուսանողների պատճառով բանաստեղծը երբեմն խանդի վայրկենական բռնկում էր ունենում: Կինը հետ մնացողներին տուն էր կանչում և ամեն մեկի հետ առանձին էր պարապում.

- Վո՞ թիզ յու նեյմ…

- Մայ նեյմ իզ Յավար:
- Հաո՞ւ դու յու դու...

- Թենք յու վերի մաչ:

- Իհարկե,– ուսանողի գնալուց հետո աաում էր բանաստեղծը,– որ քո նման վարդը ինձ էլ տուն կանչի, սուրճ ու կոնյակ հյուրասիրելով հետս պարապի՝ ես էլ հետ կմնամ ու թենքյու վերի մաչից էն կողմ չեմ գնա:

- Մոալիմ... , – ամոթխած ժպիտով ասում էր կինը:

Եվ հաջորդ պահին բանաստեղծն իրեն, իր մաստակն ու հեղինակությունը մտովի համեմատելով իր ներկայության ժամանակ աչքերը միշտ հատակին հառած այդ փսլնքոտի հետ, խաղաղվում էր և ասում.

- Պարապիր, բարի գործ ես անում:

Կինը հպվում էր ամուսնուն, այտը սեղմում այտին.

- Բարությունը չի մոռացվում…, - նրա գոլ շշուկից բանաստեղծի ականջը տաքանում էր ու հաճելի սարսուռը տարածվում մարմնով մեկ:

Դրսից ավտոմեքենայի հռնդյուն լսվեց, մարդկանց ձայներ լսվեցին: Բանաստեղծը կտրվեց մտքերից: Մոտիկում մի շուն սկսեց կատաղի հաչել:

- Մաքսուդի շունն էր,– ասաց բանաստեղծը և հիշեց երեկոյան թեյի սեղանի շուրջ բացված խոսակցությունը. այգու պատով կից հարևան Մաքսուդն էր եկել ու պատմում էր.

- Հրապարակում ինչքան ժողովո~ւրդ, ինչքա~ն... Ես ասեմ՝ տասը հազար, դու քսանն ասա:

Մաքսուդը ջրում էր Զեյնաբ խանումի այգու ծառերը, փորում, կանաչի էր ցանում ստվերից ազատ մասերում, շուկա գնալիս կատարում նրա հանձնարարությունները, և դրա համար էլ բանաստեղծը հանդուրժում էր Մաքսուդին:

- Ի՞նչ էին ուզում, Մաքսուդ,– հարցրեց Զեյնաբ խանումը:

- Հայերից էին խոսում, հայերից...

- Ինչո՞ւ պիտի չխոսեն,– անսպասելի բռնկվեց բանաստեղծը:– Կանգնել Ղարաբաղն են ուզում:

- Ո՞նց են ուզում,– չհասկացավ մայրը:

- Ասում են՝ հերիք է ինչքան ձերը եղավ, հիմա էլ Ղարաբաղը մերը պիտի լինի:

- Իրենց ասելով հո չի՞,– ուսերը վեր քաշեց Զեյնաբ խանումը:

- Պատկերացնո՞ւմ ես,– մորը դիմեց բանաստեղծը:

- Էդ ան հավատները չխրատվեցի՞ն,– օրորվեց Զեյնաբ խանումը: - Թուրքերի սարքած ջարդն ու գաղթը մոռացա՞ն, Բաքուն մոռացա՞ն, Շուշին մոռացա՞ն...

- Մեղք են,– ասաց Մ աքսուդը:

- Էդ հարցում՝ մեղք չկա: Էդ հարցում՝ մեղք բառը մոռացիր,– խստացավ բանաստեղծը:

- Մոռանամ,– խեղճացավ Մաքսուդը: – Որ ասում ես՝ մոռանամ: Գիտունը դու ես:

- Շուշին հիշո՞ւմ ես,– քիչ թեքվելով տղայի ձեռքը բռնեց Զեյնաբ խանումը: Բանաստեղծը կկոցեց աչքերն ու քիչ անց ասաց.

- Զարդերը՝ չէ, բայց հրդեհը ոնց որ հիշում եմ:

- Չէ, դրանք հեչ խրատվել չունեն,– ձեռքը ծնկին զարկեց Զեյնաբ խանումը:

- Դու պատմիր, Մաքսուդ, հրապարակում էլ ի՞նչ կար,– ասաց բանաստեղծը:

- Պատմելու բա՞ն է,– Մաքսուդը բանաստեղծի տուփից սիգարետ վերցրեց, ամաչեց բոցատուին ձեռք տալ՝ լուցկին իր գրպանից հանեց, և նրա աչքերը երջանկությամբ լցվեցին, երբ բանաստեղծը նրա քթի տակ շրխկացրեց բոցատուն: Մաքսուդը երանությամբ ներս ձգեց ծուխն ու արտաշնչելիս ասաց.

- Անուշ թութուն է...

- Ասում ես՝ ինչ տեսար հրապարակո՞ւմ,– չհամբերեց բանաստեղծը:

- Խոսեցին, գոռգոռացին՝ հետո վրա տվեցին, սկսեցին հայերի դուքանները վառել: Գոռում էին՝ մահ հայերին...

- Հետո՞...

- Հետոն չգիտեմ: Վախեցա ոտատակ ընկնեմ, թողեցի, եկա տուն:

- Ըհը,– արտաշնչեց բանաստեղծը, և չհասկացվեց՝ գո՞հ է իր լսածից, թե՞ դժգոհ:

Մի պահ լռություն տիրեց:

- Էս բոլշևիկներից խելքդ ի՞նչ է կտրում, մոալիմ,– վերջապես խոսեց Մաքսուդը:– Առաջ էնպես էին սեղմում՝ մարդու շունչը կտրվում էր, հիմա էլ բոլորի կապը բաց են թողել:

- Բոլշևիկները միշտ ճիշտ են, Մաքսուդ,– ասաց բանաստեղծը:– Դու էդ բանը ականջիդ օղ արա:

- Անեմ,– ուսերը հնազանդ վեր քաշեց Մաքսուդը:

- Դու բոլշևիկներին բան չասես,– հարևանի վրա մատ թափ տվեց Զեյնաբ խանումը:– Տղաս էլ է նրանցից: – Մայրը ձեռքը պարզեց, շոյեց բանաստեղծի մազերը:

- Բա ո՞նց չի նրանցից,– ժպտաց Մաքսուդը:— Դրա համար էլ բան եմ Ուզում ասել, բայց ամաչում եմ:

- Մի ամաչիր, ասա,– աչքերը փոքր-ինչ խորամանկ կկոցեց բանաստեղծը:

- Դե որ ասում ես՝ ասեմ: Ասա՝ ինձ հեռախոս տան:

- Հեռախո՞ս,– աչքերը խոշորացրեց բանաստեղծը: – Հեռախոսն ի՞նչ ես անում, դու ես՝ քո չոր գլուխը...

- Եսի՞մ,– ուսերը ձգեց Մաքսուդը:– Ասում են՝ հարմար բան է:

Դրսից նորից մեքենայի հռնդյուն լսվեց, մարդկանց ձայներ լսվեցին: Բանաստեղծը մտովի դեռ Մաքսուդի խնդրանքի վրա ժպտալով նայեց ժամացույցին, ժամը յոթից քիչ էր պակաս: Նա ելավ, ճակատը լուսամուտի ապակուն հպելով նայեց, մթան մեջ ուրվագծվում էին

այգու ծառերը: Մոտիկում, ցածրում վարդի թփերն էին: «Վարդ» միտքը կնոջը հիշեցրեց ու նույն պահին էլ բանաստեղծական ներշնչանքը խլրտաց նրա ներսում: Բանաստեղծը նստեց, ծոցագրպանից հանեց ծոցատետրը, գրիչ հանեց և արագ-արագ սկսեց գրել.

Տարիքն առած բլբուլը նայում է կոկոն վարդին, երգում է, վարդի գովքն է անում: Բլբուլն ուրիշ ճար չունի՝ պիտի ջահելանա, որ դառնա կոկոն վարդին արժանի: Չպետք է մոռանամ, որ ջահելանալու միտքն է լինելու հիմնական ասելիքը:

Բանաստեղծի սիգարետը վառեց, աչքերը կկոցած ծխեց, մտածեց-մտածեց ու սկսեց գրել.

Վարդը քամուց օրորվում էր,
Շորորվում էր, վայ ամա՛ն,
Ծեր բլբուլի ջահել սիրտը,
Սիրո ցավից ճաքած սիրտը,
Տրորվում էր, վախ ամա՛ն…

Բանաստեղծն արագ էր գրում, որպեսզի չկորցնի ներշնչանքի պահը:

Ծեր բլբուլի երգը կարծես
Կոկոն վարդին չէր հուզում,
Նա գլուխը օրորում էր՝
Ծերս ես, երգդ չեմ լսում:
Ախ, վայ, ամա՛ն, չէս լսում…

Բանաստեղծը ներս ձգեց ծուխը ներշնչանքի մի նոր ալիք որսալու համար, ու հենց այդ պահին էր, որ դրսից աղմուկ, ճիչ ու ծղրտոց լսվեց: Նա դժկամությամբ, ելավ, խոհանոցի լուսամուտից նայեց և հասկանալով, որ այդ աղմուկը հակառակ կողմից է՝ ճաշասենյակ գնաց, ձիգ տվեց, բացեց խոնավությունից ուռած պատշգամբի դուռը: Պատշգամբից նրան ամեն ինչ երևաց, դիմացը բնակելի շենքի բակն էր՝ մեջտեղում կուչ եկած կաթսայատնով: Բակում ժխոր, իրարանցում, հայհոյանք, ճիչ ու ծղրտոց էր: Մի քանիսը մետաղյա ձողերով հարվածում էին դեմքն արյան մեջ կորած երիտասարդին ու հրում դեպի բակի կենտրոնը: Երիտասարդը փորձում էր գլուխը ձեռքերով պաշտպանել, ու այդ պահին էր, որ վազելով մոտեցավ մեկ ուրիշն ու կացինն իջեցրեց նրա գլխին: Երիտասարդը տապալվեց գետնին:

- Առանց հայհոյանքի,– լսվեց մեգաֆոնի ձայնը: – Շուրջներս ազեր են, ամոթ է:

Բանաստեղծը հայացքով փնտրեց մեգաֆոնը ու չնկատեց, թե ինչպես ընկածի վրա շշից հեղուկ լցրեցին ու լուցկին գցեցին վրան: Բանաստեղծը բոցի բռնկվելը տեսավ և տեսավ, որ բոցը տեղաշարժվում է:

- Էդ ի՞նչ եք անում,– բղավեց բանաստեղծը:

- Հայերին են վառում:

Մաքսուդն էր: Ներքևում, մեջքը Զեյնաբ խանումի տան պատին հենած, ծխում էր:

- Բա որ քամին կրակը մեր տները գցեց...

- Չի գցի,– ասաց Մաքսուդը:

Բանաստեղծն ուզեց պատասխանել, բայց մեգաֆոնի ձայնը խանգարեց.

- Այ քույրիկ, ինչո՞ւ ես գլխներիս ջուր լցնում: Մենք քեզ ի՞նչ ենք արել...

Հանկարծ դաշնամուրի նվագ լսվեց: Դաշնամուրի նվագն այնքան էր անսպասելի, որ մի պահ բակի աղմուկը լռեց: Եվ բանաստեղծը տեսավ, թե ինչպես ձգելով մուտքից բակ հանեցին մորեմերկ աղջկան:

- Հարսին հոր տանից հանելու նվագն է,– Մաքսուդի՞ն, թե՞ ինքն իրեն ասաց բանաստեղծը:

Աղջկան հրելով բերեցին, անցկացրեցին կաթսայատան պատի հետևը և կորցրեցին բանաստեղծի տեսադաշտից:

- Առանց շտապելու, եղբայրներ,– հնչեց մեգաֆոնից: – Բոլորիդ էլ հերթ կհասնի:

- Հե~յ գիտի ջահելություն,– կանչեց բանաստեղծը: – Ի՞նչ կասես, Մաքսուդ...

- Ճիշտ խոսքին ի՞նչ ասեմ,– ուսերը վեր քաշեց Մաքսուդը:– Բայց դու դեռ պինդ ես:

- Չեմ դժգոհում, Մաքսուդ, չեմ դժգոհում... Պիոներական վզկապը վզին տասներկու-տասներեք տարեկան տղան ոտաբոբիկ, հագին մի կարճ վարտիք, հանկարծ հայտնվելով նետի պես սուրաց ու անհետացավ:

– Էս թմբլիկ լակոտը էն ոսկրոտ աղջկանից հազար անգամ լավն էր,– խոսեց բանաստեղծը:– Ի՞նչ կասես, Մաքսոլդ:

Մաքսուդը պատասխանելու էր, բայց հայտնվեցին տղային հետապնդողները: Երկուսի ձեռքերում էլ մետաղաձողեր կային:

- Էն լակոտն ո՞ւր փախավ...

- Էսպես տվեց, էն տների արանքով գնաց,– ասաց Մաքսուդը:

- Էդպես վնա՞ց որ,– կասկածեց բանաստեղծը:

- Հա,– ասաց Մաքսուդը:– Էլ նրան չեն գտնի:

***

Մաքսուդը սողնակով փակեց այգու դռնակը, առաջ գնաց, կանգնեց, հայացքով տնտղեց այգին: Ոչ ոք չերևաց: Միայն շունն էր շղթան ձգելով կատաղի հաչում: Մաքսուդը նկուղ գնաց, լույսը վառեց: Տղան խրվել էր անկյունը, պպզել հեկեկում էր ու վզկապով քիթը սրբում: Մաքսուդը քայլ արեց: Տղան գետնից վերցրեց փոքրիկ կացինն ու կանգնեց: Նրա աչքերը խոշորացած էին, և գազանի աչքերի փայլ կար նրանց մեջ: Մաքսուդն անշարժացավ: Պարզ չէ՝ Մաքսուդը գիտե՞ր ինչ է նախամարդը, բայց այսպես ոտաբոբիկ, կարճ վարտիքով, մերկ ու կացինը ձեռքին տղան շատ էր նմանվում նախամարդուն:

- Խելա՞ռ ես,– վերջապես խոսեց Մաքսուդը:– Դո՞ւ չես իմ ծառերից թուզ թռցնում...

Տղան անձայն թափահարեց գլուխը:

- Հայրդ ո՞ւր է...

Տղան սեղմեց ատամներն ու գլուխն օրորեց: Դրսից գալիս, հասնում էր ճիչն ու վայնասունը, որ երբեմն խլանում էր մեգաֆոնի ձայնից:

- Նրանք քեզ չեն գտնի,– ասաց Մաքսուդը:– Ես քեզ կպահեմ: Կացինը գցիր:

Մաքսուդը վերցրեց սյունից կախ հնամաշ վերարկուն, մոտեցավ, պարզեց տղային:

- Հագիր, ամոթ է:

Տղան վերցրեց վերարկուն և առանց կացինը ձեռքից բաց թողնելու գցեց ուսերին, ձգեց, իրար վրա բերեց փեշե¬րը:

- Հանկարծ չմտածես էստեղից դուրս գալ,– ասաց Մաքսուդը:– Ես գնամ քեզ համար շոր-մոր բերեմ:

- Մի գնա,– վերջապես խոսեց տղան: – Վախենո՞ւմ ես...

Տղան թափահարեց գլուխը:

- Բա քո շորերն ո՞ւր են...

- Դպրոց էի գնալու,– փղձկաց տղան:– Վրայիցս պոկեցին:

***

Բանաստեղծը չնկատեց, թե ինչպես մայրը պատշգամբ ելավ: Բակում սպանդը շարունակվում էր, բայց բանաստեղծի ուշադրության առարկան միլիցիոներների խումբն էր, որ քիչ հեռվում կան գնած նայում էր:

- Էս ի՞նչ մսահոտ է,– ասաց Զեյնաբ խանումը: – Քնիս մեջ երգ ու նվագ էի լսում՝ հարսանի՞ք է...

- Հայերի հարսանիքն է,– ասաց բանաստեղծը:– Դու գնա, սա կնկա նայելու բան չի:

- Չհասկանա՞մ ինչն ինչոց է,– նեղացավ մայրը:

- Գնացինք, գնացինք,– ասաց տղան, մոր ուսը գրկեց, դուրս բերեց պատշգամբից, հետևից ծածկեց դուռը:

- Թ՛ողնեիր նայեի, էլի,– չհանգստացավ մայրը: Բանաստեղծի աչքն ընկավ կահույքին դրված պլաստմասսայե արձանիկներին, ու նա ասաց մորը…

- Էս անպետք բաները որտեղի՞ց ես ճարում, բերում գցում տունդ...

- Սիրուն են: Չես ուզում՝ հավաքեմ:

- Հավաքիր:

Երկար ու ձիգ հնչեց հեռախոսի զանգը:

- Վարդս է:– Բանաստեղծը ժպտալով գնաց, վերցրեց լսափողը:

- Դո՞ւ ես,– հարցրեց տղամարդու ձայնը:

- Ես եմ,– տարակուսեց բանաստեղծը,– ո՞վ է...

- Իսմայիլովն է:

- Լսում եմ, մոալիմ,– ձգվեց բանաստեղծը:– Ո՞նց տեղս իմացաք...

- Կինդ ասաց:

- Ձեզանից չէ– պրծում չկա,– կատակեց բանաստեղծը:

- Չկա, - ասաց Իսմայիլովը:– Երեկ ի՞նչ է կատարվել այդտեղ: Տեսե՞լ ես...

- Այսօր եմ տեսել...

- Ի՞նչ ես տեսել...

- Սպանում են, վառում են, ջարդում են: Ուրիշ բաներ էլ կան, մայրս կողքիս է, ասելն ամոթ է:

Մայրը, որ ականջը տղայի խոսակցությանը, արձանիկներն էր հավաքում, շարում թասի մեջ, տղայի խոսքի վրա գործը կիսատ թողեց, թասը դրեց սեղանին, գնաց պատշգամբ, ելավ:

- Ուրեմն իմացիր,– ասաց Իսմայիլովը,– շտապ հոդված ես գրելու:

- Ինչի՞ մասին:

- Հայ և ազերի ժողովուրդների բարեկամության: Մեր դարավոր եղբայրությունը կա՞, թե՞ չկա...

- Կա, իհարկե, կա,– գլխով հաստատեց բանաստեղծը:

- Մի քանի խուլիգան-ռեցիդիվիստ, հասկանում ես, ո՞նց կարող են սեպ խրել մեր եղբայրության մեջ: Պա՞րզ է...

- Պարզ է, սիրելիս, պարզ է:

- Հիմնական շեշտդ դա է լինելու: Կատարվածի մասին՝ մի երկու բառ: Եղա՞վ...

- Պարտադի՞ր է, որ ես գրեմ,– իրեն թանկացրեց բանաստեղծը:

- Մեզ հեղինակություն է պետք,– ասաց Իսմայիլովը:

- Ծնորհակալություն,– ասաց բանաստեղծը:

- Վաղը պիտի հանձնես, մյուս օրը տպելու ենք:

- Կհասցնե՞մ...

- Պիտի հասցնես: Երեկոյան մեքենան կգա հետևիցդ: Հաջողություն:

Բանաստեղծը դրեց լսափողը, նայեց՝ մորը չգտավ ու, տեսնելով կրնկի վրա բաց թողած պատշգամբի դուռը, պատշգամբ գնաց:

- Էս ցրտին կանգնե՞լ ես,– զայրացավ մոր վրա: – Հետո էլ մեջքի ցավից ես խոսում:

- Էդ ի նչ են անում,– օրորվեց Զեյնաբ խանումը:

Բանաստեղծը բռնեց մոր ձեռքը, ճաշասենյակ տարավ:

- Սուրճ սարքիր, մինչև ես կսափրվեմ:

Նա «դիպլոմատից» հանեց արտասահմանյան էլեկտրական սափրիչը, գնաց հայելու մոտ, սկսեց սափրվել: Սափրվելիս հիշեց, որ երեկոյան մեքենան գալու է, որ այսօր ինքը հանդիպելու է կնոջը:

- Վարդս,– շշնջաց, և դարձյալ ներշնչանքը թրթռաց ներսում:– Ծեր բլբուլը,– ասաց, մտածեց, էլեկտրասափրիչը կզակի վրա մի քանի անգամ վերուվար արեց,– ծեր բլբուլը հանգիստ չունի,– ուրախացավ գտնված տողի համար, սափրվելը կիսատ թողեց, գնաց, նստեց ճաշասենյակի սեղանի մոտ, գրպանից հանեց ծոցատետրն ու գրիչը և սկսեց բարձրաձայն արտասանելով գրել.

Ծեր բլբուլը հանգիստ չունի,
Դադար չունի, վայ աման,
Վարդի տեսքից խենթացել է,
Իր տարիքը մոռացել է,
Մոռացել է, վախ աման...

- Մոալիմ...

Դռան մեջ Մաքսուդն էր, առջևում՝ տղան: Տղան նույն վերարկուով էր, ներկոտ տաբատով, խունացած զինվորական վերնաշապիկով, բոբիկ ոտքերը՝ քրքրված կոշիկների մեջ:

Վերարկուի գրպանից կարմրին էր տալիս պիոներական վզկապի ծայրը:

- Ո՞վ է,– չհասկացավ բանաստեղծը:

- Էն թմբլիկ տղան է,– ժպտաց Մաքսուդը:– Տես ինչ կարմիր թշեր ունի,– ասաց ու կսմթելով տղայի այտը, նրան առաջ մղեց:

Բանաստեղծը դանդաղ ոտքի ելավ:

- Ես նրան ասել եմ, որ դու պաշտոնով մարդ ես, որ դու չես թողնի սպանեն, որ շոր կառնես, ինչ սիրտն ուզի՝ կառնես... Մենակ՝ նա պիտի քեզ լսող լինի...

Մաքսուդն էլի բաներ ասաց, բայց բանաստեղծը նրան չէր լսում:

- Դու դուռը կողպիր, Մաքսուդ,– շշնջաց բանաստեղծն ու շարժվեց դեպի տղան:

Տղան բնազդով ամեն ինչ հասկացավ, պոկվեց Մաքսուդի ձեռքերից, կողմ փախավ:

Մաքուդը դուռը կողպեց, շրջվեց, քայլ արեց տղայի կողմը:

- Դու նրան բռնիր, Մաքսուդ...

- Ո՞ւր պիտի փախչի,– ասաց Մաքսուդը:– Զուր տեղը մեզ չարչարելու է:

Սենյակի դուռը հրեցին, ապա թակեցին: Երևի Զեյնաբ խանումն էր սուրճ բերում բանաստեղծի համար:

- Ա՛յ, գալի՛ս են,– ասաց Մաքսուդը,– գալիս են քեզ սպանեն...

Տղան փախավ սենյակի հակառակ ծայրը և գոտկատեղից հանեց կացինը:

- Էդ ե՞րբ թռցրեց, որ ես չիմացա,– փնթփնթաց Մաքսուդն ու մեխվեց տեղում:

Բանաստեղծը ետ գնաց, ծեփվեց պատին:

Դուռը նորից թակեցին: Տղան վանդակն ընկած գազանի պես այս ու այն կողմ էր նայում, փախուստի ելք էր փնտրում ու չէր գտնում:

- Բռնիր նրան, ասում եմ,– բղավեց բանաստեղծը:

- Կացինը գցիր,— ասաց Մաքսուդը ու շարժվեց դեպի տղան:– Ախր դու խելոք տղա ես...

Տղան կացինը կախեց, և Մաքսուդին թվաց, թե նրան մոտենալու ամենահարմար պահն է, և այն է, մոտենալու էր՝ տղան նախահարձակ եղավ ու կացինն իջեցրեց Մաքսուդի գլխին: Բանաստեղծը գոռաց, պատին քսվելով շարժվեց դեպի դուռը, որ անխնա թակում էին: Եվ հանկարծ տղան նկատեց պատշգամբի դուռը. վազեց, բացեց և նետվեց պատշգամբից: Բանաստեղծը դա տեսավ:

- Մարդասպան,– բղավեց, վազեց պատշգամբ: – Բռնեք դրան, մարդասպան...

Կաթսայատան մոտից մի քանիսը մետաղաձողերը ձեռքներին վազեցին ընդառաջ...

- Ով է, ո՞ւր է...

- Էստեղից թռավ, նոր թռավ, բռնեք էդ լակոտին:

Եվ մինչ մետաղե ձողերը ձեռքներին տղաները այս ու այն կողմ էին վազում՝ անսպասելի բան կատարվեց, վերևից քրքրված կոշիկներ ընկան: Բանաստեղծը դա տեսավ, վեր նայեց ու տեսավ, թե ինչպես ամպի միջից դուրս սահեց և քամուց ճոճվելով վար իջավ ու ընկավ ներկոտ տաբատը: Հետո հնամաշ վերարկու ընկավ, զինվորական խունացած բլուզ, պիոներական վզկապ, կացին... Ու երբ քամին տեղփոխ արեց ամպը, և կապույտ երկինքը բացվեց,

բանաստեղծը տղային տեսավ, նա համբառնում էր վեր, վեր և որքան բարձրանում էր, արեգակն այնքան ավելի էր լուսավորում նրա մարմինը, որ մերկ էր և միայն կիսավարտիք ուներ հագին: Երկնքից շեփորի ձայն էր լսվում...

1988

ԱՐԵՎԱԾԱԳ

Տատիս՝ Երանուհի Մելքոնյանի հիշատակին

– Շևքե~թ... Շևքե~թ,– կերկերուն ձայնով կանչեց Բայրամ Ալին,– ո՞ւր ես, վարդ ջան, ո՞ւր ես, գյոզալ ջան, ախր, ո՞ւր ես, է՛, կյանք ջան...

Բայրամ Ալին նստած էր որձաքարից շինված տան պատշգամբի ստվերում, ցածրիկ թախտին: Նա թեքել էր գլուխն ու ձգել բարակ վիզը, որպեսզի ձայնը գնա, հասնի չերևացող, իր ներկայությունը ոչ մի ձևով չհուշող Շևքեթին: Ծույլ, կեսօրվա շոգ էր: Հեռվում, ասես Հաշիշից թմրած, ննջում էին սարերն ու դրանց ստորոտի փոքրիկ լճակը:

– Շևքե՛թ,– նորից կանչեց Բայրամ Ալին:

– Շևքեթն, է՛, ուր է ,– լսվեց կանացի ձայնը:

Կինն էր, Ֆաթիման, որ տան մյուս՝ արևահայաց կողմում բուրդ էր լվանում: Կանգնել էր հսկայական տաշտի մեջ, քիչ բարձրացրել փեշը ու ոտքերով տրորում էր բուրդը:

– Գնա, կանչի,– ձայն տվեց Բայրամ Ալին: Ֆաթիման տաշտից ելավ, թևքով սրբեց ճակատի քրտին¬քը և հենց այդպես ոտաբոբիկ բակի դարպասից դուրս գնաց:

Ճկուն, թեթևաքայլ էր Ֆաթիման՝ դեռ չխամրած գեղեցկության հետքերը արևից կիզված դեմքին: Նա քայլեց փոշոտ, թրիքածածկ նեղլիկ փողոցով, կանգնեց չորացած բարդու մոտ, ափով արևից պատնեշեց աչքերն ու կանչեց.

– Շևքե՛թ... Շևքե՛թ...

Շրջապատն անկյանք, անշարժ էր: Ու եթե բարդու կատարին բույն դրած արագիլի թևաբախումը չլիներ, կթվար թե փողոցում ընդհանրապես շունչ չկա: Ֆաթիման անճարությունից հոգոց հանեց, մեջքը հենեց հղկված, արևից փայլփլացող բարդու բնին: Բարդու բունն անասունն էր կողերը քորելու համար քսվելով հղկել և, երևի, դա էր պատճառը, որ չէին կտրում, թե չէ՝ ո՞ւմ էր պետք:

– Էս ի՞նչ կրակ է, էս ի՞նչ պատիժ է,– ինքն իր հետ խոսսեց Ֆաթիման: – Ախր հազար գործի տեր եմ...

– Բուրդդ գզեցի՞ր, Ֆաթիմա հանմ, - հետևից անոտնաձայն, անշշուկ հայտնվեց հարևանի կինը, որ Ֆաթիմայից բավականին տարիքով էր:

– Գզեցի:

– Էդքանը ո՞նց գզեցիր,– ասաց հարևանուհին ու ձայնը ցածրացրեց:– Փող չունի՞... Թող տար՝ գզրարը գզեր:

– Ի՞նչ իմանամ,– ուսերը վեր քաշեց Ֆաթիման:– Ասում է՝ չունեմ:

– էդ տղամարդիկ ինչքան տարիքն առնում են՝ էնքան ժլատանում են,– գլուխն օրորեց, կարծես երգելով ասաց հարևանուհին:– Էսքան տարի մի ձեռը բաց բիձա չտեսա:

– Շևքե՛թ,– նորից երկար ու ձիգ կանչեց Ֆաթիման:

– Թող խաղա էլի,– ասաց հարևանուհին:– Հո չի՞ կորելու…

– Կանչում է,– գլխով իր տան կողմն արեց Ֆաթիման:– Մի գլուխ վարդս է ասում, կյանքս է ասում ու կանչում:

– Բա մինչև հիմա ո՞նց էր ապրում առանց նրա…

– Ապրում էր,– ասաց Ֆաթիման:– Հեչ անունն էլ չէր հիշում:

– Գալու եմ մոտը,– բան հիշեց հարևանուհին:– Երեխի աչքերը կարմրում, ջրոտվում են: Տեսնեմ՝ ինչ կասի:

– Արի: Շևքե՛թ…

– Է՛,– նորից երգելու պես խոսեց հարևանուհին: – Բախտ չունեցար: Փոխանակ քոնն ունենայիր, քոնոնց հետևից ընկնեիր՝ ընկել ես խալխի երեխի հետևից…

Ֆաթիման ձեռքն անհույս թափ տվեց: Հեռու-հեռուներից եկավ, հասավ էշի զռոցը:

– Քանի՞ տարեկան էիր, որ մարդու գնացիր…

– Չգիտեմ: Մերս ասում էր՝ տասնութ:

– Հիմա քառասուն կա՞ս…

– Կլինեմ:

– Ի՞նքն ինչքան էր:

– Չգիտեմ,– հոգոց հանեց Ֆաթիման:

– Վաթսուն կլիներ,– ասաց հարևանուհին:– Վայ թե յոթանասուն էլ լիներ: Քո սարսաղ մորն ասեմ, որ քեզ նրան տվեց:

– Մորս ուզելո՞վ էր… Հերս էր ասում՝ հարուստ է, երևելի է , ուժեղ է…

– Հա,– հաստատեց հարևանուհին,– ուժեղ էր: Տակը երեք կնիկ մաշեցրեց ու հողին տվեց:

– Շևքե՛թ,– կանչեց Ֆաթիման:– Ախր ո՞ւր է, բերանս էլ չի բռնում, որ անիծեմ…

– Բայց տեսա՞ր ինչ եղավ,– խոսքը շարունակեց հարևանուհին:– Մի տղա ուներ՝ էն էլ թողեց, գնաց, է՛, աշխարհի ծերը: Աղջիկներն էլ մարդու գնացին: Մնաց մենակ պուպու…

– Մի խոսեցրու,– ասաց Ֆաթիման:– Հոգնել եմ էդ խոսքերից:

– Լավ է՝ գոնե հարգանքը պահում ես,– նորից երգեցիկ, գլուխն օրորելով խոսեց հարևանուհին,– պատիվը պահում ես…

– Պիտի պահեմ,– ասաց Ֆաթիման,– բա ո՞նց…

Հարևանուհին գուցե էլի խոսեր, բայց փողոցում անսպասելի հայտնվեց երեխաների խումբը ու նրանց հետևից, ճիպոտը ձեռքին՝ Շևքեթը: Նրանց վազքի մեջ եռանդ կար ու ավյուն: Յոթից տասներեք-տասնչորս տարեկան տղա-աղջիկներ ընկել էին Շևքեթի դիմաց, և նրանցից յուրաքանչյուրը ցանկանում էր ստանալ Շևքեթի ճիպոտի հարվածը: Ու երբ ստանում էր՝ հրճվանքից ճչում, տրճիկ էր տալիս:

– Դու մի դրանց նայիր, դրանց նայիր,– ժպիտն երեսին ընդառաջ գնաց Ֆաթիման:– էդ ի՞նչ եք անում…

Հևացող, ժպտացող, քրտինք արձակող խումբը կանգնեց:

– Չոբան ու ոչխար ենք խաղում,– ասացին:– Չոբանը Շևքեթն է:

– Բա նա ձեր հետևից կհասնի՞,– ավելի լայն ժպտաց Ֆաթիման:– Ախր բոլորիցդ փոքր է...

– Հասնում է,– ասացին:

– Գնացինք,– Շևքեթի ձեռքը բռնեց Ֆաթիման:– Մեծ պապը կանչում է:

– Չէ ,– ասաց Շևքեթը:– Խաղամ:

Ֆաթիման գրկեց Շևքեթին ու քայլեց: Աղջնակը ոտքերը նրա փորին խփելով լաց եղավ:

– Չեմ ուզում,– բղավում էր,– չեմ ուզում...

– Ախր ո՞ր մեկիդ պատասխանը տամ,– արցունքն աչքերի մեջ խոսեց Ֆաթիման:– Նա ուզում է, դու չես ուզում...

– Էդ ո՞վ է իմ կյանքին նեղացնում, էդ ո՞վ է իմ վարդին նեղացնում,– տեղից ելավ Բայրամ Ալին:

Շևքեթն իսկապես վարդի նման էր՝ կարմիր-կարմիր այտերով, ու հիմա արցունքները կարծես ցող լինեին վարդի թերթերին:

Ֆաթիման Շևքեթին իջեցրեց Բայրամ Ալու մոտ:

– Ո՞վ է իմ գյոզալին նեղացնում...

– Սա,– հեկեկալով ձեռքը Ֆաթիմայի կողմը պարզեց Շևքեթը:

– Կորիր աչքիցս,– բղավեց Բայրամ Ալին:

Ֆաթիման արգաբայլ հեռացավ, մատներով սրբեց աչքերն ու նորից տաշտի մեջ մտնելով սկսեց եռանդով տրորել բուրդը:

– Արի,– Շևքեթի ձեռքը բռնեց Բայրամ Ալին,– արի գնանք նստենք, տես, թե քո մեծ պապը քեզ ինչ է տալու:

– Ի՞նչ է տալու,– լացը դադարեցրեց աղջիկը: Գնացին, նստեցին թախտին:

– Ի՞նչ է տալու...

– Հիմա կտեսնես,– Բայրամ Ալին գրպանից հանեց պղնձե, փայլփլուն կոճակ:– Տեսա՞ր... Սրանից ձեր Ստամբուլ քաղաքում կա՞...

– Կա,

– Իսկ էսպես երկար մորուք ունեցող պապ ձեր Ստամբուլում կա՞...

– Չկա,

– Չեմ հասկանում՝ բա նրանց նամուսն ո՞ւր է,– քթի տակ խնդաց Բայրամ Ալին:– Բռնիր, բռնիր պապի մորուքը: Ապրես: Դե հիմա ձգիր: Հոպ... Հոպ... Հոպ...

Պապ ու ծոռ խաղ տալով ծիծաղում-հրճվում էին, ու Ֆաթիման տաշտի մեջ ոտքերը արագ–արագ բարձրացնելով իջեցնելով ժպտում էր նրանց ծիծաղին:

***

Բայրամ Ալին փոքրիկ գյուղաքաղաքում իսկապես երևելի մարդ էր: Զառամյալ տարի՞քն էր պատճառը, փարթամ, հարգանք ներշնչող մորո՞ւքը, ապրած կյանքի փորձն ու տարիքին չհամապատասխանող պայծառ հիշողությո՞ւնը, թե՞, որ թոռը՝ Սուլեյման Բեյը, Է՛, որտեղ՝ յոթ սարից, յոթ ձորից, յոթ դաշտից ու դեռ յոթ գետից էլ այն կողմ, համարյա երազային, համարյա անիրական Ստամբուլ քաղաքում թուրքական բանակի յուզբաշի էր՝ գյուղաքաղաքում բոլորն էլ հարգում էին Բայրամ Ալուն: Անասունին ո՞ր արոտավայրը տանեն՝ խորհրդատուն Բայրամ Ալին էր, երեխան հիվանդ է, ո՞ր էշի կաթը խմացնեն՝ խորհրդատուն Բայրամ Ալին էր, ջրհորը որտե՞ղ փորեն՝ խորհրդատուն Բայրամ Ալին էր: Եվ էլի այսպիսի հազար ու մի հարցով նրա դուռն էին գալիս գյուղաքաղաքի բնակիչները՝ ամեն մեկը թևի տակ մի փոքրիկ բոխչա - փեշքեշ: Ո՞վ կկասկածեր Բայրամ Ալու խոսքերի օգտակարությանը, եթե նրա մոտ երբեմն խորհրդի էր գալիս հենց ինքը՝ մոլլան և նույնիսկ քաղաքագլուխը:

Շատ տարիներ առաջ, երբ դեռ տեղաբնակ հայերը կային, գյուղաքաղաքը հուզված էր ծիրանի, խնձորի, խաղողի այգիների մեջ: Հայերի ջարդից հետո մի քանի տարում այգիներր վայրենացան, կատաղեցին, կտրեցին իրենց բերքը: Եվ ահա այդտեղ էր, որ Բայրամ Ալին տվեց իր առաջին խորհուրդը. «Դուք ձեր բերքը կտրեցիք,– ասաց,– մենք էլ ձեզ կկտրենք»: Եվ առաջինը ինքր կտրեց իր տան դիմացի այգու ծառերը, տեղը կորեկ ցանեց և չտեսնված բերք հավաքեց; Օգուտն առկա էր՝ աչք-աչքի տվեցին, կտրեցին այգիները, և գյուղաքաղաքը մերկացավ: Ճիշտ է՝ մերկացավ, բայց նաև կարծես մեծացավ ու աշխուժացավ: Առաջ ծառերը խանգարում էին իրար երես տեսնել, իսկ հիմա մի տան կտուրից, հրեն՝ տասը տուն այն կողմ գտնվող կտուրն երևում է, կարելի է կանգնել, ճիչ ու ծիծաղով զրույցի բռնվել, կամ արտասուքն աչքերին անիծել իր բախտը: Իսկ ավելի ուշ, երբ արդեն ոչ հայերը կային, ոչ այգիները, Բայրամ Ալու խորհրդով փոխեցին թաղի անունը: «Էլ ի՞նչ հայերի թուզ: Բաշ մահլա», – ասաց Բայրամ Ալին, ու քաղաքագլուխը հավանություն տվեց: Եվ որպեսզի հայի հետքը լրիվ ջնջվեր Բաշ մահլայից՝ սկսեցին քանդել V թե VI դարում կառուցված եկեղեցին: Եկեղեցին, ճիշտ է, փոքր էր, բայց համարյա անհնար էր քարերն իրարից պոկելը: Մի օր քանդեցին՝ չքանդվեց, երկրորդ օրը քանդեցին՝ չբանդվեց, երրորդ օրը քանդեցին՝ էլի չքանդվեց, և Բայրամ Ալին նորից դարձավ խորհրդատու. «Ի՞նչ եք քափուքրտինքի մեջ կորել: Պայ-թեցրեք՝ պրծնի-գնա: Պայթեցրին: Ի՜նչ դղրդյուն եղավ, ի՜նչ ուրախություն, ցնծություն էր երեխաների համար: Այսինքն, ինչո՞ւ միայն երեխաների, մեծերն էլ ուրախացան, անհասկանալի գրերով, թիվ ու քանդակներով զարդարված սրբատաշ քարերը հարմար բաներ էին՝ իրարից խլխլելով տարան, գոմ ու պարիսպ սարքեցին: Իսկ երբ Բայրամ Ալու Սուլեյման թոռը՝ թուրքական բանակի յուզբաշին, կնոջն ու 6-7 տարեկան Շևքեթ աղջնակին առած, ամերիկյան հնամաշ «Կադիլլակով» եկավ պապին տեսության՝ Բայրամ Ալու հեղինակությունր դարձավ անառարկելի: Հանա՞ք բան է՝ քաղաքագլուխը մտավ համազգեստի զարդերը արևի տակ պսպղացնող Սուլեյման բեյի թևը և քիչ խոնարհված, քիչ քծնող՝ դանդաղ քայլքով, գլուխ-գլխի հետը զրուցեց: «Ստամբուլի օդն ի՞նչ է: Այստեղի օդը, ջուրը չտեսնված է: Հո հայերը զուր տեղը չէին վեր

ընկել էստեղ ու մնացել քանի հազար տարի,– ասաց Սոլլեյման Բեյը:– Ճիշտ է,– ասաց,– կարելի է Ստամբուլից դուրս, ծովափին տուն վարձել,– չասաց, որ թանկ է, որ ինքն անկարող է, դրա փոխարեն քիչ անփույթ, լավություն անողի մեծահոգությամբ ժպտաց: – Թող պապ ու ծոռ իրար ճանաչեն»: «Մաշալլահ, մաշալլահ», – ասաց քաղաքագլուխը: «Թող պապից մի քիչ խելք սովորի,– ասաց Սոլլեյման բեյը,– ամռան վերջերին կգամ, հետ կտանեմ»: Ուրեմն, Սոլեյման բեյը համարյա երազային, համարյա անիրական Ստամբուլ քաղաքի իմաստուն խելոքներին թողած՝ աղջկան բերեց, թողեց Բայրամ Ալու մոտ, որ «խելք սովորի»: Էլ ինչպե՞ս Բայրամ Ալու հեղինակությունը չդառնար վերջնական ու անառարկելի: Գյուղաքաղաքի կեսը ճանապարհ դրեց Սոլլեյման բեյին: Նրանք ձեռքերը թափահարեցին այնքան ժամանակ, մինչև «Կադիլլակի» բարձրացրած փոշին կորավ սարերի հետևում:

Շևքեթին գյուղաքաղաքն իսկույն դուր եկավ: Ստամբուլում ոչնչով աչքի չընկնի՝ այստեղ նա իր յուզբաշի հորով, իր հագուստ-կապուստով միանգամից դարձավ շրջապատի երեխաների ուշադրության կենտրոն: Իսկ Բայրամ Ալին նայեց զենք ու զրահը վրան ջահել տարիների իր լուսանկարին, նայեց ծոռանը, իր և ծոռան միջև անտարակուսելի նմանություն գտավ և գոհունակությամբ ասաց, «Երեսն ու արյունը իմն են: Ափսոս, որ աղջիկ է»:

***

Մութուլուսին մզկիթի բարձրախոսներից ծորաց, կերկերաց ու շրջապատի խաղաղության մեջ տարածվեց մոլլայի նամազը: Մոլլան մրսա՞ծ էր, թե՞ բարձրախոսներն էին անսարք՝ ձայնը երբեմն խզխզում, խռպոտվում էր: Մզկիթից հղված ուղերձ-նամազին առաջինն աքաղաղներն արձագանքեցին, ապա հավուճիվը կչկչաց, ոչխարը մայեց, ու սկիզբ առավ ամենօրվա օրը: Բայրամ Ային դռնից ելավ, գնաց, ծնկի իջավ պատշգամբում փռված նախշուն մինդարին ու մեկ կռանալով, ճակատը հատակին հպելով, մեկ ուղղվելով՝ հայացքն ու ափերը երկնքին, նամազ արեց: Մինչ նա նամազ կաներ՝ Ֆաթիման անասունին դուրս արեց, հանձնեց հոտաղին, հավերին կուտ գցեց ու սկսեց սուրճի պատրաստություն տեսնել: Բայրամ Ալին նամազից հետո պիտի ծալապատիկ նստի թախտին, մտքով դեռ նամազի, դեռ ալլահի հետ, քիչ վերացած հայացքով ղանդաղ, անշտապ սուրճ պիտի ըմբոշխնի, պիտի կլկլացնելով ներս ձգի ղեյլանի ծուխը:

Բակում հավերը կչկչոցով փախան: Շունը հաչաց:

Շևքեթն էր մութուլուսին ճիպոտն առած ընկել հավերի հետևից:

– Ախչի,– ձայն տվեց Ֆաթիման,– թող կուտ ուտեն, ախչի...

Նա, իհարկե, կգնար, աղջնակի ձեռքից կվերցներ ճիպոտը, բայց մոլլայի աղոթքը քիչ առաջ լռեց, և հիմա ամենակարևորը Բայրամ Ալու սուրճն էր: Երբ Ֆաթիման սուրճի ապասքը ձեռքին պատշգամբ ելավ, Բայրամ Ալին արդեն բազմել էր թախտին, մեջքը հենել բարձերին ու կկոցած աչքերով ժպտում էր:

Հեռվում, գագաթները նորածագ արևի շողերի մեջ թաթախած սարերի՞ն էր ժպտում, ստորոտի դեռ մթության մեջ ծփացող լճակի՞ն էր ժպտում՝ Ֆաթիման չհասկացավ: Նա ապասքը դրեց ամուսնու դիմաց, խոնարհ գլուխ տվեց ու ուզում էր գնալ, Բայրամ Ալին ասաց.

– Էս սյուները տեսնո՞ւմ ես...

– Ի՞նչ սյուներ...

– Մեր տան սյուները:

– Նո՞ր պիտի տեսնեմ,– զարմացավ Ֆաթիման:

– Ես էլ էդ եմ ասում,– մորուքը շոյելով ավելի լայն ժպտաց Բայրամ Ալին և օրորեց գլուխը:– Սարսաղ մարդիկ էին էդ հայերը: Ա~յ թե սարսաղ էին...

– Ես նրանց չեմ տեսել,– ասաց Ֆաթիման,– բայց որ ասում ես՝ ուրեմն էդպես է:

– Որ սյուներն էսպես չնախշեին, չզարդարեին, հենց սովորական գերաններ դնեին՝ տունը կփլվե՞ր...

– Ինչի՞ պիտի փլվեր,– ուսերը վեր քաշեց Ֆաթիման:

– Հենց բանն էլ էդ է,– մատը տնկելով աչքերը փայլեցրեց Բայրամ Ալին:– Անխելք, անբան մարդու գործ՝ նստի էսպես մեկ-մեկ զարդարի սյուները: Հաշվիր՝ քանի՞ սյուն է...

– Տասներկու,– ասաց Ֆաթիման:

– Հասկացա՞ր... Էդ ինչի՞ ես քթիդ տակ ժպտում...

– Եսի՞մ... էսպես ոնց որ թե սիրուն է,– ամաչելով ասաց Ֆաթիման:

– Սիրունը միայն կինն է լինում, սարսաղ,– կարծես թե վրդովվեց Բայրամ Ալին, լռեց, աչքերը մի կետի, անշարժ հայացքով մնաց-մնաց, հետո սթափվեց:

– Գնա:

Կինը գլուխը խոնարհ իջեցրեց, ուզում էր գնալ, Բայրամ Ալին ասաց.

– Վարդս ի՞նչ է անում,...

– Ճիպոտն առել, ընկել է հավերի հետևից: Կրակ է, կրակ...

– Մաշալլահ,– ձեռքերը տարածելով ասաց Բայրամ Ալին:– Մարդս որ կրակ չեղավ՝ կորած է:

– Սուրճը կսառի,– ասաց Ֆաթիման:

– Որ ուրիշին չվառեցիր՝ ուրիշը քեզ կվառի,– ասաց Բայրամ Ալին, մի ումպ սուրճ խմեց, տմբտմբացրեց մորուքը: Ֆաթիման ուզում էր գնալ, զբաղվել իր գործերով, բայց որովհետև՝ ամուսինը չէր թույլատրել չէր համարձակվում: Բակից եկող հավերի աղմուկը դադարեց, ուրեմն Շևքեթը ձանձրացավ հավերին հալածելուց: Շրջապատի լռությունը խախտեց չորացած բարդու կատարին բույն դրած արագիլի կափկափոցը:

– Հա,– վերջապես խոսեց Բայրամ Ալին,– Բա ո՞նց... Չվառեցիր՝ կորած ես: Ինչքան ապրում եմ՝ էդ եմ տեսել...– նա նորից մի ումպ սուրճ խմեց և գուցե շարունակեր իր խոսք-խորհուրդը, եթե հանկարծ ներքևից չլսվեր աղջնակի սրտապատառ ճիչը:

– Օ՞ձ կծեց,– բղավեց Բայրամ Ալին ու մինչ տեղից կբարձրանար՝ Ֆաթիման աստիճաններով նետվեց ներքև: Ծևքեթը կանգնել էր որձաքարից շինված տան անկյունաքարի մոտ, չռված աչքերով նայում էր անկյունաքարին ու խելագարի պես բղավում:

– Ի՞նչ եղավ,– վրա պրծնելով՝ աղջնակին գիրկն առավ Ֆաթիման:– Ի՞նչ եղավ...

Աղջիկը չէր լսում, մատնացույց էր անում խոնավությունից տեղ-տեղ մամռոտած անկյունաքարն ու բղավում, անընդհատ բղավում:

– Օ՞ձ տեսար, կարի՞ճ տեսար՝ վախեցար,– Ծևքեթի արցունքոտ աչքերը համբուրելով փորձում էր հասկանալ Ֆաթիման:

– Արյուն կա, կին կա, մեծ աչքեր ունի,– հեկեկալով բղավեց աղջիկը:

– Որտե՞ղ, որտե՞ղ...

– Էնտեղ, - անկյունաքարը մատնացույց արեց աղջիկը,– մեծ աչքեր ունի...

– Ի՞նչ արյուն, ի՞նչ կին,– կարծես թե՝ հանգստացավ Ֆաթիման ու աղջկան էլ հանգստացնելու համար քայլ արեց դեպի անկյունաքարը:– Գնանք ձեռք տանք՝ տես, որ չկա:

Ծևքեթն ավելի սրտապատառ բղավեց, և Ֆաթիման մնաց տեղում քարացած: Նրանցից մի քանի քայլ հեռու կանգնել, քարացել էր Բայրամ Ալին:

Արևածագ էր:

***

Քանի՞ տարի առաջ էր՝ վաթսո՞ւն, վաթսունհի՞նգ, թուրքական զորամասը մութուլուսին գյուղաքաղաք մտավ: Հազավաթ էր՝ հավատի կռիվ: Հայերին էին կոտորելու: Զորամասի առջևն ընկած սպիտակազգեստ մոլլան վաղորդյան լռության մեջ ահասարսուռ ձայնով կանչում էր.

– Ելե~ք, դուրս ելեք մուսուլմաններ: Ալլահն է հրամայում՝ սպանեք հայերին: Կամ պիտի հավատափոխ լինեն, թուրքանան, կամ պիտի մորթվեն: Մեծ-փոքր, կին-տղամարդ՝ հաչվի չառնեք: Հազավաթ է, հազավա~թ...

Գյուղաքաղաքի սակավաթիվ թուրք բնակիչները ու նրանց մեջ հազիվ տասնութը բոլորած Բայրամ Ալին ընկան զորամասի հետևից ու վրա տվեցին Հայկական թաղին: Կրակոց էր, հրդեհ էր, ողբ էր, խուճապ էր, փախուստ էր, անասունի բառաչ էր ու մարդու բառաչ...

Բայրամ Ալին յուզբաշու ու նրա զինվորների հետևից մտավ Հակոբ աղայի բակը: Հակոբ աղան հարուստ, երևելի մարդ էր, գյուղաքաղաքում նրան ո՞վ չէր ճանաչում: Գյուղաքաղաքի ո՞ր ջահելը թաքուն հոգոց չէր հանում Հակոբ աղայի Սրբուհի անունով մինուճարին տեսնելիս: Քանի՛-քանի՛ խնամախոսներ էր հետ ուղարկել Հակոբ աղան: «Բոյ-բուսաթին մի նայեք, երեխա է, տասնվեց էլ չկա»,– ասում էր ու մերժում: Բայց ինչպե՞ս բոյ-բուսաթին չնայեին, երբ գյուղաքաղաքում ամեն գեղեցիկ բան համեմատվում էր Սրբուհու հետ: Թե կատվին էին գովում, ասում էին՝ «Սրբուհու նման խանում-խաթուն է», թե նժույգն էին գովում, ասում էին՝ «Սրբուհու նման բարձր է ու խորոտ», թե աղբյուրն էին գովում, ասում էին՝ «Սրբուհու աչքերի պես պարզ է ու զուլալ», թե մեկի անմեղությունն էին ուզում շեշտել, ասում էին՝ «Սրբուհու պես անմեղ, Սրբուհու պես սուրբ է»...

– Ո՞ւր ես, Հակոբ աղա, դուրս արի,– գոչեց յուզբաշին: Ոչ ոք չարձագանքեց: Միայն շունն էր շղթան լարելով փրփուրը բերանին քրքրում իրեն:

Բայրամ Ալին չտեսավ, թե ով կրակեց ու փռեց շանը: Յուզբաշուն, իհարկե, հուշել էին Հակոբ աղայի ով լինելը:

– Դուրս արի,– նորից բղավեց յուզբաշին,– թե չէ տունդ կրակի եմ տալիս ու ձեզ էլ մեջը խորովում...

Ճռճռոցով բացվեց մառանի դուռը, և մշտապես պատկառանք ներշնչող տեսքից ու կեցվածքից ոչինչ, պարզապես ոչինչ չպահպանած Հակոբ աղան ներքնազգեստով դուրս ելավ: Սրա ձեռքերում կավե կճուճ կար, աչքերում՝ սարսափ, կծկված էր ու փոքրացած: Նա դանդաղ առաջ գնաց, ծնկի, իջավ յուզբաշու առաջ ու կճուճից նրա ոտքերին դատարկեց ոսկիների շեղջը:

– Խնայիր,– նրա ձայնը դողդողաց, խզվեց:– Խնայիր: Վերևն Աստված, ներքևը՝ դու...

– Պահո՛,– ոսկիների տեսքից շլացան, խլրտացին զինվորները:

– Ապրես,– ժպտաց յուզբաշին:– Գնա մնացածն էլ բեր:

— Չկա,– ասաց Հակոբ աղան:– Եղած-չեղածը սա է: Քեզ փեշքեշ:

– Դու խելոք մարդ ես,– ասաց յուզբաշին, փայտե պատյանից հանեց մաուզերը:– Գնա մնացածն էլ բեր:

Բայրամ Ալին մաուզեր չէր տեսել ու նրա աչքերը այդ անսովոր զենքից շլացան:

- Չկա,– ասաց Հակոբ աղան:– Հավատա՝ չկա:

– Քեզ ես եմ ասում, որ խելոք մարդ ես,– մաուզերը Հակոբ աղայի դեմքին մոտեցնելով բղավեց յուզբաշին: - Էդպե՞ս ես պատասխանում իմ հարգանքին...

– Սաթիկ, բեր, Սաթիկ,– սարսափահար կանչեց Հակոբ աղան, և բոլորը տեսան, թե ինչպես գիշերանոցը հագին, ուրվականի պես մառանից ելավ Հակոբ աղայի կինը:

Ավելի փոքր մի կճուճ ձեռքին նա համրաքայլ մոտեցավ յուզբաշուն, կճուճը դրեց նրա ոտքերի մոտ:

– Բա ասում էիր՝ չկա՞:– ասաց յուզբաշին:

Քրքիջը տարածվեց բակում:

– Մեղավոր եմ,– կարծես սիրտ առավ Հակոբ աղան: — Սև օրվա համար էի պահում...

- Սրանից էլ սև օ՞ր,– խնդաց յուզբաշին:– Հիմա մարդ ու կին միասին գնացեք, մնացածը բերեք: Քեզ մենակ՝ ծանր կլինի:

– Չկա,– ասաց Հակոբ աղան, խաչ հանեց:– Էն Աստված՝ չկա:

Յուզբաշին խստացրեց հայացքը, նայեց Սաթիկին:

– Էն աստված՝ չկա՛,– ասաց, խաչ հանեց Սաթիկը:

– Հիմա մարդ ու կին միասին ասեք՝ ալլահը վկա՝ չկա, - ասաց յուզբաշին:– Թուրքանալու եք...

Բակում եղածները հետաքրքրությունից լռեցին, ու միայն լսվեցին կողքի տներից եկող ողբն ու աղմուկը:

Հակոբ աղան ու կինը մի պահ միայն իրար նայեցին, հետո նայեցին յուզբաշուն, նորից խաչ հանեցին ու ասացին,

– Էն Աստված՝ չկա:

– Ասեք՝ ալլահը վկա՝ չկա,– բղավեց յուզբաշին:

– Էն Աստված՝ չկա,– բղավեցին մարդ ու կին:

Յուզբաշին հենց այդպես, կես մետրից կրակեց նրանց գլուխներին:

Եվ այդտեղ էր, որ սրտապատառ ճիչով մառանից դուրս նետվեց Սրբուհին ու ընկավ ծնողների վրա: Մինչ յուզբաշին կորոշեր անելիքը՝ Բայրամ Ալին վայրկենապես որոշեց, թուրքանալու է, նա դառնալու է իմ կինը:

– Յուզբաշի,– ասաց,– մենք իրար սիրում ենք:

– Սուտ չե՞ս ասում,— աչքերը ոլորեց յուզբաշին:

– Ալլահը վկա,– ասաց Բայրամ Ալին:

– Թե սուտ չես ասում,– ասաց յոլզբաշին,– հենց հիմա տար մառան, հավատափոխ արա:

Ու Բայրամ Ալին Սրբուհուն քարշ տալով մառան տարավ, հետևից ծածկեց դուռը:

– Աք խորամանկ, այ ջիգի՛թ,– ասացին հետևից:—Մեր քթի տակից տես ի՞նչ փախցրեց:

Ավելի ուշ, երբ Բայրամ Ալին մառանից դուրս ելավ և ի նշան տղամարդու իր հաղթանակի բոլորի ներկայությամբ կոճկեց տաբատի կոճակները՝ բակը քրքիջից թնդաց:

– Հավատափոխ արեցի՞ր,– կանչում էին,– մի կարգին հավատափոխ արեցի՞ր...

- Ինձ Բայրամ Ալի կասեն,– ասաց Բայրամ Ալին: Ի՞նչ խնձորի հոպ կա մառանում...

– Մաշալլահ, մաշալլահ,– ասաց յուզբաշին:– Մեր ժողովուրդը քո նմաններով պիտի զորանա: Էս տունը քեզ փեշքեշ:

Սրբուհու մառանից դուրս գալը կարծես չնկատվեց: Ապակե աչքերով՝ նա դանդաղ մոտեցավ տան անկյունում կանգնած Բայրամ Ալուն, արնախառը թքեց դեմքին ու ապտակեց : Ու Բայրամ Ալու բռունցքն իջավ Սրբուհու գլխին: Սրբուհին ընկավ, գլուխը զարկեց տան անկյունաքարին, փռվեց գետնին, մի քանի անգամ ցնցվեց և անշարժացավ:

Արևածագ էր:

***

Շևքեթր Ֆաթիմայի գրկից տան անկյունաքարը մատնացույց անելով բղավում էր.

– Արյուն է~, կին է~, մեծ աչքեր ունի~...

Ֆաթիման աղջկան գրկած-քարացած կանգնած էր, և նրանցից մի քանի քայլ հեռու քարացել մնացել էր Բայրամ Ալին: Նա միայն մի անգամ շարժեց շուրթերը:

– Ամառ էր,– ասաց:– Արևածագ էր...

***

Լուրը, որ Բայրամ Ալին փոխում է իր տունը, իսկույն տարածվեց գյուղաքաղաքում: Պատճառը՝ տանը շեյթան կա, սատանա կա, Շևքեթը տեսել է: Կնոջ տեսք ունի շեյթանը, աչքերը մեծ-մեծ են, վրան արյուն կա: Այս ու այն կողմից խորհուրդ տվեցին մոլլային կանչել, անեծք-

նամազով դուրս քշել շեյթանին: Բայց բոլորին խորհուրդներ տվող Բայրամ Ալին ո՞ւմ խորհուրդը պիտի լսեր:

Քաղաքագլխի զրույցն իր կնոջ հետ շատ կարճ տևեց:

– Չփոխե՞նք,– ասաց քաղաքագլուխը:

– Բա շեյթա՞նը,– վախվորած ասաց կինը:

– Բայրամ Ալին պառավել, խելքը թռցրել է,– ասաց բա քաքագլուխը:

– Ախր, երեխան է տեսել, անմեղ երեխան,– ասաց կինը:

– Լսիր, – ասաց քաղաքագլուխը:– Ստամբուլում հեռուստացույց կա: Հեռուստացույցով ինչ ախմախություններ ասես, որ չեն ցույց տալիս՝ էլ սատանա, էլ գել–գազան, էլ կռիվ, էլ աշխարհի կործանում: Մի անգամ նայեցի, ես, որ խելքը գլխիս տարիքս առած մարդ եմ՝ գիշերը ահ ու սարսափից չկարողացա քնել: Աղջիկը Ստամբուլից չի՞, ինչքան ասես, որ չի տեսել էդ զահրումարներից: Հիմա միտն է ընկել՝ վախից բղավում է:

– Դու գիտես,– ասաց կինը,– Բայց ճիշտն ասեմ՝ սրտովս չի:

– Հասկացիր,– ասաց քաղաքագլուխը,– տղաների, թոռների տեր ենք: Մեր տան նեղվածքը ինձանից լավ գիտես: Իսկ Բայրամ Ալու տունը, է ~... Փոխենք՝ քանի չի փոշմանել:

Նույն օրը Բայրամ Ալին ու քաղաքագլուխը տնփոխ եղան:

Քաղաքագլխի տանը Շևքեթը արթուն ժամանակ հանգիստ էր: Գիշերները քնած ժամանակ էր ցնցվում ու բղավում:

Սպասեցին մի օր, երկու օր, մի շաբաթ, մտածեցին՝ կանցնի: Բայց չէ, չէր անցնում: Վարդի պես գեղեցիկ աղջիկը օր-օրի ավելի էր գունատվում, մաշվում, կորցնում էր իր ավյունն ու եռանդը:

Բայրամ Ալու խնդրանքով քաղաքագլուխը գնաց մոտակա քաղաք և հեռագիր ուղարկեց Սուլեյման բեյին: «Շևքեթը դիվահար է եղել, շտապ արի»,– գրեց քաղաքագլուխը: Բոլորն սպասում էին, որ քաղաքագլխի թոռներն էլ են մատնացույց անելու մամռոտ անկյունաքարը և բղավելու են, բայց թոռները չբղավեցին: Նրանք փոխարեն Բաշ մահլայի ծայրամասում մի տղա բղավեց: Նա էլ էր, իբր, արևածագին շեյթան տեսել ու այս անգամ շեյթանը, իբր, մորթված երեխայի տեսք էր ընդունել: Հետո ոչ մի աչքի ընկնող դեպք չկատարվեց փոքրիկ գյուղաքաղաքում: Միակ աննշան բանը, որ կատարվեց՝ չորացած բարդու վրայի արագիլները լքեցին, իրենց բույնը: Երեխաները բարձրացել, բնից թռցրել էին երկու ձուն, ջարդել, որ տեսնեն, թե մեջը ինչ կա: Արագիլներն էլ խռովեցին, թևին տվին, գնացին, գնացին Արաքս գետն՝ անցան, անցան Հոկտեմբերյան քաղաքի վրայով, Մեծամորի ատոմակայանի վրայով, թռան, գնացին հասան Մասիս կայարան, էլեկտրաքարշերի բարձր հոսանքի սյուներին իրենց ցեղակիցների բույները տեսան ու իրենք էլ դատարկ սյուներից մեկին սկսեցին բույն հյուսել:

Իսկ այնտեղ, գյուղաքաղաքում, մարդիկ մինչև օրս էլ ահով, կասկածանքով են նայում շուրջբոլորը: Շեյթանից վախենում են:

1984

ՕՁԱԽ

Սերգո Բոյաջյանին

Հայաստանից եկած մտավորական տիկինը խոսում էր, և Սերգոն, որ սովոր էր երկրաշարժից ավերված և հիմա պատերազմի ու շրջափակման մեջ գտնվող հայրենիքին օգնություն հայցող եկողներից մեծ մասի շողոքորթող ժպիտներին ու խոսքերին, այս անգամ իրեն վատ զգաց: Նրանք սահմռկեցուցիչ բառերով էին նկարագրում ժողովրդի վիճակը, աշխատում գութ ու խղճահարություն առաջացնել դահլիճում, և դահլիճի ջղայնությունից էր կախված լինում խոսքի ավարտին սկսվող հանգանակության չափը: Տիկինն այդպիսին չէր: Տիկինը դահլիճում կարծես, հյուր չէր, տանտեր էր:

– Ես ուզում եմ հասկանալ ձեր սրտի միջի ոգեղենիկը ցանկանում եմ իմանալ հայի լեզուն կամաց-կամաց կորցնելով՝ հայի արյունն ու գեները խաղում են ձեր երակներում:

Ձեզնից մեկը ինձ գրավոր հարց է ուղղել, ամաչում եմ բարձրաձայն կարդալ, որովհետև այնպիսի խոսքերով է նկարագրել մեր վիճակը, որ եթե ամոթս կորցնեմ, պիտի ձեռքս պարզած շրջեմ Մոնրեալում և փող մուրամ մայր հայրենիքի փրկության համար: Այդպես չէ, սիրելիս: Այդ ո՞ր մայրն է որդուն բողոքում իր ապրուստից, այդ ո՞ր մայրն է արժան արժանապատվությունը կորցրած քծնում, շողոքորթում որդուն մի քանի կոպեկ մուրալու համար: Այդպիսի մայրն ապրելու իրավունք չունի: Եվ եթե հայրենիքում թափված մեր տղաների արյունը ինչ-որ մեկը փորձում է հավասարակշռել իր տված դոլարներով, թքել եմ ես նրա դոլարների վրա:

– Տղամարդ տիկին է,– կողքին նստած իր վաղեմի ընկեր Վարուժանին ասաց Սերգոն:

– Օ՛,– ժպտաց. Վարուժանը:– Բա ես քեզ ի՞նչ էի ասում…

– Ասելիքս ուրիշ է,– շարունակեց տիկինը:– Սասունում ու Մուշում, Բիթլիսում ու Ալաշկերտում, Վանում ու Էրզրումում, Կիլիկիայում ու Կեսարայում ձեր պապերի ավերված օջախների փոխարեն կարո՞ղ եք մի օջախ ստեղծել, մի օջախ շենացնել Հայաստանում, ուրախանալ ձեր արածով, այդ օջախը հեռվից հեռու ձերը համարել, տաքանալ նրա ջերմությամբ ու շնչով և, ո՞վ գիտե, այդ օջախը գուցե իր մոտ ձգի ձեր զավակներին ու թոռներին:

– Դուք ձեր օջախները թողած փախչում եք այստեղ, հիմա պահանջում եք, որ մենք այստեղից ձեզ համար օջախ ստեղծե՞նք,– բղավեց մեկը դահլիճից:

Մի պահ դղրդացող լռություն եղավ: Եվ հանկարծ կատարվեց անսպասելին: Սերգոն, որ վաթսունն անց, պարկեշտ, սակավախոս, երբեք իր անձը չցուցադրող մարդ էր, վեր թռավ աթոռից ու հայացքը ընդհատողին ուղղելով գոռաց:

– Ձայնդ… Ձայնդ, ապիկար…

Վարուժանը նրան այդ վիճակում երբեք չէր տեսել՝ ձգեց փեշը:

– Սերգո…Սերգո հանգստացիր…

Տիկինը բեմից նկատեց, որ արտակարգ խոշոր ու գեղեցիկ աչքեր ունի իրեն ընդհատողին սաստող անզուսպը: Նա Ժպտաց Սերգոյին և հանգիստ ասաց.

– Եթե սրահում այս ընկերոջ նման գոնե մեկը կա, ես իմ խոսքը անտեղի չեմ համարում:

Դահլիճը երկար ծափահարում էր տիկնոջը;

***

Սերգոն մռայլադեմ տուն մտավ, գնաց ընկղմվեց հյուրասենյակի բազկաթոռի մեջ ու ծխեց: Նա հազվադեպ էր տխում, և կինը հասկացավ, որ ամուսինը հուզված է ու քանի որ ծխում էր, զայրույթից է հուզմունքը: Տարիքին անհամեմատ թեթև քայլվածքով նա այս կողմից աչքի պոչով նայեց ամուսնուն, այն կողմից նայեց, դիտեր, որ եթե ուղղակի հարցնի պատճառը՝ ամուսինը պայթելու է, այդ պատճառով էլ ասաց..

– Ժողովի չէի՞ր...

– Ժողովի էի,– քիչ ուշացումով հոգոց հանեց Սերգոն:

– Է՞...– ժպտաց կինը:

– Հայրենիքից եկած մի մտավորական տիկին խոսեց:

– Խոսքը դուրդ չեկա՞վ,– ավելի լայն ժպտաց կինը:՝

– Եկավ: Տղամարդու պես խոսեց:

– Բա էլ ինչո՞ւ ես ծխում...

– Որովհետև մեր մեջ խելոքները շատացել են,– դեմքն ավելի խոժոռեց Սերգոն:

– Դաշնակցականները երբևէ խելոքի պակաս զգացե՞լ են,– կատակեց կինը, – Ո՞վ էր...

– Երվանդը: Ապիկար շան որդի...

– Ի՞նչ էր ուզածը...

–Տիկինն ասաց՝ եթե մեր երիտասարդների կյանքն ու արյունը դուք Ձեր տված դոլարներով պիտի հավասարակշռեք՝ թքել եմ ձեր դոլարների վրա...

– Աստվա~ծ...– ձեռքն այտին տանելով անշարժացավ կինը:

– Ասաց՝ եթե կարող եք, մի օջախ ստեղծեք, մի օջախ շենացրեք հայրենիքում և այդ օջախով տաքացրեք ձեր սրտերը...

– Աստվա~ծ...– տխուր ժպիտով գլուխը տարուբերեց կինը:– Լավ է ասել...

– Հապա՞,– եռանդուն դարձավ Սերգոն:– Իսկ այդ ապիկարը՝ դուք ձեր օջախները թողած փախչում եք այստեղ, հիմա պահանջում եք, որ ձեզ համար հայրենիքում օջախ ստեղծենք...

– Շեն երկրից և օջախից ո՞վ կփախչի,– խոժոռվեց կինը:– Չհարցրի՞ր...

Սերգոն չպատասխանեց, թափ տվեց ձեռքն ու հայացքը մի կետի՝լռեց:

– Օջախ ու ժառանգ ստեղծել ես, որ իմանաս օջախի գինը: Չհարցրի՞ր...

Սերգոն լռում էր:

– Օջախ ու ժառանգ ստեղծե՞լ ես, որ իմանաս օջախի – Այդքան ունեցվածքդ ո՞ւմ ես թողնելու: Չասացի՞ր...

– Չասացի,– մրմնջաց Սերգոն:– Գոռացի վրան, այն է, ձայնը կտրեց:

Նա մի նոր սիգարետ էր ուզում վառել, կինը մոտեցավ, պպզեց դիմացը, քնքշանքով դուրս սահեցրեց սիգարետը ամուսնու մատների միջից և փորձեց փոխել խոսակցությունը.

– Այդ տիկնոջ անուն ազգանունն ի՞նչ է...

– Տիկին Սոսի էին ասում: Ազգանունը չգիտեմ:

***

Տիկին Սոսին գլխացավով արթնացավ:

Ճիշտ է, սրահում, հանդիպման ժամանակ նա կարողացավ զսպել իրեն, չցուցադրել Երվանդի խոսքերի թևաթափ անող ազդեցությունը, բայց ավելի ուշ, հյուրանոցում, երբ ինքն էր ու իր բարձը, Երվանդի ասածը դուրս չէր գալիս ուղեղից: Իսկապես հազարներով հայրենիքը լքում են, ընկնում օտար, անծանոթ երկրների ճանապարհը: Հուսախաբված է ժողովուրդը, խուճապի է մատնվել և այդ խուճապի դեմն առնել է պետք: Սոսին այդ հարցում սփյուռքի օժանդակությունն էր փնտրում, ցանկանում էր, որ սփյուռքը առաջին հերթին իր մարդկային ու հոգևոր կապերով զորավիգ լինի հայրենիքին: Մտքերը ջաղացքարի նման պտտվում էին ուղեղում, չէին թողնում քնել ու ստիպված ելավ անկողնուց, քնաբեր խմեց, և հիմա գլուխը, երևի, քնաբերի ազդեցությունից էր ցավում: Նա շփեց քունքերը, նայեց ժամացույցին, մտաբերեց առավոտյան իր անելիքը՝ ժամը տասնմեկին հանդիպում Հայ Դատի գրասենյակում, գնաց արագ լվացվեց, հարդարեց մազերը: Դուռը թակեցին: Ենթադրեց՝ հյուրանոցի սպասավորն է, խալաթը հագավ, գնաց, բացեց դուռը: Վարուժանին վաղուց գիտեր, մտերիմներ էին: Սոսիին զարմանք ու շփոթմունք պատճառեց խոշոր, խամ, գեղեցիկ աչքերով պատկառելի տղամարդը:

– Մի շփոթվիր,– ժպտաց Վարուժանը,– մեր ընկեր Սերգոն է:

– Թույլ տվեք ձեզ համբուրել,– անսպասելի ասաց Սոսին:

Այս անգամ Սերգոն շփոթվեց: Նրանք ողջագուրվեցին:

– Է~, այսպես դռան մեջ պիտի կանգնած մնա՞նք,— կանչեց Վարուժանը:

Սոսին հյուրերին նստեցրեց, ներողություն խնդրելով հյուրասենյակ գնաց, քիչ անց զգեստափոխված վերադարձավ: Հյուրերը ծխում էին: Սոսին հապճեպ պահարանից կոնյակ հանեց, լավաշ, պանիր, դրեց ցածրիկ սեղանին:

– Սուրճ կպատրաստեի, բայց կես ժամից գալու են իմ հետևից...

– Սրանց ժամանակը չի,– ասաց Վարուժանը,– տար: Սերգոն խնդիր ունի քեզ հետ:

Սերգոն լավաշից մի կտոր կտրեց, փաթաթեց թղթե անձեռոցիկի մեջ, դրեց գրպանը.

– Իբրև նշխարք կվերցնեմ: Հայրենիքից Կանադա հասած լավաշ է...

– Բուն խնդրին անցիր, Սերգո,– չհամբերեց Վարուժանը:

- Անցնեմ:– Սերգոն ծխեց, երկար արտաշնչեց:– Ես և տիկինս այս գիշեր երկար խորհելուց հետո որոշեցինք երկրաշարժի հետևանքով որբացած երեխաներից մեկին մեզ հոգեզավակ դարձնել...– Սերգոյի աչքերը խոնավացա՞ն, թե Սոսիին այդպես թվաց:

– Սերգոն դրամով շատ անգամ է օգնել,– միջամտեցի Վարուժանը:– Սա ուրիշ խնդիր է:

- Հասկանում եմ,– մեղմ ժպտաց Սոսին:

- Դու քո պայմաններն ասա, բավ է ծխես,– Սերգոյին:

Հանդիմանեց Վարուժանը, և Սոսին հասկացավ, որ նրանց ընկերությունը չնայած տարիքների տարբերությանը, շատ է մտերիմ :

– Պայմանը հետևյալն է, պետք է աղջիկ լինի՝ 8-10 տարեկան: Նրա ուսման, մեծացնելու բոլոր հոգսերը վերցնում եմ ինձ վրա: Նրա համար ես տուն կկառուցեմ...

– Ինչո՞ւ անպայման աղջիկ,– ընդհատեց Սոսին:

– Ասեմ,– աշխուժացավ Սերգոն:– Հայկական օջախում տան սյունը կինն է: Մայրիկս հանգիստ, առանց ձայնը բարձրացնելու այնպես էր կառավարում կծու բիբար հորս...

– Բնիկ որտեղացի՞ եք,– հարցրեց Սոսին:

– Կեսարայից:

– Այ քեզ բա~ն,– ծափ զարկեց Սոսին:– Մենք էլ ենք Կեսարայից: Մեր պապերը իրար պետք է որ ճանաչեին...

– Որ խորանաք՝ իրար հարազատ եք դուրս գալու,– ժպտաց Վարուժանը:

– Հարազատ ենք,– ասաց Սերգոն:– Մյուս պայմանս, այդ աղջիկը չպետք է երբեք հայրենիքը լքի: Հայրենիքում ես նրա ու նրա ընտանիքի բոլոր դժվարությունները հաղթահարելի կդարձնեմ:

– Հարյուր տարի՞ պիտի ապրես, ծո՛,– կատակեց Վարուժանը:

– Եթե անհրաժեշտ է՝ հարյուրհիսուն էլ կապրեմ,– ցուցամատը տնկեց Սերգոն, և Սոսին հասկացավ, որ այս պայմանները Սերգոյի և կնոջ անքուն գիշերվա մտորումների արդյունքն են:– Ձեզ մի խնդրանք ունեմ միայն,– շարունակեց Սերգոն,–- այդ աղջնակին դուք պիտի ընտրեք:

– Ձեր խնդրանքը և հասարակ է և բարդ,– քիչ խորհելուց հետո ասաց Սոսին:– Հայ Օգնության Միության այստեղի բաժանմունքում որբ երեխաների ցուցակը կա, շատերի լուսանկարները կան: Կարելի է նախնական ընտրությունն այստեղ կատարել, ընտրել երկու-երեք թեկնածու: Վերադարձիս կծանոթանամ նրանց հետ և կընտրեմ ամենաարժանավորին:

– Բոլորն էլ արժանավոր են,– ասաց Սերգոն: Նրա ձայնը կերկերաց:– Դժբախտաբար բոլորին չեմ կարող տիրություն անել:– Նա հայացքը թեքեց թաքցնելու համար աչքերի արտասուքը:

– Մանկան պես փխրուն սիրտ ունի մեր Սերգոն,– Սոսիին նայեց Վարուժանը:

***

Սերգոյի մուտքից կինը հասկացավ, որ արտակարգ բան է պատահել: Լայն ժպիտով ամուսինը հյուրասենյակ գնաց, ծոցագրպանից ծրար հանեց, դրեց սեղանին:

– Կարո՞ղ ես ասել մեջն ի՞նչ է...

Կինը մի պահ նայեց ծրարին, նայեց ամուսնուն, նրա բազմիմաստ ժպիտը կենտրոնանալու հնարավորություն չէր տալիս:

– Չեմ դիմանում, ասա…

– Մեր աղջկա լուսանկարն է,– մատը ցցեց Սերգոն:

Կինը ծրարը թռցրեց սեղանից, լուսանկարը միջից հանեց, տիկնիկը կրծքին սեղմած, խարտյաշ մազերով, կապույտ աչքերով աղջնակը մատը տարել էր շուրթերին ու «սուս» էր ասում տիկնիկին:

– Ամա՜ն…– հրճվեց, լուսարձակվեց կինը:

– Բա՞,– ասաց Սերգոն, թաշկինակը տարավ աչքերին:

– Ի՜նչ անուշիկն է… մազերը գանգուր են, տղա…

– Գանգուր են: Ծրջիր հետևում անուն-ազգանունը կարդա:

Կինը դժվարությամբ տառկապ արեց անուն–ազգանունը:

– Մար-տի-րոս-յան Հայ-կա-նուշ…

– Հասկացա՞ր,– բացականչեց Սերգոն:

– Հասկացա,– ասաց կինը:– Մարտիրոսյան Հայկանուշ…

– Խենթ է այս կինը: Հայկանուշ… Մայրիկի անունն է, գլխի չընկա՞ր…

– Ամա՜ն,– աչքերը լայնացրեց կինը:– Ի՜նչ զուգադիպություն…

– Բա ես ի՞նչ եմ ասում,– հրճվեց, նորից արտասուքը սրբեց Սերգոն:

Կինը մոտեցավ, գգվեց ամուսնուն.

– Մանչ՛ս… Մեծ մանչուկ՛ս…

– Այլևս ոչ մի ընտրություն,– ձեռքը կտրուկ շարժեց Սերգոն:– Սա է մեր աղջիկը…

Կինը նորից նայեց լուսանկարին.

– Ի՞նչ է ասում տիկնիկին, գիտե՞ս… Տիկնիկին ասում է «Սո՛ւս… Սերգո հայրիկս քնած է»…

– Սերգո հայրիկը քուն ու դադարը կորցրած է՝ մինչև իրենից լուր չառնի:

– Մի ծխիր, Սերգո,– աղաչեց կինը:– Պիտի մեր աղջնակին մեծացնենք:

– Պիտի մեծացնենք, հապա ինչպե՞ս,– ըմբոստացավ Սերգոն:– Սոսին գրասենյակից հեռաձայնեց ամուսնուն, ամուսինը առավոտյան պիտի գնա, աղջկան տեսնի, պետք է ազգականներից խնամակալ գտնի…

– Այդպես արա՞գ,,,

– Ինչո՞ւ դանդաղել,– չհասկացավ Սերգոն:– Սոսին վերադարձին պիտի բոլոր անհրաժեշտ փաստաթղթերը հետը տանի…

– Չեմ ուզում,– անսպասելի խռովկան դարձավ կինը: – Մեր աղջիկն է, պիտի բերենք, մենք մեծացնենք…

– Մեկ անքուն գիշերը մեզ բավական չեղա՞վ,– խստացավ Սերգոն:– Մեր աղջիկը պիտի մեր հայրենիքում մեծանա, օջախ կազմի:

***

Պայմանավորվածության համաձայն՝ Սոսին գիշերը տուն զանգահարեց: Լսափողը վերցրեց ամուսինը.

– Լսում եմ:– Ամուսնու ձայնը խռպոտ էր:

– Ձայնդ մի տեսակ է: Մրսե՞լ ես...

– Չեմ մրսել,– ասաց ամուսինը, և Սոսին հասկացավ, որ ամուսինը տխուր է:

– Գնացի՞ր, տեսա՞ր Հայկանուշիկին...

– Տեսա:

– Ի՞նչ տպավորություն թողեց,..

– Աշխույժ, սնդիկի պես շարժուն երեխա է...

- Հետո՞...

– Որբանոցի ղեկավարությունն ուրախացավ, խնամակալ գտնվեց...

– Իսկ դու ուրախ չե՞ս...

Ամուսինը չպատասխանեց, երկար արտաշնչեց լսափողում:

– Ճանապարհին հո փորձանքի չե՞ս եկել...

– Չէ: Նորմալ գնացի, եկա,– ամուսինը նորից երկար արտաշնչեց լսափողում:

– Մի բան պատահել է,– հուզվեց Սոսին:– Ձագուկիս, ձագուկիս կանչիր հեռախոսի մոտ:

– Ձագուկը քնած է:

– Ես կգժվեմ, – ասաց Սոսին:– Ասա՝ ի՞նչ է պատահել... Ամուսնու շնչառությունը բեկբեկվեց լսափողի մեջ, Սոսին լարվեց ու հասկացավ, որ ամուսինը հեկեկում է:

– Ի՞նչ է եղել,– բղավեց Սոսին,– ասա՝ ի՞նչ է եղել...

– Աշոտը սպանվել է: Աշոտը... Մե՞ր Աշոտը...

– Մեր... Մեր Աշոտը...

Սոսին զգաց, որ ծնկները թուլանում են, հենվեց բազկաթոռին ու դեռ հին իներցիայով հարցրեց.

– Որտե՞ղ...

– Դրմբոնի մոտ:

Սոսին լսափողը դրեց, փքվեց բազկաթոռին, դեմքն առավ ափերի մեջ: Աշոտն ամուսնու և իր հոգեհարազատ ընկերն էր: Առաջինը մտապատկերվեց Աշոտի երկվորյակների կնունքը: Գանձասարի եկեղեցում կնքեցին: Կնունքից հետո քեֆ, ուրախություն էր: Աշոտն իր միշտ թեք ժպիտով ծափ էր զարկում ու խնդրում. «Ես պարել չգիտեմ, Սոսի ջան, դու պարիր՝ հենց իմանամ ես եմ պարում», և ինքն Աշոտին չէր մերժում: «Այ Սոսի,– ասում էր,– զարմանք բան է՝ էս կռիվների արանքում մի երկու անգամ եմ տուն հանդիպել: Կարծում էի աղջիկ է ծնվելու, զույգ տղա ծնվեցին:– Ափը շրխկացնում էր ափին:– Զարմանք բան է»... Շրջվում, կատակում էր. «էն Վալոդին պարի միջից հանեք, բա էս ճրագների կնունքին ծռտի-պռտի պար կգա՞ն... ճիշտ չեմ ասո՞ւմ... Պարել է ուզում, թող գնա մի կողմ, իր համար առանձին պարի, ճիշտ չեմ ասո՞ւմ...»: «ճրագներդ

որ կան՝ քեզ պիտի քիչ գցես դիրքերը, նրանց մեծացնել է պետք»: «Սոսի ջան, բա եղա՞վ, նրանց կյանքն ո՞վ է պաշտպանելու, դիրքերից տուն եկողն էլ ո՞վ է...»: «Գժվել ես, Աշոտ...»: «Չեմ գժվել, Սոսի ջան, մի րոպեով կգամ, թուշները կպաչեմ ու կգնամ...»:

– Ինչի՞ քեզ չխնայեցիր, անաստված, ինչի՞ զարկվեցիր:– բարձրաձայն մղկտաց Սոսին:– Լույսի պես երեխեքիդ ինչի՞ որբացրիր...

Բարձրաձայն արտասանված «որբ» բառը Հայկանուշին հիշեցրեց, կայծակի պես անսպասելի ու ակնթարթային մի միտք շրխկաց Սոսիի ուղեղում և այդ միտքն իրենից վանելու համար կոնյակ լցրեց ու հիշեց երգահան ընկերոջ երգի տողը.

– Լավագույն տղերքը հեռանում են,– ասաց ու կանչեց, -Ձեր համար, լավագույններս...– խմեց, ցնցվեց կոնյակի տաքությունից, երկար արտաշնչեց:– Առանց ձեզ մեզ շատ է դժվար, հասկացեք,– մրմնջաց, ելավ պտտվեց սենյակում և նորից նույն միտքը. «Եթե Հայկանուշի փոխարեն Աշոտի երկվորյակներին...»:

– Դաժանություն մի արա,– ասաց ինքն իրեն և հիշեց Սերգոյի վճիտ աչքերը. «Այս աղջիկը սիրտս մտավ»,– Սերգոն համբուրեց լուսանկարը:

– Դաժանություն մի արա,– ասաց Սոսին:– Աղջկա բախտը մի կոտրիր:– Գլուխը կախ պտույտներ տվեց սենյակում:– Աշոտի նման քանի լավագույն է զարկվել, քանի երեխա է որբացել,– ասաց և իսկույն ընդվզեց ինքն իր դեմ: – Աշոտի նմանը չկա՛ր,– մղկտաց,– Աշոտը սրբացավ, երեխեքը որբացան: Մյուսների երեխեքին չեմ տեսել, չեմ գրկել. Ես էգոիստ եմ,– բղավեց, մոտեցավ հեռախոսին, համար հավաքեց:– Քնած չե՞ս...

– Սոսի՞,– ուրախացավ Վարուժանը:

– Արի ինձ ձեր տուն տար: Էս չորս պատերի մեջ կգժվեմ...

***

Սպասուհի ունեին, բայց տանտիկինը հյուրի պատվին ինքն էր գոլորշի արձակող ճաշի սպասքները ձեռքին աշխույժ ելումուտ անում խոհանոցից հյուրասենյակ, հյուրասենյակից խոհանոց՝ հետևից տանելով-բերելով բամբակի պես ճերմակ փոքրիկ շնիկին: Ճաշասեղանի մոտ նստած էին Սոսին, Վարուժանը, Սերգոն:

– Ինձ մի նայեք,– ասաց տանտիկինը,– դուք սկսեք, ես կգամ:

– Մենք ձեզ կսպասենք,– ասաց Սոսին:

– Հանգիստը կորցրել է,– ժպտաց Սերգոն:– Օրվա մեջ հարյուր անգամ կգնա-կգա, այս նկարի առջև կկանգնի, – նա գլխով ակնարկեց փոքրիկ, ոսկեզօծ շրջանակի մեջ առնված Հայկուշի նկարը:– Տիկնիկին անուն է դրել. «Միմի»:

– Այս ի՜նչ ուրախություն մտցրեցիք տունս:– Տիկինը մոտեցավ, այտը հպեց Սոսիի այտին:

Վարուժանն ու Սոսին իրար նայեցին: Գիշերը համարյա՝ անքուն լուսացրին, երկար տվեցին-առան, և Վարուժանը տրամաբանելով գտավ, որ «այս պարագային ճիշտը Աշոտի երկվորյակներին հոգեզավակ դարձնելն է»: Որոշեցին, որ ճաշի սեղանի շուրջ Վարուժանն է

բացելու խոսակցությունը, սկսելու է հեռվից, հարցնելու է Արցախյան պատերազմից, պատերազմի հերոս նահատակներից, և Սոսին պատմելով գալու հասնելու է Աշոտին ու Աշոտի որբացած երկվորյակներին: Եվ այդտեղ Վարուժանն ընդհատելու, է Սոսիին և ասելու, «Գուցե Հայկանուշի փոխարեն այդ երկվորյակներին հոգեզավակ դարձնես, Սերգո: Իսկույն մի պատասխանիր, մի երկու օր մտածիր, նոր պատասխանիր»:

Վերջապես տիկինը նույնպես նստեց: Սերգոն բաժակ բարձրացնելով նայեց Սոսիին.

– Բարով եք եկել իմ տունը,– ասաց:– Բարի լուրով եք եկել: Վարուժանն ասաց, որ ձեր ամուսինը տեսել է աղջկաս և հավանել է...

– Աշխույժ, սնդիկի պես երեխա է,– հայացքը փախցրեց Սոսին:

– Ուրիշ ի՞նչ ասաց,– ժպտաց տիկինը:

– Ասաց, որ ձեր արարքից բոլորն ուրախ են, որ հարազատներից խնամակալ է գտնվել...

– Չասա՞ց, բարձրահասա՞կ է, թե կարճ, գե՞ր է, թե նիհար: Նկարը երեք տարվա հնություն ունի...

– Սնդիկի պես շարժուն երեխան ինչո՞ւ պիտի գեր լինի, միջամտեց Սերգոն:

- Ուրիշ բան չասա՞ց,– Սոսիի հայացքից կախվեց տիկինը,

– Ասաց,– հոգոց հանեց Սոսին:– Ասաց, որ Աշոտն սպանել է:– Նա գոցեց աչքերը, և արտասուքի կաթիլը սահեց այտն ի վար:

—- Ի՞նչ Աշոտ...

– Ո՞վ է Աշոտը,– շփոթվեցին Սերգոն ու տիկինը:

- Աշոտը քաջորդի է, նրա վաշտն առաջինն է Շուշի մտել,– ասաց Վարուժանը:– Նրա ղեկավարած վաշտը միշտ հայտնվել է Արցախյան պատերազմի ամենաթեժ կետերում: Այդպես չի՞, Սոսի: Ու այդպիսի տղան, այդ առյուծի սիրտ ունեցող տղան սպանվի, ինչ-որ պոռնկածինի արձակած գնդակից...

- Ճանաչո՞ւմ էիք,– Վարուժանից Սոսիին հայացքը դարձրեց Սերգոն:

Սոսին գլուխը թափահարեց ու դժվարությամբ ասաց.

– Ընկերներ էինք:

– Ամա՜ն...– աչքերը գոցելով օրորվեց տանտիկինը:

– Երկվորյակներր որբացան,– ասաց Վարուժանը: – Երեք տարեկան, լույսի պես պայծառ տղաներ են...

Վարուժանը նայեց Սոսիին, լռեց և նրա հայացքի ու լռության իմաստն այն էր, որ Սոսին պատմի Աշոտի քաջություններից, երկվորյակների բարեմասնություններից, նկարագրի նրա ընտանիքի անելանելի վիճակը, որից հետո ինքը կանի իր առաջարկությունը: Բայց Սոսին ոչինչ չէր ասում, անձայն արտասվում էր:

– Այսպե՛ս,– վերջապես լռությունը խզեց Սերգոն, ելավ, մոտեցավ Հայկանուշի նկարին, նայեց, նայեց և դարձավ Սոսիին.

– Ձեզ բան պիտի խնդրեմ:

– Լսում եմ,– արտասուքը սրբեք Սոսին:

– Վերադարձին դուք երկվորյակների նկարն ուղարկեցեք:

Կփակցնեմ Հայկուշի կողքին, թող դառնան քույր ու եղբայրներ...

– Սերգո ջան, Սերգո ջան, Սերգո ջան...– ասում էր Վարուժանն ու հեկեկում...

1993 թ.

ԼՈՒՍԱՎՈՐՉԻ ԿԱՆԹԵՂԸ

Տասնյոթ-քսան տարեկան տղաների ջոկատը Շուշիից իջնում էր Քարինտակ: Շուշիում հրամանատարը՝ 30-ին մոտ, կարշնեղ, կոճղի պես մի տղամարդ, որին բոլորն Արջ էին ասում, նրանց շարեց, գրեց անուն– ազգանունները, հարցրեց զբաղմունքը ու հենց ասացին զբաղմունքը՝ կորցրեցին անունները, ու մեկը կոչվեց Նկարիչ, մյուսը՝ Բանասեր, մյուսը՝ Շկոլնիկ... Եվ այդպես: Ամենածիծաղելին սև աչք-ունքով տղան էր, որ հրամանատարի՝ զբաղմունքի մասին հարցին պատասխանեց.

– Բառադի:

Շարքը քրքիջից խեղդվում էր, հրամանատարը՝ փորձված կռվող, մեղմ ժպիտով ունկնդրում էր նրանց մանկական ուրախությանը, և այդ ժպիտից քաջալերված, խումբն ավելի էր քրքրվում:

– Ծիծաղելու ի՞նչ կա,– դեմքը խոժոռեց Բառադին:

– Զգաստ,– անպասելի խստացավ հրամանատարը: Ջոկատը սկսվեց:

- Ինչի՞ բառադի, - հարցրեց հրամանատարը:

– Երրորդ մասում իմ համար բառադի ֆռֆռում էի:

– Պարզ է,– ասաց հրամանատարը, մի պահ էլ ժպիտը խաղաց նրա աչքերում և նորից խստացավ,– հրաման է տրված՝ զգաստ:

Ջոկատը ձգվեց: Հրամանատարը՝ գլուխը կախ մի քանի քայլ արեց, աչքի պոչով նայեց տղաներին, համոզվեց, որ ամեն ինչ կարգին է, կանգնեց, բացատրեց.

– Հիմա կիջնենք Քարինտակ, կծանոթանանք զենքի տեսակներին, կսովորենք օգտագործել, հետո՝ կերևա:

Աստծուն է հայտնի, թե տղաներից ով ինչ ճանապարհով է հասել Շուշի ու անդամագրվել կամավորների ջոկատին: Նրանցից մեկը նույնիսկ Սիրիայից էր եկել, հասել, և նրա ուսանող լինելը տղաները հաշվի չառնելով՝ կոչեցին Թմբլիկ: Ջոկատը կարելի էր իջեցնել ավելի հարմար ճանապարհով, որով հատուկենտ մեքենաներ էին գնում գալիս, բայց հրամանատարը նրանց տարավ մինչև ծնկները ձյունով ծածկված զառիթափով, և տղաներից յուրաքանչյուրը մտովի հրամանատարի արածը որակեց հիմարություն: Նրանք չէին հասկանում, որ դա իրենց առաջին փորձությունն է:

Զինվորական ղեկավարությունը հիմնականում Արջին էր վստահում նորելուկների մարտական առաջին մկրտությունը: Դա, երևի, ամենադժվար գործն էր, և դա նրան հաջողվում էր, ծանոթացնում էր զենքի տեսակներին, մի քանի օր զինվարժանքներ անում, տանում առաջին մարտին, տասնհինգ-քսան օր մնում հետները, նրանց հետ կռվում ու ջոկատը հանձնում նոր հրամանատարին:

Վայրէջքը դժվար էր: Առջևից Արջն էր գնում, երբեմն շրջվում, նայում տղաներին, նրանք դանդաղ էին շարժվում: Առաջինը չդիմացավ Թմբլիկը:

– Այս երկիրը անտրամաբանությունների երկիր է,– կանչեց, կանգնեց, թաշկինակով սրբեց ճակատի քրտինքը:–-Հրեն ճանապարհը, մեքենաներն էլ անցուդարձ կանեն: Այնպես ավելի շուտ տեղ կհասնեինք, եղբայր...

Խումբը քիչ վեր, Արջը՝ ներքևում, կանգնած էին դեմդիմաց, և խումբը սպասում էր Արջի պատասխանին: Պատասխանեց Բառադին.

Տրոլեյբուս չե՞ս ուզում, Թմբլիկ...

Վայ քո մեռելը չտրաքի,– ասաց շեկլիկ տղան, որ հաստատ լեռնցի էր ու քայլելիս ետ չէր մնում Արջից, ափը ափին շրխկացրեց և նորից ցատկոտեց քրքիջը:

Արջը մեղմ ժպտում էր ու, երևի, այդ ժպիտն էր հավատ ու վստահություն ներշնչում տղաներին:

– Գնացինք,– ասաց Արջը:

Քրքիջից թեթևացան և շարժվեցին հրամանատարի հետևից: Միայն նկարիչն էր երբեմն կանգնում, վերացած հայացքով նայում այս ու այն կողմ:

– Ինչի՞ ես ոտքդ կախ գցում, նկարիչ,– իր առաջին սրախոսությունից ոգևորված ձայն տվեց Բառադին: Քեզ համար էլ մի մերսեդես չբերե՞մ...

– Գեղեցիկ է,– սթափվեց նկարիչը:

– Գեղեցկության ժամանակը չի,– ասաց Շկոլնիկը,– գնացինք:

Արջը նայեց Շկոլնիկին, կկոցեց աչքերը.

– Գեղեցկությունը ժամանակ չունի, տղա ջան: Գեղեցկության ժամանակը միշտ է: Կռվելիս էլ պիտի գեղեցիկ կռվես, որ շահես...

***

Հովհարային անջատում էր, համատարած ցուրտ ու խավար: Նկարչի հայրը կնոջ հետ խոսակցությունից խուսափելու համար շուտ պառկեց, վերմակը քաշեց գլխին: Կինը մաշիկները քստքստացնելով քիչ էլ այս ու այն կողմ արեց խոհանոցում, մոմը ձեռքին ննջարան մտավ, մոմակալը դրեց կավից պատրաստված խաչքարի մոտ, եկավ, պառկեց մահճակալին: Կինն առաջին անգամ մոմ դրեց խաչքարի կողքին, և դա անհանգստացրեց ամուսնուն, մոռացնել տվեց ձևական քնածությունը.

– Մոմն ինչո՞ւ վառ թողեցիր...

– Կարող է վերկենալ ենք ուզում, մի ճրագ չլինի՞: Ընկնենք ջարդուխուրդ լինե՞նք...

– Բայց ինչո՞ւ խաչքարի կողքին դրեցիր,– համառեց ամուսինը:– Սեղանին ավելի հարմար էր...

– Մոմը պիտի խաչքարի կողքին լինի,– ասաց կինը: - Քնած էիր՝ քնիր:

***

Նկարիչ որդին խաբեց ծնողներին.

– Մեր խմբից հինգ հոգու Շուշի են ուղարկում էտյուդներ անելու,– ասաց:

– Հայաստանում տեղ չկա՞ էտյուդի համար,– չհասկացավ մայրը:

– Շուշին Հայաստան չի՞,– քթի տակ ժպտաց տղան ու մայրը լռեց:

– Ովքե՞ր են,– հարցրեց հայրը:

– Երկու տղա, երկու աղջիկ ու ես: Դու նրանց չես ճանաչում :

Աղջիկների ներկայությունը փոքր-ինչ հանգստացրեց մորը, բայց և ասաց.

– Ցո՛ւրտ, ձմե՛ռ, ավերակվա՛ծ...

– Էստեղ ցուրտ, ձմեռ, ավերակված չի՞,– ասաց տղան:– Էնտեղ գոնե էլեկտրականություն կա:

– Էլեկտրականություն կա,– հաստատեց հայրը, որ լրագրողի իր աշխատանքի բերումով արդեն մի քանի անգամ եղել էր Շուշիում:

– Բա ես ի՞նչ եմ ասում,– ուրախացավ տղան:

– Ինձ լսես՝ գարնանը կգնաս,– ասաց մայրը:– Հիվանդացար՝ ո՞վ է տերդ...

– Հինգ հոգով ենք, իրար տիրություն չե՞նք անի...

– Քեզ ասացին՝ վեր, գնա Շուշի,– չհանգստացավ մայրը:

– Չէ: Ասացին՝ Շուշիում հինգ տեղ կա, ովքե՞ր են ուզում: Մենք էլ ասացինք՝ մենք: Համ էլ էնտեղ նկարչական ստուդիա են բացել, երեխաների հետ պիտի պարապենք:

– Թող գնա,– ասաց հայրը:– Հիմա էնտեղ վտանգավոր չի:

– Հիմա ամեն տեղ է վտանգավոր,– ասաց մայրը: – Մարդ մթին վախենում է տնից դուրս գա:

– Առավել ևս,– ասաց հայրը:– Միայն ամեն օր, գոնե օրումեջ կզանգահարես: Հեռախոսային կապը լավ է աշխատում:

– Ոչ մի օրումեջ,– ասաց մայրը: – Ամեն օր:

Տղան մի անգամ զանգահարեց, ասաց, որ լավ են տեղավորվել, ասաց՝ էս ի՛նչ պայծառ աշխարհ է ու էլի հիացմունքի խոսքեր ասաց և այլևս հեռախոսազանգ չեղավ:

***

Խաչքարն այնպես էր դրված, որ կողքին վառվող մոմի լույսը տեսանելի էր միայն կնոջը: Որպեսզի ամուսինը այդ լույսը տեսներ, պետք է դեմքով շրջվեր կնոջ կողմը, բայց նա դա չէր անում: Չէր անում, որովհետև եթե կինը հասկանար, որ ինքը քնած չէ և խոսեր, իսկ խոսքն անպայման որդու մասին էր լինելու, այլևս չէր դիմանա ու կասեր ճշմարտությունը: Ճշմարտությունն այն էր, որ այսօր գնացել, հետաքրքրվել էր՝ ովքեր են տղայի հետ Շուշի մեկնել,

որպեսզի նրանց հարազատներից մի տեղեկություն իմանա: Պարզվել էր, որ ոչ ոք Ծուշի չի գնացել և ընդհանրապես Ծուշի գնալու մասին ինստիտուտում խոսք չի եղել: Հիմա հայրը գոց աչքերով մտաբերում էր վերջին ամիսներին տղայի վարքը, նկարում էր, գովում էին, բայց աշնանային մի օր մթնդած տուն եկավ, կողմ գցեց էտյուդներն ու փլվեց բազկաթոռին:

– Ի՞նչ է պատահել,– հարցրեց ինքը:

– Մեր վերջին կուրսի տղերքից մեկը Լաչինում զարկվել է,– ասաց տղան, չդիմացավ, երեխայի պես հոնգուր-հոնգուր լաց եղավ:

Մայրն եկավ, շոյեց տղայի գլուխը.

– Կռիվ է, բալես, կռիվն առանց զոհի չի լինում,– կռացավ, այտը համբուրեց:

– Հա,– անսպասելի ըմբոստացավ տղան:– Նրանք էնտեղ զարկվեն, մենք էստեղ էտյուդ անենք...

Լրագրողի իր ականջը որսաց, ասում է զարկվեն, չի ասում զոհվեն: (Զարկվեր) բառի մեջ ավելի խոր իմաստ է դնում տղան:

– Ցավոք՝ պատահում է,– ասաց ինքը:

– Էդ ցավոք-մավոքը որ չեք ասում՝ մարդ քիչ է մնում գժվի,— բղավեց տղան:– Գոնե սուս մնացեք...

Մայրը մատը տարավ շուրթերին, իրեն գլխով խոհանոց կանչեց: Ինքն ու կինն անձայն նստեցին խոհանոցի մթության մեջ: Դիմացի շենքից երաժշտություն լսվեց, «խարոշի» տղերքն էին, այդպես էր թաղը նրանց անվանում, շուրջբոլորը ցուրտ ու խավար՝ Աստծուն էր հայտնի, թե որտեղից՝ նրանք միշտ լույսի ու լուսավորության մեջ, քեֆ էր, որ անում էին՝ ճաշակով, մակարդակով, երգ ու պարով, ծափ ու ծիծաղով: Տղան նրանց դեռ մանկուց չէր սիրում.

– Մեխը վերցնես, գնաս դրանց մերսեդեսի պակրիշկեքր ծակես...

– Անվադող,– ուղղում էր ինքը:

– Նրանցը պակրիշկա է:

Ինքն ու կինը մտովի տղայի հետ էին և խոհանոցից ե- րաժշտությունը լսում էին ու չէին լսում: Տղան պոկվեց տեղից,, բացեց պատշգամբի դուռը, ձեռքը դիմացի շենքը պարզե– լով բղավեց. .

– Անասուննե՛ր... Անասուննե՛ր... Կալաշնիկովը վերցնես ու սրանց վերջը տաս...

Ապա հայրը հիշեց, նկարել սիրող տղան այլևս չէր նկարում՝ «Հավես չունեմ»: Ու հանկարծ՝ Ծուշի, էտյուդները անելու: Հայրը հասկացավ, որ տղան գնացել է կռվելու...

Ուրիշ էին մոր մտքերը, նա նայում էր մոմի թրթռացող լույսին, և նրա խոսքը առ Աստված էր: Մի քանի օր առաջ էր գնացել ինստիտուտ, պարզել որդու սուտը և ամուսնուն ոչինչ չէր ասում: Հիմա արցունքներն աչքերից գլորելով Աստծուց ներողություն էր խնդրում, որ ամուսնուց թաքցնում է, որ սովորականի պես դեմքը հարդարում է, որ ժպտում, կատակում է ամուսնու հետ, որովհետև ամուսնու սիրտը թույլ է, իմանա՝ չի դիմանա: Նա հիմա մտածում էր, որ մի երեխան քիչ է, որ ինքը երեխա ծնել այլևս չի կարող: «Աստված,– մտովի շարունակեց

մայրը,– միակս է, մինուճարս, գառնուկս»... Մայրը գեղեցիկ խոսքի ու մտքի վարպետ էր, բայց այս պահին ոչ մի գեղեցիկ խոսք մտքով չէր անցնում, ասվածը պարզ էր ու շիտակ. «Աստված, դու գիտես՝ իմ հող ու ջրի համար ուշքս գնում է, հող ու ջուրը, գիտեմ, արյունով են պահում, թե ապրեցնելու ես՝ միասին ապրեցրու, թե տանելու ես՝ երեքիս միասին տար...»: Արցունքները գլորվում էին, իսկ նա նույնիսկ քիթը վեր չէր քաշում, որ չարթնացնի ամուսնուն: Եվ ինքն իրեն, նույնիսկ Աստծուն չէր խոստովանում, որ հոգու հեռու-հեռավոր խորխորատներում հպարտ է իր որդու արարքի համար: Անկյունում, խաչքարի մոտ մարմանդ թրթռում էր մոմի լույսը:

Առավոտյան նկարչի հայրը մեկ ծխեց, երկու ծխեց ու վերջապես խախտեց խոհանոցի ցուրտ լռությունը:

– Ղափան գործուղման եմ գնալու: Մոռացա քեզ ասել: Կինը հարցական նայեց ամուսնուն:

– Թուրքերը նորից քաղաքը ռմբակոծել են, պիտի գրվի,– հայացքը փախցրեց ամուսինը:

Կինը գնաց, խոհանոց բերեց ամուսնու ճամփորդական պայուսակը ու սկսեց մեջը խցկել մսի պահածոներ, խտացրած կաթ, շաքարավազ, բրինձ, կոնֆետներ և էլի բաներ, որ փաթեթավորված էին, և ամուսինը չէր հասկանում, թե դրանք ինչ են:

– Էս ի՞նչ ես անում...

– Սահմանամերձ տեղ է,– մուրաբայի բանկան պայուսակի մեջ տեղավորելով խոսեց կինը,– ճանապարհը մեկ բաց է լինում, մեկ՝ փակ: Ո՞վ գիտի՝ ինչքան կմնաս:

Ամուսինը ծխախոտը հանգցրեց, ելավ, մոտեցավ կախիչին, ցանկացավ վերարկուն վերցնել՝ կինը չթողեց.

– Սպասիր:– Գնաց, պահարանից հանեց ոչխարի դաբաղված մորթուց կարված մուշտակը:– Սա հագիր:

– Հյուսիսային բևեռ եմ գնում,– քթի տակ ժպտաց ամուսինը, մուշտակը հագավ:

Կինը գրկեց ամուսնուն, այտը հպեց այտին, պահեց ու անսպասելի ծնկեց ամուսնու դիմաց.

– Աղաչում եմ՝ վերցրու, հետդ բեր...

– Ղափան եմ գնում,– կմկմաց ամուսինը:

– Ասա՝ մայրդ հիվանդ է, ծանր հիվանդ է՝ ձագուկս վազելով կգա,– արցունքները հոսեցին մոր աչքերից, ձայնը կերկերաց:

– Ես նրան չեմ խաբի,– խոժոռվեց ամուսինը:

– Ես չեմ կարող դերասանություն անել, հասկացիր,– համարյա շշուկով արտասանեց կինը:– Էլ չեմ դիմանում...

Անսպասելի աշխատեց խոհանոցի ռադիոն պարեղանակ էր նվագում:

Մի շաբաթվա զինավարժանքներից հետո ջոկատը դիրքեր գնաց: Փոխարինելու էին կռվողներին: Նորեկների պատկերացմամբ կռվողները պիտի առնվազն Արջի նման պինդ, կոշտ ու

կոպիտ տղամարդիկ լինեին, բայց չէ՝ հենց իրենց տարիքին էին, միայն ավելի նիհար, անթրաշ, խանձված դեմքերով: Արջն ու հրամանատարը գրկախառնվեցին:

– Ինչ կա,– հարցրեց Արջը:

– Սովորական,– ասաց հրամանատարը:– Մեկ-մեկ վրա են տալիս:

– Կորուստնե՞րը...

– Մի սպանված, երկու վիրավոր: Ծխելու բան տուր:

– Ո՞վ էր,

– Հաթերքի տղերքից էր: Չես ճանաչի:– Հրամանատարը ծխախոտը վառեց, երանությամբ ներս ձգեց ծուխը, դանդաղ արտաշնչեց:– Էս անտերից շատ ենք նեղվում:–Նա վերուվար արեց մատների արանքում պահված սիգարետը:

– Նորություն ասա,– ժպտաց Արջը, դարձավ Բանասերին:– Ծխելու բան տուր տղերքին:

Հները վրա տվեցին: Տուփերը վերցնելը, բացելն ու ծխելը մեկ եղավ:

– Ինչո՞վ են խփում,– Արջը ցնցեց հրամանատարին, որ ծխելուց չէր հագենում:

– Մինամյոտ, տանկ, ԲՄՊ: Հաթերքցուն ԲՄՊ-ից խփեցին:

– Ուրի՞շ...

– Զրամբարի կողմերը տեխնիկա է, որ կուտակում են: Նորեկները խմբվել էին Արջի շուրջը, ինչպես ճտերը՝ թխսմոր, և ուշադիր լսում էին նրանց խոսակցությունը:

– Հարձակումներում օրինաչափություն կա՞...

– Այ տղա, դրանց հրամանատարը կամ շիզոֆրենիկ է, կամ էլ ուռում են. հենց փորներր կշտանում է՝ վրա են տալիս: Վերևից թրաշում ենք ու վերջ:

– Ձահելներիս բան չունե՞ս ասելու, - հրամանատարին աչքով արեց Արջը:

– Ասեմ,– ժպտաց հրամանատարը:– Ուրեմն շատ չէ, մի երկու անգամ կարգին, տղամարդավարի վախենում եք, սպառում եք վախի ձեր բոլոր պաշարներր ու դրանից հետո գործը գնում է...

– Ասել է Բեկոր Աշոտը,– վրա տվեց Բառադին:

– Սովորեցրե՞լ ես,– կոտր ընկած Արջին նայեց հրամանատարը:– Հլա չսովորեցնեիր, քեզ Արջ կասեն:

Արջը քթի տակ խտխտոցով ծիծաղում էր:

***

Շուշիում նկարչի հորն ասացին, որ կամավորներին Քարինտակում են վարժեցնում, Արջի ջոկատն է:

– Արջն անուն-ազգանուն չունի՞...

– Անուն–ազգանունով չես գտնի: Ասա՝ Արջ:

Քարինտակում ասացին,

– Արջի, ջոկատը... Քսան օր կլինի, չէ՞, որ էստեղից գնացել են...

– Ո՞ւր են գնացել:

– Ի՞նչ իմանաս:

– Ո՞վ կիմանա:

– Թե ասեն՝ Ստեփանակերտում կասեն:

Ստեփանակերտում գնաց թերթի խմբագրություն, հանդիպեց իր ծանոթին, չասաց, որ որդուն է փնտրում:

– Արջի մասին ակնարկ եմ ուզում գրել,– ասաց:– Օգնիր՝ գտնեմ:

Զինվորական տեղամասում ասացին.

– Արջն իր ջոկատով սարերում է: Էստեղ Արջից պակաս տղերք չկան, նրանց մասին գրիր:

– Հանձնարարություն է,– ասաց հայրը:– Արջի մասին պիտի գրեմ:

Գիտե՞ք ուր եք գնալու, հասնելու:

– Միևնույն է՝ պիտի գնամ:

– Առավոտյան եկեք, թե էն կողմերը գնացող մեքենա լինի՝ կուղարկենք:

Գիշերեց ծանոթի տանը, առավոտյան մութուլուսին ծանոթի հետ հայտնվեցին զինվորական տեղամասում:

– Քուններդ չտարա՞վ, տնաշեններ,– ժպտաց մայորը, վերցրեց լսափողը:– Փարսադանով,– ասաց,– թղթակից է Երևանից եկել, Արջին է փնտրում: Թե էն կողմերը գնացող մեքենա ունես՝ թող հետները գնա:– Մայորը մատը սեղանին կտկտացնելով լսեց մի պահ:– Հասկացանք,– ասաց,– գոնե մոտերքը կհասնի՞...– Լսափողը վար դրեց, դարձավ եկվորներին:– Իջեք առաջին հարկ, կապիտան Փարսադանով:

***

Ձյունը շատ էր, բեռնատարը տնքալով էր գնում: Խցիկում չորսով էին՝ վարորդը, երկու զինվորական ու նկարչի հայրը: Հայրը փորձեց խոսեցնել.

– Կյանքներդ ո՞նց է...

– Հարմար է:

– Կո՞ւշտ եք, սովա՞ծ եք...

– Զինվորի կյանք է:

Հասկացավ, որ իրեն խոսակից չեն՝ լռեց: Մեկ ժամ, երկու ժամ: Լեռան ստորոտին մեքենան կանգնեց:

– Իջիր,– ասաց վարորդը, ինքն էլ իջավ, բռնեց հոր թևը, ազատ ձեռքը պարզեց դեպի լեռնագագաթը:

– Էն ցից-ցից քարերը տեսնո՞ւմ ես... էդ ուղղությունը բռնիր ու գնա: Հետ դառնալիս էլ էստեղ կսպասես: Օրեկան մի քանի մեքենա գնում-գալիս են՝ քեզ կվերցնեն:

Հայրը հայացքով ուղեկցեց բեռնատարին մինչև անհետացավ տեսադաշտից, ապա շրջվեց, նայեց ցից քարերին.

– Քանի՞ կիլոմետր կլինի,– խոսեց բարձրաձայն: – Երե՞ք, չո՞րս, հի՞նգ,– ձեռքը թափ տվեց, պայուսակը ուսը գցեց ու քայլեց:

Ցրտից ձյունը կարծր էր, ոտքերը չէին մխրճվում ձյան մեջ, բայց, միևնույն է, վերելքը դժվար էր՝ ժամանակ առ ժամանակ կանգնում էր և ամեն կանգնելիս շունչը տեղը բերելուց հետո անպայման խոսք էր ասում.

– Էտյուդ է անում: Տես, թե ուր է հասել շան լակոտը... Հաջորդ կանգնելուն ասաց.

– Ականջներդ ոլորելու եմ ու՝ հայդա տուն: Աղբյուր Սերոբիս, Արարոյիս, Գևորգ Չավուշիս նայեք...

Մյուս կանգնելուն ասաց.

– Ուսանող ես, ուսանողությունդ արա, քեզ իմ էս տանջանքը պե՞տք էր...

Ցից քարերից ոչ հեռու դարձյալ կանգնեց.

– Չես սատկի,– ասաց ինքն իրեն,– մենակ թե բալեդ ողջ-առողջ լինի...

Լեռան գագաթը չհասած նորից կանգնեց, մուշտակի թևքով սրբեց ճակատի քրտինքը և այն է՝ խոսք էր ասելու, երբ անսպասելի ձայնից ցնցվեց.

– Կանգնի՛ր, կկրակե՛մ:

Նկարչի հայրը քարացավ, ապա դանդաղ պտտեց՝ հայացքը: Ոչ ոք չէր երևում:

– Ո՞ւմ եք ուզում...– նորից հնչեց ձայնը:

– Արջի ջոկա՞տն է..

– Արջի:

– Արջին եմ ուզում:

Ձյան շերտից պոկվեց սպիտակ թիկնոցով մեկը, ոտքի ելավ: Շկոլնիկն էր: Ավտոմատը առաջ պարզած մոտեցավ:

– Առաջ ընկեք, գնացինք:

Նկարչի հայրն առջևից, Շկոլնիկը հետևից՝ քայլեցին: Հայրն ուզում էր որդուց հարցնել սիրտ չէր անում, աշխատում էր հեռու մղել ուղեղում պտտվող բոլոր վատ մտքերը, բայց նրանք հեռու չէին մղվում, հակառակը՝ հետևում համարյա երեխա զինվորը առաջ պարզած ավտոմատով, նրա կտրուկ ու խիստ հրամանները, շրջապատի սարսափազդու լռությունը ավելի էին թանձրացնում ծանր մտքերը: Քիչ անց ցից քարերի մոտ ծուխ նշմարվեց, մարդիկ երևացին ու երբ ավելի մոտեցան՝ հայրը տեսավ որդուն: Շկոլնիկը օդում կրակեց: Հայրը տեսավ, թե ինչպես է տղան նայում իրեն, տեսավ, թե ինչպես աչքերը տրորեց ու քիչ առաջ մղվելով ավելի ուշադիր նայեց և պրկվեց տեղից: Հայրը վազեց որդուն ընդառաջ, ու նրանք գրկախառնվեցին:

– Դուք ձեր պաչ-պռոշտին արեք, ես գնացի իմ պոստը:

Երբ ողջագուրման առաջին պահն անցավ, հայր ու որդի քիչ հետ քաշվեցին ու զննեցին իրար, լրագրողի նրա աչքն անվրեպ էր՝ հայրը հասկացավ, որ այս մի ամսում տղան տղամարդ է դարձել: Որտե՞ղ չքացավ միջի երեխան: Որդին հասկացավ, որ այս մի ամսում հայրը ծերացել է:

Լռությունը որդին խախտեց.

– Ինչի՞ ես եկել...

– Եկել եմ քեզ տուն տանեմ:

– Լինելու բան չի,– խոժոռվեց տղան:

Հայրը հասկացավ, որ լինելու բան չի, ենթարկվեց կնոջ հնարածն ստին:

– Մայրդ հիվանդ է, ասում է՝ ձագուկիս բեր... Որդին շեշտակի նայեց հոր աչքերին.

– Երդվիր ինձնով:

– Չեմ երդվի,– հայրը փախցրեց հայացքը:

– Հասկացանք,– ասաց տղան:

– Կռվում եք,– շփոթմունքը թաքցնելու համար ասաց հայրը:

– Ըհը,– ասաց տղան:– Նրանք հարձակվում են, մենք հետ ենք մղում:

Հայրը քիչ կկոցեց աչքերը, նայեց տղային.

– Մարդ սպանե՞լ ես...

– Եսի՞մ,– այս անգամ տղան փախցրեց հայացքը, լռեց մի պահ;– Առաջին թուրքին որ խփեցի, որ ընկավ՝ էնպես վատ զգացի...– Տղան սեղմեց, ճտճտացրեց մատները:

– Կռիվ է,— ասաց հայրը,– դու չսպանես՝ քեզ կսպանեն:

– Ըհը,– աշխուժացավ տղան,– Ծեկլիկի խփվելուց հետո՝ էլ ի՞նչ վատ զգալ, ի՞նչ բան...

– Ձեր ջոկատի՞ց էր...

– Ըհը... ընկերացել էինք: Այ պապ, էստեղ մի կզաքիս կա, գալիս, իմ ծոցն է քնում: Էնքան սիրուն է...– ժպիտը բոցկլտաց տղայի աչքերում:– Մենակ թե՝ տեսնես...

Հայրը ժպտաց, չէ, երեխան դեռ որդու մեջ է:

– Մայրդ մեղք է,– ասաց,– արի տուն գնանք: Էլ չի դիմանում:

– էդ մասին չխոսես,– միանգամից խստացավ տղան: – Քեզ մի բան եմ խնդրում...

- Ի՞նչ...

– Չասես, որ հայրս ես:

– Ամաչո՞ւմ ես, որ հայրդ եմ:

– Տղերքի ձեռքից չեմ պրծնի: Բանասերի պապան եկավ Քարինտակ, տղային գտավ, մինչև հիմա ձեռ ենք առնում՝ մամայի բալա...

– Մամայի բալա չեք, պապայի բալա չեք, բա ո՞ւմ բալան եք, լակոտներ,– անսպասելի բռնկվեց հայրը:

– Պապ, մեկ է՝ չեմ գալու: Դու գնալու ես, ես սրանց բերանից չեմ պրծնելու:

– Լավ, եթե հայրդ չեմ, բա ո՞վ եմ...

– Ի՞նչ ես ասել, որ թողել են գաս հասնես էստեղ,– քիչ մտածելուց հետո ասաց տղան:– Հո չե՞ս ասել՝ եկել եմ տղայիս տուն տանելու...

– Ասել եմ՝ լրագրող եմ: Եկել եմ Արջի մասին ակնարկ գրելու:

– Ըհը,– ուրախացավ որդին:– Լրագրող ես, հորս ընկերն ես, էստեղ հանդիպեցինք, եղա՞վ:– Տղան նայեց հորը, հասկացավ, որ հայրը կոտրվեց:– Ցավդ տանեմ,– համբուրեց հոր այտը, վերցրեց գետնին ընկած ուսապարկը: – Գնացինք:

Բլինդաժում տղաները տարակուսանքով զննեցին նորեկին:

– Հորս ընկերն է,– բացատրեց Նկարիչը,– եկել է Արջի մասին թերթում գրելու:

– Արջը քսանհինգ րոպեից կգա,– արտասահմանցու պարտաճանաչությամբ բացատրեց Թմբլիկը:– Պահակակետերն է ստուգում:

Հայրը նստեց անտաշ տախտակներից հապճեպ սարքված սեղանի մոտ, պտտեց հայացքը, հասկացավ, որ բլինդաժից դուրս եկող խրամատը դեպի դիրքերն է տանում, հայացքը շրջեց, տեսավ պատերի մեջ փորված դարակները՝ մեջը գիրք, մոմ, տափաշիշ, ավտոմատի պահեստատուփեր: Անկյունում իրար վրա շարված էին ներքնակներն ու քնապարկերը: Մեծ, կանաչ զինվորական թերմոսի մեջ պետք է որ ջուր լիներ:

– Մի բաժակ ջուր կարելի՞ է...

Տղան դարակից վերցրեց տափաշիշը, պարզեց հորը.

– Թարմ է, գիշերն եմ լցրել:

Հայրը ջուրը խմեց, մրսեց, կռացավ, ձեռքերը պարզեց բլինդաժի կենտրոնում ցցված վառարանին, մի պահ տաքացավ, ապա վերցրեց ոտքերի մոտ ընկած ճամպրուկը և սկսեց պարունակությունը շարել սեղանին:

– Պահո~,– կանչեց Բառադին,– որ հորդ ընկերը էսքան բան է բերել, բա որ հայրդ գար՝ ինչքան էր բերելու...

Տղաների քրքիջը ցատկոտեց բլինդաժում:

– Ջուր դնենք՝ թող եռա: Բրինձը կա, պահածոն կա, շիլա եմ եփելու,– ասաց Թմբլիկը:

Հոր բերած մթերքը կարծես ցրեց առաջին պահի կաշկանդվածությունը, և այս ու այն կողմից սկսեցին հարցեր տալ:

– Երևանի՞ց եք...

– Գազ, էլեկտրականություն կա՞...

– Սեղանիկները մնո՞ւմ են...

– Հացի հերթերն էլի էնպես երկա՞ր են...

– Ի՞նչ են վառում...

Հայրը գլուխը կախեց, խոժոռվեց.

– Ծառերը... Շրջապատի ծառերը կտրում են ու վառում...

– Վա՛խ, վա՛խ, վա՛խ...– հոգոց հանեց Բառադին:

– Որ բանը ծառերին է հասել՝ դրությունը շատ լուրջ է, – եզրակացրեց Բանասերը:

Պինդ, կարշնեղ 30-ին մոտ տղամարդը բլինդաժ մտավ, և հայրը հասկացավ, որ Արջն է:

– Ծանոթացեք,– ասաց տղան,– լրագրող է, հորս ընկերն է, եկել է քո մասին թերթում գրելու:

Արջն ու հայրը իրար ձեռք սեղմեցին:

– Իմ մասին ինչի՞ եք գրում, սրանց մասին գրեք,– Արջը գլխով ակնարկեց տղաներին:

Հայրը չպատասխանեց, աչքերը կկոցելով երկար նայեց Արջին ու վերջապես ասաց,

– Դուք... Դուք քանդակագործ չէի՞ք...

– Ի՞նչ,– ականջներին չհավատացին այս ու այն կողմից:

«Քանդակագործ» բառը բերանից բերան անցավ: Արջը ժպտաց քթի տակ ու քիչ լռելուց հետո ասաց.

– Ինչո՞ւ էի... Հիմա էլ եմ քանդակում:

– Ի՞նչ եք քանդակում...

– Տղամարդ: Չե՞ք զգում ոնց են տղամարդացել էս երեխեքը: Ընկերոջդ տղայից չե՞ք զգում...

– Զգում եմ:

– Իմ մասին գրել պետք չի: Այ էս Բառադուլ մասին գրեք՝ բվի տեսողություն ունի, գիշերն աչքից բան կփախնի՞, Թմբլիկի մասին գրեք՝ հո նշանառու չի, Բանասերի մասին գրեք՝ նրա նման հետախույզ շատ չի պատահում, ձեր ընկերոջ տղայի մասին գրեք՝ առյուծի սիրտ ունի, ջոկատի հոգին է, մյուսներն էլ նրանցից պակաս չեն, ամեն մեկը մի կանթեղ տղա..

– Կանթե~ղ...– մրմնջաց հայրը:

– Լուսավորչի կանթեղը չե՞ք հիշում...

Լույս է տալիս երկար դարե,
Ու վառվում են միշտ անշեջ
Սուրբի մաքուր արցունքները
Յուղի տեղակ նրա մեջ,–

արտասանեց Արջը, շրջեց հայացքը:– էդպես չէ՞ր, Բանասեր... – էդպես էր:

Մի պահ թախծոտ, սրտամոտ լռություն տիրեց: Հեռու հեռուներում ինչ-որ տեղ կրակեցին: Արջը նայեց ժամացույցին, ծալի զարկեց.

- Թռեք դիրքերը: Նրանց ճաշը պրծավ, հիմա շիզոֆրենիկը վրա է տալու:– Դարձավ նկարչի հորը.– Ձեր գնալու ժամանակն է:

Հայր ու որդի իրար նայեցին: Հայրը հոգոց հանեց.

– Ծնողներիդ ի՞նչ ասեմ...

– Ասա՝ հենց մեզ փոխարինեցին՝ մի քանի օրով կգամ;

– Իմ կողմից համբուրեք Նկարչի հոր ճակատը, որ այսպիսի տղա է մեծացրել,– ասաց Արջը, նայեց բլինդաժում մնացած մի քանի հոգուն, խստացրեց հայացքը:

– Դիր-քե-րը...

Մնացածների հետ տղան էլ գնաց:

– Գուցե մնա՞մ,– աղերսանքով Արջին նայեց հայրը: – Գուցե մի բանի պետք գա՞մ...

– Բացառված է,– ասաց Արջը, – Մի քիչ արագ իջեք, մեքենաներին չհասաք՝ կցրտահարվեք: Աստված տա՝ կհանդիպենք:– Արջը սեղմեց հոր ձեռքը և գնաց տղաների հետևից:

Նկարչի հայրը ճամպրուկը մոռացած գնաց: Ու երբ հետևում մնաց լեռնագագաթը իր ցից քարերով, երբ հետ նայեց ու հասկացավ, որ իրեն այլևս տեսնող չկա՝ նստեց ձյան միջից դուրս պրծած կապույտ, պսպղացող քարին, գլուխն առավ ափերի մեջ ու մղկտալով լաց եղավ:

Դիրքերում Արջը մոտեցավ Նկարչին, մեղավոր ժպտաց. – Մի մոմենտ մտածեցի, թե հորդ հետ կգնաս: Կներե՛ս…

20. 1. 93

ԽԵՆԹԵՐԸ

Վանդ Ահաանյանին

Վիկտոր Բալայանին

Գեղարդում, վանքի պարսպից քիչ հեռու, ձորահայաց բլուրին փոքրիկ մի գերեզման կա: Տապանաքարին՝ Ահարոնյան Սանդուխտ, տակը, փակագծերի մեջ՝ Էրզրում-Մարսել-Հայաստան: Հայրանունը չկա, ծննդյան ու մահվան տարեթվերը չկան, փոխարենը գերեզմանին հակված կաղամախենու դեղնակարմիր տերևներն են, որ ձորն ի վար սահող աշնան քամու շորշոփից թրթռում, տեղափոխ են լինում ու ասես չկամենալով՝ իրենց տեղը տապանաքարի վրա զիջում նորերին: Քիչ հեռվուում երևում է վանքի գմբեթը՝ երկինք ձգտող խաչի իր աղերսանքով, ձորից հասնում է ծերացած, նվաղած գետի մրմունջը, որ գալիս հպվում է տապանաքարի ականջին: Տեսնես ի՞նչ է ասում…

***

– Բարև եղբայր:

– Բարև:

– Իմ անունը Երվանդ Ահարոնյան է:

– Իմ անունը Վիկտոր է:

Մարսելի հայկական եկեղեցու բակում էին: Երկու տաք, մարդամոտ հայացքներ նայում էին իրար:

– Ինչպե՞ս իմացար, որ հայ եմ,– ձեռքսեղմումից հետո հարցրեց Վիկտորը:

– Դյուրին գործ է,– ասաց Երվանդը:– Հայ եկեղեցու բակում հայի պիտի հանդիպես:

Երվանդը հիսունին մոտ էր, նիհար, բարձրահասակ, հայի քթով ու բեղերով, ակնոցն աչքերին, Վիկտորը՝ նրան հասակակից, նրանից փոքր-ինչ ցածր, խոշոր աչքերում՝ խոշոր ժպիտ:

– Կարող է՝ իտալացի եմ կամ իսպանացի,– կատակեց Վիկտորը,– նրանք քրիստոնյա չե՞ն…

– Է,– գլուխը ետ ձգեց Երվանդը:– Ես ձեզ երեկոյան սինեմայում տեսա:

– Իսկապե՞ս,– ուրախացավ Վիկտորը:– Նկարը հավանեցի՞ր:

Հայաստանի կինեմատոգրաֆիստների փոքրիկ խումբը նախորդ օրը մարսելաբնակ հայերի համար ցուցադրել էր «Նահապետ» ֆիլմը:

– Շա~տ,– աչքերը գոցելով ժպտաց Երվանդը:– Տիկինս, քույրս, մայրս էլ շատ հավնեցան:

– Ուրախ եմ,– ասաց Վիկտորը, նկատեց եկեղեցու դռնից դուրս եկող իր ընկերներին, ցանկացավ ևս երկու խոսք ասել ու հրաժեշտ տալ, Երվանդը կանխեց.

- Քեզմե բան մը պիտի խնդրեմ:

– Լսում եմ,– ընկերներին ձեռքով նշան անելով՝ գործնական դարձավ Վիկտորը:

– Խանութս հոստեղեն հարյուր քայլի վրա է: Երթանք իմ խանութը, ես քու մազերը պիտի շտկեմ:

Վիկտորը ծոծրակը շփեց, ամաչե՞ց, չամաչե՞ց չափն անցկացրած իր մազերի համար:

– Երևանում չհասցրեցի,– արդարացավ:

– Հոգ չէ: Երվանդ Ահարոնյանը քեզի ամոթով չի ձգեր: Առաջարկը շատ էր անկեղծ ու անսպասելի, Վիկտորը դժվարանում էր պատասխանել: Այդ կացությունից դուրս բերեց ընկերների խումբը:

– Ծանոթացեք,– ասաց Վիկտորը,– Երվանդ Ահարոնյանն է:

Երվանդը սեղմեց նրանց ձեռքերը՝ պրոֆեսիոնալի հայացքով վայրկենապես գնահատելով նրանց սանրվածքը.

– Անոնք վարսահարդարի կարիք չունին,– ասաց:

– Առաջարկում է գնալ իր խանութը, որ մազերս շտկի,– բացատրեց Վիկտորը:

– Ու դեռ մտածո՞ւմ ես,– ասացին ընկերները:– Երևանում գլուխ կգովես՝ Ֆրանսիայում են մազերս շտկել:

– Այո,– մատը ցցեց Երվանդը,– չպետք է զղջա:

– Հյուրանոցում կհանդիպենք,– ասացին ընկերներն ու Երվանդին ողջունելով հեռացան:

Վարսավիրանոցը կամ, ինչպես Երվանդն էր ասում, «խանութը», իսկապես հեռու չէր: Ոչ մեծ սրահում չորս-հինգ վարսավիրներ իրենց գործին էին, և նրանց մուտքը աննկատելի մնաց: Երվանդը ֆրանսերեն բան ասաց, վարսավիրները մի վայրկյան միայն կտրվեցին աշխատանքից, քաղաքավարի ժպտացին Վիկտորին ու շարունակեցին գործը:

– Նախ սուրճ խմենք՝ հետո՞ անցնինք մեր զբաղմունքին, թե՞...

– Սուրճը վերջում,– ասաց Վիկտորը:

– Ես իմ հասկացողությամբ պիտի շտկեմ, դուն ձայն չպիտի հանես,– նրան հայելու դիմաց նստեցնելով ասաց Երվանդը:

– Ես քեզ ծառա,– կատակեց Վիկտորը:

– Ոչ, ծառայողը ես եմ:

Երվանդը «ծառայեց», և Վիկտորն իմացավ, որ այն օրիորդը՝ քառասունն անց, նիհար, բարձրահասակ, Երվանդի Գոհար քույրիկն է, միասին են աշխատում, որ ծնողները Էրզրումից են գաղթել, որ մայրն ու քույրը միասին են ապրում, որ

– Մայրիկիս տունը հին էր, անհարմար էր, խաբեցինք, ուղարկեցինք Ամերիկա, մյուս քույրիկիս մոտ, քանի մը ամիս են վերադարձավ, իր տունը չճանցավ...

– Ինչո՞ւ չճանաչեց...

– Քիչ մը խնայողություն ունեինք՝ քանդեցինք, նորը շինեցինք,– խնդաց Երվանդը:

– Ուրախացա՞վ...

– Ի~նչ կսես,– գլուխը ետ տարավ Երվանդը:– Դու անոր զայրույթը պիտի տեսնեիր: Կմղկտար, իմ տունը լավ էր կսեր, ես այն տան մեջ ձեզ մեծցուցի:

– Մայրդ կա՞...

– Է հա... Չըսի՞, որ քույրիկիս հետ կապրին:

– Մոռացա, կներես:

Երվանդը Վիկտորի ականջի մոտ կռացած, համարյա շշուկով էլի բաներ պատմեց ու բերանի գո՞լն էր պատճառը, թե՞ արած պատմություններն էին տաք՝ Վիկտորն զգաց, որ ջերմություն է առինքնում այդ մարդը:

Հետո սուրճ խմեցին, այցետոմսեր փոխանակեցին և հրաժեշտ տվեցին իրար: 1987 թիվն էր: Աշուն էր:

***

Երևանում Վիկտորը մի քանի անգամ հպարտացավ. «Մազերս Մարսելում շտկած են», և մազերի աճի հետ շտկվածությունն էլ մոռացվեց, շտկողն էլ, հետո ո՞վ էր Մարսելն ու նրա մարդամոտ վարսահարդարին հիշողը, երբ Թատերական հրապարակում ահռելի մարդաշարժ սկսվեց ու իր արձագանքը տվեց Հայաստան աշխարհի ընդերքում՝ ավերելով քաղաքներ ու գյուղեր և անվանվեց «Տիեզերական երկրաշարժ»: Հայաստանի առօրյան երկրաշարժային էր: Անսպասելին հեռախոսազանգն էր:

– Վիկտորին եմ ուզում:

Կեսգիշերին մոտ էր, Վիկտորը նոր էր վերադարձել Սպիտակից՝ ջարդված սրտով ու մարմնով:

– Ես եմ:

– Բարև եղբայր...

– Բարև:

– Երվանդ Ահարոնյանն է:

– Երվանդ Ահարոնյանը: Մարսելեն... մազերդ շտկեցի...

– Հա՛... Ե՞րբ ես եկել:

– Արդեն երրորդ օրն է: Դեղորայք եմ բերած վիրավորներու համար:

–Երկա՞ր ես մնալու...

– Վաղը երեկոյան մեկնելու եմ:

– Բա չպիտի հանդիպե՞նք,– ավելի՝ քաղաքավարության համար ասաց Վիկտորը: Հանդիպելու ոչ սիրտ կար, ոչ՝ ժամանակ:

– Անպայման, անպայման,– շուտասելուկով ասաց Երվանդը: – Դեռ շատ կարևոր խնդրանք մը ունիմ:

Պայմանավորվեցին, և առավոտ կանուխ «Վեկտորը մեքենայով մոտեցավ հյուրանոցի մուտքին: Երվանդն արդեն սպասում էր: Հին ծանոթներ էին՝ եղբայրաբար ողջագուրվեցին:

– Խնդրանք մը ունիմ,– անմիջապես գործնական դարձավ Երվանդը:

– Ասա:

– Կհասկնամ, որ ձեր այս վիճակում անպատեհ է խնդրանքս...

– Ասա:

–- Պիտի խնդրեմ միասին Գեղարդ երթանք:

– Գեղա՞րդ...

– Մեծ մամիկիս շիրիմը պիտի քեզ ցույց տամ...

Վիկտորն, իհարկե, ոչինչ չհասկացավ, բայց տաքսիրտ-տաքհոգի մարդ էր՝ չկարողացավ մերժել.

– Գնացինք:

Ճանապարհին Երվանդը պատմեց եղելությունը Էրզրումում ծնված և Մարսելում իր մահկանացուն կնքած Երվանդի տատը մի երազանք է ունեցել՝ թաղվել Հայաստանում: Չի իրականացել: Երվանդի հայրը մի ցավ է ունեցել, չի կարողացել կատարել մոր խնդրանքը և մահվան մահճում վերջին խոսքն է եղել. «Մորս փափագը չկատարվեց»...

Գիտե՞ս ինչ դարդ փոխանցեց ինձ հայրս... – Հասկանում եմ:

– Երբ հայ համայնքում ըսին ղեղորայքը ուղեկցող է պետք՝ ինձ անմիջապես մեջտեղ նետեցի:

– Պարզ է,– Հենց այնպես ասաց Վիկտորը:

– Մեծ մայրիկիս աճյունն ամփոփեցի արկղի մեջ, վերցրրեցի հետս...

– Հա՛...– վերջապես գլխի ընկավ Վիկտորը:

– Ղեղորայքը չէին ստուգում: Այլապես երկու կառավարություններու համաձայնությունն էր պետք: Իսկ այսպես՝ հայդե բաբամ, եկանք հասանք հայրենիք...

– Գեղարդ ինչպե՞ս հասար...

– Իբրև տեսարժան վայր՝ երեկ բերին, վանքը ցուցադրեցին: Արկղը վերցուցի հետս: Մեծ չէր, այսքան բան էր,– Երվանդը ցույց տվեց արկղի չափը:

– Ապրես,– զգացվեց Վիկտորը:

– Հապա ինչպե՞ս,– հպարտացավ Երվանդը:– Մինչև մյուսներր վանքի վեր ու վարը կուսումնասիրեին՝ պարիսպեն դուրս ելա, փոքրիկ փոս մը գտա, արկղը տեղավորեցի մեջը, մատներով ճանկռեցի, հող ու քար լեցուցի վրան...

– Սիրտդ հանգստացա՞վ...

– Հապա ինչպե՞ս... Վանք մտա, հիշատակի մոմ վառեցի...

– Հողը թեթև լինի...

– Այստեղ հարազատ մեկը չունիմ, կուզեմ որ մեկ իմանա մեծ մամիկիս շիրիմի վայրը...– Երվանդի ձայնը՝ կերկերաց, նա հայացքը թեքեց՝ թաքցնելով, համար աչքերի արտասուքը:

– Քեզ հետ եղողները չիմացա՞ն...

– Ոչ: Բարդություններեն խուսափեցի:

Մեքենան ճանապարհի կեռմաններն էր հաղթահարումն և ամեն մեկն իր մտքերին՝ լռում էին: Միայն մի անգամ վարորդը շրջեց գլուխը, նայեց Երվանդին ու ասաց.

– Ցավդ տանեմ...

***

Հայ ենք՝ տարին մի անգամ լինում ենք Գեղարդում՝ կնունք է, հյուրեր են, բան են: Մի խոսքով: Ամեն գնալիս Վիկտորն ու վարորդը դաշտային ծաղիկներ էին պոկում, դուրս ելնում վանքի պարսպից, գնում կանգնում էին մեծ մամիկի շիրիմի մոտ, լռում, ապա վանք մտնում ու մոմ վառում հոգու հանգստության համար: Հերթական մի այցելության ժամանակ Վիկտորն ասաց.

– Էսպես չի լինի: Հարկավոր է քար դնենք տատի գերեզմանին:

– Ամեն անգամ ուզում էի ասել ամաչում էի,– ամոթխած ժպտաց վարորդը:

Որոշեցին, և ինքը, վարորդը ու մի քանի ընկեր տղերք մի ամսում գլուխ բերեցին այդ գործը: Շիրիմին մեքենայով մոտենալն անհնար էր՝ ամեն ինչ ձեռքերով էին տանում-բերում: Վանքի աշխատողները, որ սկզբում չէին հասկանում ինչ է կատարվում՝ իմանալով հաշտվեցին վանքի հարևանությամբ գերեզմանի ներկայության հետ, միայն չկարողացան զարմանքը զսպել ու Վիկտորի մասին ասացին.

– Խենթ է այս մարդը:

Աշխատանքի ավարտին քահանա հրավիրեցին:

– Ո՞վ է հանգուցյալը,– հարցրեց քահանան:

– Մեր տատն է,– պատասխանեց Վիկտորը: Քահանան օրհնեց գերեզմանը, խունկ ծխեց:

***

Պատմությունն այս գուցե այստեղ էլ ավարտվեր, եթե դարձյալ մի երեկո չհնչեր հեռախոսի զանգը.

– Վիկտորին եմ ուզում:– Կանացի ձայն էր: Հարսը Վիկտորին հեռախոսի մոտ կանչեց:

– Գոհարն եմ,– ասացին,– Մարսելեն: Երվանդ Ահարոնյանի քույրիկը:

– Հա... ուրախ եմ:

– Ղարաբաղի երեխաներու համար օգնություն ենք բերեր: Մնունդ է:

– Լավ եք արել: Շատ լավ եք արել:

– Ես ձեզ Մարսելում եղբորս խանութում եմ տեսեր: Ինձ հիշեցի՞ք:

Վիկտորն, իհարկե, չէր հիշում, բայց ասաց.

– Հիշեցի, ինչպե՞ս չհիշեցի:

– Եղբայրս ինձ ըսավ, որ մեծ մամիկիս շիրիմի տեղը միայն ձեզ է հայտնի.

– Հայտնի է:

– Պիտի խնդրեմ, որ այդ տեղն ինձ ցույց տաք: Պայմանավորվեցին, հանդիպեցին: Ճանապարհին Գոհարը պատմեց, որ Մարսելի հայ համայնքը օգնությունն ուղեկցող պիտի ընտրեր.

– Ես ինձ իսկույն մեջտեղ նետեցի:

– Լավ արեցիք:

– Հայրենիքում չէի եղած և հետո ալ մեծ մամիկիս շիրիմին այցելելու խնդիրը կար: Այս առիթը ես պիտի չկորսնցնեի:

Գերեզմանի մոտ Վիկտորը, Գոհարը, վարորդը կանգնեցին, լռեցին, բայց Գոհարի հայացքը, գերեզմանին չէր, շիրիմից դուրս ուրիշ բան էր փնտրում: Վերջապես Գոհարը չդիմացավ.

– Այս ո՞ւմ գերեզմանն է:

– Տատիս,– ասաց Վիկտորը:

– Ձեր տատի:

– Իմ:

– Աստված հոգին լուսավորի,– ամոթխած ժպտա Գոհարը:– Հիմա պիտի խնդրեմ իմ մեծ մամիկի շիրիմի տեղը ցույց տաք:

– Այս է,– քթի տակ ժպտաց Վիկտորը:

Գոհարը նախ չհասկացավ ու ավելի ուշ, երբ գլխի ընկավ՝ շփոթվեց.

– Ամա՜ն,– ասաց:

Վարորդն օգնեց, որ նա նստի ցանկապատին կից փոքրիկ նստարանին:

– Ամա՜ն,– ասում էր, օրորվելով ժպտում ու աչքերից, սահեցնում արտասուքը:

Ապա տեսախցիկով գերեզմանը վերևից նկարահանեց, վարից նկարահանեց, կողքից նկարահանեց: Տեսագրում էի ու հարցնում.

– Ո՞վ կառուցեց այս գերեզմանը՝ պետությո՞ւնը կառուցեց, եկեղեցի՞ն կառուցեց, բարեգործակա՞նը…

– Թոռները կառուցեցին,– վերջապես չդիմացավ վարորդը:

***

Գուցե և այսպես ավարտվեր այս պատմությունը, եթե մի գիշեր չհնչեր հեռախոսազանգը.

– Մարսելեն Երվանդ Ահարոնյանն է: Վիկտորին եմ ուզում:

– Վիկտորը տանը չի,– ասաց հարսը:

– Ո՞ւր է: Գոհարը, տեսաերիզները բերեց, մեզ խենթացրեց: Կուզեմ երախտիքս հայտնել…

– Վիկտորը հիվանդանոցում է…

Հեռախոսով արտասուքը երևո՞ւմ է, Երվանդը տաքսիրտ էր, հաստատ տեսավ հարսի աչքերի արտասուքը:

– Ի՞նչ է պատահեր,– բղավեց,– ինձ ըսե՝ ի՞նչ է պատահեր:

– Սրտի ինֆարկտ է... Երկրորդ ինֆարկտն է,– քիչ ուշացումով ասաց հարսը:

– Ե՞րբ պատահեց, ինչպե՞ս պատահեց...

– Առաջինը երկրաշարժից հետո,– քիթր վեր Քաշեց հարսը,— երկրորդն էլ Ղարաբաղի էս դեպքերից հետո...

– Բժիշկներն ի՞նչ կսեն:

– Ասում են՝ շատ վատ է:

Մարսելում լռում էին, Երևանում լռում էին: Վերջապես Մարսելը խոսեց.

– Ձեր երկրում բժշկություն չկա, ջանմ, հայտնի բան է...

– Չկա,– հոգոց հանեց հարսը:– Ձեր զանգի մասին իրեն կհայտնեմ:

– Սպասե,– բղավեց Երվանդը,– թող խորհիմ:

– Խորհելու բան չկա,– ասաց հարսը:– Ասում են՝ վեց ամիս կապրի կամ չի ապրի...

– Աղջիկ, - ավելի բարձր բղավեց Երվանդը,– խելքդ գլուխդ հավաքե,– լռեց, սպասեց:– Հավաքեցի՞ր:

– Հավաքեցի:

– Երևան-Փարիզ ուղերթը գիտե՞ս... Ամեն հինգշաբթի:

– Գիտեմ:

– Այսօր կիրակի է: Դուն հինգշաբթի Վիկտորին հիվանդության նկարագիրն ինձի ուղարկե: Կոլտաս օդաչուին հասկցա՞ր...

– Հասկացա;

– Առայժմ իրեն ոչինչ մի հայտներ, հասկցա՞ր..

– Հասկացա:

– Հինգշաբթի օդանավը ես պիտի դիմավորեմ:

Աղմուկը հիվանդանոցում սկսվեց.

– Ախր, քեզ ո՞վ է խնդրել նրա հետ էդ մասին խոսել,– չէր հանգստանում Վիկտորը:

Հարսը գլուխը կախ լռում էր:

– Գիտե՞ս էդ բուժումը էնտեղ ինչ արժի... Հարսը գլուխը կախ լռում էր:

– Նա ինչի տեր է՝ մի սովորական վարսավիր... էլ գնալ-գալու ծախսը չեմ ասում...

– Հիմա ի՞նչ անեմ,– վերջապես խոսեց հարսը:–Տոմսը վերցված է, վիզան՝ ուղարկված...

– Վիզան ուղարկված,– հեգնեց Վիկտորը:– Ձեզ ով է խնդրել իմ առողջության հարցերը դուք որոշեք...

– Փաստը մնում է փաստ,– միջամտեց կինը:– Հինգշաբթի Փարիզում քեզ դիմավորելու է:

– Է,– գլուխը խռոված շրջեց Վիկտորը:– Ի՞նչ եք ինձ անհարմար վիճակի մեջ գնում:– Լռեց, լռեց:– Գոնե մի անգամ հետս խոսեիք:

– Ինքն ասաց՝ չասեք:

– Շատ բան ասաց,– բղավեց Վիկտորը: – Ինձ վերաբերող բանը ես չիմանա՞մ...

– Քեզ հուզվել պետք չի,– ասաց կինը:

– Չհուզվելո՞ւ բան եք արել...

Կինը հարսին աչքով արեց, և նրանք առանց ծպտունի հիվանդասենյակից դուրս ելան:

***

Վիրահատության յոթերորդ օրը Վիկտորին հիվանդանոցից դուրս դրեցին: Արևոտ, պայծառ օր էր:

– Մորս տանը պիտի ապրիս,– ասաց Երվանդը:– Իմ տունը աղմուկը շատ է՝ երեխաներ, երաժշտություն, հեռուստացույց... Քեզ հանգիստ է պետք:

– Ոնց կասես,– ասաց Վիկտորը:– Ինձ մնա՝ վաղը Երևան կվերադառնամ:

– Ծո խենթ է սա տղան,– կանչեց Երվանդը:– Բժիշկն ասավ քեզ ամենաքիչը տասը օր հանգիստ է պետք:

– Ինձ ի՞նչ է եղել,– ժպտաց Վիկտորը:– Բողկի պես առողջ եմ:

– Գոհար,– հրճվանքով կանչեց Երվանդը:– Սա հայաստանաբնակները ամբողջովին խենթ են...

– Ինչո՞ւ...

– Կսե՝ բողկի պես առողջ եմ: Բողկն ի՞նչ է, ծո, կուտես, պետքարան կերթաս...

Վիկտորը հասկանում էր՝ Երվանդի ուրախությունը չէր զսպվում, դրսում էր, Գոհարինը՝ ներսում:

– Ամոթ է, ի՞նչ կմտածե Վիկտորը:

– Ասե՞մ ինչ կմտածեմ:

– Է, - Երվանդի աչքերից զվարճությունը կաթում էր:

– Լացս զսպեմ ու ձեր ցավը տանեմ կմտածեմ,– Վիկտորը ձգվեց ու համբուրեց Երվանդին ու Գոհարին:– Հասկացա՞ք ինչ կմտածեմ...

– Մենք ցավ չունինք,– ասաց Գոհարը:– Մեր ցավը դուն էիր, ան ալ Աստծո օգնությամբ վերջացավ:

Դեռ հիվանդանոցի մուտքի մոտ էին, քամին ծովից գլուխ, պտտեցնող բույրեր էր բերում, բայց ավելի գլուխ պտտեցնողը եղբոր և քրոջ անթաքույց ուրախությունն էր:

– Գիտե՞ս բժիշկն ինչ ըսավ,– Վիկտորի թևը ցնցեց Երվանդը:

- Ի՞նչ:

– Հարցուց՝ ի՞նչ մասնագետ է, ըսի՝ գրող է: Ըսավ՝ որ էշ ծնվեր, այս պրոբլեմը չէր ունենար...

– Խայտառակ...– խտխտոցով ծիծաղեց Գոհարը:

Հիմա Վիկտորը ննջարանում պառկած մտաբերում էր այս ամենը, և մտքերը հաստատ շարունակվելու էին, եթե հյուրասենյակից հանկարծ ձայներ չլսվեին: Վիկտորը հասկացավ, որ

հարևանուհի Սրբուհին է եկել Երվանդի մայրիկի մոտ ու զրույց են սկսել: Եվ որովհետև երկուսն էլ ութսունն անց էին ու ծանրականջ՝ նրանց ձայները շատ էին բարձր ու պարզորոշ ննջարան հասնող.

– Հիվանդին բերեցի՞ք:

Սրբուհին էր:

– Բերեցինք:

- Բարեհաջող անցա՞վ...

– Աստծու օգնությամբ:

– Սո՞ւղ նստեց այդ ամենը...

Ձարդ մայրիկը հազաց.

– Սուղ էր:

- Այդ քո Երվանդը խենթ է, ջանմ: Ի՞նչ կարողության տեր է, որ այդպիսի ծախսերի տակ ընկավ: Հա՞յրն էր, եղբա՞յրն էր, ով էր այդ մարդը...

– Հայրը միշտ կսեր՝ Երվանդիս խենթությունը կըսիրեմ...

– Ժամանակը փոխվեր է,– առարկություն չընդունող ձայնով ասաց Սրբուհին, – Խենթերի ատենն անցավ...

Վիկտորը ցանկացավ գոռալ՝ «Ո~չ... Խենթերը ժամանակ չեն ճանաչում»...– Փոխարենը՝ վերմակը քաշեց գլխին ու փղձկաց...

***

Գեղարդում վանքի պարսպից քիչ հեռու, ձորահայաց բլուրին, փոքրիկ մի գերեզման կա: Քիչ հեռվում երևում է վանքի գմբեթը՝ երկինք պարզած խաչի իր աղերսանքով, ձորից հասնում է ծերացած, նվաղած գետի մրմունջը, որ գալիս, հպվում է տապանաքարի ականջին: Տեսնես ի՞նչ է ասում...

24. 4. 93 թ.

ԾՆՈՒՆԴ

Ձոյա Թորոսյանին

Չնայած հակամարտող կողմեր էին, Շուշվա ու Ստեփանակերտի հրամանատարական կետերից երբեմն ռադիոկապով խոսում էին իրար հետ. սպանվածների փոխանակության հարց էր լինում, գերիների փոխանակության հարց, և խոսակցությունը ռուսերեն էր լինում: Կողմերը, իհարկե, տիրապետում էին միմյանց լեզուներին, իրար մեջ էին մեծացել, բայց հիմա, երբ դարձել էին թշնամիներ, պատերազմի լեզուն ռուսերենն էր: Եվ երբ կեսգիշերին Ստեփանակերտի հրամանատարական կետում աշխատեց ռադիոկապը, ու Շուշվա հրամանատարական կետից

խոսակցության հրավիրեցին հայկական կողմի հրամանատարին, հերթապահը զարմանքից խոշորացրեց աչքերը.

– Վահ, հայերեն են խոսում...

Ոչ մեծ սենյակը ծխաշատ էր և, ինչպես միշտ, այդ ժամին զինվորական ղեկավարներն ամփոփում էին պատերազմական օրվա արդյունքներն ու վաղվա անելիքները:

– Ձեզ են ուզում, հրամանատար,– ասաց հերթապահը: Հրամանատարը նայեց ժամացույցին, դեմքին տարակուսանքի նշան հայտնվեց, ելավ, մոտեցավ ռացիային.

– Սլուշայու,

_ Մամեդովն է, հրամանատար,– ասացին այն կողմից, և նրա հայերեն խոսելուց հրամանատարը հասկացավ, որ արտակարգ բան է պատահել:

– Ի՞նչ կա, Մամեդով...

– Զինվոր լինելուց առաջ մարդ ենք եղել, չէ՞...

– Եսիմ,– հոգոց հանեց հրամանատարը,– էսօր «գրադից» 26 զալպ եք տվել մեր խաղաղ բնակչության գլխին:

Այն կողմը մի պահ լռեց: Հրամանատարը լսեց, թե ինչպես լսափողում բեկբեկվեց Մամեդովի շնչառությունը:

– Խոսքս դրա մասին չի, հրամանատար,– ասաց Մամեդովը:

– Ինչի՞ մասին է...

– Կինս մեռնում է, օգնիր:

– Կի՞նդ...

– Ծննդաբերում է: Մեր բժիշկները գլուխ չեն հանում…

Հումորի զգացողությունը հրամանատարին երբեք չէր լքում.

– Ես գլուխ կհանե՞մ…

– Ղարաբաղի ամենալավ ակուշերը ձեր մոտ է: Անունը՝ Զոյա…

- Հա~..

– Մարդ ենք,– Մամեդովի ձայնը կերկերաց,– առաջին երեխաս է...

- Կստացվի՞ որ,– ասաց հրամանատարը:– Երկու օր առաջ դուք ծննդատունը հրետակոծել եք:

– Պիտի ինքը գա, ինքը... Կնոջս տեղափոխելը, ասում են, անհնար է:

– Ինքը՞,– զարմացավ հրամանատարը :

– Ոսկու մեջ կկորցնեմ,– ասաց Մամեդովը:

– Հո մենակ ոսկով չի՞,– հրամանատարը մռայլվեց, լռեց մի պահ:– Ի՞նչ իմանամ՝ ո՞ղջ է, վիրավո՞ր էր քո ասած ակուշերը...

– Իմացիր, աղաչում եմ, իմացիր: Ժամանակ չկա:

– Ընդունենք՝ իմացա: Բայց կգա՞...

– Համոզիր, աղաչում եմ, համոզիր: Մորս, քրոջս կբերեմ ձեզ մոտ, պատանդ կթողնեմ:

– Նախ՝ պիտի ինքս ինձ համոզեմ,– ձայնը խստացրեց հրամանատարը:

– Տղամարդ ենք՝ հենց հիմա չոքեմ դիմացդ, խնդրեմ...

– Մի քանի րոպեից կապնվիր:

– Ես կապը չեմ անջատում: Սպասում եմ, հրամանատար, սպասում եմ...

***

Ամուսինն ու երեխաները քնած էին: Զոյան ճաշ էր եփում: Առաստաղի տակ, անկյունում, քամուց խշխշում էր ցելոֆանը: Մի քանի օր առաջ Շուշիից գիշերով հրետակոծել էին, արկը «թրաշելով» պոկել էր խոհանոցի վերին անկյունը: Անձրևից, քամուց պատսպարվելու համար դրսից՝ տանիքի տակից, ցելոֆանով ծածկել էին: Ամեն աչքն ընկնելիս Զոյան փառք էր տալիս Աստծուն, որ հենց այդ տեղին է դիպել արկը: «Բա որ մի քիչ էս կողմ կպներ...»: Հիմա նա ճաշի մեջ լցնելու համար գինձն ու սամիթն էր մանր կտրատում և հիշում այսօրվա ընդունած ծնունդները, երեք տղա, երկու աղջիկ: Բոլորն էլ Ստեփանակերտից: Առաջ, երբ խաղաղություն էր, կողքի շրջաններից էլ էին բերում, բայց հիմա ո՞նց բերեն: Մի ժամանակ համոզված էր, որ «տատմեր» մասնագիտությունը վերացել է և, գուցե, այդպես էր: Բայց, ահա, պատերազմի այս երեք տարիներին գյուղերում թե տատմեր էին՝ տատմեր դարձան ու հո ծնունդներ չեն ընդունում... Մահացության ոչ մի դեպք Զոյայի ականջին չէր հասել: Նա միշտ հպարտությամբ էր ասում. «Կեցցեն Ղարաբաղի տատմերներրը և զայրանում ծննդատան պայմաններից բողոքող բուժանձնակազմի վրա: Բա գյուղի տատմերներն ի՞նչ ասեն: Նրանք կրեմլյան ծննդատա՞նն են ծնունդ ընդունում...»: Իսկ Ղարաբաղի կանայք թքել են պատերազմի ու դժվարությունների վրա՝ ծննդաբերում են: Եվ դա Զոյայի ամենամեծ հրճվանք–ուրախությունն էր:

Զոյան կտրտված կանաչին լցրեց ճաշի մեջ, խառնեց, ցանկանում էր աղիությունը որոշելու համար համտես անել հեռախոսը զանգահարեց: Գդալը կողմ դրեց, գնաց վերցրեց լսափողը:

– Շտաբից է,– ասացին:

– Շտաբի՞ց...– ականջին չհավատաց Զոյան:

- Ձեր կարիքն է զգացվում:

Զոյայի հումորի զգացողությունը նույնպես տեղն էր.

– Շտաբում էլ են ծննդաբերո՞ւմ...

– Շուշիում են ծննդաբերում:

– Չհասկացա...

Զոյային բացատրեցին եղելությունը:

– Ոչ ոք ձեզ չի ստիպում: Ինքներդ որոշեք...

– Որոշելու բան չկա, պիտե գնամ:

– Էդպիսի տղամարդ կի՞ն– եք,– զարմացան շտաբից:

– Տղամարդ չեմ: Կին եմ:

– Մորն ու քրոջը կբերի, պատանդ կթողնի:

– Ինձ պատանդ պետք չի:

– Ինչքա՞ն ժամանակից գանք...

– Կես ժամից:

– Մեքենան կքշենք, կբերենք ուղիղ ձեր տան մոտ:

– Ո՞ւմ մեքենան:

– Մամեդովի:

– Ոչ, ասաց,– Զոյան,– էդ էր պակաս, որ նա իմ տան քանդված լինելը տեսնի:

***

Ստեփանակերտից Շուշիին ասացին.

– Եկեք:

– Ե՞րբ...

– Հենց հիմա:

– Մորս ու քրոջս վերցնում եմ հետս:

– Պետք չի: Ինչո՞վ եք գալու:

– Վոլգայով: Ձերոնց ասեք՝ չխփեն:

- Չեն խփի:

– Որտե՞ղ ենք հանդիպում... Քաղաքի մուտքի մոտ:

***

Զոյան քիչ աղ ավելացրեց ճաշին, գնաց, արթնացրեց ամուսնուն.

– Արթնացիր,– դիպավ ուսին:

Գիշերվա անակնկալներին սովոր էին՝ ամուսինը միանգամից ելավ, նստեց անկողնում.

– Բա՞ն է պատահել...

– Գնում եմ ծննդաբերություն ընդունելու,– Զոյան միացրեց ննջասենյակի լուսամփոփը:

– Բա ասում էիր՝ գիշերը ծնունդ չի լինի...

– Անսպասելի եղավ:

Նա անցավ զգեստապահարանի դռան ետևը, զգեստափոխվեց և երբ դուրս ելավ դռան ետևից՝ ամուսինն աչքերին չհավատաց.

– Ծննդատուն ես գնո՞ւմ, թե՞ հարսանիք...

– Գնում եմ Շուշի:

– Ո՞ւր...

– Ծննդկանը Շուշիում է:

– Ո՞վ ՝...

– Մամեդովի կինը:

– Էն արնախումի՞...

– Արնախումի:

Ամուսիններն իրար լավ գիտեին՝ իրենց ասածն արած էր: Ամուսինը ելավ, հագնվեց, անցավ ճաշասենյակ, ծխախոտ վառեց: Քիչ անց ճաշասենյակ մտավ կինը.

– Տեսքս ո՞նց է...

– Լավ է:– Ամուսինը, որ գլխիկոր քայլում էր սեղանի շուրջը, զսպեց իրեն, գնաց, ընկղմվեց բազկաթոռում:– ճի՞շտ ես անում, որ գնում ես:

– ճիշտ եմ անում:

– Հո քեզ չպիտի՞ բացատրեմ, թե ուր ես գնում...

– Բացատրել պետք չի,– Զոյան մոտեցավ, նստեց մյուս բազկաթոռին, ամուսնու դիմաց, և նրանք աչքերով մխրճվեցին միմյանց մեջ ու անձայն խոսեցին:

Ամուսինն ասում էր. «Այ խելառ, դու հասկանո՞ւմ ես՝ ի՞նչ ես անում: Որ անհաջող եղավ, ախր, քեզ նրանք էնտեղ կշորթեն: Իսկ եթե Աստծո օգնությամբ հաջող լինի՝ ո՞նց ենք պրծնելու քաղաքի բերանից՝ գնացել մեզ ու մեր երեխեքին կոտորողի կնոջ ծննդաբերությունն է ընդունել... Մեր նահատակներին հիշիր՝ ախր բոլորի մտքում «վրեժ» բառն է...»: Կինը հասկանում էր ու աչքերով պատասխանում. «Ես կին եմ, մայր եմ և եթե կարող եմ՝ իրավունք չունեմ մյուսին օգնելու, որ մայր դառնա: Վրեժը գնացեք, դիրքերում լուծեք: Իսկ եթե չեկա՝ հանգիստ եմ, երեխեքս քեզ պես հայր ունեն»: Ամուսինն ասում էր. «Զոյա ջան, Զոյա ջան էդ ի՞նչ ես անում...»: Կինն ասում էր. «Գիտես՝ ուրիշ կերպ չեմ կարող...»:

Խոհանոցից գալիս, հասնում էր աշնանային քամուց թրթռացող ցելոֆանի խշխշոցը ու ավելի խտացնում ճաշասենյակի թախծոտ լռությունը:

– ճաշը պատրաստ է,– ասաց կինը:

– Լավ,– ասաց ամուսինը, և նրանք դարձյալ աչքերով մխրճվեցին իրար մեջ: Ամուսինն ասում էր– «Գուցե հետո գա՞մ»... Կինը. «Չէ, չէ, գժվե՞լ ես»... Ամուսինը. «Կին ջան, քույր ջան, մայր ջան, ախպեր ջան, էդ ի՞նչ ես անում...»: Կինը. «Մի քանդվիր, տղամարդ եղիր»...

Ո՞վ գիտի՝ նրանք լուռ ու մունջ էլ ինչե՞ր էին իրար ասելու, եթե չինչեր մեքենայի ազդանշանը: Երկուսով ոտքի ելան, Զոյան ուզեց գնալ, համբուրել քնած երեխաներին, հետո զգաց, որ կփլվի՝ արագ քայլերով սենյակից դուրս ելավ:

***

Հրամանատարը «Վոլգայով» իր երկու թիկնապահների հետ Զոյային հասցրեց պայմանավորված վայրը: Մամեդովի մեքենան սպասում էր: Մամեդովն ու երկու կին մեքենայից դուրս ելան: Հրամանատարն ու Զոյան՝ նույնպես: Շուրջբոլորը խոնավ, խավար լռություն էր:

– Կանանց հետս չվերցնե՞մ,– ցածրաձայն ասաց Հրամանատարը:– Որոշիր:

– Ոչ: Ես գնացի,– նա սեղմեց հրամանատարի ձեռքը և քայլեց դեպի Մամեդովի մեքենան:

Մամեդովն արագ շրջանցեց, բացեց առջևի դուռը:

– Ես հետևում կնստեմ:

Կանայք տեղավորվեցին, մնացին հրամանատարների անշարժ կանգնած իրենց մեքենաների մոտ: Երկուսն էլ ծխում էին:

– Մինչև ալլահի դուռը լավությունդ չեմ մոռանա, հրամանատար,– վերջապես ասաց Մամեդովը:

– Տեսնենք,– ասաց հրամանատարը:

Ասես պայմանավորված էին՝ երկուսն էլ շրջվեցին, մտան իրենց մեքենաները և շարժվեցին հակառակ ուղղություններով:

***

Մամեդովը ճանապարհի դարուփոսերին չէր նայում՝ քշել էր, որ քշում էր: Ծուշի մտնելիս Զոյան ասաց.

– Մի րոպեով մոտենանք Ղազանչեցոց եկեղեցուն:

Կանայք անհանգիստ շարժվեցին, բայց ոչինչ չասացին: Մամեդովը մեքենան մոտեցրեց եկեղեցուն: Զոյան տեսավ եկեղեցու մոտ իրար վրա դարսված կանաչ, երկար արկղերը և հասկացավ, որ եկեղեցին վերածվել է ռազմական պահեստի: Քիչ հեռվում ժամապահն էր: Մամեդովը ելավ, բան ասաց ժամապահին, ապա բացեց մեքենայի դուռը:

– Խնդրեմ:

Զոյան արագ քայլերով գնաց, համբուրեց եկեղեցու պատը, խաչ հանեց, ետ դարձավ, մտավ մեքենա.

– Գնացինք:

Ծննդատան մոտ թվում էր թե հավաքվել է Ծուշվա զորամասի ողջ հրամանատարական կազմը. «Կոտորվեք դուք», – մտքում ասաց Զոյան: Աշխույժ զրուցում, քրքջում էին, մեքենայի մոտենալուն՝ զգաստացան: Պարզ է՝ յուրաքանչյուրն եկել էր ցուցադրելու անհանգստության իր չափը հրամանատարի կնոջ տառապանքների նկատմամբ: Երբ մեքենայից դուրս ելան՝ նրանք դանդաղ քայլերով ընդառաջ եկան: Զոյան խիստ հայացքով նայեց Մամեդովին.

– Սա ծննդատո՞ւն է, թե բանակի շտաբ...

– Մարդիկ անհանգստանում են:

– Ասացեք՝ թող հեռանան: Նրանք ներվայնացնում են:

Մամեդովն ասաց, և նրանք իսկույն տարբեր ուղղություններով հեռացան: Գլխավոր բժշկի առանձնասենյակում բարձր չիներն էին՝ 5 – 6 հոգի, սենյակը՝ ծխի մեջ կորած: Նրանց մուտքին՝ բոլորը ոտքի ելան:

– Զինվորականները հեռանան,– ասաց Մամեդովը, և զինվորականները գնացին:

– Ծննդկանը վիրահատարանո՞ւմ է,– հարցրեց Զոյան:

– Վիրահատարանում,– ասաց գլխավոր բժիշկը:

– Կարճ, երկու խոսքով, ասեք բժշկական ձեր եզրակացությունը:

Գլխավոր Բժիշկը բժշկական տերմինները մեջ գցելով ցանկացավ անել հիվանդության պատմությունը, Զոյան ընդհատեց.

– Հասկանալի լեզվով ասացեք ձեր եզրակացությունը, որպեսզի հարազատները հասկանան:

– Թունավոր հղիություն՝ հորդ արնահոսությամբ: Կամ մայրը պետք է փրկվի կամ՝ երեխան...

– Ո՞ւմ եմ փրկելու,– հարազատներին նայեց Զոյան:

– Երեխային,– միաբերան ասացին Մամեդովի մայրն ու քույրը:

Զոյան նայեց Մամեդովին: ճակատին քրտինքի խոշոր կաթիլներ կային, ժպտո՞ւմ էր, չէ՞ր ժպտում՝ չէր հասկացվում:

– Երեխային,– տնքաց Մամեդովը:

– Հիմա բոլորդ հեռացեք հիվանդանոցից,– հարազատերի վրա բղավեց Զոյան:– Ձեր հոտն առա՝ վիրահատությունը կդադարեցնեմ:

Գլխավոր բժշկի ուղեկցությամբ առանձնասենյակից մինչև նախավիրահատարան հասնելը Զոյան պարզ գիտակցեց, որ այս օրը կարող է լինել իր կյանքի վերջին օրը...

***

Վիրահատությունը տևեց չորս ժամից քիչ ավելի: Փրկվեցին և՛ մայրը, և՛ երեխան: Տղա ծնվեց: Մամեդովի մեքենան Զոյային հասցրեց ճիշտ այնտեղ, որտեղից վերցրել էր Հրամանատարի մեքենան, որ սպասում էր Զոյային, նրան շտաբ տարավ:

– Ինչո՞ւ շտաբ,– չհասկացավ Զոյան:

– Ամուսինդ շտաբում է:

Երբ Զոյան առանձնասենյակ մտավ՝ բոլորը ոտքի թռան, «ուռա» գոչելով ծափահարեցին: Ասես իրենք էին տղա ունեցել: Միայն ամուսինն էր սեղանին կքված, գլուխն առել ափերի մեջ, անշարժացել: Զոյան մոտեցավ ամուսնուն, ձեռքը հպեց ուսին և նստեց կողքին: Մյուսներն էլ՝ յոթ-ութ հո- գի, նստեցին: Բոլորը նայում էին Զոյային, սպասում էին խոսք ասի, բայց Զոյան ոչինչ չէր ասում: Անշարժ հայացքը մի կետի՝ լռում էր:

– Հը՞– չդիմացավ հրամանատարը: Զոյան սթափվեց.

– Գործ էր՝ արեցինք, վերջացրեցինք...

– Բա հետո՞,– ասացին կողքից:

– Ի՞նչ հետո... հա, հետո բերեցին ոսկի ու արծաթ լցրեցին դիմացս:

– Տրաֆեյ է,– կատակեցին:

– Ասացի՝ ձեզ լինի, մենակ մեր պատանդների հետ մի քիչ մարդավարի վարվեք:

– Որ երեխային փրկելու էիր՝ գիտեինք,– ասաց հրամանատարը:– Մորը ո՞նց փրկեցիր...

– Որտեղի՞ց գիտեիք...

— Անընդհատ կապի մեջ էինք:

– Ի՜նչ սիրուն կին է, ի՜նչ սիրուն կին է,– գլուխն ափերի մեջ առնելով ճոճվեց Զոյան:– Գեղեցկուհի...– Նա լռեց մի պահ ու անսպասելի սկսեց քրքջալ– Իշի գլուխներ, իշի գլուխներ,–

ասում էր ու քրքջում: Ամուսինը հայացքով փորձում էր սաստ ել նրան ամոթ է, ի՞նչ ձևի ես խոսում, բայց Զոյան չէր սաստվում:– Իշի գլուխներ...

Եվ երբ քրքիջը վերածվեց հեկեկոցի՝ նոր գլխի ընկան, որ նրա նյարդերը տեղի են տալիս: Սենյակում լռություն տիրեց: Ոմանք ծխեցին: Հրամանատարը ելավ, մոտեցավ Զոյային, շոյեց մազերը, կռացավ այտը համբուրեց.

– Պետք չի: Դու քո պարտքը կատարեցիր, քույրիկ ջան, պետք չի:

Զոյան թաշկինակ հանեց, չորացրեց աչքերն ու քիթը, զգաստացավ.

– Կներեք:

_ Դու մեզ ներիր,– ասաց հրամանատարը:– Դու ներիր, որ քեզ էս պատմության մեջ գցեցինք:

– Ո՞նց թե,– ըմբոստացավ Զոյան:– Չգնայի՝ մորն էլ էին սպանելու, երեխային էլ: Իշի գլուխներ...

_ Լավ,– գործնական դարձավ հրամանատարը:– Գնա, հանգստացիր՝ հետո կխոսենք:– նա սեղմեց սելեկտորի կոճակը:– Վարորդին ասեք, մեքենան մոտ բերի:

Տանը մարդ ու կին նորից ընկղմվեցին բազկաթոռների մեջ ու իրար նայեցին:

– Մի գիշերվա մեջ ծերացար,– վերջապես խոսեց Զոյան:

– Որ իմացա պահանջել են երեխային փրկես՝ հասկացա, որ մորթվելու ես: Ես քեզ հո գիտեմ...

Խոհանոցից նորից եկավ, հասավ աշնան քամուց թրթռացող ցելոֆանի խշխշոցը:

Այդ օրը քաղաքի վրա Շուշիից ոչ մի կրակոց չեղավ:

– Հաջորդ օրը նորից «գրադ» կայանքները քրքրեցին քաղաքը և այնքան կատաղի, ասես նախորդ օրվա բացն էին լրացնում: Թե՞ հրամանատարի տղայի ծննդյան կապակցությամբ հրավառություն էին սարքել...

1993 թ.

ՀՈՎՎԵՐԳՈՒԹՅՈՒՆ

Կնոջս՝ Իրինային

Սաքոն արթնացավ խոհանոցից եկող շխկութխկից: Նա գոց աչքերով լսեց, թե ինչպես ամանեղենի ձայնը փոխվեց, դարձավ մոտեցող հատու ոտնաձայն, հրվող աթոռի զռռոց, և ճռճռոցով բացվեց պահարանի դուռը:

– Լույսը բացվե~ց,– ասաց Սաքոն:– Չէ, էս ձեներից պրծում չկա...

Նունեն զգեստապահարանի դռանն ամրացրած հայելուն նայելով մազերն էր սանրում: Հայելու միջով նա հայացք գցեց անկողնում պառկած ամուսնուն և չոր ու խիստ ասաց.

– Լույսն աշխատողի համար է բացվում, երեխային մանկապարտեզ տանողի համար է բացվում: Քեզ ի՞նչ..

Սաքոն գիտեր, որ իր խոսքը վեճ է ծնելու, հոգոց հանեց, անկողնուց ելավ, մեջքն անելով կնոջը՝ հագնվեց, սեղանին ընկած տուփից սիգարետ հանեց, վառեց, լուցկին չխկոցով գցեց սեղանին: Նրա լռությունը կնոջը ըմբոստություն թվաց և, երևի, դա այդպես էր ու այդ ըմբոստությունը բնում խեղդելու համար էր, որ Նունեն ասաց.

– Երեխան քնած է՝ ո՞ւր ես ծուխը լցնում թոքերը...

– Որ արթուն լիներ՝ կարելի՞ էր,– հաճույքով խայթեց Սաքոն:– Կլինի՞, որ մի առավոտ առանց վեճ ու կռիվ ստեղծելու տանից դուրս գաս:

– Իսկ կլինի՞ մի առավոտ, որ արթնանամ ու հասկանամ՝ էս տանը տղամարդ կա... Որ էս տան հոգսը նրա հոգսն ու ցավն է...

– Դու աչքերդ քսիր, աչքերդ...

Նունեն մատիտի ծայրը երբեմն բերանը մտցնելով արտևանունքներն էր սևացնում:

– Ինչո՞ւ պիտի չքսեմ,– չարախնդաց կինը: -Հագուստ՝ չունեմ՝ չունեմ, աչք էլ, հո, ունե՞մ, Իշխան Սաքո… Լավ էլ գտել են:

Սաքոն չպատասխանեց: Գնաց լվացվեց, սանրվեց հետ եկավ, տեսավ կինը երեխային է հագցնում: Կեքուն-կեսարթուն՝ աղջիկն աչքերը ճպճպացնում էր:

– Պապան մատա~ղ...– քանդվեց Սաքոն:

– Մատաղն էն կլինի, որ երեխադ կոշիկները հագնի: Ցրտից սրթսրթում է:

– Որ պատրաստ չեն, ի՞նչ անեմ...

– Մի շաբաթ է՝ մի զույգ կոշիկ է նորոգո՞ւմ:

– Մենակ քո՝ երեխան չի: Ուրիշներն էլ երեխա ունեն:

– Որ հիվանդացավ՝ էս ցուրտ տան մեջ ես ո՞նց եմ հիվանդ պահելու...

Տանն իսկապես ցուրտ էր: Սաքոն հայացքը գցեց լուսամուտից դուրս՝ հանդարտ անձրև էր մաղում:

– Հիմա ուղիղ գնում եմ Գերասի մոտ,– սեղանից լուցկին ու ծխախոտատուփը վերցրեց Սաքոն:

– Թե չի արել կանգնիր գլխին, թող նորոգի տա:– Նունեն աղջկան գրկեց, գուլպան ձգեց, հագցրեց ու այտը համբուրելով ասաց,– այ էդպես...

– Եղավ,– ասաց Սաքոն:– Կանգնում եմ գլխին, – ու տհաճ մթնոլորտը ցրելու համար՝ ծաղրական շարժումով ոտքը զարկեց հատակին:– Այ էսպես:

Աղջիկը կչկչալով խնդաց:

– Երանի ինձ,– տխուր ժպտաց Նունեն, - Ուրիշների մարդիկ տուն են պահում, իմը՝ քացի է գցում…

– Կռիվ ես փնտրո՞ւմ,– բղավեց Սաքոն: Ի՞նչ ես ուզում ինձնից...

– Ուզում եմ, որ մի քիչ պատասխանատվություն զգաս, – բղավեց կինը:– Նա-դա-ելո...

– Զզվեցրիր,– ատամները կրճտացրեց Սաքոն ու քայլեց դեպի դուռը:

– Հաց կառնես,– դռան շխկոցի հետ կանչեց կինը: Սաքոն զայրույթից փքված թոքերի օդը դանդաղ պարպելով աստիճաններով ծանրաքայլ վար իջավ, անցավ փողոցն ու հայտնվեց ոչ մեծ պուրակում: Առաջին տերևաթափն էր: Տարիքն առած, բարձրահասակ բարդիները դեռ կանաչ էին, մատղաշներն էին տերևաթափվում: Դա Սաքոյին հետաքրքրե՞ց, թե ուզեց միտքը կնոջից կտրել՝ կանգնեց, հայացքը ծառից ծառ փոխանցեց:

– Էս ի՞նչ ես նայում...

Հարևանն էր. արտասահմանյան թանկարժեք մարզահագուստով ու սպորտային կոշիկներով, փորը դեմքից բավականին առաջ ընկած՝ կողքին կանգնել, հևում էր:

- Ծառերը,– ասաց Սաքոն:– Փոխանակ սկզբում ծերերը տերևաթափվեն, հետո՝ ջահելները, հակառակն է՝ լինում:

– Երանի քեզ,– ժպտաց հարևանը ոլ սկսեց տեղում ցատկել:– Ցավը՝ տերևաթափն է:

– Վազո՞ւմ ես, պարոն Հարութ,– Էդպես, մի թեթև ձեռ առավ Սաքոն:

– Բա ի՞նչ անեմ,– ափը փորին հպեց Հարութը: – Չե՞ս տեսնում:

– Տեսնում եմ:

– Սաքո~,– ցատկը դադարեցնելով՝ թևը բռնեց Հարութը,– արի քեզ մի խելոք, բան ասեմ:– Նա թաշկինակ հանեց, չորացրեց գլխի ցանցառ մազերը:— Էդ արվեստանոցդ ինձ վարձով տուր:

– Նկարելո՞ւ ես,– քթի տակ խնդաց Սաքոն:

– Լուրջ,– թևը ցնցեց Հարութը:— Կոշիկի ցեխ դնեմ կամ խանութ դնեմ: Ահագին տարածություն է: Ի՞նչ ես ասում...

– Բան չեմ ասում,– ծխախոտ վառեց Սաքոն:

– Չնայած՝ խանութի համար հարմար չի: Չորրուրդ հարկ է:

– Երրորդ:

– Մեկ է՝ հարմար չի: Կոշիկի ցեխ՝ կդրվի: Ջուրը մեջը, տուալետը՝ մեջը: Հը՞...

–Բա ես որտե՞ղ ապրեմ,– անսպասելի ասաց Սաքոն:

– Սա տուն չի՞,– Գլխով դիմացի շենքը ցույց տվեց Հարութը:– Քեզ քի՞չ է... »

– Էստեղ ես քնում եմ, էնտեղ՝ ապրում...

- Վայ քո,– ափը ափին շրխկացրեց Հարութը: – Ամիսը երկու հազար կտամ:

– Չի լինի:

- Լսիր,– Ժպտաց Հարութը:– Որ ես ներկերը բերեմ, դու գույնը բռնես, վրձինն առնեմ ու քեզ պես խզբզեմ՝ ինձ նկարիչ չե՞ն դարձնի...

– Կդարձնեն:

– Դարձա՝ վեց ամսում արվեստանոց կունենամ: Փողով մի բան չի՞, - Նա ձեռքը գցեց Սաքոյի ուսը: - Հո չնեղացա՞ր...

– Չէ, հա, - ասաց Սաքոն ու մտովի շարունակեց. – «Հո չէի չափալախի... Չափալախես ու փախնես: Բա չէ՝ որ բռնեց՝ կջարդի»:

Ոչ բանուկ փողոցով մեծ արագությամբ անցավ «Զապորոժեցը», ջուր ցայտեց, որ նրանց չհասավ: Հարութը կողմ ցատկեց.

- Ո՞վ է հետևիցդ ընկել, պարազիտ,– մարզահագուստի փողքը զննեց Հարութը:– Մի դրամեքենային նայեք:

– Քո «Մերսեդեսը» նրա դիմաց՝ հեչ,– ժպտաց Սաքոն:

–- Էլ մի ասա,– Հարութը նորից բռնեց Սաքոյի թևը: - Թե իրիկվա կողմը էնտեղ ես՝ «Նապոլեոնով» բանով էն աղջիկներին առնեմ գամ:

– Որտեղի՞ց էլ տեղս գտար:

– Հլա չգտնեի: Ասացի՝ ընկերս նկարիչ է, ասացին՝ գնանք նկարները նայենք: Լավ ապրանք չէի՞ն...

– Մեկն էր նայում, էն էլ՝ հարամ արեցիր, կողքս նստիր հա, կողքս նստիր:

–- Նրանց քո նկարը պե՞տք է... Խմել էին ուզում: Ռեստորան՝ հարմար չի, բոլորը ինձ գիտեն: Որ արվեստից խոսեցին՝ քեզ հիշեցի:

– Բա ասում ես՝ խզբզեր:

– Դե խզբզում էր, էլի~,– ձեռքը Սաքոյի ուսին թփացրեց Հարութը:– Ի՞նչ ես ասում՝ գա՞նք:

– Եկեք,– Սաքոն զգաց, որ անձրևի կաթիլը ծոծրակից մեջքին է սահում՝ փշաքաղվեց, կծկվեց, ձեռքերը գրպանները խրեց:– Ես գնամ:

– Գնա: Մի քիչ ակտիվ եղիր, տնաշեն...

Սաքոն քայլեց և սպասում էր, որ հարևանը վազելով պիտի գա, հասնի իրեն ու նորից բան ասի, բայց Հարութը չէր գալիս, Սաքոն շրջեց գլուխը և տեսավ, որ նա հակառակ ուղղությամբ է վազում:

– Դու վազիր,– խոսեց Սաքոն:– Նապոլեոնով, բանով արի ու դուռս՝ փակ: Տեսնեմ աղջիկների հետ որտե՞ղ ես խզբզելու...

Նա իր անելիք մանր վրեժխնդրությունից հաճույք ստացավ, նկատեց քիչ հեռվում ընկած գարեքրի թիթեղյա տոլփը, քայլերը շեղեց ու մոտենալով՝ հո չտշե՛ց...

***

Հնակարկատի բուդկան փակ էր: Փոքրիկ դռանն անհամապատասխան հսկայական կողպեքից դանղաղ կաթում էր անձրևաջուրը, Սաքոն անճար-անօգնական կանգնեց, պտտեց հայացքը: Ոչ հեռու բանջարեղենի խանութին մոտեցավ բարձր թափքով բեռնատարը, հետընթացք կատարեց և հետնամասը խանութի դռանը՝ կանգնեց: Խանութից դուրս ելավ բեռնաթափող բանվորը՝ 60-ին մոտ ցածրահասակ մի տղամարդ, ճարպիկ շարժումով բարձրացավ, զննեց թափքի պարունակությունը, վար ցատկեց, ու հայացքն առավ Սաքոյի հայացքին: Սաքոն ձեռքի շարժումով հնակարկատից հարցրեց, բանվորը չհասկացավ.

– Սոխ է,– կանչեց,– լրիվ՝ ցեխ: Բայց ժողովուրդը մեկ է՝ կտանի,– ժպտաց նա:

– Գերասը,– կանչեց Սաքոն,– Գերասը:

– Չկա:

– Գալո՞ւ է...

– Ի՞նչ իմանամ,– ուսերը վեր քաշեց բանվորը:– Երեկ քեֆր լավ էր:– Բանվորը գործնական քայլերով գնաց, խանութ մտավ:

Սաքոն քիթը մոտեցրեց դռան ճեղքին, ցանկացավ բան տեսնել՝ չհաջողվեց:

– Ինքը՛, կողպեքը՛,– փնթփնթաց Սաքոն, կողպեքն ուժգնությամբ շխկացրեց դռանը:– Ունիվերմա՞գ է...– Նա դանդաղ քայլերով գնաց՝ երբեմն-երբեմն շրջվելով ու նայելով հնակարկատի բուդկայի կողմը: Անձրևը կարծես թե ուժ էր առնում:

– Սուրճ խմեմ,– ինքն իր հետ խոսեց Սաքոն, արագացրեց քայլերը, փողոցն անցավ ու մտավ սրճարան:

- Եկա՞ր, նզովյալ,– համարյա դատարկ սրահի անկյունից բամբ ձայնով կանչեց Մկրտիչը:– Շուշանիկ, մի գավաթ սուրճ՝ երիտասարդ ընկերոջս համար:

Մկրտիչի դիմաց գոլորշի արձակող սուրճ կար, օղու շիշ և կոպիտ, բազմանիստ բաժակ: Սաքոն մոտեցավ.

– Լույսը չբացվա՞ծ...

– Այո,– մատը ցցեց Մկրտիչը:– Եթե դեղ չկա՝ ինչո՞վ պիտի պայքարենք գլխացավի դեմ: Նստիր:

Սաքոն նստեց, նայեց շշին, օղու համն զգաց բերանում, փշաքաղվեց, ցնցվեց:

– Բա ես ի՞նչ եմ ասում,– Մկրտիչը օղի լցրեց, բաժակը հրեց Սաքոյի դիմաց:– Էս մեկը սուսուփուս խմիր:

– Խմե՞մ, որ...

– Սա իր շատախոսությամբ ինձ կգժվեցնի,– դատարկ աթոռներին դիմեց Մկրտիչը:– Դե՞ղ է՝ քիթդ բռնեմ, բերանդ լցնեմ...

Սաքոն բաժակը վերցրեց, գոցեց աչքերը:

– Սուսուփուս,– մատը թափահարեց Մկրտիչը: Սաքոն խմեց և այս անգամ ներսի վայրկյան առ վայրկյան աճող ջերմությունից փշաքաղվեց, ցնցվեց.

– Փու ո՛ ւ ու...

– Ես ի՞նչ էի ասում,– խնդաց Մկրտիչը:– Այ տղա, երբ պիտի մեջդ ճարպ կուտակես: Կաշիդ է ու ոսկորդ...

– ճարպ կուտակելու օրերն անցան...– Շուշիկը գոլորշու խշխշոցը տարածեց սրճարանում, տեղից դուրս ելավ, բաժակը բերեց, դրեց սեղանին:– Իր խելքին՝ ընկեր գտավ:

– Կյանքումդ գոնե մի անգամ տեսած կա՞ս, որ մարդու դիմաց օղու շիշ լինի ու մենակ մնա,– Շուշիկի ձեռքը բռնեց Մկրտիչը:

– Հիմա ասել էի, հա,– Շուշիկը ձեռքը պոկեց, լիքը մարմնին չներդաշնակող թեթև քայլերով գնաց իր տեղը:– Խուփը գլորվեց՝ գտավ պուտուկը.

Մկրտիչը գուցե պատասխաներ, բայց վաճառասեղանին մոտեցած թիկնեղ երիտասարդը Շուշիկին ծածկեց:

– Ցույց տուր ինչ ես ծխում, ասեմ՝ ո՞վ ես դու,– Սաքոյին դարձավ Մկրտիչը:

Սաքոն գրպանից դուրս բերեց, սեղանին դրեց «Պրիմայի» տուփն ու լուցկին:

– Հանճարեղ նկարիչ ես,– Մկրտիչը սիգարետ վառեց, ծխեց և անսպասելի գրպանից հանեց թուղթն ու գրիչը: – Նայիր,– ասաց, բան գծեց թղթին:– Սա ի՞նչ է... Պիտի իսկույն ասես:

Ամեոբա:

– Տըխ-մար... Ղարաբաղի քարտեզն է: Սա՝ Շուշին է,– օղ գծեց,– սա՝ Քարինտակը: Եղե՞լ ես...

– Որտեղի՞ց...

– Ես էլ չեմ եղել: Բայց դա կարևոր չի: Նրանք, ուրեմն, Շուշիից խփում են մեզ: Նրանք՝ սարի գլխին, մենք՝ սարի տակ: Մենք ի՞նչ պիտի անենք...

– Մենք էլ պիտի նրանց խփենք: Պարզ չի՞...

– Բայց որտեղի՞ց,– գրիչը թղթին կտկտացրեց Մկրտիչը:– Դա է խնդիրը:

– Սարի տակից,– ուսերը վեր քաշեց Սաքոն:– էլ որտեղի՞ց...

—- Թերուս,– գրիչը սեղանին գցեց Մկրտիչը:– Ձորից սարին խփել կլինի՞... Պիտի բարձր տեղ գտնենք:

– Իսկ բարձր տեղ կա՞,– չհասկացավ Սաքոն:

– Ուրեմն աշխարհում մի բարձր տեղ չկա՞... Պիտի գտնենք,– Մկրտիչը բռունցքով հարվածեց սեղանին:– Մեր դժբախտությունն էն է, որ էդպես էք կյանքում էդ բարձր տեղը չգտանք...

- Ընչի՞ ես գոռում,– չդիմացավ Շուշիկը:– Ես ամբողջ օրը ո՞նց եմ աշխատելու գլխացավս բռնեց:

– Բռնեց՝ բուժեմ,– Մկրտիչը օղի լցրեց:– Հո դեղ չի~:

– Դե լավ է,– դեմքը թեքեց Շուշիկը:

– Չե՞ս հասկանում՝ եղանակի հետ յոլա չեմ գնում, Շուշիկ ջան,– ձայնը մեղմեց Մկրտիչը, օղի խմեց, կում արեց սրճի բաժակից:– Հլա մի դուրս նայիր:

– Բա ես էսքանիդ հետ ո՞նց եմ յոլա գնում,– ժպտաց Շուշիկը:– Ամեն մեկդ մի եղանակ:

– Դու ուրիշ ես, քույրիկս,– ժպտաց Մկրտիչը: – Մի հատ էլ խմեցի՝ գալու եմ թուշդ պաչեմ:

– Ուրիշ չեմ,– ավելի լայն ժպտաց Շուշիկը:– Ասա՝ քաքիդ հետ յոլա չես գնում: էդքան բան:

– Դու ի՞նչ ես մռութդ կախել,– Սաքոյի վրա հարձակվեց Մկրտիչը:—- Մատուցող է գտել, ես լցնեմ՝ ինքը խմի... – Մկրտիչը օղի լցրեց, բաժակը հրեց Սաքոյի դիմաց:

– Է՛,– հոգոց հանեց Սաքոն և խմեց:

Եվ հայացքները ամեն մեկը մի կողմի վրա՝ լռեցին: Ցուցափեղկից դուրս՝ գորշ տանիքներին կպած երկինքն էր, մոտիկում՝ բազրիքից՝ անշտապ կաթիլք: Սրճարանը կամաց-կամաց մարդաշատ էր դառնում: »

– Մկրտի՞չ...

Շուշիկն էր:

- Ի՞նչ,– ձեռքը ծնոտի տակից իջեցրեց Մկրտիչը:

– Էս ինչի՞ եք սևն առել, սուգը մտել:

– Ի՞նչ ես ուզում անենք, տիկին Շուշանիկ;

– Մի բան ասեք՝ մարդու սիրտը բացվի: Սուրճ տա՞մ... Մկրտիչը վերցրեց օղու շիշը, թափ տվեց;

– Էստեղ բան մնա՞ց, որ բան ասենք,– նա ելավ, գրպանից փող հանեց, հաշվելով՝ գցեց սեղանին:– Քառասունութ ռուբլի:

– Տասնյոթ ռուբլի, – ասաց Սաքոն, գրպանից հանեց փողը, դրեց Մկրտիչի փողերի կողքին:

– Քիչ է, - մռայլվեց Մկրտիչը: – Ստոլիկների վրա՝ հարյուր տաս ռուբլի: Այ տղա, դրանք լրիվ սարսաղ են՝ արևոտ օրը՝ հարյուր տաս, անձրևոտ օրը՝ հարյուր տաս...

– Անձրևոտ օրը պիտի թանկ ասե՞ն,– ըմբոստացավ Սաքոն:

– Անխելք,– վրդովվեց Մկրտիչը:– Անձրևոտ օրը պիտի ձրի տան, արևոտ օրը՝ երեք հարյուր ռուբլի: Ճիշտ չի՞, Շուշանիկ...

Շուշանիկը գուցե պատասխաներ, բայց այդ պահին փակ անձրևանոցը թափահարելով ներս մտավ ակնոցով, մորուքով, բարձրահասակ մեկը, իրենով պատնեշեց Շուշանիկին և նայելով նրանց՝ գլուխն օրորեց:

– Եկա՞ր,– ուրախացավ Մկրտիչը, – Արի, պոետ, արի: Պոետը դանդաղ մոտեցավ, սեղանի շիշն ակնարկելով:

Ժպտաց.

– Ճիշտ եք սկսել:

– Շարունակությունն է ճշգրտում սկիզբը,– մատը փողերին պարզեց Մկրտիչը:– Ավելացրու:

– Ինչքա՞ն...

– Վաթսունհինգ ռուբլի է:

– Ավելացնելս ո՞րն է,– մեջ ընկավ Սաքոն: – Թոռ վերցնի, գնա, շիշն առնի, գա:

– Հանճարեղ միտք է,– կանչեց Մկրտիչն ու նայեց պոետին:– Էլ չխոսես:

Պոետը կեղծ հոգոցով վերցրեց սեղանի վրայի փողերն ու գնաց:

– Քեզ մի որպե ժամանակ,– կանչեց Սաքոն: Պոետը լսե՞ց, թե՞ չլսեց՝ դա կարևոր չէր. նրա խոսքն այս պահին ինքնահաստատման, իր չգիտես ո՞ր առավելությունն ընդգծելու բնույթ ուներ:– Ծվշվացնելով գնա, արի:

Շուշիկը պատվիրելուն չսպասեց, գոլորշու խշխշոցը գցեց սրճարանով մեկ, երեք բաժակ սուրճ ափսեին դրած եկավ, բաժակները դրեց սեղանին, վերցրեց դատարկ շիշը:

– Հողեմ գլուխները,– ասաց:– Հաճախորդ չկա՝ լույս տալիս են, հաճախորդներս հավաքվում են՝ կտրում: Բա սա գո՞րծ է...

– Ի՞նչը,– չհասկացավ Սաքոն:

– Սա,– ձեռքը տարուբերեց Շուշիկը:– Երեք հոգի էս պուճախում, երեք հոգի՝ էն: Ինչո՞ւ չեն հիմա լույսր կտրում, որ հաճախորդի ժամին տան...

– Ո՞վ տա...– Չհասկացվեց՝ Սաքոն դիտմա՞մբ էր խոսեցնում Շուշիկին:

– Ղեկավարները: Հեչ հիշո՞ւմ են, որ էս սեղանների վրա դարձան ղեկավար, էն կեղծավոր «տիկին Շուշիկները» հիշո՞ւմ են…

– Գրիր վրաս,– ձեռքը թափ տվեց Սաքոն:

– Ըը—— Մռնչաց Մկրտիչը:– Հիմա ես ի՞նչ պիտի անեմ:

– Ձահրումար,– ժպտաց Շուշիկը:– Ի՞նչ պիտի անես: Պիտի խմես,– ասաց, դարձյալ թեթև քայլերով գնաց իր տեղը:

– Հետո... Հետո ի՞նչ պիտի անեմ...

– Տուն չունե~ք, տեղ չունե~ք, երեխա չունե~ք,– դեմքը խստացրեց Շուշիկը:– Ձեզ պե՞տք է…

– Երեխիս կոշիկները փինաչու մոտ են,– ասաց Սաքոն:

– Ամեն օր ասում ես՝ չվերցրի՞ր,– կշտամբանքով նայեց Շուշիկը:

– Տեղը նստո՞ւմ է,– ուսերը վեր քաշեց Սաքոն: – Ասա՝ գնացե՞լ ես…

– Էսօր գնացել եմ: Հաստատ:

– Էստեղ եկողը փինաչի կհիշի՞,– քթի տակ խնդաց Շուշիկը:

– Ի՞նչ անեի: Անձրևին կանգնեի, սպասեի՝ Գերաս, ե՞րբ ես գալու...

– Հիմա Գերասի հետ խոսել է լինո՞ւմ,– դժգոհեց Շուշիկը:– Կոշիկ առնողն ո՞վ է, բոլորն էլ հներն են կարկատել տալիս: Հո չի գոռոզացե՛լ...

– Էնպես էլ կողպեք է դռանը կախել,– գլուխն օրորեց Սաքոն:— Տնաշենը:

– Հա,– հաստատեց Շուշիկը:– Հիմա ակադեմիկոսն ո՞վ է Գերասի դիմաց: Փի~...

– Գերասին բան չասեք,– անսպասելի զայրացավ Մկրտիչը:– Էլի էն Գերասն է,– նա բութը հպեց ցուցամատի ծայրին:– Հեչ էսքան էլ չի փոխվել:

– Էդպես իմացիր,– ասաց Շուշիկը,– բան հիշեց: – Էն օրը Գագոյիս կոշիկները տարա: Ղիք-դիք նստել՝ ռադիոյով խորհրդարանի ճառերն է լսում: Հեչ չնայեց էլ՝ «երեք օրից կգաս»: Ասում եմ՝ այ Գերաս, պարապ նստած ես, երեք մեխ է՞ խփիր, վերցնեմ, գնամ: Ի՞նչ ասի, որ լավ լինի...– Նա դարձյալ խշխշոց գցեց, գոլորշին ոլորվեց դեմքի մոտ, կորավ, սուրճի բաժակը

ափսեին դնելով պարզեց հաճախորդին ու շարունակեց:– Ասում է՝ նախկին հաճախորդներս են խոսում՝ լլսե՞մ... Ասում է՝ յոթանասուն տարի լլուտ-չփլախների օրենքով շարժվեցինք՝ բան չհասկացանք, հիմա էլ էս լլուտ-չփլախնե՞րը... Սրանք էլ են, ասում առուփախ անելու, ուրիշ վարիանտ չկա...

– Բա որ ասում եմ՝ Գերասին բան չասե՞ք,– ոգևորվեց Մկրտիչը:

Պոետն եկավ ու ընդհատեց նրանց խոսակցությունը: Նա շիշը դրեց սեղանին, ժպտաց.

– Մոսկովյան... հատուկ...

– Բաժակները,– ասաց Սաքոն:

– Բերեիր, էլի, – փնթփնթաց պոետը:– Պարապ նստած ես:

– Դու սխալ կբերե՞ս,– աչքերը ոլորեց Սաքոն:

– Առանց կռիվ սարքելու, ախպոր պես,– դեմքը թթվեցրեց պոետը, գնաց բաժակները բերեց, դրեց սեղանին:

Մկրտիչը վերցրեց օղու շիշը, ճրճրթացնելով կափարիչը բացեց:

– Համա ուժ ունե՞ս,– քծնե՞ց, թե՞ նախանձեց պոետը:

– Հը,– մռլտաց Մկրտիչը, – Ասա՝ քանդակագո՞րծ... – Կկոցեց աչքերը, նայեց պոետին:– Մի օր չբռնե՞մ սրան քանդակեմ...

– Քանդակված պրծած է,– շիշը վերցնելով բաժակները լցրեց Սաքոն:– Սրա ի՞նչը քանդակես:

– Ձեր հավեսը չունեմ,– բաժակը շուրթերին մոտեցրեց պոետը:– Ես գնացի:

– Սպասիր,– զայրացավ Մկրտիչը:– Քեզ ո՞վ խոսք տվեց: Ռեխդ փակիր: Էդպես:– Մկրտիչը ձգեց, երկարացրեց շուրթերն ու տնազ արեց:– Երկրորդ լսափող...

– Շնորհակալություն,– ժպտալով խաղի մեջ մտավ պոետը:– բայց ռեխ՝ չէ պարոն նախագահող: Ռեխը խորհրդարանական արտահայտություն չէ...

– Ռազ-գա-վոր– չի-կի,– ասաց Սաքոն:

Պոետը չհամբերեց, խմեց, շունչը տեղը բերեց ու լրջացրեց դեմքը.

– Ես լեզվի հարցն եմ մտցնում օրակարգ, պարոն նախագահող,– պոետը խեթ նայեց Սաքոյին:

– Գլուխդ պատով ես տալիս,– բղավեց Մկրտիչը, մատը դրեց դիմացի թղթին:– Տղերքն էստեղ զոհվում են՝ դու լեզվի հարցն են օրակարգ մտցնո՞ւմ...

– Ես բողոքում եմ էթիկայի հանձնախմբին,– փորձեց կատակի տալ պոետը:

– Գլուխդ պատով ես տալիս:

– Մկրտիչ,– սրճեփին կոպեկով կտկտացրեց Շուշիկն ու գլխով կշտամբեց:

– Դու սուս,– Շուշիկին նայեց Սաքոն:– Սրան հասնում է:

Պոետը փնչացրեց ու հաստատ պատասխանելու էր, բայց անսպասելի բան կատարվեց, փոքրամարմին մեկը, չգիտես որտեղից հայտնվելով, նստեց նրանց սեղանի մոտ, նայեց; Մկրտիչին.

– ճիշտ բան ես ասում:

– Ի՞նչ եմ ասում...

– Տղերքը զարկվում են: Փոխանակ խելք-խելքի տան, մի ճար անեն՝ հավաքվել, ջուր են ծեծում:

– Ապրես,– ասաց Մկրտիչը:– Ինունդ ի՞նչ է...

- Գրիշ:

Մկրտիչը օդի լցրեց պոետի բաժակը, հրեց Գրիշի դիմաց:

– Խմիր:

–- Խմելու համար չեկա:

– Որ ասում են՝ խմիր,– ասաց Սաքոն:

– Խմեմ,– բաժակը վերցրեց Գրիշը:– Էն տղերքի կենացը: Էս ցրտին, էս անձրևին դիրքերում կանգնած տղերքի կենացը...

– Ոտքի,– հրամայեց Մկրտիչը և բաժակը ձեռքին կանգնեց:

Մյուսներն էլ կանգնեցին: Պոետը աճապարելով գնաց, բաժակ վերցրեց, ետ դարձավ, ցանկացավ օդին լցնել՝ Սաքոն շիշը կողմ տարավ.

– Դու լեզվի հարցը օրակարգ վեցրու:

– Զոհվածների համար,– խռպոտ ձայնով ասաց Մկրտիչը:

Բաժակներն անխոս իրար մոտեցրին, խմեցին ու նստեցին: Մկրտիչը գլուխն առավ ափերի մեջ, դանդաղ ճոճվեց.

– Ի~նչ տղերք էին...

– ճանաչո՞ւմ էիր,– Սաքոյի թևը ցնցեց Գրիշը:

– Ո՞նց չէ,– խրոխտացավ Սաքոն:

– Միասի՞ն էիք...

– Միասին: Էն բարձր տեղից խփում էինք...

– Որ էդպես չեն խոսում,– պոռթկաց պոետը:– Առավոտից իրիկուն էստեղ վեր ընկած՝ միասին էին... Արաղս տուր:– Պոետը ձեռքը տարավ շշին:

Սաքոն սեղանից թռցրեց շիշը, կանգնեց, շիշը բարձրացրեց գլխից վեր.

– Փախիր էստեղից:

– Պետք չի,– Սալայի ու պոետի արանքը մտավ Գրիշը:

– Սաքո,– ծղրտաց Շուշիկը:

– Գնա,– պոետին հրեց Գրիշը,– Շառդ քաշիր, գնա:

– Դու՝ կռվողը, ես էլ՝ քեզ համար արաղ բերո՞ղը, պարազիտ,– չհանգստացավ պոետը:– Արաղս տուր...

– Քեզ չասի՞ն՝ գնա,– Գրիշը գրպանից դանակ հանեց:

– Միլիցիա – բղավեց Շուշիկը:

Մյուս հաճախորդներր ոտքի ելան, մոտ վազեցին: Դանակի տե՞սքն էր պատճառը, Շուշիկի ճիչ-ծղրտո՞ցը, մյուսների իրարանցո՞ւմը:– Պոետը վերցրեց անձրևանոցն ու ինքն իր հետ խոսելով սրճարանից գնաց:

– Դու նստիր, ախպեր, դու նստիր,– դանակը գրպանը մտցնելով Սաքոյին նստեցրեց Գրիշը:– Ես դրանց գիտեմ:

– Թող գնա իր սեղանի մոտ՝ իր արաղը ծախի,— թոքերի օդը պարպելով մռլտաց Սաքոն:

– Հա~,– գլխի ընկավ Գրիշը:– Ստոլիկ ունի: Որ Ղարաբաղը մոռացած՝ լեզվի մասին էր խոսում՝ ուրեմն ձենը տաք տեղից է գալիս: ճիշտ չի՞, ախպեր...– Գրիշը ցնցեց Մկրտիչի թևը:

Մկրտիչը, որ այս ընթացքում անշարժ նստած էր, ափերը դեմքից իջեցրեց: Հազիվ նշմարելի արտասուքի երկու կաթիլ սահեցին նրա գոց աչքերից:

– Ընկերներին հիշեց՝ դարդոտվեց ախպերս,– հոգոց հանեց Գրիշը:

– Երկինքը կապույտ-կապույտ,– վերացած խոսեց Մկրտիչը:– Բազեն հանդարտ պտտվում է, բարձրից վայելում էս կանաչ-կարմիր աշխարհի գեղեցիկը: Արտը քամուց ծփում է, իր տաք շունչը հասցնում բազեին, բազեն էդ շնչից հարբում, կայֆ է բռնում: Լորն արտից կանչում, իր տեղն է ասում բազեին, բայց ի՞նչ լոր կարող է նրան կայֆից կտրել թևը թափ է տալիս, լորին ասում՝ դու սուս ու էլի պտույտ, պտույտ...– Մկրտիչը բացեց աչքերը ու տխուր ժպտաց:– Ձահել ժամանակ բանաստեղծություն էի գրում: Թո~ւ,– մռայլվեց միանգամից,– էս անձրևը չպրծա՞վ...

– Սա պրծնելու անձրև չի,– ասաց Գրիշը: բաժակները լցրեց:– էդ քո ասած բազե տղերքի կենացը, որ էս անձրևին ու ցրտին էն բարձր տեղերում են: ճիշտ չե՞մ ասում...

– ճիշտ ես ասում,– բաժակ վերցրեց Սաքոն:

– Ե՞րբ եք էն կողմերից եկել...

– Ե՞րբ...– Սաքոն ճպճպացրեց աչքերը:– Քիչ առաջ: Գրիշը խմեց, բաժակը շրխկոցով դրեց սեղանին:

– Պիտի էն անտերից մի հատ հետներդ բերած լինեիք: Վերցնեի, Բաղրամյանով բարձրանայի ու ամեն ստոլիկի մոտ մի հատ զռացնեի: Ասեի՝ իշի տղերք, ձեր արյունը էն տղերքի արյունից կարմի՞ր է... Նրանք էնտեղ կյանք տան, դուք՝ էստեղ վիզ հաստացնե՞ք...– Գրիշը ծխախոտ վառեց:– է~, երգ շատ գիտեմ, ափսոս՝ ձեն չունեմ:

– Մի ասա,– քթի տակ ժպտաց Սաքոն,– լավ էլ խոսում ես:

– Հը,– քմծիծաղ տվեց Գրիշը: – Խոսում, որոշում եմ՝ վաղը ելնում եմ, գնամ էն տղերքի մոտ ու չեմ գնում ու չեմ գնում... Դուք՝ ուրիշ եք:– Նա վերցրեց կիսատ թողած բաժակը:– Ձեր կենացը,– ասաց, նայեց Շուշիկին:– Իմ էս երկու քաջ ախպերների կենացը:

– Հա,– ձայն տվեց Շուշիկը:– Ախպերներիդ հետևից հասնել չի լինի:

Սրճարանը միանգամից մթնեց:

– Հողեմ գլուխները,– լսվեց Շուշիկի ձայնը:– Հաճախորդներիս ժամը մոտենում է՝ ո՞նց կլիներ, որ չանջատեին:

–Հիմա ես ի՞նչ պիտի անեմ...

– Ոռնա, անտեր անպետք,– մթան մեջ խոսեց Շուշիկը:– Տեսնեմ՝ լսողդ ո՞վ է...

***

Հեռախոսը զանգահարում էր:

– Սաքո,– ասաց կանացի ձայնը,– Սաքո, արթնացիր:

Զգացվեց, որ մթության մեջ ցնցեցին Սաքոյին: Սաքոն վերջապես թախտից իջավ, օրորվելով քայլեց, զարնվեց, վար գցեց աթոռը.

– Քո տիրոջ մերը,– մրթմրթաց, խարխափելով գտավ հեռախոսը, փորձեց լսափողը վերցնել՝ լսափողը ձեռքից ընկավ ու լսվեց,– Տու, տու, տու…

– Զահրումար, – ասաց, գնաց միացրեց արվեստանոցի լույսը: Արվեստանոցի պատից կախված նկարներ էին, պատերի տակ շարված՝ նկարներ, մեջտեղում մուրեոտն էր, լուսամուտի մոտ, անկյունում՝ օլիֆի, գինու ու օղու շշեր, քիչ այն կողմ ցածրիկ սեղանն էր, երկու հնամաշ բազկաթոռ, սեղանին սուրճի բաժակներ կային, «նապոլեոն» կոնյակի շիշ, օղու շիշ, ծխախոտ: Սաքոն բարձրացրեց աթոռը և աչքն ընկավ թախտին պառկած աղջկան: Անձրևանոցը չէր պատսպարում նրա մարմինը՝ աղջիկը ձգեց, փակեց կրծքերը՝ ոտքերը բացվեցին: Սաքոն գոցեց աչքերը, գլուխը ցնցեց, նորից նայեց: Չէ, երազ չէր.

– Դու ո՞վ ես...

– Հը, - գլուխը շարժելով քմծիծաղ տվեց աղջիկը:

Հեռախոսը նորից զանգահարեց:

– Չորրորդ անգամն են զանգահարում,– ասաց աղջիկը:– Ինչ անում էի՝ չէիր զարթնում...

Սաքոն մատը տարավ շուրթերին, լռեցրեց, գնաց, վեր, վերցրեց լսափողը.

– Ասա:

– …

– Երևի չէր միանում:

– …

– Ո՞նց չեմ զանգել: Մեր հեռախոսները չգիտե՞ս:

– …

– Ինչի ժամը քանի՞սն է…

– …

– Երե՞քը... Երեքը: Ժամերը ո՞նց են անցնում...

– …

– Հենց մենակ խմած ասելը գիտես: Աշխատեցի, հոգնեցի, ասի՝ աչքս կպցնեմ...

– …

– Պատվեր կա, չպիտի ուշացնեմ:

– ...

– Արտասահմանցիների համար է, աճուրդ են կազմակերպելու: Ինչով ուզում են՝ թող վճարեն:

– ...

– Եղավ: Դոլար կպահանջեմ: – Չեմ մրսել: Տոլլոլպը գցել էի վրաս:

– ...

– Լույսը չբացվի՞... էս ժամին մեքենա որտե՞ղ եմ ճարելու:

– ...

– Ի՞նչ կոշիկներ...

– ...

– Ասացի՝ ոչ մի խմել: Գերասը թաղման է գնացել:

– ...

__Կլինի՞ մի բանի հավատաս: Գյուղերում շուտ են թաղում:

– ...

– Ինձ պե՞տք է՝ որ գյուղը: Ծան նման չարչարվում ես հերիք չի, հիմի էլ էս հարցաքննությունը:

– ...

- Եղավ:– Սաքոն դրեց լսափողը, գնաց, պահարանից մուշտակ հանեց, գցեց կիսամերկ մարմնին, եկավ նստեց բազկաթոռին, վերցրեց, թափահարեց շշերը, հիասթափված վար դրեց:– Գլուխս պայթում է:

– Գնա խոհանոց, պահարանը բաց:

- Ի՞նչ:

– Գնա, գնա:

Սաքոն գնաց, թեյի բաժակը ձեռքին ետ դարձավ, հոտ քաշեց բաժակի պարունակությունից.

– Կոնյա՞կ է...

– Նապոլեոն: Պորտս Նապոլեոնով են կտրել:

– Քո՞...

– Հարութը: Հարութն էր ասում:

- Լավ դոզա է,– բաժակը աչքերից վեր պահեց Սաքոն:– Իսկը... - Նա դանդաղ, կում-կում խմեց, աչքերը գոցելով՝ ցնցվեց, երկար արտաշնչեց, շունչը տեղը բերեց: Կենացդ:

– Էդպես մի նայիր, ամաչում եմ:

– Չէ, հա...- Սաքոն մոտեցավ, միացրեց սենյակի միակ շքեղությունը՝ լուսամփոփը, հանգցրեց արվեստանոցի լույսը, նստեց աթոռին:– Էսպես նայելը հարմա՞ր է...

– Հարմար է:

– Անունդ ի՞նչ է:

– Հասմիկ: Անընդհատ մոռանում ես:

– Հա, հա, հա: Հասմիկ: Հարութի հետ եկա՞ր...

– Ես, Հարութը, Սվետան:

– Մենա՞կ էի...

–Մրսում եմ,– ասաց Հասմիկը:

Սաքոն մոտեցավ, ուսերի մուշտակը փռեց աղջկա վրա, նստեց թախտին:

Հասմիկը մուշտակի տակից ձգեց, հանեց անձրևանոցը, պարզեց Սաքոյին.

– Կմրսես:

– Եկաք: Հետո՞,– անձրևանոցը ուսերին գցեց Սաքոն:

– Դու, Մկրտիչը, Գրիգորը խմած՝ երգում էիք: Հո տեսարան չէր...

– Ի՞նչ էինք երգում...

– Այ ֆիդայիներ, ջան ֆիդայիներ: ճակատներդ կպցրել էիք իրար ու օրորվում էիք;

– Գրիգոր, Գրիգոր, Գրիգոր...

– Փոքր-մոքր մարդ էր:

– Հա,– ճակատին խփեց Սաքոն:– Գրիշը: Երգում էինք:

Հետո թեյի բաժակներով Նապոլեոն խմեցիք:

– Հրաշք խմիչք է,– երկար արտաշնչեց Սաքոն:– Ո՞նց տաքացրե ց...

– Գլխացավդ անցա՞վ...

– Երկար մատներ ունես:– Սաքոն բռնեց աղջկա ափը, հանեց ստվերից, պահեց լուսամփոփից ընկնող կարմիր լույսի տակ:– Նկարելու մատներ են:

– Իսկ դե՞մքս...

Սաքոն քիչ առաջ մղվեց, բարձրացրեց աղջկա գլուխը:

– Աչքերդ լավն են, քիթդ մի քիչ կարճ է, բայց լավն է, շուրթերդ լավն են...– Սաքոյի հայացքն ընկավ մուշտակի տակից դուրս սահած կրծքին:– Կրծքերդ...– Նա փորձեց դեքը մխրճել աղջկա կրծքերի մեջ:

– Սպասիր,– հրեց Հասմիկը, նստեց, գլուխը ցնցելով շտկեց ուսերին փռված մազերը, ոտքի ելավ, մի պահ մերկ մարմինը ցուցադրելով՝ հագավ մուշտակը:

– Չհասկացա,– կոտը ընկավ Սաքոն:– Մեր մեջ ոչ մի բան չի եղե՞լ...

– Եղել է,– կոշիկները հագավ աղջիկը:

– Բա ինչի՞ ես ելնում:

– Պետք ունեմ,– Հասմիկը իրեն հայտնի ինչ-որ բաներ վերցրեց թախտի անկյունից, խրեց մուշտակի տակ, կտկտացնող քայլքով սենյակից դուրս գնաց:

– Աննորմալ է,– Սաքոն ելավ, փոքրիկ սեղանի վրայից վերցրեց սիգարետի տուփը:– Քեմալ... Պակաս չի լինի ձեր բանը:– Սիգարետ վառեց, ծխեց, աչքն ընկավ սեղանի կիսով չափ դատարկ բա՛ժակին՝ թռցրեց բաժակը, խմեց.– Հո ... Հիմա կդզվեմ:

– Սուրճ կունենա՞ս...

Աղջիկն էր՝ հագնված, բարձրահասակ, ձիգ, դռան մեջ կանգնած՝ հեգնանքով ժպտում էր: Սաքոն երկար նայեց: Ամեն րոպե փոխվում ես:

– Լավ չի՞…

– Եսի՞մ… Չէ, լավ է, լավ է, ինչի՞ չի լավ: Սուրճը սեղանի դարակի մեջ է. Պահում եմ, որ եկող-գնացողը չգտնի:

– Եկող, գնացող շատ ունե՞ս…

– Պատահում են:

– Քաղցր ես խմո՞ւմ, թե՞ դառը:

– Ոնց որ դու:

– Ես դառն եմ խմում:– Հասմիկը խոհանոց գնաց:

– Ձարգացածներից է,– փնթփնթաց Սաքոն, բազկաթոռից ելավ, գնաց, թախտի վրայից վերցրեց տաբատը, հավասարակշռությունը չկարողանալով պահել՝ մի կերպ հագավ: – Քեֆս լավացավ,– ասաց, հայացքը այս ու այն կողմ գցեց,

Վերջապես տեսավ հատակին ընկած սվիտրը, վերցրեց, թափ տվեց:– Վայ Սաքո, Սաքո, չսատկես դու,– ասաց, նայեց ոտքերին՝ գուլպաներով էր, զարմացավ:– Սրանք ե՞րբ հագա,– ասաց, ոտքերն անցկացրեց կոշիկների մեջ:

– էդ ի՞նչ ես քեզուքեզ խոսում,– լսվեց խոհանոցից:

– Խոսում եմ, էլի: Խոսելու քիչ բան կա՞…

Սուրճի բաժակները մատուցարանին՝ Հասմիկը եկավ, բաժակները դրեց սեղանի անկյունին, սեղանը հավաքեց, սրբեց, կեղտոտ բաժակները, շշերը, մոխրամանը դրեց մատուցարանին, խոհանոց տարավ: Խոհանոցից ջրի շփշփոց լսվեց:

– էդ ի՞նչ ես անում,– բազկաթոռին նստելով սուրճի բաժակը մոտ ձգեց Սաքոն:

– Բաժակներն եմ լվանում:

Քիչ անց մաքուր մոխրամանը ձեռքին Հասմիկը եկավ, մոխրամանը դրեց Սաքոյի դիմաց.

– Համեցեք,– ասաց, նստեց բազկաթոռին, սիգարետ վառեց:

– Քեմալիդ նայե՛մ, մաքրասիրությանդ նայե՛մ….

– Քեմալ ծխողը մաքրասեր չի լինում…

– Որտեղի՞ց… Նրանց ուշքն ու միտքը կայֆն է:

– Բացառություններ, ուրեմն, պատահում են,– Հասմիկը շուրթերին մոտեցրեց սուրճի բաժակը, կում արեց, դրեց վար:– Թող սառի:

– Անուշ ժպիտ ունես:

– Ուրի՞շ…

– Ուրիշը՝ չեմ հիշում: Սուրճը խմենք, պառկենք՝ ուրիշն էլ ասեմ:– Սաքոն ձգվեց սեղանի վրայով, համբուրեց աղջկա այտը, ցանկացավ շուրթերն էլ համբուրել Հասմիկը գլուխը հետ տարավ.

– Հանգստացիր,– ձեռքով կամաց հետ մղեց, նստեցրեց Սաքոյին:

– Քեզանից գլուխ չեմ հանում,– փնչացրեց Սաքոն: Լռեցին: Դրսի աշխարհն իրեն զգացնել տվեց, ավտոմեքենայի ազդանշանը նվագեց լամբադայի կիսատ-պռատն ու սսկվեց.

– Հարութի մակարդակից չես բարձրանում,– վերջապես խոսեց Հասմիկը:

– Հարութն էլ է ասո՞ւմ՝ խմենք, պառկենք,– խայթեց Սաքոն:

– Դա քեզ չի վերաբերում:

– Որ չի վերաբերում՝ ինչի՞ մնացիր մոտս...

– Ասացիր՝ մնա, հետդ խոսելիք ունեմ:

– Ու՝ խոսեցի՞նք...

– Խոսեցինք:

– Ասացի՞, որ քո էդ Հարութը փողից դեն՝ աշխարհ չի պատկերացնում...

– Չէ,

– Հիմա եմ ասում:– Սաքոն ելավ, վառեց արվեստանոցի լույսը, մոտեցավ պատին:– Տես, տես, տես,– մատնացույց արեց նկարները:– Նայիր: Ինչքան էլ էստեղ են շարված: Ամեն մեկը՝ հարյուր հազար: Հիսուն հազարով՝ կխլեն,– ինքն իր խոսքերից ոգևորվելով՝ գոչեց Սաքոն:– Դոլարով... Հաշվիր՝ ի՞նչ է անում: Քանի՞ Հարութ կմտցնեմ ջեբս ու դուրս կհանեմ: Նապոլեոն չեմ խմո՞ւմ, չեմ ուզում՝ չեմ խմում: Նապոլեոնն ինձ համար, Հարութիդ նման, կյանքի նպատակ չի: Հասկացա՞ր...

– Հասկացա,– ժպտաց աղջիկը:

– Բա իհարկե: Թքել եմ ես նրա վրա էլ, Նապոլեոնի վրա էլ, տո հենց, Կուտուզովի վրա էլ:

– Օղի կխմե՞ս...

– Օղի՞... Որտեղի՞ց,,.

Հասմիկը ելավ, պայուսակը բերեց, միջից օղու շիշ հանեց, շոկոլադի սալիկ, դրեց սեղանին.

– Բաժակներ բերեմ,– ասաց, գնաց խոհանոցից բաժակներ բերեց ու նստեց:

– Ֆոկուսնի՞կ ես:

– Որ կոնյակն առավ՝ սա էլ առավ, ասաց՝ պահիր, պետք կգա:

– Անասուն,– շիշը բացելով դեմքը թթվեցրեց Սաքոն:. – Ուրեմն Սաքոն փող չունի, որ կոնյակ առնի, օղի առնի, առ, որ պետք լինի՝ հենց քեզ էլ կառնեմ, Հարութ տղա:– Խոսքի հետ նա օղի լցրեց բաժակները, լռեց մի պահ ու հոգոց հանելով ասաց.– Սարերում թողած իմ ֆիդայի տղերքի կենացը:– Սուսուփուս խմիր, բան չասես:

– Չեմ ասում,–- տխրաձայն ասաց Հասմիկը:

Սաքոն բաժակը միանգամից դատարկեց: Հասմիկը կում արեց, վրայից մի ումպ սուրճ խմեց:

– Հաստավիզ,– բաժակը սեղանին դրխկաըըներ Սաքոն: – Չես գնում Ղարաբաղ՝ քո գործն է, գոնե զենք առ՝ օգնիր; Չասացի"...

- Չէ,– աղջկա աչքերի մեջ արտասուքը խաղաց:

– Աչքերդ չոր պահիր,– մատը տարուբերեց Սաքոն: – Նրանց Հարութի հույսին հո չե՞նք թողնի... ճիշտ չեմ ասո՞ւմ...

– ճիշտ ես ասում,– Հասմիկի ծնոտը ղողդողաց:

– էդ պարագիտներր կարծում են, թե ազգի հույսը իրենք են: Հայհո~ւյ... Ազգի հույսը էն տղերքն են, ես եմ ազգի հույսը,– կրծքին խփեց Սաքոն:– ճիշտ չեմ ասո՞ւմ...

– Գուցե... Գուցե օղին պետք չէ՞ր– Աչքերը թաշկինակով չորացրեց Հասմիկը:

– Ո՞նց պետք չէր:

– Չոր-չոր խմում ես:– Հասմիկը ջարդեց շոկոլադի սալիկը, դրեց Սաքոյի դիմաց:– Մի բան դիր բերանդ:

– Չեմ կարող:– Սաքոն իրեն օղի լցրեց:

– Վրա-վրա՝ խմում ես:

– Մի կում,– ասաց Սաքոն, իսկապես կում արեց, կիսատ բաժակը դրեց սեղանին, սիգարետ վառեց:– էդ Հարութիդ չասի՞ վեր կաց, ռադդ քաշիր գնա: Մեկ էլ էստեղ ոտդ չմտնի,– մատով սեղանին կտկտացրեց Սաքոն:

– Չէ,– Հասմիկը քիթը վեր քաշեց, նորից թաշկինակը տարավ աչքերին:

– Չեմ հասկանում,– ուսերը վեր քաշելով քմծիծաղ տվեց Սաքոն:– Որ էդքանր չեմ ասել՝ ի՞նչ ենք խոսել: Ես խոսելու ի՞նչ ունեմ նրա հետ... Հը՞...– աղջկան նայեց Սաքոն:

– Արվեստանոցից էիք խոսում:

– Արվեստանոցի՞ց...– Սաքոն գլուխը ցնցեց, փորձեց զգաստանալ:– Արվեստանոցից ի՞նչ էինք խոսում...

– Որ մի տարով վարձով տաս: Հետո՝ կերևա...

– Առը քեզ,– Սաքոյի բութ մատը ցցվեց ցուցամատի ու միջնամասի արանքից:

– Մկրտիչն ասաց՝ ապրել չի լինում: Կամ դու տուր կամ՝ ես:– Հասմիկը դարձյալ չորացրեց քիթն ու աչքերը:

– Հետո՞...– աչքերը խոշորացրեց Սաքոն:

- Ասաց՝ փողը կկիսենք, մի արվեստանոցով յոլա կգնանք...

– Որոշում ընդունողիս նայիր,– ափն ափին շրխկացրեց Սաքոն:

– Ասաց՝ քոնը հարմար է: էնքան քանդակները ո՞նց ենք տեղափոխելու...

– Համաձայնվեցի՞...

- Ըհը...

– Ախ Մուկու~չ, ախ Մուկո~ւչ,– գլուխը բռնած օրորվեց Սաքոն:

– Ամիսը երկու հազար:– Հասմիկը ելավ, աչքը պատերից կախված նկարներին՝ դանդաղ քայլեց, նկարից նկար անցավ:

– Ո՞ւր գնացիր, արի էստեղ,– գոռաց Սաքոն, խմեց կիսատ թողած բաժակը:,

Հասմիկը քիչ էլ նայեց, ետ եկավ, նստեց, ոտքը գցեց ոտքին, սիգարետ վառեց:

– Հետո ի՞նչ եղավ...

– Հետո,– տխուր ժպտաց Հասմիկը,– նրանք գնացին, ես մնացի:

– Ինչի՞ մնացիր:

– Հարութն ասաց՝ մնա: Դու էլ ասացիր:

Սաքոն սիգարետ վառեց, ծխեց: Լսվեց բեռնատարի աղմուկը, որ հեռանալով մարմրեց:

– Հետս պառկեցիր, որ չփոշմանե՞մ,– քմծիծաղ տվեց Սաքոն:

– Չէ,– հոգոց հանեց Հասմիկը:

– Բա ի՞նչ արեցիր:

– Ես չարեցի, դու արեցիր:

– Ի՞նչ արեցի: Պիտի բառերը մեկ-մեկ բերանիցդ քաշե՞մ, զայրացավ Սաքոն:

Հասմիկը թեքեց հայացքը նայեց մի կետի ու զուսպ ձայնով ասաց.

– Գլուխդ առար ձեռքերիդ մեջ ու... մղկտացիր:

– Էլ մղկտալդ ո՞րն է, իշխան Սաքո,– ինքն իր հետ խոսեց Սաքոն:

– Ասում էիր՝ սուտ կյանքով եմ ապրում ու մղկտում:

– Հետո՞...

– Ասում էիր՝ նկարներդ չեն վաճառվում... Որ ինքդ էլ չես հասկանում՝ նկարիչ ե՞ս, թե՞ նկարիչ չես... Ասում էիր՝ աղջկադ կոշիկները ինչ-որ Գերասի մոտ են, փող չունես՝ գնաս, վերցնես...– Հասմիկր հայացքը հեռվում՝ նույն կետին, լռեց:

– Էլ ի՞նչ էի ասում,– Սաքոն ձգվեց, ցնցեց Հասմիկին: – Ինձ նայիր...

– Ասում էիր՝ խմում, աքլորանում ես,– հայացքը դարձյալ հեռվում ասաց Հասմիկը:– Էլ ավտոմատ, էլ ֆիդայի, էլ Ղարաբաղ: Իսկ ճիշտը՝ լղպոր լակոտ եմ, ասում էիր ու մղկտում...

– Ինձ նայիր,– նորից Հասմիկին ցնցեց Սաքոն:

– Չեմ կարող,– աչքերը խոշորացնելով Սաքոյին նայեց Հասմիկը, ծածկեց դեմքն ու հեկեկաց:– Չեմ կարող... Հերիք է:

Սաքոն օդի լցրեց, խմեց: Հեռուներից եկավ, հասավ անցնող գնացքի դղրդոցը:

– ճիշտ եմ ասել,– վերջապես խոսեց Սաքոն:– Ո՞նց չես թքել երեսիս ու գնացել:

– Ո՞ւր գնայի,– ձեռքերը դանդաղ դեմքից իջեցրեց Հասմիկը:– Դու խոսում էիր, ես իմ մասին էի մտածում...

– Քո մասի՞ն,– չհասկացավ Սաքոն:– Քո մասին ի՞նչ էիր մ տածում :

– Մտածում էի, էլի, - հոգոց հանեց Հասմիկը:

– Չես ուզում՝ մի ասա: Սեմ բեդ՝ ադին ատվետ,– անսպասելի ռուսերեն խոսեց Սաքոն:– Գնանք պառկենք:

– Պառկենք, հա, պառկենք,– վրդովվեց աղջիկը:– Մենակ պառկելո՞վ է...

– Քեզնից գլուխ չեմ հանում՝: Ի՞նչ ես ուզում ինձանից,– բղավեց Սաքոն:

– Խմած ժամանակ մեկ մի մարդ ես դառնում, մեկ՝ ուրիշ,– տխուր ժպտաց Հասմիկը:

– Հա,– չոր կտրեց Սաքոն:– Քամելեոնի նման գույնս փոխում եմ:

– Փոխում ես:

– Ո՞ր գույնս է դուրդ գալիս, ասա:

– Լղպոր գույնդ:

– Լղպորներին ես սիրո՞ւմ... Հարութդ էլ է լղպո՞ր, լիրբ..

Հասմիկը գլուխը շրջեց, նորից թաշկինակը տարավ աչքերին:

– Ասա՝ Հարութդ էլ է լղպո՞ր...

– Լղպորը ես եմ,– հազիվ լսելի արտասանեց աղջիկը: – Ես էլ եմ սուտ կյանքով ապրում... Պա՞րզ է:

– Պարզ է, Չէ, հեչ էլ պարզ չի,

– Ես Հարութի հետ կապ չունեմ:

– Ո՞նց չունես: Հետն ես ու՝ կապ չունե՞ս....

– Սրանով կապ ունեմ, սրանով, սրանով... Իսկ սրանով՝ կապ չունեմ:– Հասմիկը ճտքերով կոշիկները ցույց տվեց, փեշը, սվիտրը, ապա ձեռքը տարավ սրտին:

– Հասկացանք: Հագցնում, կապցնում է:

– Հագցնում, կապցնում,– գլխով հաստատեց Հասմիկը:

– Քեզ ու էն մյուսի անունն ի՞նչ էր...

– Ինձ ու Սվետային:

– Բա ո՞նց.. Պիտի հագնվեք, պիտի վայելեք... Քեմալից պակաս չեք ծխում, խմածներդ էլ՝ Նապոլեոն կոնյակ: Ու ո՞վ: Հարութը: Թու...

– Դու խմեցրու,– Հասմիկը ելավ, ծխախոտը մատների մեջ՝ ցուցադրական աջ ու ձախ քայլեց, կանգնեց, քիչ բարձրացրեց կոնքը:–Ի՞նչն է վատ...

Նա իսկապես գեղեցիկ էր և պետք է, որ այդ գեղեցիկից մաքրություն ճառագեր: Սաքոյի ներսում արվեստագետի ոգին ընդվզեց.

– Բա քո պատիվն ո՞ւր է,– բռունցքը սեղանին իջեցրեց Սաքոն:– Մերդ քեզ Քեմալը բերանիդ է ծնե՞լ, թե՞ մերկ ու մաքուր...

Հասմիկը մոտեցավ, ձեռքը սահեցրեց Սաքոյի ուսի վրայով, նստեց դիմացն ու դաժան ժպտաց.

–Իսկ քո պատիվն ո՞ւր է... Իմ արվեստանոցն էլ սա է:– Աղջիկը ձեռքերը տարավ կոնքերին, սահեցնելով բարձրացրեց, հասցրեց կրծքերին;– Բա՞...- Նա տարածեց ձեռքերն ու կչկչալով ծիծաղեց:– Վայ, մամա ջան...

Նա շարունակեց ծիծաղել, և այդ ծիծաղի մեջ նյարդային, նյարդայցնող շեշտ կար:

– Վերջացրու: Քանի՞ տարեկան ես:

Աղջիկը մի երկու անգամ էլ կչկչաց ու լրջացավ միանգամից.

– Քսաներկու:

– Վաղո՞ւց ես արվեստանոցդ վարձով տալիս,– ատամները կրճտացրեց Սաքոն:

– Էդպես մի նայիր,– բղավեց աղջիկը:– Դու ինձանից լավը չես:

– Ես արվեստանոցս դեռ վարձով չեմ տվել:

– Տվել ես:

– Խմած մարդու խոսք,– ուսերը վեր քաշեց Սաքոն: – Պադումաեշ..

Հասմիկը պայուսակը բացեց, միջից թուղթ հանեց, կարդաց:

– Ներքին պայմանագիր:– Մենք,– աղջիկը նայեց Սաքոյին:– Անուն աղգանուն հայրանունդ երևի հիշում ես,– ու շարունակեց,– մի կողմից, մյուս կողմից Հարություն Աղաբեկի Վարդանյանը կնքեցինք այս պայմանագիրը առ այն, որ առաջինը մի տարի ժամկետով վարձով երկոորդին է հանձնում իր արվեստանոցը:– Հասցե, ստորագրություն...

– Ո՞նց թե,– ձեռքը դեպի թուղթը պարզեց Սաքոն:– Լո՞ւրջ...

– Ստացական,– ետ մղելու շարունակեց կարդալ Հասմիկը: – Ես, այսինչ այսինչյանս ստացա այսինչ այսինչյանից տասներկու հազար ռուբլի կանխիկ գումարով: Վկաներ՝ Շատվորյան Գրիգոր, Խոջաբեկյան Մկրտիչ...

– Բա դուք... Դուք վկա չէի՞ք,– ինքնաբերաբար հարցրեց Սաքոն:

– Հարութը կին կխառնի՞ էս գործին,– Հասմիկը քմծիծաղ տվեց, թուղթը գցեց սեղանին, պայուսակից փողերը դուրս բերեց, դրեց Սաքոյի դիմաց:– Վեց հազար ռուբլի: Մյուս վեց հազարը Մկրտիչը տարավ:

– Թուղթը կպատռենք,– Սաքոն վերցրեց, պատռեց թուղթը:– Էսպես: Փողերն էլ կտանեմ, կխոթեմ Հարութի քամակը:

– Խոթեցիր,– ժպտաց Հասմիկը:– Թուղթն երկու օրինակից է: Մյուսը՝ Հարութի մոտ է:

Սաքոն ծխախոտ վառեց, ելավ, գլուխը կախ պտտվեց արվեստանոցում, մոլբերտի մոտից վերցրեց ներկը քերելու դանակը, մոտեցավ պատից կախ նկարներից մեկին, նայեց, նայեց, անսպասելի պատռեց կտավը, դանակը տարավ երկրորդ կտավին:

– Չճղես,– բղավեց Հասմիկը, վեր թռավ, բացեց պատշգամբի դուռը:– Ինձ ներքև կգցեմ, չճղես...

Սաքոն շրջվեց: Աղջկա ձայնը և առավել՝ հայացքը հաստատ էին:

- Փորձանք ե՞ս,– Սաքոն դանակը վար նետեց, մոտեցավ սեղանին, վերցրեց օղու շիշն ու կոկորդից խմեց:

Հասմիկը դուռը գոցեց, դանդաղ քայլերով ետ եկավ, փլվեց բազկաթոռին:

– Ես մարդկանց ի՞նչ եմ ասելու, - Սաքոյի խոսքն, իհարկե, ինքն իրեն էր ուղղված:– Ասելու եմ՝ ծախվե՞լ եմ... Հը... Ի՞նչ եմ ասելու...

Հասմիկն իրեն օղի լցրեց, խմեց, ձեռքի ափով սրբեց բերանը.

– Իսկ ես ասո՞ւմ եմ, որ ծախվել եմ...

– Քոնը՝ ի՞նչ,– ուսերը վեր քաշեց Սաքոն:– Քոնը չի երևում: Սա ռեալ արվեստանոց է՝ իմն էր ու հիմա իմը չի:

– Սա ռեալ չի՞,– ձեռքը սրտին դրեց Հասմիկը:– Ռեալը չորս պա՞տն է:

– Դրան ի՞նչ է եղել: Իր համար աշխատում է: Հարութի նման մեկին ճարում ես՝ ավելի լավ է աշխատում:

– Լպիրշ, – զզվանքով Սաքոյին նայեց աղջիկը:– Ասում էին նկարիչները ցինիկ են՝ չէի հավատում: Հավատամք էլ չեն թողնում...

- Հավատա՞մք...– Սաքոն մոտեցավ, նստեց բազկաթոռին:– Իսկ էդ հավատամքը դու ունեցե՞լ ես... էս զիբիլը չի՞ քո հավատամքը:– Նա վերցրեց Քեմալի տուփն ու զարկեց սեղանին:– Հավատամք...

Աղջիկը կում արեց օղու բաժակից, գոցեց աչքերը: Լուսնալույսի պես մեղմ ու դանդաղասահ՝ նրա դեմքին ժպիտ հայտնվեց: Հեռու-հեռուներից լսվեց ու կորավ էլեկտրաքարշի բամբ ազդանշանը:

– 88-ի փետրվարը հիշո՞ւմ ես...

– Ո՞նց չեմ հիշում,– ասաց Սաքոն:- Դու էդ ո՞ւր հասար...

– Առաջին կուրս,– խոսեց աղջիկը:– Ոչ ոտքերիս տեղը գիտեի, ոչ՝ կրծքերիս:– Հասմիկը բացեց աչքերն ու հայացքը հառեց առաստաղին:– Ու՝ հրապարակ, ու՝ ժողովուրդ, ու ես՝ պրովինցիայից եկած աղջիկս, էդ ժողովրդի մեջ, նրա իմ չափը, ու՝ Ղարաբաղ, ու՝ հեքիաթից դուրս պրծած հարթակի տղերքը...

– ճախրանք...- ասաց Սաքոն ու աչքերը լցրեց:— ճախրա~նք,– ձայնը կերկերաց:

– Ըհը՞...– Սաքոյին նայեց աղջիկը:– Դասադուլ էր պետք՝ անում էինք, նստացույց էր պետք՝ անում էինք, հացադո՞ւլ անում էինք ու հավատամքով, որ քո արածը շատ է կարևոր... Եվ մի այնպիսի համոզվածությամբ, որ Սերվանտեսի հերոսն էլ չուներ...

– էդպես էր,– հաստատեց Սաքոն, բաժակը պռնկեպռունկ օղի լցրեց, խմեց:էդպես էր:

– Հոգու ինչ վերելք էր,– գլուխը տմբտմբացրեց ՝ աղջիկը:

– ճոխ... ճոխ լեզու ունես:

– Թատերական ինստիտուտ...

– Դերասա՞ն ես,– անսպասելի ուրախացավ Սաքոն: – Շուտ ասեիր...

– Չես տեսնո՞ւմ... Կոնքերս ճոճելով դերասանություն եմ անում:

– Վերջ տուր: Արի հիմա միասին խմենք:– Սաքոն օղի լցրեց:– Բաժակ-բաժակի խփենք ու խմենք:

Սաքոն բաժակը բարձրացրեց: Հասմիկը քիչ հապաղումով վերցրեց: Նրանք լուռ իրաւր նայեցին, բաժակները հպեցին իրար ու խմեցին:

– Շատ ես խմում, ասաց Հասմիկը:– Մի բան դնեիր բերանդ:

– էդ՝ հեչ,– ձեռքը թափ տվեց Սաքոն:– Իմ լավը էն է, որ մյուս օրը գլուխս չի ցավում: Ուրիշներինը ցավում է, իմը՝ չի ցավում: Դու շարունակիր:

– Ի՞նչ շարունակեմ...

– ճախրանքդ, որ ասում էիր... էն...

– Չէ, ճախրանք չէր,– հոգոց հանելով գլուխն օրորեց Հասմիկը:– Պարզապես՝ երկու տարի՝ թռի-վռի մի ճպուռ...

– Հետո՝ ճպուռի թևերը պոկեցին,– Սաքոն ափերն իրար զարկեց:– էդպես չի՞...

– Ըհը, - քիթը քաշեց աղջիկը:– Կռիվը պրծավ:

– Պարզվեց, որ մեր կռիվը Հարութի համար է եղել: Էդպես չի՞...

– Ըհը: Մենք դատարկվեցինք, նրանք լցվեցին:

– Հասկանո՞ւմ ես՝ ինչ դուրս եկավ,– ատամները կրճտացնելով աղջկան ցնցեց Սաքոն:

– Ոչինչ էլ դուրս չեկավ,– ձեռքը թափ տվեց աղջիկը, խմեց կիսատ թողած օղին:– Հավատս որ փշրվեց՝ ինձ համար մեկ է:

– Վայ ես ձեր,– ճոճվեց Սաքոն:– Վայ ես ձեր... Ավտոմատը վերցնեմ ու դրանց զռացնեմ...

– Խելառ:

– Գրիշ... Գրիշն ո՞ւր է...

Հասմիկը ելավ, խոհանոց գնաց, թրջված թաշկինակը ձեռքին ետ եկավ, կանգնեց Սաքոյի հետևը, թաշկինակը դրեց ճակատին, գլուխը ձգեց, կպցրեց իր փորին:

– Հիմա լավ կլինես,– ասաց, սրբեց Սաքոյի դեմքը:– Այ էսպես... Խելոքս:

– Ուխա~յ,– ասաց Սաքոն:– Ինչ լավ է...

– Կինդ չի անո՞ւմ...

– Կինս ճչում, բղավում է:

– Ո՞նց կարելի է էսպես խելոքի վրա բղավել,– ժպտաց Հասմիկը, շոյեց Սաքոյի մազերը:– Բա կարելի՞ է...– Նա կռացավ, համբուրեց Սաքոյի ճակատը, թաց թաշկինակը ծալեց, դրեց վզին ու նստեց:– Հիմա կդզվես:

– Էս փողերի կեսը վերցրու,– Սաքոն փողը հրեց Հասմիկի դիմաց, - վերցրու ու թքիր Հարութի վրա:

– Խելառ:

– Բա ի՞նչ: Թու~,– թքեց Սաքոն:– Էսպես կթքես նրա երեսին: Եղա՞վ...

– Ինձ փող պետք չի,– տխրեց աղջիկը:

– Ի՞նչ է պետք: Ասա՝ ի՞նչ է պետք: Մի ամաչիր, ասա...

– Արվեստանոցդ... Էստեղ ես մաքրվում եմ: Հասկանո՞ւմ ես...– Հասմիկը շեշտակի նայեց Սաքոյի աչքերի մեջ:

– Արի, մաքրվիր, ո՞վ է խանգարում:

– Ո՞նց գամ: Առավոտյան արվեստանոցդ ղատարկելու են:

– Չեմ թողնի,– բռունցքը սեղանին իջեցրեց Սաքոն: - Կսպանեմ:

– Կթողնես,– հոգոց հանեց Հասմիկը:– Զոքանչիդ չորս հազար ռուբլի ես պարտք:

– Որտեղի՞ց գիտես:

– Որ մղկտում էիր՝ ասացիր:

Հասմիկը սիգարետ վառեց: Սաքոն օղի խմեց ու անսպասելի աշխուժացավ.

– Բա էս կյանքի՞ն էր արժանի աղջիկս,– տնազ արեց:– Բա մուզիկալնի ուչիլիշչան իզո՞ւր ավարտեց, նրա սաներին մատաղ, լատլիչնիկ էր:– Սաքոն բռնեց Հասմիկի թևը:– Ես մայր չունեմ, դու՝ չունես, չէ, էս աշխարհքում մենակ, ինքն է ու իր աղջիկը: Մենք էս կյանքին արժանի ենք,

աղջիկը՝ չէ: Մենք պիտի տակը լինենք, իրենք՝ վրան: Ծոպենի նոկտյուրնն էլ հետը:– Սաքոն տարածեց ձեռքերը:– Տրա-լյա-լյա...

– Մկրատ ունե՞ս...

– Ունեմ: Ի՞նչ ես անելու:

– Բեր:

Սաքոն ելավ, մկրատը բերեց, տվեց Հասմիկին: – էդ ի՞նչ է եղունգներիդ վիճակը,– իբր թե խստացավ Հասմիկը:– Նստիր, պիտի կտրեմ:

– Մայրի՞կս ես,– քմծիծաղ տվեց Սաքոն:

– Կինը ծնված օրվանից մայր է: Ձեռքդ տուր:

– Հո չասացիր...

– Բա ի՞նչ.- Հասմիկը սկսեց կտրել եղունգները:

Լեզուն չբացված՝ տիկնիկը սեղմում է կրծքին՝ մայրություն անում: Մյուս ձեռքդ տուր: էս օրը կհիշվի:

– Լավն ես,– ձեռքը Հասմիկի ափի մեջ դնելով ասաց Սաքոն:– Ափսոս ես:

– Դու ես ափսոս: Մի խմիր:

– Է՛,– ձեռքը թափ տվեց Սաքոն:

– Նկարներդ ինձ շատ են դուր գալիս:

– Մոդիլյանի՝ լսել ե՞ս...

– Լսել եմ: Աչքերդ շաղվում են: ւ

– Թուլուզ-Լոթրեկից էր գալիս. Սեղանից էր գալիս, բայց ինքն էր: Ինքը կար: Նրա գիծը, նրա պլաստիկան կարո՞ղ է ուրիշն էլ ունի... Հը՞... Ո՞վ ունի...

– Չգիտեմ:

– Որ չգիտես՝ մի խոսիր: Նրա «էլվիրան» տեսե՞լ ես...

– Չեմ տեսել:

– Որ չես տեսել՝ ի՞նչ ասեմ,– գլուխը թեքեց Սաքոն:

– Տեսել եմ, տեսել եմ, ասա:

– Հիմա քեզ ցույց կտամ,– Սաքոն ելավ, քիչ ճոճվեքով, գնաց, թուղթ ու մատիտ բերեց, նստեց, կքվեց սեղանին: – Այ էսպես էր նկարում,– Սաքոն գծեր քաշեց. չհավանեց, կողմ նետեց թուղթը, ուրիշ թուղթ վերցրեց:– Չէ՝ էսպես:– Սաքոն նորից գծեր քաշեց, չհավանես, կողմ նետեք:– Հիմա քեզ պիտի նկարեմ:– Նա մի պահ կկոցած աչքերով նայեց Հասմիկին, արագ– արագ գծեր քաշեց;– էսպես: Մոտավորապես: Ձգո՞ւմ ես ինչ պլաստիկա ունի... Բայց աղքատ էր խեղճը ու հո չէր խմում: Նա ելավ, թուղթը ձեռքին մոտեցավ սենյակի մեջտեղում ցցված դատարկ աթոռին, պարզեց թուղթը:– Ես Մոգիյանին եմ, գնեցեք իմ նկարը...– Մի պահ սպասեց, քայլեց, կանգնեց մոլբերտի մոտ:– Ես Մոդիլյանին եմ: Գնեցեք իմ նկարը.- Սպասեց, ապա քայլեց կանգնեց թախտի մոտ:– Ես Մոդիլյանին եմ, գնեցեք իմ նկարը,– ասաց, սպասեց ու բերանբսիվայր փռվեց թախտին:

– Մոդիլյանի,– քիչ անց շշնջաց աղջիկը, մի կում օդի խմեց, ապա ելնելով՝ արագ-արագ հանվեց, մերկացավ, ոտքերի ծայրերի վրա մոտեցավ Սաքոյին:– Մոդիլյանի,– շշնջաց,– ինձ նկարիր: Ինձ մերկ ու մաքուր նկարիր...– Սաքոն չէր շարժվում: Աղջիկը կռացավ, ցնցեց Սաքոյին: Մոդիլյանի, ինձ մերկ ու մաքուր նկարիր, Մոդիլյանի...: Աղջիկը բռնեց Սաքոյին, տնքալով շրջեց մեջքի վրա:– Մոդիլյանի,– ձայնը բարձրացրեց աղջիկը: Սաքոն խռացրեց Խո՛զ,– բղավեց աղջիկը, հարվածեց Սաքոյին,– խոզ, խոզ, խոզ... Ձեզ մաքրություն պե՞տք է...– Նա հեկեկոցը խեղդելով հետ դարձավ, մուշտակը գցեց ուսերին, ծխախոտ վառեց ու կծկվեց բազկաթոռի մեջ:

***

Սաքոն սրճարան մտավ:

– Եկա՞ր,– խռպոտ ձայնով կանչեց Մկրտիչը:– Շուշանիկ, մի գավաթ սուրճ՝ երիտասարդ ընկերոջս համար

– Սկսվե՛ց,– կանչեց Շուշիկը:

– Հը,– ներողամիտ ժպիտով գլուխն օրորեց Մկրտիչն ու դարձավ Սաքոյին,– բաժակը, բաժակը հետդ բեր:

Սաքոն բաժակ վերցրեց, մռայլադեմ մոտեցավ, նստեց, բաժակը շխկոցով դրեց սեղանին.

– Միանգամից բաժակները դիր մոտդ, էլի:

– Ոչ,– մատը ճոճեց Մկրտիչը:– Կռվողն իր զենքը պիտի իր հետ բերի:– Նա օդի լցրեց Սաքոյի բաժակը, նայեց իր կիսատ բաժակին՝ քիչ ավելացրեց:

– Հա,– կանչեց Շուշիկը:– Թնդանոթներդ... Պակաս չի լինի ձեր բանը:

– Էս գործին չմիջամտես,– կեղծ զայրացավ Մկրտիչը, նայեց Սաքոյին:– Սուսուփուս խմիր:

– Սպասիր,– ծանր արտաշնչեց Սաքոն:

– Խմիր՝ կթեթևանաս,– ժպտաց Մկրտիչը:– Թեթև ապրիր, ազատ ապրիր, անկախ ապրիր: Տեսնո՞ւմ ես, ինչ արևոտ օր է...

– Թողնո՞ւմ են,– ճակատը կնճռոտեց Սաքոն:

– Ով չի թողնում,– ըմբոստացավ Մկրտիչը:– Դու մենակ ասա՝ ո՞վ չի թողնում...

Սաքոն խմեց, ծամածռեց դեմքը.

– Տարա...– Տարա փողերը իրեն սևացնեմ.

– Հարութի՞ն,– վախեցավ Մկրտիչը:- Չանես: Էդ փողի կեսն արդեն գոյություն չունի, չանես: Չես ուզում՝ թող գա, մտնի իմ արվեստանոցը:

– Զո-քան-չիս,– հատ-հատ արտասանեց Սաքոն:

– Հա~,– թեթևացած շունչ քաշեց Մկրտիչը:– Զոքանչիդ:

– Տարա պարտքը տամ՝ ասում է՝ հիմիկվա չորս հազարն ու էն ժամանակվա չորս հազարը ինչի նո՞ւյնն են... Փողերը գցեցի սեղանին, դուրս եկա:

– ճիշտ է ասում,– կանչեց Շուշիկը:– Ո՞ր թվին ես վերցրել...

– Ես գիտե՞մ,– ուսերը քաշեց Սաքոն:– Կնիկս մանրից վերցրել է:

– Ամենաքիչը տասով բազմապատկիր: Ամենաքիչը:

– Քառասուն հազա՞ր,– աչքերը խոշորացրեց Սաքոն: – Անոորմալ ե՞ք...

– Քեզ բան ասացի,– խնդաց Շուշիկը:– Մի երկու ամսից քսանով պիտի բազմապատկես, կուկլա ջան…

– Վայ քո,– ափը ափին շրխկացրեց Սաքոն:– Ամբողջ կյանքումս պիտի պարտք մնա՞մ…

– Խնդո՞ւմ ես,– ժպտաց Շուշիկը:– էդ պարտքի տերը կխնդա…

– Բա ի՞նչ անեմ: Ուրիշ ի՞նչ անեմ:

– ճիշտ է ասում,– մատը ցցեց Մկրտիչը:– Առանց պարտքի մարդը ո՞ւմ է պետք:

– Ձեզ տղամարդ ասողի,– գլուխն օրորեց Շուշիկը, գոլորշու խշխշոցը տարածեց սրճարանում, սուրճի բաժակը բերեց, դրեց Սաքոյի դիմաց:

– Հենց մեզ պիտի տղամարդ ասեն,– Շուշիկի թևը բռնեց Մկրտիչը:– Մեր պարտքը գիտե՞ս ինչ պարտք է...

– Պարտքը պարտք է,– թևը քաշեց Շուշիկը, թեթև քայլերով գնաց իր տեղը:– Պարտքր աչք-ունք ունի՞...

– էն էլ ոնց ունի,– գլուխը տմբտմբացրեց Մկրտիչը: – Ես շումերներին եմ պարտք, Միքելանջելոյին, Օդյուստ Ռոդենին...

– Ռաֆայելին, Ռեմբրանդին, Մոդիլյանին,– մեջ ընկավ Սաքոն:

– Քո պարտքը իմին մի խառնիր, - խոժոռվեց Մկրտիչը– Դոնատելլոյին, Բուրգելին ու Մարլախին... էլի ասե՞մ..

- Արտասահմանցիներ ե՞ն, ճ աչքերը ճպճպացրեց Շուշիկը:

- Բա ի՞նչ են:

– Քոռանա~մ,– ափը այտին օրորվեց Շուշիկը:– Դոլար եք վերցրել...

– էլ՝ դոլար, էլ՝ ոսկի, էլ արծաթ ու շատ ու ահագին,– երանությամբ ժպտաց Մկրտիչը ու դարձավ Սաքոյին:– Թե չէ՝ զոքանչդ... Կամ՝ Հարութդ, Թու,– մռայլվեց Մկրտիչն ու օդի խմեց:

– էդ պարտքերի տակից ո՞նց ես դուրս գալու, այ ծակ ջեբ,– տխուր ժպտաց Շուշիկը:– Խմել՝ քոռուփուչ են արել:

– Վերջապես մի ճիշտ հարց տվեցիր,– հաստատեց Մկրտիչը:– Հիմա ես ի՞նչ պիտի անեմ: - Նա ձեռքը գցեց

Սաքոյի ուսին:– Դո՞ւ ինչ պիտի անես, ախպերիկս...

– Ես գիտե՞մ,– Փնչացրեց Սաքոն:

–Ասում եմ՝ այ ժողովուրդ,– աշխուժացավ Մկրտիչը: – Արի նրանցից վերցրած ոսկին ու արծաթը քեզ տամ, չեն ուզում: Կալբաս են ուզում, կարագ են ուզում, պանիր ու բրինձ են ուզում:

– Տալիքդ ոսկի ու արծա՞թ է, որ,– մրթմրթաց Սաքոն: – Համոզվա՞ծ ես...

– Իմը, հա, հենց ոսկի ու արծաթ է,– զայրացավ Մկրտիչը, — Բան ունե՞ս ասելու:

- Չէ:

– Պը՞րծ..

– Պըրծ:

Շուշիկը սուրճի բաժակը պարզեց հաճախորդին, սպասեց որ հեռանա ու ձայնը ցածրացնելով թեքվեց դեպի նրանց սեղանը.

– Ծախեք: Ծախեք, զենք առեք, ուղարկեք Ղարաբաղ: Ուզո՞ւմ եք՝ առնող գտնեմ:

– Պահ,– ոռնաց Մկրտիչը,– էդ Ղարաբաղն ինչի՞ հիշեցրիր...

– Ասա՝ մոռանո՞ւմ եմ,– մռայլվեց Շուշիկը:– Հողեմ նրա լաքոտած գլուխը:

– Լաքա չի,– մատը տարուբերեց Սաքոն:– Արյունոտված Արցախի քարտեզն է:

– Իսկը,– կանչեց Շուշիկը:– էդ արյունը նրա աչքը լցվի:

– Մուկուչ,– ձեռքը շեշտակի բռնեց Սաքոն:– Արի Արցախ գնանք...

– Գնացինք,– ասաց Մկրտիչը:– Դու քո նկարները, ես՝ քանդակներս, շալակենք գնանք:

– Ձեռ է առնում:

– Գնանք ու ի՞նչ ասենք, գիտե՞ս... Ասենք՝ մենք մեր արվեստը չկարողացանք պաշտպանել, հիմա եկել ենք ձեզ պաշտպանելու: Կթքի երեսներիս, դու ղարաբաղցուն չգիտես:

– Ամոթ է, այ տղա,– ձայն տվեց Շուշիկը:

– Քեզ բան ասել չի լինի,– դժգոհեց Սաքոն:

– Ախպերիկս, էս աշխարհում, որ ամեն մեկն իր գործով զբաղվի՝ ամեն ինչ կընկնի տեղը:

– Թողնո՞ւմ են,– լուցկին սեղանին շխկացրեց Սաքոն:

– Էլի չեն թողնելու: Բայց Գառնի, Գեղարդ, Ձվարթնոց ու Ամարաս, հո, կերտե՞լ ենք...

– Նրանք ազգս սպանեն՝ ես էստեղ նստեմ, կերտե՞մ, - ձայնը բարձրացրեց Սաքոն:

– Ճիշտ ես ասում,– կանչեց Շուշիկը:– Գառնի, Գեղարդ... Ռակետ է պետք, ռակետ...

– Բա իհարկե,– ոգևորվեց Սաքոն:– Ազգս կոտորվում է՝ ես նստեմ, նատյուրմորտ նկարեմ:

– Հը,– քմծիծաղ տվեց Մկրտիչը:– Մինչև կոտորելն, ուրեմն, հինգ ու խաչ էիր անում: Օրը մի նկար կախում էիր պատից: Պլախոմոլ տանցորոլ այցի մեշայուտ, լսե՞լ ես...

Սաքոն ցանկացավ պատասխանել, բայց տեսավ ներս մտնող պոետին, որ իրենց նկատելով, մեջքով շրջվեց:

– Արի պոետ, արի,– ասաց Սաքոն:

– Չէ,– թեք նայեց պոետը:– Ձեր մոտ չեմ նստի:

– Շուշանիկ, մի զավաթ սուրճ՝ պոետի համար:

– Ոչ, ոչ, ոչ...

– Ինչի՞:– Սաքոն ելավ բռնեց պոետի թևը, բերեց նստեցրեց, գնաց բաժակ բերեց, օղի լցրեց, պարզեց.– Խնդրեմ:

– Որ կարողանում ես՝ էսպես եղիր, էլի,– բաժակը վերցնելով ժպտաց պոետը:– Չարքերը միջիցդ հանիր:

– Երկրորդ խոսափող, - ձայն տվեց Մկրտիչը:

– Զզվեցինք,– դեմքը խոժոռեց պոետը:– Հենց մարդուն սարքեցին խոսափող՝ գործը հարամեցին:– Նա օդին խմեց, նայեց Շուշիկի կողմը:

– Ճիշտ, - կանչեց Շուշիկը:– Կախգլուխները...– Սուրճը բերեց, դրեց պոետի առջև, հետ գնաց:

Պոետը մի ումպ սուրճ խմեց.

– Գիշերը ի՞նչ էի մտածում...

– Հա,– աթոռը շտկեց Սաքոն:

– Էն անասուն Մսրա Մելիքը, ուրեմն, հորը փորում, Դավթին խաբելով գցում է մեջը: Իսկ մեր էս խելառը հորից ելնում, զարկերը սրան նրան է բաշխում: Էդպես՝ կլինի՞... Ընտրողն էլ ո՞վ՝ ժողովուրդը:

– Հրա՛շք,– ասաց Մկրտիչը:– Դավթի կենացը:

– Բայց վերջին զարկը հո չտվե՛ց,– գլուխը հաճույքով ճոճեց Սաքոն:– Մորթոզին մորթել է պետք:

– Մորթել,– զայրացավ պոետը:– Բա էս խելքն ինչի՞ համար է մեզ տրված: Լազեր են սարքում, լազե~ր... Պըժ՝ տանկր չկա, պըժ՝ ուղղաթիռը չկա... Մեր գիտնականները ինչո՞վ են զբաղված՝ չեմ հասկանում:

– Չորրորդ լսափո՞ղ... Հասկացա՞ր,– ժպտաց Սաքոն:

– Երանի մեզ, - ձայն տվեց Շուշանիկը:— 4աֆեներում ՝նստած՝ պրժ...

– Ապրես...– Շուշիկի կողմը մղվեց Մկրտիչը:– Էս՝ կաֆեները մեր տունը քանդեցին: Ֆրանսիացին, ախպեր ջան, գործը վերջացնում, նստում է կաֆեում, խաղաղվում, հանգստանում է: Մենք՝ լույսը չբացված, մեզ գցում ենք կաֆե: Իբր՝ մենք էլ ֆրանսիացուց պակաս ազգ չենք: Ու ի՞նչ ենք անում՝ կատաղում ենք: Խաղաղված գետերն են հասնում օվկիանոս, հասկացեք,– բռունցքը սեղանին իջեցրեց Մկրտիչը:– Չէ: Կատաղում, աչքներս արյունը լցնում, ընկնում քարի վրա՝ չրխկ, հա, չըխկ... Բա էդ քարը քանդակ կդառնա՞, էդ քարը շունչ ու հոգի կառնի՞...

– Խելոք խոսք է,– մորուքը շոյեց պոետը:

– Հիմա, մի դիվիզիա լակոտ սրճարաններում նստած է: Վաստակել՝ հանգստանո՞ւմ են... - Մուկուչը կանգնեց.–Դու, դու, դու, տո հենց դու, հա, դու, ի՞նչ եք արել, որ եկել, վեր եք ընկել սրճարանում...

Մի քանի երիտասարդներ ոտքի ելան: Նրանցից մեկը դանդաղ քայլեց դեպի Մկրտիչը: Շուշիկն աճապարելով տեղից դուրս եկավ, երիտասարդի դիմացը կտրեց.

– Վահան ջան, պետք չի: Վահան ջան հորդ տարիքին է:– Նա բռնեց երիտասարդի թևը, տարավ, նստեցրեց տեղը:

– Պիրոժնի ուտողներ,– շարունակեց Մկրտիչը:– Էսպես՝ երկիր են պահո՞ւմ...

Շուշիկը մյուսներին նույնպես նստեցրեց, մոտեցավ Մկրտիչի սեղանին:

– Գնա գործիդ,– մռլտաց Սաքոն:– ճիշտ է ասում՝ ղարմանդներ են:

– Ընդունենք, թե ոչ մի կռիվ էլ չկա,– դանդաղ նստեց Մկրտիչը:– Պիտի աշխատե՞ս, որ երկիրդ շենանա...

– Սրանց բան չասեք,– կռանալով ցածրաձայն ասաց Ծուշիկը:– Կռվող տղերք են:

- Հա~...,– բերանը բացեց Մկրտիչն ու չփակեց:

Պոետը շրջվեց, նայեց տղաների կողմը, բարձրացրեց բաժակը:

– Լացս զսպեմ ու ձեր ցավը տանեմ, տղերք,– արտասանեց ու խմեց:

Սաքոն կտրուկ ելավ տեղից, մոտեցավ նրանց, գրպանից օղու շիշ հանեց, դրեց սեղանին, ետ եկավ:

– Երեխեք են,– հայացքը տղաներին վերջապես խոսեց Մկրտիչը:

Երիտասարդներից Վահան անվանյալը շիշը հետ բերեց, դրեց Սաքոյի դիմաց, ցանկանալով հետ գնալ՝ Մկրտիչը թևը բռնեց.

– Նստիր, տղա ջան, մի րոպե նստիր:– Տղան դժկամությամբ նստեց:– Քանի՞ տարեկան ես...

– Կլինեմ, էլի...

– Քսան կա՞ս,– հարցրեց պոետը:

– Տասնութ,– ասաց Վահանն ու նայեց Մկրտչին: – Մենք լակոտ չենք, հորեղբայր:

– Լակոտը մենք ենք, տղա ջան, - պոռթկաց Մկրտիչը:

– Ձեր հանդեպ՝ լակոտը մենք ենք:

– Պետք չի,– ասաց Վահանը, ցանկանալով ելնել պոետը չթողեց:

- Որտե՞ղ էս կռվել, ապերիկ...

– Նստած՝ սուրճ ենք խմում,– քթի տակ ժպտաց Վահանը, ելավ, գնաց նստեց իր տեղը:

– Սուսիկ փուսիկներ,– դժգոհեց պոետը:– Դրանցից բան կիմանաս,..

– Հա,– ասաց Սաքոն:– Մի ծանոթ ունեի՝ երկրաբան էր: Մի անգամ հանդիպեցի, այ Սիմոն, ասում եմ, հեչ չի երևում: Ասում է՝ չգիտե՞ս երկրաբանի գործը: Հետո իմացա, որ զոհվել է: Լավ էլ երգում էր...

– Ուրիշ բան խոսիր, - ընդհատեց Մկրտիչը:– Մի սոլո հնարիր՝ լսեմ, ուրախանամ: Ուրախանալու կարոտ եմ:

– Պոետն էստեղ նստած՝ սուտը ես ընտրե՞մ...

– Դու,– ասաց Մկրտիչը:– Թե չե՞ս կարող՝ ասա չեմ կարող:

Սաքոն ծխեց, ծուխը փչեց, մտմտաց մի պահ.

– Հնարեմ,– ասաց:– Երեխա էի: Մի հորեղբայր ունեի՝ հենց խմում էր, սկսում էր արտասաներ հետո իմացա, որ Թումանյանի քառյակներն է արտասանում...

– Բերանն արևոտ մարդակերը էն գազան՝ հազար տարում հազիվ դարձավ մարդասպան,– արտասանեց Մկրտիչը:

– Հետո՞...

– Խմած մարդկանց չէի սիրում,– մեղավոր ժպտաց Սաքոն:– Որ արտասանում էր՝ գնում, լուսամուտից դուրս էի նայում...

– Դա ի՞նչ սուտ է,–- չհամբերեց պոետը:

– Մութ էր, անձրև էր գալիս,– շարունակեց Սաքոն,– անձրևի կաթիլները փողոցի լույսերից պեծկլտում էին ու կորչում: Ու ես սկսեցի բղավել «Աստղերը թափվում են»...

– Հրա~շք,– կանչեց Մկրտիչը:– Աստղերը թափվում ենք: Բայց սուտը ո՞րն է,– չհանգստացավ պոետը:

– Հիմա ասեմ: Հորեղբայրս ելավ, ինձ գրկեց, ասաց՝ սա արվեստի մարդ է դառնալու: Պակաս սո՞ւտ է...

– Սուտը ո՞րն է, չդարձա՞ր,– հիասթափվեց պոետը:

– Դարձա՞, որ,..– հոգոց հանելով ուսերը վեր քաշեց Սաքոն:

– Ումի՞ց ես պակաս նկարում,– բաժակը վերցնելով հանգստացրեց պոետը:– Ողջ լինես:

– Պակասով արվեստ է՞ ստեղծվում,– ասաց Սաքոն: – Ավելով է ստեղծվում:

– Ապրես,– Մուկուչը ձեռքը գցեց Սաքոյի ուսը, ձգեց, համբուրեց այտը:– Հիմա ես պիտի սուտ հնարեմ: Մի ուրախ, պայծառ, սուտ:

– Սկսիր, մաեստրո,– ափերն իրար շփեց պոետը:

– Ուրեմն, Փարիզում, կաֆեում նստած սուրճ էի խմում՝ մեկ էլ ներս մտան Հեմինգուեյը, Սարոյանը և Օգյուստ Ռոդենը...

– Պահո,— կանչեց պոետը:– Այ սա սուտ է...

– Հա,– շարունակեց Մկրտիչը:– Ինձ տեսան՝ մոտեցան: Բարև, լաո, քո մերը չմեռնի, հա՞յ ես,– ասաց Սարոյանը:– Բա ի՞նչ եմ ասացի ու կանչեցի:– Գարսոն, սուրճ բեր ու մի-մի բաժակ վիսկի...

– Շիշ ուզեիր, տնաշեն,– ասաց Սաքոն:

– Երևա՞նդ է,– զայրացավ Մկրտիչը:– Սարոյանն ասաց՝ հայրենակիցս է, ծանոթացեք: Ի՞նչ ծանոթանանք,– ասաց Ռոդենը,– մենք իրար շատ լավ գիտենք, Մկրտիչն է:

– Քեֆերը մի քիչ տնգո՞զ էր,– հարցրեց պոետը:

– Առանց դրա՞... Հեմինգոեյը ձեռքը դրեց ուսիս. Մկրտիչ՝ ի՞նչ է նշանակում: Մկրտիչ,– ասացի,– վարպետ, նշանակում է մկրտող, կնքող: Քրիստոսին,– ասացի,– որ Հովհաննեսը կնքեց՝ դարձավ մկրտիչ:– Հա՛,– ուրախացավ Հեմինգուեյը,– դու իմ ծերունին ես: «Ծերունին ու ծովը» հիշո՞ւմ ես: Նա էր մկրտել օվկիանոսի ձկներին: Միայն շնաձկները չմկրտվեցին, մնացին բարբարոս ու տեսա՞ր ինչ օյին խաղացին խեղճ ծերուկի գլխին էդ վայրենի շանորդիք...

– Բա Ռոդենը, Ռոդենն ի՞նչ ասաց,– Սաքոն ցանկացավ Մկրտիչի մտքերը նորից հունի մեջ դնել:

– Ռոդե՞նը... Ռոդենը... Ռոդենն ասաց՝ Փարիզում ի՞նչ ես անում, այ Մկրտիչ... Ասացի՝ հանգստանում եմ: Էսպես՝ ոտներս փռել հանգստանում եմ: Էդ լավ է,– ասաց Ռոդենը,– բայց հանգստացող հայ, ճիշտն ասած, առաջին անգամն եմ հանդիպում: Աշխատողների՝ շատ եմ

հանդիպել: Աշխատում էին, հետո նստում, ձեռքը դնում ծնոտի տակ ու տխուր-տրտում խորհում աշխարհի բանը: Իմ Մտածողը,– ասաց,– որ աչքերին լավ նայեք՝ հայ է:

– Սարո յանը սուս մնա՞ց,– անհանգիստ շարժվեց պոետը:

– Սարոյանը սուս մնա՞,– վրդովվեց Մկրտիչը:– Սարոյանը ջղայնացավ, գոռաց՝ ի՞նչ է, հայերս ոտներս փռելու, հանգստանալու իրավունք չունե՞նք,.. Թե՞ աշխարհի բոլոր սխալները մեր գլխին են թափվելու: Որ էդպես է՝ ես թքել եմ էս սխալական՝ աշխարհի երեսին,– ասաց,– թո~ւ...

Լռություն տիրեց: Շուշիկը դարձյալ սրճեփի խշխշոցը տարածեց սրճարանով մեկ:

– Տխուր սուտ էր.,– ասաց պոետը:– Շատ տխուր:

– Դու ուրախն ասա,– վրա տվեց Սաքոն:

– Չգիտեմ:

– Բա՛,– դառը ժպտաց Մկրտիչը:– Երեք արվեստագետ միասին՝ չեն կարողանում մի ուրախ սուտ հնարել: Ոչինչ, մի օր էլ մեր դռանը հարսանիք կլինի…

– Եկավ,– ասաց Սաքոն, մեջքն ուղղեց դռան կողմը, կծկվեց, գլուխն առավ ափերի մեջ:

Հարութը կանգնեց սրճարանի կենտրոնում, դանդաղ պտտեց հայացքը, Մկրտչին տեսնելով՝ մոտեցավ:

– Սաքոն ո՞ւր է.,.

– Էստեղ եմ,– գլուխը ձեռքերից ազատեց Սաքոն:

– Էդպես բան են անո՞ւմ,– շղթայից կախված բանալին մատի վրա պտտեցրեց Հարութը:

– Ո՞վ է այս մարդը,– ասաց Մկրտիչը:

– Ո՞վ եմ,– ներողամիտ ժպտաց Հարութը:– Իրիկունը Նապոլեոն ո՞ւմ հետ էիր խմում: Ուզո՞ւմ ես՝ ուղարկեմ մեկն էլ բերեն:

– Հա՛… Օղի կխմե՞ս,.,

– Ժամանակ չկա: Մեքենան բարձած արվեստանոցի դռանր ձեզ է սպասում:

– Մեքենան բարձա՞ծ,– ավելի խեղճացավ Սաքոն:

– Հասմիկը չասա՞ց, որ ժամը 12-ին գալու ենք:

– Կարող է ասել է, չեմ հիշում, հայացքը փախցրեց Սաքոն:

– Ինքն ո՞ւր է:

– Չգիտեմ: Զարթնեցի՝ մարդ չկար:

– Մի քիչ ակտիվ եղիր, էլի,– Սաքոյի ուսին զարկեց Հարութն ու դարձավ Շուշիկին,

– Սրանց հաշիվն ի՞նչ է, գնում ենք:

– Դու նրանց հաշվի հետ գործ չունես,– չոր ու խիստ ասաց Շուշիկը:– Դու քո հաշիվներին նայիր:

***

Սարյանի արձանի մոտ բազմամարդ էր: Ինչ ասես, որ չէին վաճառում՝ գորգ ու կարպետ, խաչ ու խաչքար, մատա¬նի, շղթա, գիրք, սրբապատկեր, նարդի, կշեռք... Նկարների շարքն առանձին էր: Հասմիկը ամբոխի մեջ չմտավ, շրջանցեց պուրակը, հանդարտ քայլերով մոտեցավ

նկարների շարքին: Նա չէր կարող բացատրել՝ ինչո՞ւ այստեղ եկավ, մի բան էր պարզ՝ տուն գնալ չէր ուզում: Նա հայացքը սահեցնում էր նախորդ օրվա անձրևից դեռ խոնավ ծառերի բներին հենված կտավներին և ոչ մի կտավի չէր հաջողվում իր՝ վրա գամել, պահել նրա հայացքը:

– Նկարեմ, - Հասմիկի թևը բռնեց կապուտաչ նկարիչը: – Կես ժամից նկարդ կտամ:

Հասմիկը նայեց նկարչին ու դառը ժպտաց. – Մոդիլյանի՞ն ես...

***

Արվեստանոցում թախտը չկար, սեղանն ու բազկաթոռները չկային, լուսամփոփը չկար: Սաքոն ու Մկրտիչն իջեցնում էին պատից կախված նկարները: Երկու երիտասարդներ ծանր-ծանր ներս բերեցին կոշկակարի ցածրիկ, երկաթե սեղանը, դրեցին արվեստանոցի մեջտեղը, նայեցին Հարութին, որ մտքում ինչ-որ հաշիվներ անելով այս ու այն կողմ էր քայլում:

– Տարեք, դրեք այ էնտեղ,– ձեռքով արվեստանոցի անկյունը ցույց տվեց Հարութը,– լուսամ ուտին կպած, պատից կես մետր հեռու:

Երիտասարդները տարան սեղանը, դրեցին.

– Կես մետրը քիչ չի՞,– ասաց գանգրահերը:– Շարժվել չի լինի:

– Պարելո՞ւ ես,– զայրացավ Հարութը:– Մեռնելով էլ լինի՝ տաս հատ պիտի տեղավորենք: Տասը, սեղան էս կողմից, տասը՝ էն,– ասաց, նայեց Սաքոյին:– Չի տեղավորվի՞...

– Կտեղավորվի,– դեմքը պատին՝ փնթփնթաց Սաքոն:

– Ո՞ւր ես նկարներն երես-երեսի դնում,– Սաքոյի վրա զայրացավ Մկրտիչը,– Քերծելու ես, մի-մի նկար վերցնենք, իջնենք:– Նա երկու ձեռքով երկու նկար վերցրեց ու գնաց:

Սաքոն նույնը արեց:

– Վայ քո, - նրանց ետևից կանչեց մյուս՝ լող-լող երիտասարդը, գլխով ակնարկեց պատի նկարները: – Հարցնող լինի՝ քերծվածն ու չքերծվածը իրարից ո՞նց են ջոկելու:

Նա քծնանքախառը հայացքով նայեց Հարութին:

– Էլ դու՝ սուս,– ափսոսանքով գլուխն օրորեց Հարութը:– Որ գույնը բռնեն, չէ՞, թե սրանցից լավ չնկարեմ՝ ես մեռնեմ,

– Վարպետ,– ասաց գանգրահերը,– էն օրը տեսել եմ, նստում ես կամերայի դիմաց ու տելեվիզորի մեջ դու քեզ տեսնում ես: Կողքից՝ ավտոմատ մի բան կա, քեզ նկարում է: Մենակ՝ պիտի չշարժվես: Մի րոպեից, թե երկու րոպեից նկարդ տալիս է:

– ճիշտ է,– հաստատեց լողլողը,– ոչ գույն բռնել կա, ոչ բան:– Նա ծխախոտ վառեց:– Օրեկան քանի՞ հատ կնկարի...

– Մի հարյուր հատ հաստատ կնկարի,– ասաց գանգրահերը:

– Հատը քսանհինգ ռուբլի,– ասաց լողլողը:– Հաշվիր՝ ի՞նչ է անում:

– Չէ, էս երկիրը երկիր չի դառնա,– հոգոց հանեց Հարութը:– Բա էս տարածությունները էս ձևի կմսխե՞ն... Տվեք ինձ՝ նկարող ավտոմատ դնեմ, կոշիկի, մակարոնի, բիսկվիտի ցեխ դնեմ... Արտադրանք տամ: Չէ՛... Ամեն մեկի ձեռքին մի վրձին են տվել ու գցել էս արքայության մեջ: Նա էլ՝ կուզի՝ կնկարի, չի ուզի՝ չի նկարի: Հրեն՝ կաֆեում վեր ընկած էր:

– Բա պլան չունե՞ն,– գանգրահերը նույնպես ծխախոտ վառեց, նստեց երկաթե սեղանին:

– Պլան,– քմծիծաղ տվեց Հարութն ու անսպասելի զայրացավ:– Ծխելու ժամանա՞կ է, թե՞ ավտոյի փողը դուք եք տալու...

Տղաները ծլկեցին: Հարութը լուսամուտից դուրս նայեց, տեսավ ինչպես տղաներր սեղանը թափքից իջեցրեցին, քայլեցին դեպի մուտքը՝ զայրացավ.

– Չասի՞ բոլորն իջեցրեք, թող մեքենան գնա,– կանչեց, շրջվեց, հայացքն ընկավ մոբերտի նկարին:– Միթոմ ի՞նչ... Ես դրան փող տվող-առնողի մայրիկն եմ անիծել: Ձրի տան՝ չեմ վերցնի: Դարմաեդ շան որդի, դու քո համար քնես՝ ամիսը երկու հազար ռուբլի իմ ջեբից ելնի, մտնի քո ջեբը... Բա սա՞ է արդարությունը:– Նա գուցե խոսքը շարունակեր, բայց ներս մտնող Սաքոն ու Մկրտիչը խանգարեցին: Սաքոն մտամոլոր պտտվեց դատարկ արվեստանոցում, եկավ, նստեց երկաթե սեղանին, ծխեց: Մկրտիչը նստեց նրա կողքին: Հարութը գրպանից մետր հանեց, սկսեց չափել դիմացի պատի երկարությունը:

– Հեչ չմտածես,– վերջապես խոսեց Մկրտիչը:– Աչքդ ճպեցիր, բացեցիր՝ տարին անցավ:

– Լավն են, վատն են՝ չգիտեմ, բայց ձեռքս չի գնում պատից իջեցնեմ:

– Չի գնա, բա՞,– գլուխը տմբտմբացրեց Մկրտիչը:

– Մարդ ոնց որ իր ձեռքով իր երեխեքին որբանոց տա,– հոգոց հանեց Սաքոն:

– Իմ արվեստանոցը որբանո՞ց է,– նեղացավ Մկրտիչը:

– Որ իրենց տան մեջ չեն, իրենց տեղաշորի մեջ չեն՝ որբանոց է, բա ի՞նչ է:

– Ասացիր,– ծուխը փչեց Մկրտիչը,– Չե՞ս գալու, իմ պատերից չե՞ս կախելու...

– Չէ, ոնց իրար վրա շարեցինք՝ թող էնպես էլ մնան:

– Ախր, ինչի՞...

– Ամաչում եմ,– տխուր ժպտաց Սաքոն,– իրենցից ամաչում եմ:

– Չարդ տանեմ,– Մկրտիչը գրկեց, սեղմեց Սաքոյի ուսը:– Ախպորդ տանն են, օտար տեղ չեն:

– Մեկ է՝ ամաչում եմ:

– Ողում ես՝ թող իրենց տեղերում մնան,– մետրը գրպանը խոթեց Հարութը:– Չեն խանգարի:

– Դու կխանգարես,– ասաց Սաքոն:

– Ի՞նչ պիտի խանգարեմ,– զարմացավ Հարութը: – Տկլոր աղջիկներով մի քանի չտեսնված ռեկլամ ունեմ՝ կկպցնեմ էս դատարկ պատին՝ գնացող-եկողները նայեն, սրանք իրենց տեղում թող հանգիստ մնան:

– Հանգիստ չեն մնա,– ասաց Մկրտիչը:– Կիջնեն, կփախչեն:

– Իմ ձեռքից բան փախնի՞– ժպտաց Հարութը, դարձավ Սաքոյին:– Նոթերդ մի կիտիր, այ տղա, մեռելատուն չես եկել:

Լողլողն ու գանգրահերը տնքալով երկրորդ սեղանը բերեցին:

***

Պատին մի քանի նկարներ էին մոռացել, երբ ներս մտան տարեց կինն ու տղամարդը, նրանց հետևից՝ Հասմիկը: Մուտքն այդ շատ էր անսպասելի՝ Սաքոն, Մկրտիչը, Հարութը հարցական մեկ իրար նայեցին, մեկ՝ եկողներին:

– Բարև ձեզի,– ասացին տիկինն ու տղամարդը:

– Բարև ձեզ:

– Մեր հայրենակիցներն են,– բացատրեց Հասմիկը: – Ուզում են նկարներ նայել:

– Էս խառը ժամանա՞կ,– փնթփնթաց Հարութը, մոտեցավ Հասմիկին:– Գժվե՞լ ես:

Տղամարդն ու կինը արվեստանոցի հատակին թափված շշերին ուշադրություն չդարձնելով առաջ գնացին, կանգնեցին պատից քիչ հեռու և աչքերը երբեմն կկոցելով սկսեցին նայել պատից կախված նկարները:

– Սուրճ պատրաստեմ,– ասաց Հասմիկը, աշխույժ քայլերով խոհանոց գնաց:

– Սուրճի ժամանակ գտավ,– փնչացրեց Հարութը: Շրջվեց երկաթե սեղանը ներս բերող տղաներին:– Մյուս պատի տակ եք շարում: Էդ պատի վրա շտեպսելներ պիտի ավելացվի:

– Ովքե՞ր են,– խոհանոց մտնելով՝ հարցրեց Սաքոն:

– Սարյանի արձանի մոտ նկարներ էին նայում՝ վերցրեցի, բերեցի էստեղ:– Հասմիկը գլուխը ցնցելով ետ գցեց ճակատին ընկած մազափունջը:– Մյուս նկարներդ ո՞ւր են,.,

– Մկրտչի մոտ են:

– Բերել չի լինի՞... Արժենթինից են,

– Ձահլա չկա: Հազիվ իջեցրել ենք:

– Արի ականջիդ բան ասեմ,– ժպտաց Հասմիկը: Սաքոն ականջը մոտեցրեց Հասմիկին: Հասմիկը համբուրեց Սաքոյի այտը:

– Գնա:

– Իմ սև սիրտը՝ քո վարդագույն տրուսիկը,– խոժոռվեց Սաքոն:

– Խուժան,– կոկետացավ Հասմիկը:– Գնա մոտները: Կարող է նկար առնեն, ի՞նչ իմանաս:

Սաքոն մտամոլոր արվեստանոց վերադարձավ: Տղամարդն ու տիկինը, հայացքը նկարներին իրար ինչ-որ բան էին շշնջում:

– Տերը ո՞վ է,– նկարից կտրվեց տղամարդը:

– Ես եմ,– ասաց Հարութը:

– Կրնա՞նք այս նկարը լույսից քիչ մը շեղել,– գլխով մոլբերտն ակնարկեց տղամարդը:

– Քո գծով է,– Ս աքոյին նայեց Հարութը:

Սաքոն մոտեցավ, մոլբերտից իջեցրեց նկարը, հենեց պատին:

– Ինչո՞ւ հանեցիք,– ժպտաց տիկինը:– Այնպես կնայեինք...

– Մեկ է, պիտի հանեի,– փնփնթաց Սաքոն, շտկեց պատին հենված նկարը:– Անավարտ է:

Տղամարդն ու կինը մոտեցան, մոտիկից զննեցին կտավը: Հասմիկը երկու գավաթ սուրճ բերեց, դրեց երկաթե սեղանին.

- Հիմա աթոռներ բերեմ,– ասաց, գնաց խոհանոցից երկու աթոռ բերեց.– Համեցեք:

– Մենք մարդ չե՞նք,– նեղսրտեց Հարութը:– Արտասահմանցի տեսավ՝ չոքերը թուլացան:

– Կհամբերես:– Հասմիկը մոտեցավ, ձեռքը թեթևակի հպեց տիկնոջը: – Սուրճս պատրաստ է:

Տղամարդն ու կինը դարձյալ շշուկով իրար բան ասացին, մոտեցան նստեցին աթոռներին: Կինը չարթերին մոտեցրեց բաժակը և, հայացքը մոլբերտից իջեցված նկարին՝ իսպաներեն բան ասաց տղամարդուն:

– Կըսեք՝ նկարն անավա՞րտ է,– Սաքոյին նայեց տղամարդը:

— Անավարտ է:

– Ինչո՞ւ է անավարտ,– Հարցրեց տիկինը:

– Չգիտեմ,– ամաչեց Սաքոն:– Ինձ այդպես է թվում:

– Սա էսպես է,– անսպասելի միջամտեց Մկրտիչը: – Ավարտված նկարի վրա էնքան է աշխատում, մինչև փչացնի:

– Աստվա~ծ,– զարմացավ տիկինը:

—- Ոնց որ նորածին երեխայի վրա բռնես, մասեր ավելացնես,– ոգևորվեց Մկրտիչը:

– Աստվա~ծ,– ժպտաց տիկինը:

– Սուրճը շատ դառը չի՞,– տիկնոջը հարցրեց Հասմիկը:– Քաղցր ավելացնեմ:

– Ոչ, շնորհակալություն,– տիկինը նորից իսպաներեն խոսեց տղամարդու հետ:

– Այս նկարը կրնա՞նք գնել,– Սաքոյին հարցրեց տղամարդը:

– Այո, կուզենք գնել,– ասաց տիկինը:

Մկրտիչը, Հարութը, Հասմիկը, նայեցին Սաքոյին: Սաքոն թևքով սրբեց ճակատի քրտինքն ու դժվարությամբ ասաց.

– Չգիտեմ: Երևի կրնաք:

– Որքա՞ն կգնահատեք,– խորամանակ Ժպտաց տղամարդը:

– Չգիտեմ,– ավելի հուզվեց Սաքոն:– Որքան կտաք՝ կտաք:

Կինն ու տղամարդը դարձյայ իսպաներեն իրար բան ասացին: Խոսակցության մեջ կինն ավելի ակտիվ էր:

– Հազար դոլար,– ասաց տղամարդը:– Համաձա՞յն եք…

Հարութը կողմ գնաց, ափերի մեջ առավ գլուխը.

– Անսորմալ են: Հարյուր հիսուն հազար է անում… Սաքոն վերջնականապես շփոթվեց.

– Ի՞նչ ասեմ…

– Կխորհեմ՝ ավելին արժե, բայց այսքան կարող եմ:

– Ձեզ նվեր,– անսպասելի ասաց Սաքոն:– Նվիրում եմ:

– Հազար դոլարովս արդեն նվեր է,– ժպտաց տիկինը:

Մենք նկարների արժեքը կհասկնանք:– Նա գլխով ակնարկեց ամուսնուն:– Կոլեկցիոներ է: Այդպե՞ս կըսեք…

– Այդպես:– Ուրախացավ Մկրտիչը:– Կոլեկցիոներ: Նկարներ հավաքող, նկարի արժեքն իմացող, արվեստը գնահատող:

– Այո,– ասաց տղամարդը:– Քառասուն տարի են ավելի է: Սեղան ունիմ, Մոդիլիանի, Մոնե ունիմ...

– Մողիլյանի~,– հրճվեց Հասմիկը:

– Քեզ ի՞նչ պատահեց, ախչի,– չդիմացավ Հարութը: – Ասա՝ արագացնեն:

– Կշտապե՞ք,– հարցրեց տիկինը:

– Այո,– կեղծ ժպտաց Հարութը:– Եթե կարելի է:

– Չենք շտապում,– ասաց Սաքոն:

– Թարս ե՞ս: Հազար գործ ունեմ,– անհամբերության նշաններ ցույց տվեց Հարութը:

– Կտեղափոխվե՞ք,– ձեռքը դատարկ արվեստանոցում ճոճվեց տիկինը:

– Մի թեթև,– ասաց Մկրտիչը:

Տղամարդը հանեց կաշվե դրամաքսակը, փողը հաշվեց, պարզեց Սաքոյին.

– Հազար դոլար:

– Կտեղափոխվենք,– ասաց Սաքոն:– Նա գնում է, ես գալիս եմ: Արվեստանոց եմ ստացել:

– Պարազիտ,– բերանից թռցրեց Հարութը:

– Հոս պարազիտ կա՞,– անհանգստացավ տիկինը: – Դիզինֆեկտի պիտի ընեք:

– Պիտի ընենք,– աշխուժացավ Մկրտիչը:– Անպայման պիտի ընենք:

– Ուրիշ նկարներ կրնա՞նք նայիլ,– ասաց տղամարդը:

– Կրնաք,– ասաց Սաքոն, դարձավ Մկրտչին:– Գնացինք,

Սաքոն ու Մկրտիչը արագ քայլերով արվեստանոցից դուրս ելան: Տիկինն ու տղամարդը բարձրացան աթոռներից, մոտեցան անավարտ նկարին, դարձյալ շշուկով խոսեցին:

– Էս ի՞ն արեցիր, ախչի,– թշնամանքով Հասմիկին նայեց Հարութը:

– Ի՞նչ արեցի...

– Դու ի՞մ բոզն ես, թե՞ նրա:

– Բոզը դու ես:

– Կսատկացնեի, բայց տեղը չի: Սրանց որտեղի՞ց գտար:

– Սարյանի արձանի մոտ էին:

– Քեզ թողեցի, որ Սաքոյի մոտ մնա՞ս, թե՞ գնաս, ցցվես Սարյանի արձանի մոտ:

– Կոճակ պիտի առնեի:

– Կոճակ էր պետք՝ կոճակդ գտնեիր: Սրանց ինչի՞ բերեցիր...

– Ի՞նչ իմանայի, որ հազար դոլար են տալու:

– Խնդո՞ւմ ես:

– Բա ի՞նչ անեմ:

Հարութը մտքերի հետ աջ ու ձախ քայլեց, նորից մոտեցավ Հասմիկին.

– Տես՝ ինչ եմ ասում, որ սրա բոլոր նկարներն առնեմ՝ կարա՞նք բիզնես անել...

– Ի՞նչ բիզնես...

– Ես առնեմ՝ դու սրանցից շաբաթը մեկ գտնես, բերես...

– Սրանք էլ էնտեղ ինձ են սպասում: Պատահականություն էր.

– Տուրիստ չե՞ն... Պաչկեքով գալիս են: Կբերե՞ս...

– Չի ծախի:– Հասմիկի ձայնի մեջ ըմբոստություն մտավ:

- Փողին մուննաթ,– ժպտաց Հարութը:– Արվեստանոցն էլ չէր տալիս: Ո՞նց տվեց:

– Չի տա: Նա հիմա փող ունի, չի տա...

– Հարյուր հիսուն հազարը փո՞ղ է... Դու չխառնվես:

Սաքոն ու Մկրտիչը ներս մտան, նկարները հենեցին պատին: Հասմիկը մոտեցավ հյուրերին:

– Մի րոպե՝ բան եմ ասում,– Հարութի թևը բռնեց Սաքոն, նրան խոհանոց տարավ: Երևի նախապես էր հաշվել, պատրաստել Սաքոն Հարութի բուռը մտցրեց դոլարները.

– Էս քեզ՝ տասներկու հազարի դիմաց: Շատ է ու քիչ չի:

– Սպասիր, իրար հասկանանք:

– Ասացի՝ շատ է ու քիչ չի,– ձայնը բարձրացրեց Սաքոն:

– Սաքո ջան, ես շատ ու քի՞չ եմ ասում...

– Ի՞նչ ես ասում...

– Ասում եմ՝ նկարներիդ թոմարի ի՞նչ տամ, որ էլ չխոսենք...

– Նկարն ի՞նչ ես անում,– քմծիծաղ տվեց Սաքոն:

– Թող մնան, չի խանգարի:

– Ինչի՞ ես թոմարի տալիս: Ես գույնր բռնեմ՝ դու նկարիր:

– Լուրջ եմ ասում:

– Լակոտներիդ ասա՝ սեղաններն իջեցնեն:

– Սպասիր, այ տղա, սպասիր: Հազար դոլար է ընկել ձեռը՝ իրեն կորցրել է: Նկարներիդ միլիոն տա՞մ...

– Միլիոն ու կես...

– Ռադդ քաշիր:

– Ի՞նչ,– ֆշշացրեց Հարութը:

– Մկրտիչ...

Մկրտիչն ասես սպասում էր Սաքոյի կանչին՝ իսկույն խոհանոց մտավ, սպառնալի մոտեցավ Հարութին.

– Ի՞նչ ես ասում...

– Ասում եմ՝ նկարներին թոմարի միլիոն ու կես տամ...

– Չքվիր էստեղից, պիղծ,– ձայնը խեղդեց Մկրտիչը:

– Երեկ կոնյակս խմելիս ջան էիր ասում, էսօր պիղծ դարձա՞...

– Կոնյակդ էլ էր պիղծ: Փախիր էստեղից:

Հարութը խոհանոցից ելավ, արագ գնաց, արվեստանոցի դռան մեջ հանդիպեց սեղանը ներս բերող տղաներին.

– Իջեցրեք:

Տղաները շխկոցով սեղանը վար դրեցին:

– Որտե՞ղ դնենք,– հևաց լողլողը:

– Բենզինը լցնես, վառես՝ իրենց էլ, նկարներն էլ, էս դոլար մսխող ապուշներին էլ հետը:– Սաքոն ոտքը դրեց սեղանին, քայլ արեց, դռնից դուրս ելավ:– Սեղանները ներքև իջեցրեք:

Տղաները սեղանները դուրս տարան: Սաքոն ու Մկրտիչը մոտեցան հյուրերին:

Հասմիկը, որ իհարկե, տեսավ այս ամենը, համենայն դեպս հարցրեց.

– Գնա՞ց...

– Փորձեր՝ չգնար,– խրոխտացավ Սաքոն:

Հասմիկը մոտեցավ, ձեռքը թեթևակի հպեց տիկնոջ մեջքին.

– Սուրճը չկրկնե մ...

– Հրամմե՞...

– Սուրճը, ասում եմ, նորից չե՞ք կամենա:

– 0, ոչ,– ժպտաց տիկինը:– Մենք սուրճը առտու կանուխ առած ենք: Այս նկարները չլինեին՝ սուրճ պիտի չխմեինք:– Նա պայուսակից ծամոն հանեց, պարզեց Հասմիկին: Համեցեք:

– Շնորհակալ եմ: Ես ունեմ: Շատ ունեմ:

– Մի մերժեք,– խնդրեց տիկինը:

– Շնորհակալություն:

Մկրտիչը հանկարծ բան որոշեց՝ մոտեցավ տղամարդուն.

– Ես քանդակագործ եմ:

– Իրա՞վ,– ժպտաց տղամարդը:

– Այո,– ասաց Սաքոն:– Նրա արվեստանոցը առաջին հարկումն է:

– Ինձ նայե,– Սաքոյին դիմեց տղամարդը:– Երեկոյան դարձյալ նկարչի մոտ էի: Անունը պիտի չտամ: Խ-ը անվանենք...

– Հաճելի տիկին ուներ,– տմբտմբացրեց տիկինը:

– Այո,– շարունակեց տղամարդը:– Խոսք չունիմ՝ վրձինը վարպետի վրձին է, բայց...

– Բայց ի՞նչ,– չհամբերեց Մկրտիչը:

– Հիմա բացատրեմ: Զինվորների շարքը կպատկերացնե՞ք... Կանոնիկ է, կշարվեն ըստ հասակի: Անոր նկարները ճիշտ այդ շարքը կհիշեցնեին, որ, հարկավ, նորություն չէ, և ես տխրությամբ կխորհեի, որ ազգիս գեղարվեստին միտքը հոգնել է...

– Այո,– հաստատեց տիկինը:– Տխուր էր:

– Ձեր պարագային, մաեստրո,– ձեռքը Սաքոյի ուսին դրեց տղամարդը,– շարքը կա, բայց ամեն մարդ կկանգնի այնտեղ, ուր սիրտը կուզե: Սքանչելի է: Հիմա կխորհիմ, որ զարմանալի ազգ ենք, սպառվիլ չունինք...

– Ախր, Խ-ից առաջ ա կա, բ կա, գ կա,– կանչեց Մկրտիչը:– Մեր այբուբենը չգիտե՞ք, - Մկրտիչը ճոճեց բռունցքը:– Երկաթագիր է...

– Այո, – տխուր ժպտաց տիկինը:– Միայն այս դժվարություններից պիտի դուրս ելնեք:

– Դուրս կգանք,– հուզվեց Հասմիկը:– Էսպիսի՞ դժվարությունների տակից ենք դուրս եկել...

– Այո,– ասաց տիկինը,– նախաճաշին խումբեն դրամ հավաքեցինք Ղարաբաղի օգնության համար:– Նա գլխով ակնարկեց տղամարդուն:– Տասներեք դոլար տվեց:

Երիտասարդները ներս մտան, թշնամանքով նայեցին նրանց, վերցրեցին առաջին պատահած սեղանը, դուրս տարան:

***

Նկարները պատերին, իրենց տեղերում էին: Լուսամփոփը, թախտը՝ նույնպես: Փոքրիկ սեղանի ու բազկաթոռների դիրքը փոխված էր: Արվեստանոցը հավաքված, մաքուր էր, նախկին փնթիության հետքն անգամ չկար: Պատից կախված բարձրախոսից մեղմ երաժշտություն էր հնչում: Բախ՝ «Հովվերգություն»: Սաքոն մոլբերտի մոտ կանգնած նկարում էր: Արվեստանոցի դուռը զգույշ բացվեց, ներս մտավ Հասմիկը. հագուստն ուրիշ էր, սանրվածքն՝ ուրիշ, դեմքի ժպիտը խաղաղ էր, առինքնող: Սաքոն Հասմիկի մուտքը չնկատեց՝ շարունակեց երբեմն աչքերը կկոցելով նկարել: Հասմիկը հուշիկ քայլերով առաջ եկավ, նստեց բազկաթոռին: Նրան, երեևի, հաճելի էր արվեստանոցի այս մթնոլորտը՝ գոցեց աչքերն ու բավականին երկար վայելեց: Երաժշտության ավարտի հետ բացեց աչքներն ու շշնջաց,

– Մոդիլիանի~...– սպասեց մի պահ ու քիչ ավելի բարձր, -Մոդիլիանի~...

– Եկա՞ր,– մոլբերտից կտրվելով Հասմիկին նայեց Սաքոն:

– Հովվերգություն է, իդիլիա,– ասաց Հասմիկը:– Չեմ խանգարու՞մ...

Սաքոն չպատասխանեց: Մեղմ ու անուշ ժպտաց Հասմիկին:

– Ի՞նչ ես նկարում...

– Քեզ:

– Մերկ ու մաքո՞ւր ես նկարում...– Հասմիկի հայացքում աղերսանք կար:

– Մերկ ու մաքուր...

Արվեստանոցի դուռը բացվեց, ներս մտան Սաքոյի կինն ու աղջիկը: Հասմիկը դանդաղ ոտքի ելավ:

1992թ.

ՈՒԽՏԱԳՆԱՑՈՒԹՅՈՒՆ

Մինչև Գորիս ճանապարհն ինձ ծանոթ էր, անծանոթը ճանապարհի դատարկությունն էր: Տասն յակ կիլոմետրեր ես անցնում՝ դիմացից եկող մեքենա չկա, ձեզ տվող-անցնող մեքենա չկա, և վերջապես գլխի ես ընկնում պատճառը, նախ՝ բենզինն է թանկ, առանց ծայրահեղ անհրաժեշտության մեքենա չես քշի և հետո՝ թուրքերը Նախիջևանի կողմից, ինչպես Ալբերտն ասաց, «թխում» են, Մենք, Կիլիկիո կաթողիկոսության Հյուսիսային Ամերիկայի արևելյան շրջանի և Կանադայի հոգևոր առաջնորդ Արքեպիսկոպոս Մեսրոպ Աշճյանի ստեղծած «Վարարակն» բարեգործական հիմնադրամի վարչության անդամներս, Լորենց Առուշանյանը (տնօրեն), Ալբերտ Գրիգորյանը, Վալերի Շահրիմանյանը, Մարտիկ Ղահրամանյանը և ես Ղարաբաղ էինք գնում տեղի բնակչությանը դրամական օգնություն ցույց տալու: Գորիսից դուրս ճանապարհն ավելի դատարկվեց, ճշգրիտը՝ ճանապարհի միակ շարժվող կետը մնաց մեր մեքենան, և դա, անկեղծ ասած, մեջս տհաճ զգացողություն էր ծնում, ոնց որ բազմահարկ շենքի միակ բնակիչը լինես: Երևի մյուսների մեջ էլ նման մի բան կար՝ լռում էին: Վերջապես մեքենայի ղեկին նստած Լորենցը խախտեց լռությունը.

– Հայաստանից դուրս եկանք: Հրեն Լաչինը, տեսնո՞ւմ ես...

Չտեսնեի: Քանդված, ավերակված, անտանիք, անլուսամուտ, անմարդ, անշուն, անկատու... Անշունչ: Վեճ սկսվեց, թուրքի՝ ձեռքի գործն է, թե հայի: Մեկը թե՝ թուրքը փախչելիս վառեի ավերակել է, մյուսը՝ մերոնք են արել:

– Այ տղերք,– ասացի,– հայը ե՞րբ է ավերակել:

– Մանուկ ջան,– ասաց Վալերիկը,– թուրքի արածները որ տեսնում ես, թուրքանում ես, դու էլ ես անում:

Ուրեմն, բոլոր դեպքերում, թուրքի արածն է: Բերդաձորի ճամփեքով անցնելիս մեր ընկեր Բերդաձորի Անգոյին հիշեցինք, «հեչ գիտի, Անդրե,– ասացինք ու դարձյալ լռեցինք: Մեքենան փնչոցով, մռնչոցով առաջ էր գնում, և ես կամաց-կամաց հասկացա, որ Արցախ աշխարհը վիշապ է՝ գլուխը պարզած Հայաստանին, շնչառությունը Հայաստանում, պոչը Շահումյանում, թե ավելի հեռու, և որ այդ վիշապին հաղթելն անհնար է: Այդ ե՞րբ է եղել որ բնության բնավորությունը չի դարձել տեղաբնակ ժողովրդի բնավորություն: Անհնար է:

***

Քարինտակի պահակակետում երեքն էին՝ մեկը 16-17 տարեկան, մյուսը՝ քիչ ավելի տարիքով:

– Ձեզ պիտի փող տանք:

Չհասկացան, իրար նայեցին, Ալբերտը գնաց, մեքենայից հանեց պայուսակը: Տարիքով ամենափոքրը հանկարծ սթափվեց, կռացավ, բացեց թիթեղյա վառարանի դռնակը, միջից թղաչափ շամփուրներ դուրս բերեց, նկատեց իմ զարմացած հայացքը,

- Պոստի խորոված էլ էս ձևի է լինում,– բացատրեց: – Կերեք:

Զինվորի բաժին ուտելիքը կվերցնե՞ն:

– Չէ,– ասացինք,– շտապում ենք, փողն ստացեք՝ գնանք:

– Մինչև չուտեք՝ մի կոպեկ էլ չենք վերցնի, - ասաց մյուսը, և ես հասկացա, որ չեն վերցնի:

– Լավ եք ապրում,– կատակեցի,– շամփուրից դժվարությամբ պոկեցի խանձված, կիսաեփ մսի կտորը:– Խորովածով, բանով...

Քթների տակ ժպտալով իրար նայեցին:

– Տրաֆեյ է,– բացատրեց ամենափոքրը, դուրս գնաց, մի պահ հետո ցելոֆանե տոպրակով միսը ձեռքին ետ եկավ.

- Սա էլ ձեր բաժինը:

- Չի լինի, - Իրար անցավ Լորենցը,– ի՞նչ ենք անելու, մեզ միս պետք չէ:

– Մնալու է փչանա,– ասացին:

– Չի փչանա,– ասաց Մարտիկը:– Դրեք հոսող ջրի մեջ՝ ոչինչ էլ չի լինի:

– Տար, տղա ջան,– ասացի,– տար պահիր: Մեկ էլ տրաֆեյ ե՞րբ եք ունենալու:

Տղան դուրս գնաց: Ավելի ուշ, Քարինտակ գյուղի ճանապարհի խորդուբորդերին Մարտիկն ասաց.

– Էս ի՞նչ է ոտքերիս տակ:

Կռացավ, բարձրացրեց՝ ցելոֆանե տոպրակով միսն էր: Ե՞րբ դրեցին, որ չիմացանք:

Քարինտակ գյուղում ես նոր հասկացա, թե ինչ է նշանակում «Քարինտակ»: Չորս, թե հինգ հարյուր մետր բարձրությամբ կիլոմետրեր ձգվող ուղղահայաց ահռելի քարափ է, վրան՝ Շուշին, տակը ձորնիվայր իջնող գյուղը՝ Քարինտակը: Գյուղամիջում հանդիպեցինք առաջին մարդկանց, երեք-չորս ծերունի, մի պառավ կին նստած էին պատի տակի նստարանին, մեքենայից ելանք, բարևեցինք:

– Կոլտնտեսության կամ գյուղխորհրդի նախագահին ո՞նց գտնենք,– հարցրեց Լորենցը:

– Երևանի՞ց եք:

– Երևանից ենք,– ասացի և հասկացա, որ Ղարաբաղը ոտքի տակ տված ընկերներս Քարինտակում առաջին անգամն են լինում:

– Թռիր, մի Գրիշային կանչիր,– ասաց մեկը: Թռնողը վաթսուն տարեկան կլիներ՝ կաղալով գնաց: Ու մինչ մենք սպասում էինք, նրանք պատմեցին «թուրքի օյինները»:

– Թոփն ու գյուլլեն՝ ջհաննամը, էն պակրիշկեքն էին փիսը...

«Կրազի» ավտոդողերն այրել ու քարափի գլխից բաց են թողել գյուղի վրա: Ու էդ անտերները շուրջը կրակ սփռելով, գյուղի տները վառելով, ցատկռտելով գլորվել են ձորն ի վար:

– Բա դրանց թողած ծուխն ու հոտը, փու~...– դեմքը զզվանքով ծամածռեց պատմողը, ապա ժպտաց:– Իսկ քանի անգամ չորս կողմից վրա տվեցին: Ես ասեմ հարյուր, դու ասա՝ հազար: Առը թե գյուղ մտան,– նրա բութ մատը ցցվեց ցուցամատի ու միջին մատի արանքից:– Պագլեցներ:

Կոլտնտեսության նախագահ Գրիշան եկավ, ծանոթացանք, բացատեցինք մեր առաքելությունը:

- Յա~,– ուրախացավ:– Սփյուռքն օգնում է: Որ Երեվանը մեզ չի մոռացել՝ հայտնի է, բայց որ սփյուռքն է իմանում Քարինտակի մասին՝ մտքովս չէր անցնի:

– Քո մեռելը չտրաքի,– ճոճվեց կաղը:– Տես թե մեր խաբարը ոնց է գնացել հասել ամերիկաները...

– Կհասնի բա՞,– ասացի,– հերոս ժողովուրդ եք:

– Հերոս ենք, խոսք չկա,– ինքնագոհ ժպիտով տեղում դարձյալ ճոճվեց կաղը:

– Դու էլ կասես,– ասաց ձեռնափայտին հենված չորուցամաքը:– Իր երեխին, իր տունուտեղը պաշտպանելը ի՞նչ մի հերոսություն է որ...

– Լսեցի՞ք,– աչքերը խոշորացնելով վրդովվեց կաղը: – Սրա խասիաթն է էսպես՝ միշտ պիտի հարամ անի...

– Հերոսություն է, հերոսություն է,– այս ու այն կողմից հաստատեցին Ալբերտը, Վալերին, Մարտիկը, ու կաղը ձեռքը թափ տալով հանգստացավ:

– Ժողովրդին իմաց տվեք, որ գան,– ուսի վրայից ասաց Գրիշան և մեզ առաջնորդեց գյուղական խորհուրդ:

Մինչ մենք զրույց կանեինք գյուղի գործերից, հոգս ու կարիքից՝ ժողովուրդը հավաքվեց: Երևանյան հերթերի անկարգությունը հիշելով՝ փորձեցի զգուշանալ.

– Ասեք թող մեկ-մեկ գան, ասեն ազգանունը, ստորագրեն, փողն ստանան, գնան:

– Ոչինչ ասել պետք չի,– ժպտաց Գրիշան:– Դուք սկսեք:

Սկսեցինք: Անաղմուկ, անխոս գալիս, ստորագրում էին: Անուն ազգանուններն էլ կարծես ամաչելով, շշուկով էին ասում: Միայն՝ աչքերի մեջ զգացվում էր ակնածանքը մեր նկատմամբ: Ավելի ուշ, երբ ընթրիքի նստեցինք գյուղխորհրդի նախագահ Մաքսիմի տանը, Մաքսիմն ասաց.

– Ձեր տված գումարի հազարապատիկն արժեր ձեր ուշադրությունը մեր նկատմամբ: Չգիտեմ, մեր ժողովրդից դա հասկացա՞ք, թե չհասկացաք: Քիչ խոսան ենք:

Հասկացանք, էն էլ ո՞նց հասկացանք: Ուրիշ բան էլ հասկացանք, երբ Գրիշան բերել տվեց հեռադիտակը և Մաքսիմի պատշգամբից մեզ ցույց տվեց նոր կառուցվելիք Քարինտակ գյուղի ավելի հարմարավետ, շատ ավելի ընդարձակ տեղը: Հողերն արդեն բաժանված են:

- Պլանը կա, այ էն սյունը տեսնո՞ւմ ես: Դա էլ իմ տան տեղն է: Մի շրխկան տուն եմ կանգնեցնելու...

Մարտակերտի, Մարտունու, Հադրութի շրջաններում մարտեր են մղվում, իսկ ահա Քարինտակ գյուղը մտածում է կառուցվելու մասին, դե եկեք ու սրանց հաղթեք: Մաքսիմի տանը կյանքում առաջին անգամ «ժինգյալով հաց» կերա: Գաթայի պես բան է, մեջը խորիսխի փոխարեն յոթ տեսակի տապակած կանաչի: Ավելի համեղ բան չէի կերել:

***

Շուշի մթնով մտանք: Երկինքն աստղաշատ էր: Անսպասելի ինչ-ինչ շինությունների հետևից մեր դեմ խոյացավ Ղազանչեցոց եկեղեցին: Տեսիլք էր. Լուսնի լույս, տաճարի աստվածամերձ, ճերմակ լռություն, եկեղեցու խորքում՝ բաց դռնից զարկերակվող մոմերի լույսի հանդարտ թրթռոց... Ինձ համար էլ անսպասելի մեկիկ-մեկիկ գոռացի կենդանի ու անկենդան բոլոր հարազատներիս անունները: Ինչո՞ւ գոռացի...

Ստեփանակերտում իջևանեցինք Ալբերտի քրոջ՝ Էլմիրայի տանը, Ալբերտը նրան Գուլի էր կոչում, Գուլի անունն ինձ ավելի հարազատ թվաց քույր բառին, և ես էլ նրան Գուլի ասացի: Երեք զավակ ունի՝ Միեր, Սարդիս, Մխիթար, մեծը՝ Միերը, առաջին դասարանում է, ցավիկները տանեմ: Ավելի շատ տանեմ Գուլիի ցավը. Դարաբաղյան պատերազմի այս հինգ տարիներին երկու արու զավակ է ծնել: Այսինքն՝ թքել եմ ձեր գրադների, «շարիկավոր» ռումբերի, ձեր ՕՄՕՆ-ի, ձեր արտակարգ ռեժիմի ու չգիտեմ, թե էլ ինչի վրա, մեկ է՝ հայ ժողովուրդը բազմանալու է: Էլի՞ ապացույց... Հրես, հենց Գուլիի տանը, Կամիլան՝ բարձրահասակ, ձիգ, Մինասի կտավներից դուրս թռած ջահել մի գեղեցկուհի: Պատշգամբում կանգնած խմոր է հունցում: Հղի է, չամաչեի՝ կմոտենայի, կծնկեի դիմացն ու ձեռքը կհամբուրեի: Դե եկեք ու սրանց հաղթեք: Բա նրանց լայնասրտությո՞ւնը... Չէ, հյուր չէինք Գուլիի տանը (ամուսինը՝ Էդիկը դիրքերում էր), մեր տունն էր, պարզապես մի քանի օրով հեռացել էինք, նորից վերադարձել: Այդպիսին էր տանտիրուհու, վերաբերմունքը: Միայն մի անգամ հիշեցրեց իր տանտիրուհի լինելը. կեսգիշեր էր, պետք ունեի՝ արթնացա, քիչ գինով էի՝ անկողնուց ելա, ոնց խավարաշատ Երևանի իմ տանը՝ պատերին թփթփացնելով քայլեցի դեպի պետքարան: Ձեռքս բռնեցին.

– Հակառակ կողմն է...

– Չէ, էս կողմն է,

Կլկլոցով ծիծաղեց.

– Իմ տունն է, ուրեմն ես չգիտե՞մ ինչը որ կողմում է:

Ձեռքս բռնած տարավ ուր հարկն է, դուռը բացեց ներս մտցրեց:

Միայն քույրն է ընդունակ այդպիսի բանի:

Ստեփանակերտում մենք մեր առաքելությամբ եղանք թատրոնում, գրողների միությունում, «Արցախ» թերթի խմբագրությունում, «Մաշտոց» հրատարակչությունում, մայրության ֆոնդում, դպրոցներում ու մանկապարտեզներում, զոհվածների ընտանիքներում, վիրավոր սակրավորների մոտ և ոչ մի տեղ դժգոհություն չլսեցինք իրենց վիճակից, հնգամյա պատերազմից, գլխներին պայթած ռումբերից ու հրթիռներից: Ցածրաձայն ասում էին անուն ազգանունը, փողն ստանում ու գնում:

***

Գյուղ Հղորտի: Ինչո՞ւ Հղորտի: Լորենցը բացատրեց, հնում և հիմա էլ հանդից քարափ, քարափից գյուղ լուրերն իրար կանչելով են հայտնել ու հետն էլ պատվիրել հաղորդիր: Հաղորդիր՝ դարաբաղյան բարբառով՝ հղորտի: Այստեղից էլ գյուղի անունը: Բայց նախ՝ Հղորտու հանդը,

Հղորտու գետը, Հղորտու ջրաղացը: Ջրաղացի բազումն է: Հղորտին Լորենցի, Ալբերաի, Մարաիկի պասլենական գյուղն է, և նրանցից յուրաքանչյուրը յուրովի աչքի պոչով է ինձ նայում, հասկանում եմ՝ ուզում են իմանալ, թե ինչ տպավորություն է թողնում իմ վրա իրենց մանկության աշխարհը:

– Սպասեք,– ասացի,– նախ պիտի Հղորտոտվեմ : Գնացի, գետի ջուրը բուռս առա, խփեցի դեմքիս, առա՝ խփեցի դեմքիս, առա՝ խփեցի դեմքիս:

– Հերիք է, – ասաց Մարտիկը,– տնաշեն...

– Ուխա~յ,– ասացի,– կնքվեցի: -– Կնքված չե՞ս...

– Ո՞նց չեմ: Որ մի անգամ էլ էս անուշ ջրով կնքվեմ՝ շա՞տ կհամարվի...

Գետը՝ հրաշք, դաշտը՝ հրաշք, ջրազացը՝ հրաշք, բայդ ամենաանսպասելի հրաշքը երեխեքն էին. բեռնատարով եկան ու ինչ-որ բան էին վանկարկում, որ ես չէի ջոկում:

– ճե-ղաց, ճեղաց,– բառը որսաց Լորենցը:

– Ի՞նչ,– չհասկացա:

– Ջրաղաց, ջրաղաց,– վերծանեց Ալբերտը: Բեռնատարը կանգնեց, դպրոցի աշակերտները վար ցատկեցին, ոմանք վազեցին դեպի ջրազացը, մյուսները վազեցին ծառերի տակ, ու հանկարծ հնչեց երաժշտությունը: Ակորդեոնն ու կլարնետը, ոչինչ, այս հանդում մի կերպ հասկանալի էին, անհասկանալին ոտքերի տակը ամբացված թմբուկն էր իր փայտիկների կտկտոցով: Պահո~... Մտովի ասացի՝ երեխեք ջան, էս ջրաղացի մոտ դհոլ-զուռնա էր պետք, չկա՞... Ոչինչ, ակորդեոնն ու կլարնետն էլ յոլա կտանեն, բայց էդ ոտավոր թմբուկի ձենից վախենում եմ ճեղացը խրտնի ու փախչի: Մյուս անգամ էստեղ գալիս մի դափ-դհոլ զարկող ճարեք: Երեխեքի պե՞տքն է՝ սկսեցին պարել: Ուսուցչով, աշակերտով, եթե կուզես՝ հենց ինձնով լեցուն ինքնամոռաց պար էր, և պարզ չէր, ինչքան էր տևելու թիթեռներ հիշեցնող երեխաների ճախրանքը դաշտ ում, եթե չերևար ուրիշ մի բեռնատար:

– Եկան,– կանչեց մեկը, և երխաները պարը թողած վազեցին բեռնատարին ընդառաջ:

Հայրերն էին դիրքերից գալիս: Գարնանը ինչպե՞ս են դառներին բերում մայր ոչխարների մոտ կերակրվելու, ինչպես են երկու կողմից մայունով ընդառաջ վազում, խրվում իրար մեջ, հաշված վայրկյաններում մայր ու գառ գտնում իրար... Եվ ապա տիրում է մի խոր լռություն: Ճիշտ այդպես եղավ: Իրար գտան, գրկախառնվեցին, իսկ ում հայրը նրանց հետ չէր վերադարձել՝ մնաց անշարժ, վիզը ծուռ՝ կողքից նայող: Ուսուցչուհին սթափվեց, ցանկացավ թախիծը ցրել.

– Նվագեք,– ասաց, բռնեց 10–12 տարեկան աղջնակի ձեռքը, մոտեցրեց նվագողներին:– Երգիր:

Աղջնակը երգն սկսեց, քիչ երգեց, աչքերին արտասուք երևաց՝ արտասուքն աչքերին երգեց, ձայնը կերկերաց, կերկերուն ձայնով երգեց, հետո անսպասելի ընդհատեց երգը, դեմքն առավ ափերի մեջ ու հեկեկալով դանդաղ կողմ քաշվեց,

– Թուրքերը հորը կապել են ծառից, կարտել ու վառել: Կարապետյան Վալերի, 33 տարեկան էր,– բացատրեց Ալբերտը:

Նայեցի աղջնակին, դեմքը ափերի մեջ, վտիտ ուսերը երբեմն ցնցվում էին: Եթե մոտենայի՝ գիրկս էի առնելու, գլուխս հպելու էի գլխին ու հետը հեկեկալու էի: Չմոտեցա: Գնացի ավտոմատն ուսին, ծառի բնին հենված պատանու մոտ.

– Անու նդ ի՞նչ է:

– Դանիլ:

– Քանի՞ տարեկան ես:

– Տասնվեց:

– Հեչ թուրք խփած կա՞ս:

– Բա խի՞ չկամ:

– Քանի՞ տարի ես կռվում... Լարեց հայացքը, նայեց աչքերիս մեջ. – Երկո՞ւ, թե երեք,– հարցրեց:

Գիշերեցինք Ալբերտ Գրիգորյանի հորական տանը: Այստեղ եղբոր՝ Մարտիկի ընտանիքն է ապրում տարիքն առած հոր հետ:

– Գրիգոր ապի, քանի՞ տարեկան ես,– հարցրեց Լորենցը:

– Հեչ՝ ութանասունութ: Մի քիչ ապրել եմ:

Թոռնիկը՝ 10 տարեկան Իդան, նայում էր ինձ ու անընդհատ ժպտում: Երևի բան էր ուզում ասել ու չէր ասում: Վերջը չդիմացավ.

– Հանդում ես քո հետ պարեցի:

– Լավ արեցիր, չարդ տանեմ,– ուրախացա:– Դու միշտ պիտի պարես:

– Է~,– հոգոց հանեց մայրը:– Երեխան պիտի ծափ ու ծիծաղով մեծանա:

– Թողնո՞ւմ են,– բռունցքը անսպասելի սեղանին իջեցրեց Լորենցը:

Փոքրիկին՝ 3 – 4 տարեկան Դավթին ուզում էին պառկեցնել՝ չէր թողնում:

– Պառկիր, - ասացի,– կգամ, կմտնեմ ծոցդ: Կթողնե՞ս: Արևն աչքերում, շիկահեր, արտակարգ գեղեցիկ մանչուկ էր:

– Կթողնեմ,– ասաց, հնազանդվեց ու մոր հետ կողքի սենյակն անցավ:

Կեսգիշերին մոտ տանտերը՝ Մարտիկը եկավ:

– Պոստո՞ւմ էիր,– հարցրեց Մարտիկ Ղահրամանյանը:

– Պոստում:– Ավտոմատը դրեց դռան անկյունում, մոտեցավ, ծանոթացավ հետս:– Բարով ես եկել:

– Ի՞նչ կար, – հարցրեց Վալերին:

– Հանգիստ էր:

Իր տանը, իր սեղանի մոտ հյուրի պես նստեց: Երևի քաշվում էր մեր ներկայությունից՝ ուտելիքին ձեռք չկպցրեց: Լորենցն զգաց.

– Պառկենք,– ասաց,– առավոտը շուտ ենք վեր կենալու:

Առավոտյան նախաճաշում էինք, երբ հայտնվեց կիսամերկ Դավիթը, ձեռքս ձգեց.

– Մտնեմ ծոցդ:

– Մյուս անգամ Դավիթ ջան, մյուս անգամ,– ամոթխած ժպտաց մայրը:

Ելա, գնացի անկողնուս մոտ, հանվեցի, մանչուկին ծոցս առա: Մազերից արևի բույր էր գալիս:

Վերադարձին Հղորտու հանդում մոտեցանք ջրաղացին: Կոլտնտեսության նախագահ Ֆեդյան լայն ժպտաց.

– Վսյո վ պորյադկե:

Քաղբանտարկյալ է եղել, շատ է ապրել սիբիրներում, վերջին երկու, թե երեք տարին է, որ գյուղ է վերադարձել՝ կիսելու գյուղի հոգսն ու պատերազմի հոգսը: Գյուղը գոհ է նախագահից: Մենք՝ նույնպես: Նախորդ այցին «Վարարակն» բարեգործական հիմնադրամը փող էր հատկացրել ջրաղացի շինարարության համար: Վեց ամիս էլ չի անցել, խնդրեմ՝ ջրաղացը պատրաստ է:

– Բա էս ի՞նչ են անում,– գլխով ակնարկեցի ջրաղացքարերի մոտ աշխատող մի քանիսին:

– Ջրաղացքարերը տեղ-տեղ իրար չեն քսվում: Կարմիր կավ ենք աղում, որ իմանանք ո՞ր տեղն է,– բացատրեց Ֆեդյան:

Մոտեցանք աշխատողներին, բարևեցինք:

- Ո՞նց ես Վիկտոր,– նրանցից մեկին դիմեց Լորենցը:

Վիկտորը բարձրահասակ, շեկլիկ, կազակի բեղերի պես ոլորած բեղեր ուներ:

– Ռուս է,– ականջիս տակ ասաց Մարտիկը,– Հղորտվա փեսա է:

– Դուք լավ կենաք,– ասաց Վիկտորը:

– Քիչ չի՞, այ Վիկտոր:– Ընդամենը երկու երեխա ունի, – ասաց Մարտիկը:

– Որ դլվես կանգնող լիներ՝ հա թող բերեր: Ոչ կինս ծնողներ ունի, ոչ ես, նրանց նայողն ո՞վ է...

– Ամոթից մեռա,– ժպտաց Լորենցն ու բացատրեց: – «Ղարաբաղի հորովելը» երգելիս ես գալու բառը փոխարինում եմ մեջք բառով, որ հասկանալի լինի: Իսկ մեր ռուս ախպերը հիմա ասում է՝ գլվես:

Վերևից՝ քարափի գլխից կրակոց լսվեց: Նախ հատ-հատ կրակեցին, ու ապա կրակահերթ տրվեց: Ջրաղացից դուրս եկանք:

– Շամոն կլինի,– ասաց Ֆեդյան,– մնաս բարովի սալյուտ է տալիս:

Մենք «մնաք բարովն» ասացինք ու նստեցինք մեքենան: Ճանապարհին Լորենցը բարձրաձայն խորհում էր՝ ո՞ր գյուղերն ենք գնալու, ինչքան գումար մնաց բաժանելու և հանկարծ հիշեց.

– Պայուսակը ինչ-որ աչքովս չի ընկնում:

Ալբերտը, որ գանձապահն էր՝ իրար անցավ: Մեքենայում չկար, կանգնեցինք, բեռնախցիկը բացեցինք՝ չկար: Մեքենան շրջեցինք և գնացինք: Հղորտու խաչմերուկում պայուսակը ձեռքին կանգնած էր Ալբերտի եղբայր Մարտիկը:

– Լավ է շուտ հիշեցինք, - ասաց Վալերին,– թե չէ գնալու էինք, է , ուր հասնելու:

– Չէին թողնի,– ժպտաց Մարտիկը,– պոստից ետ կուղարկեին:

– Ո՞նց էին իմանալու, թե բան ենք մոռացել,– ասացի:– Հեռախոս ունե՞ն:

– Մեր հեռախոսը սա է,– ձեռքի ավտոմատը բաբձրացրեց Մարտիկը:– Հետ ուղարկելու կրակոց տվեցի:

***

Մեր առաքելության շրջանակներում հանդիպեցինք Հադրոլթի շրջանի Հին Թաղլար և Խծաբերդ գյուղերի ներկայացուցիչների հետ, դրամ բաժանվեց Մարտունու շրջկենտրոնում, շրջանի լրիվ կամ մասնակիորեն ավերված սահմանամերձ Ավդուռ, Մյուրիշեն, Հացի, Նորշեն գյուղի բնակիչներին: Ղարաբաղի մասշտաբներով, իհարկե, ընդգրկումը մեծ չէ, բայց տես, որ Լոս Անջելոսից Սարգիս և Սալբի Ղազարյաններն իրենց զուլալ առուն միացրեցին Վարարակն գետակին, ու ընդգրկումը քիչ էլ լայնացավ: Առաջին ծիծեռնակներն են: Ո՞վ գիտե, գուցե էլի ծիծեռնակներ հայտնվեն, և «Վարարակնը» գետակից գետի վերածվի: Ցանկացողները թող դիմեն Մեսրոպ սրբազանին: Սփյուռքում քաջ հայտնի դեմք է Մեսրոպ սրբազանը, Հայաստանում, դժբախտաբար, քչերը գիտեն: Ասեմ՝ իմացեք. անընդհատ ու անխոնջ գործող անհանգիստ հոգի է, Ղարաբաղին օգնությո՞ւն է պետք՝ Սրբազանը իր հիմնադրամով ներկա է, ձմռանը կացնահարված ծառերի փոխարեն նորե՞րը պիտի տնկվեն՝ Սրբազանը ներկա է, ապրիլի 24-ին ժողովրդին ձրի՞ պետք է հասցնել Ծիծեռնակաբերդ՝ Սրբազանը ներկա է, ու էլի քանի՜, քանի ազգանպաստ գործ և առաքելություն:

Խոնարհ հերոսներից է Մեսրոպ Սրբազանը:

***

Կրկին Ստեփանակերտում ենք, Գուլիի տանը: Երեկոյան դեմ ամուսինը՝ էդիկը, ավտոմատն ուսին տուն մտավ: Երեխեքը վազեցին, շուլալվեցին հոր մեջքին ու ոտքերին: Ծանոթացանք: Փափուկ, մեղմ ժպիտը մեջը աչքեր ուներ: Չդիմացա.

– Էսպես աչքեր ունեցողը, մարդ կսպանի ...

– Երանի չէր չսպանեի,– հոգոց հանեց Էդիկը:– Բայց ուրիշ ճար չկա, պիտի սպանես:

- Հիշեցի Ռոլես Աղաջանյանին. բանակի շտաբում հետը ծանոթացա՝ հաղթանդամ հսկա, աչքերը Էդիկի աչքերի պես մեղմ ու փափուկ: Իմացավ գրող եմ՝ ավելի փափկեց.

– Է~, Մանուկ ջան, քեզ էնպիսի պատմություններ անեմ... Դու մենակ գրես...

Մեր պատվին սեղան բացեց, սեղանի չորսբոլորը, տասնհինգ-քսան հոգի, զինվորներ ու զինվորական գործին առընչվող ընկեր տղերք.

– Սա էլ է մեկ-մեկ պետք,– ասաց:

Սեղանի շուրջ խոսքուզրույցի ժամանակ մտածում էի, որ գոնե մի պատմություն կպատմի Ռոլեսը:

– Մանուկ ջան, քեզ էնպիսի պատմություններ պատմե~մ,– ասաց ու նորից չպատմեց:

Երևի չպատմելու պատմություններ էին:

***

Ստեփանակերտի կենտրոնի պուրակում մեր ընկեր, մեր անուշ ընկեր Աշոտի գերեզմանն է: Բեկոր Աշոտի: Մոտեցանք, գլխահակ կանգնեցինք: Նրա պատմությունն էլ չպատմվելու պատմություն է: Միայն թե վիշտը ամոթի զգացողության հետ խառնված ճմլում էր սիրտս, այդ ո՞նց է, որ ես ապրում եմ ու նա չի ապրում... Համոզված եմ, որ ընկերներս էլ նույն զգացողությունն ունեին:

Ետ դարձի ճանապարհին հասկացա, որ դրամ բաժանելու գնացի Ղարաբաղ, ուխտավոր դարձած վերադառնում եմ: Իսկ Արցախ աշխարհում ուխտատեղիները շատ են՝ Շուշիի տաճարը, բանակի շտաբը, Գուլիի տունը, Հղորտիի ջրաղացն ու գետը, ծոցս մտած մանչուկ Դավիթը... Համոզված եմ՝ ամեն գնալիս նոր Ուխտատեղի եմ գտնելու:

25. 5. 1993 թ.

ՄԻՋՕՐԵ

Անդրանիկ Հարությունյանին՝
Բերդաձորի Անդոյին

Ուղղաթիռը լեռան հետևից անսպասելի հայտնվելով պտույտ կատարեց ձորաբերանին կուչ արած գյուղի վրա, և գյուղով մեկ՝ մեծ, փոքր, հայացքները երկինք ուղղեցին: Որտեղ էլ լինեին, ինչ գործի էլ լինեին, միևնույն է, ամեն ինչ թողած՝ երկինք էին նայելու, ու եթե ուղղաթիռը կանաչ գույնի ներկված, ռազմական էր լինում՝ խոժոռվում էին և շարունակում կիսատ թողած գործը, իսկ եթե նարնջագույն էր՝ ձեռք ու թաշկինակ թափահարելով անուշ ժպտում էին, և այդ ժպիտը այն սովորական խաղաղ ժպիտներից չէր լինում, հույսն ու ուրախությունը աչքերի մեջ պեծկլտալով՝ առաքվում էին երկինք, ուղղաթիռի հետ պտույտ տալիս և ուղղաթիռի հետ վայրէջք կատարում:

Այս անգամ գյուղն անուշ ժպտաց: Եվ երբ դիրեկտորն է դպրոցից դուրս պրծնելով վազում դեպի ուղղաթիռը, աշակե՞րտ կմնա դասարանում՝ դիրեկտորով, ուսուցչով, աշակերտով, գյուղի ահել-ջահելով, շներով ու ականջներր կտրված քոթոթներով մղվեցին դեպի դյուղավերջում հարմարեցված վայրէջքի հրապարակը: Միակ մարդը, որ տեղից չշարժվեց, Մարեն էր:

– Անդրանիկս եկավ,– ասաց, ծաղկավոր լաչակի տակ խրեց կախված մազափունջը, ուղղվեց, մեջքը հենեց միջօրեի արևից տաքացած, մերկ մանկան պես անշպար ու կատարյալ մատուռի որձաքարերին: Այդպես հարմա՞ր էր, հարմա՞ր չէր տարիքից կորացած նրա ողնաշարին՝ կարևոր չէր, նա պետք է արմունկները ծնկներից բարձրացներ, շտկվեր, քարին նստած սպասեր մինչև Անդրանիկն իրեն մոտենար:

Ուրիշ էր Մարեի պատմությունը:

Պատերազմից հետո, չնայած ամուսնու մահը գուժող «սև թղթին», նա երկու տարի էլ սպասեց ամուսնուն, բայց երբ սովի պատճառով սկսվեց գյուղից համընդհանուր փախուստը, երբ դպրոցը փակվեց, երբ ստիպեցին մի մատ մինուճար աղջկան կոլտնտեսությունում աշխատել՝ բռնեց երեխու ձեռքն ու գիշերով գյուղից փախավ: Ո՞ւր էր գնալու՝ չգիտեր: Ճամփան դեպի աջ՝ Շուշի, Ստեփանակերտ էր տանում, դեպի ձախ՝ Գորիս: Առաջին բեռնատար մեքենան կանգնեցրեց, և երբ տեղ հասան՝ պարզվեց, որ ձորիս են եկել: Լուսարբեցին վարորդի տանը: Վարորդը լսեց նրանց պատմությունն ու ասաց. «Կիմանան՝ հետ կուղարկեն: Գնա Երևան: Մեծ քաղաք է՝ շունը տիրոջը չի ջոկում»: Երևանում գորգագործական գործարանում աշխատանքի ընդունվեց, աղջիկը դպրոցն ավարտեց, ինստիտուտն ավարտեց, ամուսնացավ, երեխաներ ունեցավ, և, փառք Աստծո, միասին՝ մի օջախ ապրում էին:

Բայց աղջիկը քաղցկեղից մահացավ, թոռներից մեծն ամուսնացավ, գնաց Կիրովական, փոքրը մի երկու անգամ խոպան գնաց-եկավ, երրորդ գնալուց էլ չվերադարձավ, մնաց Ղազախստանի Կոկլետավ քաղաքում, և տանը մնացին ինքն ու փեսան:

Փեսան թե քչախոս էր՝ կնոջ մահից հետո ընդհանրապես չխոսկան դարձավ և երբ սկսեց գիշերները հաճախ տուն չգալ՝ Մարեն որոշեց խոսել փեսայի հետ: Տանը, մենության մեջ, նա մտովի սերտում է ասելիքը, «Ամուսնացիր, որդի, ջայել ես, - ասում էր ու փեսայի փոխարեն պատասխանում:– Լինելու բան չի:– Ես գիտեմ մենակությունն ինչ է,– ասում էր փեսային,– դատարկ տունն ո՞ւմ է պետք: – Դատարկ չի,– իբր ընդդիմանում էր փեսան,– աղջկադ շունչը պռնկեպռունկ մեջն է...»: Եվ էլի նման բան էր ասում փեսային ու փեսայի փոխարեն ինքն իրեն պատասխանում: Ու երբ մի երեկո այդ մասին խոսք բացեց, և փեսան ասաց. «Հիմիկվա կնանիք առաջվանը չեն, ուզում են ազատ ապրել, առանձին ապրել»,– նա չձգձգեց, բոխչան հավաքեց ու ծերանոց գնաց: Ու երևի կյանքը ծերանոցում էլ ավարտեր, եթե Արցախը ոտքի չկանգներ: Բարձրախոսից մեկ լսեց իրենց գյուղի անունը, երկու լսեց և ծերանոցից փախավ: Աստծուն է հայտնի ինչպես հասավ Գորիս, ոնց անցավ Գորիս-Լաչին ճանապարհն ու հայտնվեց շրջափակման մեջ գտնվող իրենց գյուղում: Գյուղը համարյա չէր փոխվել, մարդիկ էին ուրիշ: Հներից մի երկուսը հիշեցին, անունը տվեցին, ասացին. «Ուրիշները գլուխն առնում, փախչում են, դու գալի՞ս ես...»: «Գալիս եմ»,– ասաց: «Եկել ես, որ ի՞նչ անես...» : «Եկել եմ, որ կռվեմ...»: «Ո՞նց ես կռվելու»,– խնդացին քթի տակ: «Բերանով,– ասաց:– Այ, էս բերանով: Չարն անիծելու եմ, բարին՝ օրհնելու»: Եվ քանի որ ինքնապաշտպանության ջոկատի հրամանատար Անդրանիկը նրան «մարե» ասաց, գյուղը նույնպես նրան «Մարե» անվանեց ու ինքը չդժգոհեց: Ի՞նչ իմանար Մարեն, որ իր գալը գյուղի պաշտպանության համար ռազմավարական նշանակություն է ունենալու: Ամո՞թն էր, թե այլ էր պատճառը՝ նրա գալուց հետո այլևս ոչ ոք չլքեց գյուղը և դեռ հակառակը՝ ուրիշ եկողներ էլ եղան՝ պինդ, առողջ, կռվող տղերք, մեծ մասամբ բնիկների թոռներ ու ծոռներ:

Թիթեղի զնգոց լսվեց: Մարեն բացեց կիսախուփ աչքերը և տեսավ շիկահեր տղեկին, որ իր հասակից երկար տաշտը շալակին վազում էր դեպի վայրէջքի հրապարակ:

Ուղղաթիռի շարժիչը միանգամից դադարեցրեց աշխատանքը: Լսելի դարձավ դեպի ուղղաթիռ շարժվող մարդկանց աղմուկն ու տաշտերի զնգզնգոցը: Դռնից դուրս ելավ օդաչու Արտաշը, վար իջավ և մոտենալով սկսեց բոլորին անխտիր ձեռքով բարևել: Այդ բարևը գյուղի բնակիչների համար շատ էր կարևորված, նրանց համար այդ ձեռքսեղմումը ինքնահաստատման մի արարողություն էր, այսինքն՝ ես կամ, ինձ չեք մոռացել: Որ այս բարդ ու թանկ մեքենայով վտանգավոր ճանապարհ եք կտրել, եկել ինձ մոտ՝ ուրեմն իմ ներկայու¬թյունն այստեղ շատ է անհրաժեշտ: Արտաշը, եթե նույնիսկ դա չէր գիտակցում՝ բնազդով զգում էր: Տարիքավորները ձեռքսեղմումից հետո սովորականի պես՝ սկսեցին տեղալ հարցերի տարափը.

– Էս ո՞ւր մնացիք, Արտաշ ջան...

– Աչքներս ջուր դառավ:

– Մեր հույսն, ախր, դուք եք մնացել:

– Անդոյին չբերեցի՞ր...

– Համբերեք,– տարիքավորների կողմը թեք հայացք գցեց Արտաշը:– Բարևս տամ՝ նոր պատասխանեմ:– Նա ձեռքսեղմումը քիչ համարեց, մյուս ձեռքով խառնեց շիկահեր տղեկի գանգուրները:– Երկուսից-բանից հեչ ստանո՞ւմ ես...

– Չէ, հա,– ժպտաց շիկահերը:– Ինձ հրացան կբերե՞ս:

– Տանկ կբերեմ,– ժպտաց Արտաշը:

– Տանկը ուղղաթիռ չի մտնի,– ասաց տղեկը:

– Հո նրա ուզեքով չի՞, որ մտնի կամ չմտնի,– կողքի աղջնակի ձեռքը սեղմելով աչքով արեց Արտաշը: – Ծեծելով կմտցնենք: Ճիշտ չե՞մ ասում...

– Ճիշտ,– հրճվեց աղջնակը:

Արտաշն ավարտեց ձեռքսեղմումի արարողությունը, լրջացավ, դարձավ մեծերին.

– Ասեք, լսում եմ:

– Ինչո՞ւ էսքան ուշացար...

– Ամսից ավելի է՝ չկաս:

Էլի էին հարցեր տալու՝ Արտաշը ձեռքը բարձրացրեց, լռեցրեց.

– Եղանակն աննպաստ էր,– ասաց: Նորից աղմկեցին.

– Եղանակին ի՞նչ է եղել...

– Երևանի ռադիոն ասում էր՝ առանց տեղումների եղանակ...

– Ասա՝ զինվորականները չէին թողնում...

– Աննպաստ եղանակից դա ինչո՞վ է պակաս,– քթի տակ խնդաց Արտաշը և գուցե խոսքը շարունակեր, բայց ձորից պայթյուն լսվեց, և երկինք մխրճվեց կարմիր հրթիռը: Լռություն տիրեց: Բոլորի հայացքի տակ հրթիռը երկնքի անամպ կապույտում ճարճատյունով ցրիվ եկավ:

– Ո՞վ էր,– դռան մեջ հայտնվեց Անդրանիկի ալրոտ դեմքը, հետևից՝ դպրոցի դիրեկտորը: Ե՞րբ դիրեկտորը ուղղաթիռ մտավ՝ ոչ ոք չնկատեց:

– Հրթիռ էր,– ասացին:– Գալիս են:

– Հողեմ գլուխները,– ասաց կանացի ձայնը:

– Տաշտերը մոտ բերեք,– ասաց Անդրանիկը:

– Գանք՝ օգնենք:

– Շարժվելու տեղ չկա,– ժպտաց Անդրանիկը:– Հո չենք բարձել...

– Դու իջիր,– հետևից Անդրանիկի ուսին թփթփացրեց դիրեկտորը՝ կուպրի պես սև բեղ-մորուքով մի երտասարդ: – Դու իջիր, թող Ռուբիկը գա: Ռուբո...

Անդրանիկը դռնից վայր ցատկեց, գրկախառնվեց ներքևում խմբված երիտասարդների հետ: Կարշնեղ մեկը խմբից պոկվեց, ուղղաթիռ մտավ: Անգրանիկը գրպանից ծխախոտի տուփ հանեց: Արտասահմանյան ծխախոտատուփը շատ էր գեղեցիկ:

– Պահ,– կաչեցին:– Պակաս չի լինի... Տաս-տասներկու ձեռքեր ձգվեցին դեպի ծխախոտատուփը:

– Ծխելու բան բերե՞լ ես...

– Բերել եմ:

– Հա,– ասացին,– մեռանք տերև փշրելով:

– Սրանի՞ց ես բերել,– կատակեցին:

– Տուրի՞ստ ես,– խստաձայն ասաց Անդրանիկը: Մեքենայի հռնդյուն լսվեց, ու մի քանի վայրկյան հետո երևաց քիթը վեր ու վար ցնցող կանաչ զրահամեքենան: Հետևից փոշու և ծխի ամպ թողնելով, առաջ եկավ, կտրուկ արգելակեց և ուղղաթիռից քիչ հեռու կանգնեց: Արցախ կատարվող բոլոր թռիչքները ադրբեջանական Աղդամ քաղաքից էին հսկվում ու կարգավորվում: Այնտեղից էին զինվորականներին ռադիոկապով հայտնում թռիչքի մասին, և զինվորականները դիմավորում էին ժամանող ինքնաթիռներն ու ուղղաթիռները: Այս անգամ զրահամեքենան մի փոքր ուշացավ: Ներսից շրխկոց լսվեց, բացվեց ետնամուտքը, ավտոմատավորները դուրս թռան, վազեցին, կիսաշրջանի մեջ առան ուղղաթիռն ու կանգնեցին: Վերջինը մեքենայից ելավ կապիտանի ուսադիրներով սպան՝ նիհար, ցցված այտոսկրներով 30-ին մոտ մի տղամարդ, դանդաղ առաջ եկավ, կանգնեց նրա չոր, պրպտող-զննող հայացքը վերջապես գտավ Անդրանիկին, մի պահ գամվեց, ապա շրջվեց դեպի Արտաշը.

– Անձնակազմդ ո՞ւր է...

– Ներսում են:

– Վայրէջքի թույլտվություն ունե՞ս...

Արտաշը ծոցագրպանից թուղթ դուրս բերեց, պարզեց կապիտանին:

– Այսուր, բրինձ, շաքարավազ ու վե՞րջ,— թղթին նայելուց հետո ասաց կապիտանը:

- Վերջ:

– Էստեղից՝ ուղիղ Ստեփանակե՞րտ...

– Վիրավորներ կան, Երևան եմ տեղափոխելու,– թուղթը գրպանը մտցրեց Արտաշը:

– Նրանք չլինեին՝ ձեզ էստեղ թողնող չկար,– քթի տակ ժպտաց կապիտանը:

– Հա,– խոսեցին կողքից,– եղանակը թռիչքային չի: Կապիտանը հայացքով սաստեց խոսողին ու քայլեց դեպի Անդրանիկը.

– Եկա՞ր, բանդիտ...

– Ե՞ս եմ բանդիտը, Պրիվալով,– ժպտաց Անդրանիկը: – Իմ ի՞նչն է բանդիտի...

– Որ սափրվես, փողկապ կապես՝ իսկը գերեզանցիկ ուսանող: Բայց աքերդ ու~- ու~- ու~...

– Աչքերս՝ ի՞նչ...

– Շուշվա հեռուստատեսությունը մի գլուխ նկարդ է ցույց տալիս: Գլխագին են խոստանում: Չբռնե՞մ տանեմ...

– Ինչո՞ւ ես բոնում: Հրավիրիր՝ գամ:

– Կհրավիրեի,– կատակն ընդունեց կապիտանը,– բայց օդի չունեմ:

– Օդին՝ ինձանից,– ասաց Անդրանիկն ու շրջվեց դեպի ուղղաթիռը:– Օդին իջեցրեք:

Ուղղաթիռի ներսից ալյուրի պարկերը բերում, դնում էին դռան մոտ կանգնածների մեջքին և, նրանք տանում, պպզում էին, պարկը թրմփոցով գցում կողք-կողքի շարված տաշտերի մեջ, ետ դառնում: Կապիտանը, խոսքի հետ, աչքի պոչով հետևում էր նրանց: Երբ վար իջեցրին օղու շշերով լի երկու արկղները, կապիտանի աչքերում մի պահ կայծ հայտնվեց ու մարեց:

– Հինգ շիշը քոնն է,– ասաց Անդրանիկը:

– Բա մնացա՞ծը...

– Մնացածը մերն է:

– Դուք էստեղ խմելո՞վ եք զբաղվում, թե ինքնապաշտպանությամբ,– պոռթկած կապիտանը:– Կարգուկանոն չկ՞ա...

– Ո՞նց չկա, – ասացին կողքից:– Ծնունդ է լինում, կնունք է լինում, հարսանիք է լինում: Առանց խմիչքի կլինի՞...

– Շրջափակման մեջ՝ ծնո՞ւնդ, կնո՞ւնք, հարսանի՞ք,– ասաց կապիտանը:– Չէ, ձեզ էստեղից քշել չի լինի...

– Ձեզ էլ չի լինի,– ասաց տարեց կինը:– Օղին՝ մերը, ոչխարը՝ մերը: Թուրքն էլ գողացած ոչխարից խորոված անելու վարպետ է: Քեֆ արա, նաչալնիկ...

– Հա,– հաստատեցին կողքից:– Մենակ թե մեր հացն ուտում են, նրանց դռանը՝ հաչում:

– Ի՞նչ,– չհասկացավ կապիտանը:

– Ասում է՝ ոչխարը գիշերով մեզանից են գողացել, օղին էլ՝ ըհը: Բայց նրանց եք պաշտպանում:

– Ես հրաման եմ կատարում,– ասաց կապիտանն ու փոխեց խոսակցությունը:– Ճի՞շտ է, որ Երևանում օղին առանց տալոնի է...

– Ճիշտ է,– ասաց Արտաշը:

– Հը,– գլուխը թերահավատ շարժեց կապիտանը, մատով մոտ կանչեց զինվորներից մեկին, ականջին բան ասաց:

Զինվորը գնաց, արկղից վերցրեց օղու շշերը, տարավ մտցրեց զրահամեքենան, ետ դարձավ:

– Կապիտան,– կանչեցին տաշտերի մոտից:– Ստուգելո՞ւ եք, թե տանենք...

– Էլ ի՞նչ կուզեիք,– քմծիծաղ տվեց կապիտանը, շրջվեց դեպի զինվորները:– Պարկերն ստուգել:

Զինվորները վրա տվեցին, հանեցին դաշույններն ու սկսեցին պարկերը դաշունահարել: Ալրի պարկն ասես դիմացը կանգնած թշնամին էր՝ ցասումն ու ատելությունն աչքերում խրում էին դաշույնը մինչև դաստակն ու հետն էլ՝ հը՛... հը՛... հը՛...

– Ձեր դաստիարակողի,– փնչացրեց հաղթանդամ ծերուկը:– Կատաղությունն էստեղ մեր ու էս պարկերի վրա եք ծախսում: Որ տուն դարձաք՝ ո՞ւմ փորն եք թափելու...

- Հը՛... հը՛... հը՛...- վարժ, մարզված շարժումներով շարունակում էին զինվորները:

- Պուշկին... Գոգոլ... Լերմոնտով... Տոլստոյ... Դոստոևսկի... Չեխով...– պարկերին իջնող հարվածների հետ անսպասելի բղավեց համալսարանի երիտասարդ դասախոտը, որ ամիսներ առաջ ամեն ինչ թողել, կին-երեխաներին առել, եկել բնավորվել էր պապի օջախում:

– Չէ մի՝ Տյուտչև,– դասախոսի արմունկը ցնցեց ընկերը:– Սրանք Պավլիկ Մորոդովից դենը բան չեն կարդացել, քեզ մի ճղիր:

– Հը՛... հը՛... հը՛... - Ալյուրը բխկում, թափվում էր տաշտի մեջ և դաշտից դուրս, զինվորները ձեռքները մտցնում էին ալրի մեջ, տարուբերում, անցնում հաջորդ պարկին:

– Գնդացիր գտա՞ք,– կանչեց կանացի ձայնը:– Ալյուրն ափսոս է, ախր...

– Գնդացիր՝ չէ, բայց փամփուշտ ու նռնակ՝ պատահում է,– ասաց կապիտանը, շեշտակի նայեց Անդրանիկին,– Ձեր զենքն ո՞ւր եք պահում...

– Մեր զենքն էստեղ է,– Անդրանիկը ձեռքը տարավ սրտին:

– Ու մեկ էլ՝ էստեղ,– շիկամորուս տղան ցուցամատով կտկտացրեց գլխին:

– Պրիվալով,– ասաց Անդրանիկը,– շներն առած գալիս եք, տները տակնուվրա անում, մարդկանց ծեծում, ջարդում, զենք եք պահանջում: Ախր շատ ստոր բան է, երբ կնոջ ու երեխեքի առջև տան տղամարդուն քացու տակ են գցում ու ավտոմատ պահում վրան...

– Հրաման է՝ զենքի բռնագրավում,– մարմնի ծանրությունը մի ոտքից մյուսը գցեց Պրիվալովը և հորանջեց:

– Հրաման,– քմծիծաղ տվեց Անդրանիկը:– Իսկ էդ ստորությունը դուք չե՞ք հասկանում:

– Ձենքի տեղն ասեն՝ չեն ծեծվի: Բաստա,– ափն ափին շրխկացրեց կապիտանը:

– Ձենքը դիմացներդ է,– գլուխը տմբտմբացրեց Անդրանիկը:– Ո՞նց չեք տեսնում...

– Այսի՞նքն...– Պրիվալովի աչքերը խոշորացան:

– Այ նա է մեր զենքը, նա է, նա՛, նա՛, նա՛ ու մեկ էլ էս բոլորը:– Անդրանիկի ձեռքը մեկ երեխաներին պարզվեց– մեկ՝ կանանց ու ծերերին, ապա շրջան գծեց գյուղի վրա: – Հասկացա՞ր...

– Դրանցով չես կրակի,– հիասթափվեց կապիտանը:

– Կրակելունը՝ չեք գտնի,– խորամանկ ժպտաց Անդրանիկը:– Հո տանը չե՞նք պահելու, որ գաք ու խլեք: Բայց իմացիր՝ ձեր խաղին մենք ծանոթ ենք. դուք դեռ չհեռացած՝ թուրքերը վրա են տալիս: Մինչև զենքը բերում ենք՝ մի քիչ ուշ է լինում, վնաս են տալիս:

– Մեր ձեռքը բռնում եք, նրանց ասում՝ խփիր: Ինչո՞ւ չեք նրանց զենքերն էլ խլում,– ասացին կողքից:

– Ես հրաման կատարող եմ:

– Հրաման կատարող է՝ թող մեր արաղը հետ տա,– կանչեց շիկահեր տղեկը:

– Ամոթ է, կհասկանան,– սաստեցին կողքից:

- Արաղը չտվեցիր՝ տնետուն են ընկնելու, Սապոգների հոտից տուն մտնել չի լինում,– ասաց կանանցից մեկը:

***

Մատուռի մոտից Մարեն, իհարկե, տեսավ գյուղ մտնող զրահամեքենան, տեսավ ու Անդրանիկին տեսնելու հաճույք ծփանքը վայրկենապես չքացավ:

– Եկա՞ք,– քիչ առաջ մղվելով խոսեց Մարեն:– Բա դուք մոր ծիծ չե՞ք ծծել... Ձեր մերը ձեր օրորոցի վրա բա երգ չի՞ ասել... Բա ձեզ տոտիկ-տոտիկ չի՞ արել ձեր մերը: Ձեզ չե՞ն կնքել էն սուրբ մեռոնից ձեր երեսին չե՞ն քսել... Թե քրիստոնյա եք՝ ձեր մեծն ու փոքրը ձեր էստեղ արածից պիտի ամաչի: Բա ո՞նց, գիժը չի ամաչում, գժի տերն է ամաչում: Որ պատերազմ էր՝ Անուշավանս իր կյանքը տվեց, որ ձեր կյանքն ու հողը պաշտպանի: Ձեր հողում Անուշավանս իրեն ձեր նմա՞ն էր պահում: Դրա համար էլ գլուխս միշտ բարձր է: Դուք ո՞նց եք ձեր մոր ու կնոջ գլուխը կախ թողնելու: Թե մարդ են՝ նրանք պիտի ձեզանից հրաժարվեն: Պիտի ասեն՝ մենք նրանց չենք ծներ ձվից են ծնվել: Հա, ձվից: Ու ձեր թխսմերը թուրք է եղել: Թե չէ՝ քրիստոնյան էս եկեղեցին կգնդակահարի՞, որ դուք արեցիք...

Այսպես Մարեն, նախաբանեց-հիմնավորեց ասելիք անեծքն ու անցավ բուն անեծքին:

Մեղուներն իրենց թանձր գվվոցով, ասես, նրա քիչ երգեցիկ, քիչ կերկերուն արտասանված թանձր խոսքերի դամն էին պահում: Վերջում, ինչպես միշտ, Մարեն անեծքի պոչը հասցրեց Կոկչետավում բույն դրած թոռանը.

– Փուճ ես, փուճ... Պապիդ օջախը ուրիշներն են արյուն-քրտինքով պաշտպանում: Անիծեմ՝ քո նման մի փուճ զավակ ունենաս, որ իմանաս աշխարհի բանը...

Ալրի պարկերից հետո դաշունահարվեցին բրնձի ու շաքարավազի պարկերը: Դպրոցի դիրեկտորն ու ընկերը ուղղաթիռից ցած իջան, թափ տվեցին իրենց վրազլուխը, և ժողովուրդը հասկացավ, որ բեռնաթափումն ավարտվեց: Արտաշը ուղղաթիռ բարձրացավ, դռան մեջ շրջվեց, ժպտաց.

– Պինդ մնացեք...– Նրա բռունցքը վեր բարձրացավ: Ասես հրամանով, զինվորներից բացի բոլորի բռունցքները մխրճվեցին երկինք: Ի~նչ մռնչյուն կար սեղմված այդ փոքր ու մեծ բռունցքներում, ի~նչ դղրդացող լռություն էր... Ուղղաթիռի փակվող դռան շխկոցից ժողովուրդն սթափվեց: Գնացին, վերցրեցին տաշտերը կողմ տարան, շարեցին իրար վրա: Ուղղաթիռն աշխատեցրեց պտուտակը: Ալրա-բրնձա-շաքարավազախառն հողմ բարձրացավ: Զինվորները գլխարկներր բռնած վազեցին, թաքնվեցին զրահամեքենայի հետևը: Ուղղաթիռը օդ ելավ ու հետը տարավ իրեն ուղղված հարյուրավոր ձեռքերի ծփանքը: Կապիտանը դուրս ելավ զրահամեքենայի հետևից, Անդրանիկին մատով մոտ կանչեց: Անդրանիկն իր թեթև քաշին անհամապատասխան ծանր քայլերով առաջ գնաց, կանգնեց:

– Ի՞նչ ես ասում՝ տներն անխտիր ստուգե՞նք, թե պատահական,– խորամանկ ժպտաց կապիտանը:

– Ոնց ուզում ես,– ուսերը վեր քաշեց Անդրանիկը:

– Շարվիր,– հրամայեց կապիտանը: Զինվորներր վազքով մոտեցան, շարվեցին:

– Դուք էսօր ստուգողը չեք, Պրիվալով,– ասաց Անդրանիկը:

– Ինձ գիտես...

– Ստուգելիս շատվոր եք գալիս, շներոմ եք գալիս, ծեծում, կրակում եք: Հիմա՝ քիչ եք, չեք համարձակվի:

– Որոշողը ես չե՞մ,– խստացավ կապիտանը:– Ի՞նչ ես ասում...

– Հինգ շիշ էլ բերեք,– ուսի `վրայից ասաց Անդրանիկը,

– Ռուս չե՞ն,– Անդրանիկի թիկունքից խոսեց կանացի ձայնը:

– Ռուս չեն, ռուսի անունը խայտառակող են,– պատասխանեց տղամարդու ձայնը:

– Սրանք՝ ի՞նչ,– ասաց մի ուրիշը:– Ամենամեծ խայտառակողը հրեն մոսկվաներում նստած է:

Օղին բերեցին, տվեցին առաջին պատահած զինվորի ձեռքը: Զինվորը կարծես թե ժպտաց:

– Սրանք ժպտալ էլ գիտեն, ախչի,– կանչեց կանացի ձայնը:

– Զուր տեղն էլ տալիս ենք: Խմելու են, կատաղելու, գալու են տուրուդմբոց սարքեն...

– ճիշտ արեց, ճիշտ արեց: Թող ռադները քաշեն-գնան: Անդրանիկը ձեռքով շարժում արեց: Թիկունքից լսվող խոսակցությունները լռեցին:

– Ծխե՞նք,– ծխախոտատուփը պարզելով կապիտանի աչքերի մեջ շեշտակի նայեց Անդրանիկը:

– Կարելի է:

Իրար աչքերի մեջ նայելով ծխեցին: Կապիտանը լրջացավ.

– Ճիշտ են ասում՝ իսկը բանդիտի աչքեր: Ասե՞մ ինչ ես մտածում...

– Ասա:

– Մտածում ես՝ զրահամեքենան չլիներ, զինվորները չլինեին, ոչ ոք չլիներ: Ես լինեի ու էս կապիտանը: Հը,– կապիտանը խորամանկ ժպտաց:– Ինձ հում-հում կուտեի՞ր...

– Կապիտան, 68 գլուխ ոչխար են տարել: Ասա՝ հետ բերեն:

– Չգիտեմ,– հայացքը փախցրեց կապիտանը:– Մենք ձեր գործերին չենք խառնվում:

– Յոթանասուն տարեկան հովվին ծեծել, կիսամահ են արել ու տարել: Դա՞ էլ չգիտես...

– Ասացի՝ ձեր գործերին չենք խառնվում:– Նա մատի ծայրով թռցրեց ծխախոտի կրակը, մնացուկը գրպանը մտցրեց:– Լավն է, հետո կծխեմ:

Անդրանիկը ձեռքի ծխախոտատուփը խրեց կապիտանի գրպանն ու առաջ մղվելով ֆշշացրեց ականջի տակ.

– Չեք խառնվում՝ էստեղ ի՞նչ գործ ունեք: Ինչո՞ւ չեք գնում մեր ու նրանց արանքում կանգնում, որ արյուն չթափվի…

– Չգիտեմ,– հետ ձգվեց կապիտանը: – Իմ գործը հրաման կատարելն է:

Անդրանիկի թիկունքում լրիվ սսկվել էին: Աշխատում էին լսել նրանց խոսակցությունը, բայց միևնույն՝ ոչինչ չէին լսում:

– Լավ,– ասաց Անդրանիկը,– ինչ գիտես՝ էն ասա: Ո՞նց կռվող ենք...

– Կռվող եք,– ասաց կապիտանը:– Նրանց զենքը դուք ունենայիք՝ ու~... ու~...ու~...

– Դե ուրեմն կասես՝ ոչխարը հետ բերեն: Թե չէ՝ արյուն է թափվելու: Կասե՞ս...

– Կասեմ:

– Գնացեք,– ասաց Անդրանիկը:– Խորոված ը կսառի:

– Որտեղի՞ց իմացար...

– Ուղղաթիռից տեսա: Խորոված են անում:

– Հը,– գլուխն օրորեց կապիտանը:– ամեն ինչ գիտեն: Տեղերում,– հրամայեց զինվորներին:

Զինվորները վազքով գնացին, խցկվեցին զրահամեքենայի մեջ: Վերջինը կապիտանը մտավ:

– Կապիտան,– կանչեցին երիտասարդների խմբից: – Էնպես արա, որ քեզ կարոտենք:

Լսեցի՞ն, չլսեցի՞ն՝ ներսից փակեցին զրահամեքենայի դուռը և հետևից փոշու ամպեր թողնելով՝ զրահամեքենան հեռացավ: Փոշու պես մարմանդ ու թանձր մի լռություն կախվեց գյուղի վրա: Առաջինն սթափվեց դպրոցի դիրեկտորը:

– Ի՞նչ ենք կանգնել: Անելիքներս չգիտե՞նք...

Ջահել, ահել քայլեցին դեպի տաշտերը ու տաշտերի ականջներից բռնած թափորը շարժվեց դպրոցի ուղղությամբ: Պահեստի դեր կատարող ազատ դասասենյակում տաշտերը կախելու էին օճորքից իջնող պարաններից: Այդպես ապահով է, մկները չեն վնասի: Մթերքը միանգամից չէին բաժանում, բաժանում էին երեք օրը մեկ, ըստ շնչի, և կախված ռազմական դրությունից ու մթերքի քանակից, շնչարաժինը մեկ քիչ է լինում, մեկ՝ շատ քիչ: Դպրոցի դիրեկտորից բացի պահեստի դուռը բացող չէր լինում: Միայն երեխաներն էին պահեստ-դասասենյակի լուսամուտից նայում մանկան ճոճ հիշեցնող տաշտերին ու թուքը կուլ տալով մեծ ավարի որոշում. «Երկու շաբաթ կիերիքի»: «Երկու շաբաթ... փորներս որ սեղմենք՝ մի ամիս էլ յոլա կտանի»:

Թափորն խառնուցրիվ շարժվում էր, թափորի առաջից քայլում էր հաղթանդամ, ճերմակ գանգուրներով ծերունին: Երևի նա շատ էր նման Աստվածաշնչի Մովսեսին, այլապես դպրոցի դիրեկտորը դառը ժպիտով չէր ասի.

– Ոնց որ Իսրայելի որդիների փախուստը Եգիպտոսից: Մա՞րդ էլ իր տան մեջ փախստականի պես ապրի, թյո՛ւ...

Անդրանիկն ուզեց պատասխանել՝ կրակոց լսվեց: Ձայնը դմբդմբաց ձորում, արձագանք տվեց: Թափորը կանգնեց: Կրակոցից վախեցած թռչունները խուճապահար երկինք փախան:

– Տղե՞րքը,– դիրեկտորին նայեց Անդրանիկը:

– Տեղերում են:

– Պիտի որ էսօր հանգիստ լինեին,– ասաց Անդրանիկը: Նորից կրակեցին:

– Որսորդական է:– Անդրանիկը նայեց դասախոսին: – Որ տեսաք սկսվում է՝ կողքից կգաք: Գնացինք:

Անդրանիկն ու դիրեկտորը պոկվեցին խմբից, քիչ կռացած վազեցին ձորն ի վար: Պահակակետի դիրքերը տանող ոլոր-մոլոր այս կածանով աչքերը գոց կգնային: Կածանները նրանք հաճախ էին փոխում, որ չտրորվեր, զինվորներին հետք ցույց չտար: Ժայռաբեկորի մոտ նրանք կանգնեցին, դիրեկտորը թռչնաձայն սուլեց, սուլոց պատասխան ստացավ և նոր մոտեցան: Դիտակետում երերն էին: Լրացանները պատրաստ՝ պառկած էին:

– Ի՞նչ հաշիվ է,– տղաների կողքին տեղ գրավելով հարցրեց Անդրանիկը:

- Չեմ հասկանում,– պատասխանեց պահակախմբի ավագը՝ խաժ աչքերով, 25-ին մոտ մի երիտասարդ:– Բան չեմ հասկանում:

Նորից կրակեցին: Լսվեց քարերին զարնվող կարտեչի շխկոցը:

– Հեռադիտակ:

Անդրանիկը վերցրեց պարզված հեռադիտակը, ավելի հարմար դիրք գրավեց և սկսեց զննել տեղանքը: Դիմացի սարալանջին թուփ ու մացառներն ավելի սակավ էին, ու շարժում չէր նկատվում: Քիչ վերև՝ կիսաքանդ ջրաղացն էր: Այնտեղ դիրք գրավելն անմտություն էր, որովհետև հակագրոհի դեպքում նահանջելն անհնար էր, շուրջբոլորը բաց էր՝ նշանառության տակ: Անդրանիկի հայացքը հեռադիտակի միջից թեթևակի հպվեց ջրաղացին և անցնելու էր, երբ նորից կրակեցին: Անդրանիկը տեսավ ջրաղացի հետևից հազիվ նշմարվող ծխի քուլան.

– Ջրաղացի հետևն են: Ո՞ւմ վրա են կրակում...

– Շաշ-շաշ՝ դեսուդեն են խփում,– ասացին: Դարձյալ կրակեցին: Տղաներն ասես հրամանով, նայեցին Անդրանիկին: Բոլորի աչքերում դեպի ջրաղաց մղվելու պահանջն էր:

– Սպասենք,– զսպեց Անդրանիկը: – Հասկանանք մտքներինն ի՞նչ է:

– Մտքներինը մեր տեղն իմանալն է,– ասաց դիրեկտորը:

– Ո՞նց են եկել, մտել ջրաղացի հետևը, ոը չեք տեսել, ասաց Անդրանիկը:

– Զրահամեքենայով ընկանք, երևի, աչքից բաց թողեցինք,– մեղավոր ասաց ավագը:

– Բաց թողեցինք,– կշտամբող ձայնով ասաց Անդրանիկը:– Հիմա՝ առանց շարժում ցույց տալու, հարյուր մետրի վրա: Վարդանը՝ աջ, Վազգենը՝ ձախ: Երևացին՝ կրակում եք: Տղաները աջ ու ձախ սողացին և կորան տեսադաշտից:

– Խորոված էին անում,– մտքերը բարձրաձայն արտահայտեց Անդրանիկը:– Գիտեն, որ զենքի ստուգում չի լինելու: Մեզ էլ գիտեն: Օրը ցերեկով ջրաղացի հետև մտնելն ու կրակելը ո՞րն է...

Անդրանիկը ծխախոտ դուրս բերեց, չվառեց, տրորեց մատների մեջ, հոտ քաշեց: Այս անգամ, երբ կրակոցի դմդմբոցը մարմրեց ձորում, հեռվից ձայներ լսվեցին: Անդրանիկը կրկին աչքերին մոտեցրեց հեռադիտակը և ինչ-որ տեսավ՝ վեր էր նրա պատկերացումից: Հրացանները ձեռքներին տաս-տասներկու տարեկան երկու տղա և կարմիր շորերով մի աղջնակ դուրս պրծան ջրաղացի հետևից, բղավոցով վազեցին սարն ի վեր, ապա կանգնելով սկսեցին ցատկռտել և անպարկեշտ շարժումներն ուղղելով գյուղի կողմը՝ ինչ-որ բաներ բղավել: Հեռադիտակով Անդրանիկը պարզ տեսնում էր տղաների ու աղջնակի անվարտիք հետույքները:

– Ի՞նչ են բղավում,– հարցրեց Անդրանիկը:

– Հայհոյում են լակոտները,– ասաց դիրեկտորը: – ճիպոտն առնես ու ոնց որ պետքն է դաղես դրանց բաց տեղերը:

Նրանք ցատկռտելով էլի բաներ բղավեցին, ապա տաբատ-վարտիք վեր ձգելով վազեցին, կորան սարի հետևում: Անդրանիկը հեռադիտակը կողմ դրեց, ոտքի ելավ, ծխախոտ վառեց: Մտածե՞ց, թե՞ չմտածեց, որ յուրայիններն աջից ու ձախից չկատարեցին իր՝ ջոկատի հրամանատարի հրամանը: Նա մի քանի անգամ խորը ներս ձգեց ծուխն ու ասաց.

– Գնացինք:

– Ծխելու բան թողեք,– ասաց ավագը:

Անդրանիկը «Պրիմայի» տուփը նետեց ավագին ու քայ:

Դիրեկտորը ծխեց, հետո ժպտաց, ու բարիություն էին իրենց արածի՞ մասին էին մտածում, թե՞ չարածի... Ջորի պոնկին Անդրանիկը կանգնեց, սպասեց մինչև դիրեկտորը հավասարվի իրեն.

– Էս խի՞ղճ է, թե՞ խեղճություն,– խոսեց Անդրանիկը:

– Նրանք ավտոմատով, որսորդականով խփեն մեր դպրոցին, երեխեքին վնասեն՝ մեզանից ոչ մեկը հիմա ձեռքը չտանի՞ զենքին, էս խիղճը չի՞ մեզ էսպես խեղճացրել...

Դիրեկտորը ծխեց, հետո ժպտաց ու բարիություն էին կաթեցնում նրա աչքերը:

– Առանց խղճի ապրել կլինի՞,– վերջապես ասաց նա:

– Խղճներս կորցնենք, դառնանք նրանց նմա՞ն...– նա գլխով ակնարկեց դիմացի սարը:

– Էս խղճով բա ո՞նց ենք ապրելու էս անխիղճ աշխարհում,– փնչացրեց Անդրանիկը:

Գյուղամիջում բաժանվեցին: Դիրեկտորը գնաց դպրոցի ուղղությամբ, Անդրանիկը ճամփան շեղեց, գնաց հասավ մատուռի մոտ քարին ծվարած Մարեին, կռացավ, այտը համբուրեց, նստեց կողքին:

– Եկար,– արյունեռանդ դարձավ Մարեն:– Ինչու՞ ուշացար...

– Գործ կար,– Անդրանիկը ձեռքը պարզեց, գրկեց Մարեի ուսը:– Ո՞նց ես, խաչքարս...

– Լավ եմ: Դու որ էստեղ ես՝ սիրտս հանգիստ է:

– Մյուսներն ինձնից ինչո՞վ են պակաս, Մարե...

– Պակաս չեն,– Մարեն գոգնոցի գրպանից ընկույզի միջուկը բռով դուրս բերեց, պարզեց Անդրանիկին:– Կեր:

– Երևանում ճառեր ասող իշի տղերք,– գլուխն ափերի մեջ առնելով անսպասելի գոռաց Անդրանիկը:– Կռվելը՝ ձեր գլխին կպնի, մի անգամ գոնե եկեք, տեսեք հալներս ի՞նչ է: Ախր, թուրքի, ռուսի, ու խղճի արանքում շշկռվել, մնացել ենք...

ՆԱՀԱՆՋ ԵՐԳՈՎ

Ուղղաթիռը թռչում էր խուզող թռիչքով, լեռների հետ լեռնանում, ձորերի հետ ձորանում և թվում էր ուր որ է քսվելու է լեռնագագաթին կամ ձորն ի վար իջնող անտառին: Ներսում ալյուրի պարկերից փոքր-ինչ ազատ մասում, ուղևորները հինգն էին՝ չորս ազատամարտիկ և մի բուլղարուհի հեռուստալրագրող: Հայորդիներին Արցախ էր տանում արյան կանչը՝ պապերի երկիրն էր, իսկ բուլղարուհուն... Բուլղարուհին քիչ թեքվեց հայացքը լուսամուտից դուրս էր նետել, և, երևի վայելում էր արևածագը: Ծնկներին, ասես նինջ մտած մանուկ, հանգչում էր տեսախցիկը, որի վրայից նա ձեռքը չէր հեռացնում: Վերջապես կտրվեց լուսամուտից, նայեց Դավիթին ու գլուխը տմբտմբացնելով ժպտաց,

– Գեղեցիկ է:

– Այստեղից է գեղեցիկ, – ասաց Դավիթը: – Ներքևում и սովետական զորքն ու ադրբեջանական ՕՄՕՆ-ը գյուլդյուզի հետևից տեղահանում են: Ներքևում դժոխք է...

– Գիտեմ,– հոգոց հանեց բուլղարուհին:

– Իմանալը՝ ի՞նչ, - ուսերը վեր քաշեց Դավիթը:

Դավիթը չգիտեր, որ բուլղարուհին եղել է Շուշվա և Կիրովաբադի բանտերում, տեսել գերի ընկած հայերի տանջանքները, աշխարհով մեկ աղմուկ է բարձրացրել հայ գերեվարված լրագրողի համար, ստիպել Ադրբեջանի իշխանություններին ազատ արձակելու լրագրողին և հենց դրա համար այդ իշխանությունների կողմից նա հեռակա կարգով մահապատժի է դատապարտվել:

Բուլղարուհին չգիտեր, որ Դավիթը ծառայել է սովետական բանակում, իր ազգի արժանապատվությունը պաշտպանելու համար ամբաստանվել է, բանտարկվել, իր մաշկի վրա է զգացել բանակում տիրող շարքայինից մինչև մարշալ հասնող ամենաթողության, կեղծիքի և կաշառակերության ուժը: Բուլղարուհին չէր կարող ենթադրել, որ հիմա Դավիթը տխուր հայացքով նայում է իրեն և մտածում՝ խաղաղ, հանգիստ երկրի քաղաքացի այս գեղեցկուհի կինը ո՞նց է ընկնելու զորքի ու ՕՄՕՆ-ի բերանը:

– Հուլի~ս, Վառնա~, լողա~փ, ալիքնե~ր... Լավ է, չէ,– փոքր ինչ հեգնանքով Ժպտաց Դավիթը:

– Լավ է,– ասաց բուլղարուհին:

– Բա էլ ի՞նչ եք կորցրել էստեղ...

Բուլղարուհին չպատասխանեց, մի ակնթարթ միայն թեք նայեց Դավթին, շրջեց հայացքը և նրանք մինչև ուղղաթիռի վայրէջքը այլևս չխոսեցին: Մյուս երեքը, գլուխները ալյուրի պարկերին, քնած էին:

***

Ուղղաթիռը վայրէջք կատարեց գյուղի եզրին, անտառից քիչ հեռու, ու մինչ պտուտակը կդադարեցներ իր պտույտները՝ բնակիչներից ոմանք ինքնապաշտպանության ջոկատի,

հրամանատարը մոտեցան: Մոտիկում, անթամբ, սպիտակ մի ձի, պոչը երբեմն գավակին զարկելով, ամեն ինչին անտարբեր, արածում էր: Օդաչուն իջավ, ձգեց ընդարմացած մարմինը: Հրամանատարը՝ 80-ին մոտ, ջլապինդ մի երիտասարդ, անջատվեց խմբից, գրկախառնվեց օդաչուի հետ: Տեղաբնակներն անհամարձակ առաջ եկան:

– Հանգի՞ստ եկաք,– հարցրեց հրամանատարը:

– Էս անգամ, փառք Աստծո, Ջիվան ջան: Ուսապարկը ձեռքին՝ ուղղաթիռից վար ցատկեց Ղավիթը, ապա մյուս երեքը:

– Էս ե՞ք,– Դիվանը սեղմեց Ղավիթի ձեռքը:

– Չէ, մեկն էլ կա,– ժպտաց Դավիթը, հայացքը շրջեց դեպի ուղղաթիռի դուռը:

Բուլղարուհին տեսախցիկը ձեռքին հայտնվեց դռան մեջ, սկսեց տեսագրել դիմավորողներին, ձիուն, շրջապատը:

– Պահո,– ասաց հրամանատարը:– Ո՞վ է...

– Իսկը որ՝ պահո,– ավելի լայն ժպտաց Ղավիթը: – Ժուռնալիստ է, Բուլղարիայից:

– Եկել է, որ ի՞նչ անի,– լրջացավ Ջիվանը:

– Ես գիտե՞մ,– Ղավիթը ուսերը վեր քաշեց:

«Բուլղարիա», «Ժուռնալիստ» բառերը տեղաբնակների բերանից բերան անցան, աշխուժություն առաջացրեցին:

– Էդ լավ է,– կանչեց մեկը:– Որ արտասահմանցի կա՝ զորքը ռիսկ չի անի վրա տալ, աշխարհով մեկ կտարածվի:

– Փրկվեցինք,– կանչեց ծծկերը գրկին կինը:– Ես նրան դեսն ուղարկողին մեռնեմ:

Ամերիկացի լիներ՝ ավելի լավ կլիներ,– տրամաբանեցին կողքից, բայց բուլղարացին էլ ոչինչ, էլի արտասահմանցի է:

Ծծկերը կոկորդը պատռելով լաց եղավ:

– Ախչի, լակոտիդ առ գնա: Թող հասկանանք ի՞նչ են խոսում:

– Բա ես չիմանա՞մ:

Սատանի թարսություն է, է՛,– բղավեց տղամարդու ձայնը, կինը երեխային գրկում ճոճելով մի փոքր հեռացավ խմբից ու կանգնեց:

Բուլղարուհին ուղղաթիռից իջավ, մոտեցավ Ջիվանին, պարզեց ձեռքը.

– Բարև ձեզ Հրամանատարը դո՞ւք եք...

– Ես:

– Մի վայրկյան կարելի՞ է,– նա բռնեց Ջիվանի՝ թևը, կողմ տալով:

Շրջապատը սսկվեց, դարձավ համակ լռություն: Բոլորին էլ հետաքրքիր էր նրանց զրույցը: Մոտիկում նորից ծծկերը լաց եղավ:

– Կթողնի՞, որ լսենք,– դժգոհեցին:

Ես պետք է այստեղ աշխատեմ,– վարժ ռուսերենով, բայց և օտար առոգանությամբ ասաց բուլղարուհին: «

- Դուք պետք է այս ուղղաթիռով ետ գնաք,– ասաց հրամանատարը:

– Բացառված է,– առարկություն չընդունող ձայնով ասաց բուլղարուհին:

Ջիվանը հեգնանքով ժպտաց քթի տակ:

– Գյուղը տեղահանվելու է: Մենք չենք կարող զրահատեխնիկայի դեմն առնել, հասկանո՞ւմ եք...

– Ես այդ տեղահանությունն եմ տեսագրելու:

– Մեր դիմաց կանոնավոր զորք է կանգնած ու ադրբեջանական ՕՄՕՆ-ը: Նրանք ամեն ինչի ընդունակ են: Դուք պատկերացնո՞ւմ եք ինչ կարող են անել նրանք ձեզ հետ...

– Պատկերացնում եմ:

– Իսկ եթե հրամայե՞մ...

– Ես ձեր ենթական չեմ,– անսպասելի ժպտաց բուլղարուհին:– Ես անկախ լրագրող եմ:– Նա կողմ քաշվեց, տեսախցիկը մոտեցրեց աչքին, սկսեց նկարահանել և հասկացավ, որ հրամանատարը իր հետևից կոպիտ խոսքեր ասաց:

– Այլուրն ի՞նչ անեմ,– Ջիվանին մոտենալով՝ ցածրաձայն հարցրեց օդաչուն:

– Տար Վերինշեն: Զորքը գիշերը եկել, սարի հետևում կանգնել է:

***

Բուլղարուհին գյուղացիների հետ գնաց:

– Խռովեց,– ասաց Ղավիթը:

– Ջհաննամը թե չխռովեց,– խոժոռվեց հրամանատարը:– Մուկը ծակը չի մտնում՝ ցախավելն էլ պոչից են կապում:

Գյուղացիները բուլղարուհուն հարցուփորձ արեցին, իմացան, որ Սոֆիայից է, պարզեցին, որ Սոֆիան Բուլղարիայի մայրաքաղաքն է և ավելի կարևորվեց նրա՝ իրենց գյուղում լինելը: Պարզեցին, որ ունի 11 տարեկան մի տղա, որ տղային հիմա ծնողներն են պահում: Բուլղարուհին նրանց բոլոր հարցերին պատասխանում էր հանգիստ, ժպիտը դեմքին, և այդ ժպիտն ու հանգստությունը իմաստավորվում էին բնակիչների ներսում, դառնում պաշտպանության և ապահովության երաշխիք: Իսկ հարցերը շատ էին բազմազան.

– Գորբաչովը անձամբ գիտի՞ մեր մասին...

– Մոսկվան ինչի՞ է միացել թուրքերին...

– Ամերիկան քրիստոնյա է, ինչի՞ մեզ չի պաշտպանում..

– Գիտե՞ն, որ Հայաստանը առաջին քրիստոնյա պետությունն է եղել...

Բուլղարուհին պատասխանում էր, եբբեմն-երբեմն նկարահանում բակերում կամ փողոցում տեղի ունեցող կենցաղային որևէ մանրամասն և շարունակում նրանց հետ դանդաղ առաջ ընթանալ:

– Մալադեց բոլլղարուհի, մալադեց,– յուրաքանչյուր պատասխանից հետո նրան քաջալերելով՝ կրկնապատիկ քաջալերվում էին գյուղի բնակիչները: Մի տան մոտ բուլղարուհին կանգնեց, դարձյալ տեսագրեց ու հետո ջուր խնդրեց:

– Արուս,– ձայնեցին,– ջուր բեր:

– Ջուրն ի՞նչ է, թող թան բերի:

Քիչ անց հայտնվեց տանտիրուհին՝ վաթսունն անց, արևից խանձված դեմքով, մի ձեռքում թան, մյուսում՝ ջուր, ամոթխած ժպիտով նայեց բուլղարուհուն:

– Թան,– ուրախացավ բուլղարուհին:

– Պահ, գիտի, է ,– զարմացան այս ու այն կողմից: - Շատ զարգացածն է երևում:

Եվ գուցե էլի դատողություններ անեին, եթե դիմացից հռնդյուն չլսվեր ու քիչ անց բլրի վրա չցցվեր, կանգներ տանկը:

Ժողովուրդն անշարժացավ: Նախ կտկտոց լսվեց տանկին հարմարեցված բարձրախոսից, ապա բարձրախոսը խոսեց.

– Գյուղի հարգարժան բնակիչներ, զինվորական զորամասի հրամանատարությունը ձեզ առաջարկում է ստորագրել մի հայտարարություն, համաձայն որի դուք ինքնակամ լքում եք գյուղը: Դուք պետք է 24 ժամվա ընթացքում գյուղից հեռանաք: Հակառակ դեպքում՝ հարձակման կենթարկվեք...

Բուղարուհին նայեց ժամացույցին, առավոտյան ժամը 9-ն էր: Խմբվածները անխոս, հարցական հայացքներր հառել էին բուլղարուհուն՝ ասես փրկություն էին աղերսում: Բարդու կատարին բուն դրած արագիլը կափկափեցրեց կտուցը, իհարկե բան ասաց, բայց նրան ուշադրություն, դարձնող չեղավ,

***

Կեսօրին դպրոցի շենքում տեղավորված ջոկատի մոտ գնացած պատվիրակությունը՝ բաղկացած մաթեմատիկայի ուսուցչից, կոլտնտեսության հաշվապահից և տրակտորիստից, վերադարձավ:

– Հը՞, - հարցրեց գյուղխորհրդի մոտ հավաքված ամբոխը:

Պատվիրակներն ասես մեռլատուն էին եկել՝ գլուխները կախ լռում էին: Տրակտորիստը ծխախոտ վառեց:

– Գնացիք, եկաք, որ ջուրն առնեք բերաններդ, սսկվե՞ք...

– Գիտունը նա է, թող խոսի,– ասաց տրակտորիստը, գլխով ակնարկեց ուսուցչին և խռովածի նման կողմ թեքեց հայացքը:

– Խոսել է լինո՞ւմ,– բառերը կոկորդը քերելով դուրս եկան ուսուցչի բերանից:

– Մի խոսիր: Ինչ լսել ես՝ էն ասա...

Տարիքից սմքած, չորացած ուսուցիչր խորը հոգոց հանեց, ավելի կծկվեց,

– Ասում են՝ գյուղը պահել չենք կարող: Ավտոմատներով ի՞նչ ենք անելու նրանց տանկերի դեմ, - նրա ձայնը կերկերաց ու խզվեց:

– Հետո՞...

– Ի՞նչ հետո,– անսպասելի վրա տվեց հաշվապահը: – Պիտի փախչենք: նրանց հետ հույս կապել չի լինի:

– Ոնց ենք հույս կապելու,– բռնկվեց տրակտորիստը: – Արաղի շիշը սեղանին ցցած՝ խմում են...

– Կոկորդներին կանգնի...

- Ի՞նչ է պատահել... Ի՞նչ է պատահել,– տրակտորիստի զայրույթից անհանգստացավ բուլղարուհին:

– էն է պատահել,– ռուսերենը կոտրտելով խոսեց տրակտորիստը,– որ մեր պաշտպանները պաշտպան չեն, ալկահոլիկ են: Վայ թե նրանք մեզանից շուտ փախչեն...

– Կամաց, կլսեն...

– Ջհաննամը չեն լսի:– Տրակտորիստը ծխախոտը գցեց, ոտքով զարկեց, տրորեց:– Հավաքվեք, գնում ենք...

– Ո՞ւր ենք գնում...

– Վերինշեն:

– Ախր մեր տուն ու տեղը ո՞նց ենք թողնում ու գնում,– կանչեց կանացի ձայնը:– Ասա, այ բուլղարուհի...

– Ինձ այդպես մի նայեք,– շշնջաց բուլղարուհին,– այդպես մի նայեք...– նա խոշորացրած աչքերով պտտում էր հայացքը:– Ես ձեզ պատասխան տալ չեմ կարող... Բուլղարուհին անսպասելի պոկվեց տեղից և վազեց դեպի դպրոցի շենքը:

Դպրոցում նա փորձեց գինարբուքի ձայներ որսալ՝ չլսեց: Ծոգ լռություն էր: Դռները բացելով, նա արագ անցավ մխ դասասենյակից մյուսը: Առաջին հարկի նախավերջին դասասենյակի դռան մեջ կանգնեց, անշարժացավ, ջոկատի տղաները աշակերտական նստարանները իրար էին միացրեք, նստել դեմ-դիմաց: Դռան բացվելուն՝ Ջիվանն ընդհատեց խոսքը, գլուխը շրջեց.

– Արի, բուլղարուհի, արի: Տեղ տվեք:

– Խմո՞ւմ եք, - բուլղարոլհու հայացքը շատ էր խիստ:

– էն էլ ոնց,– Ժպտաց Դավիթը:– Դպրոցի շենքից բուղ դուրս չի՞ գալիս...

Հրամանատարի կողքին նստածը ելավ, տեղ ազատեց, և բուլղարուհին դանդաղ առաջ գալով նստեց: Տանտիկին էր՝ մի հայացքով գնահատեց սեղանը, մսի պահածո, խտացրած կաթ, հաց, պանիր, կանաչի, օղու շիշ...

– Մեկ ուզեցի հետևիցդ, մարդ ուղարկեք, մեկ էլ մտածեցի՝ անկախ ժուռնալիստ է, ո՞վ գիտի,– մեղավոր ժպտաց Ջիվանը:

– Հրամանատարի ծնունդն է,– բացատրեց դիմացի ածխի պես սև աչքերով տղան:– Հրամանատարն այսօր դարձավ երեսուն տարեկան...

– Աստված իմ,– գլուխը բռնելով օրորվեց բուլղարուհին:– Ինչ ջահել եք...

– Մեր միջի բիձան է,– ասաց Դավիթը:- Ջահելը, հրեն՝ 18 տարեկան:– Նա գլխով ակնարկեց սեղանի ծայրին նստած երիտասարդին:

– Բա ձեր բաժակները ինչո՞ւ եք պահեք,– սթափվեց բուլղարուհին:– Թե՞ պատվիրակներից վախեցաք...

– Մենք ընդամենը մի բաժակ ունենք:– Ջիվանը բարձրացրեց շշի մատնոց հիշեցնող մետաղյա կափարիչը: Կափարիչից օղի կաթեց:– Խմիր:

– Ալկոհոլիկնե~ր... Այ, քեզ ալկոհոլիկներ,– քրքջաց բուլղարուհին:– Կենացդ, հրամանատար...– Նա խմեց, ցանկացավ շնչել՝ չկարողացավ, հազաց, աչքերն արցունքոտվեցին: Դավիթը ցատկեց, մի քանի անգամ խփեց նրա մեջքին: Ու երբ շունչը տեղն ընկավ՝ երկար արտաշնչելով օրորեց գլուխը, – Կրակ էր:

– Կրակ,– հաստատեց Ջիվանը, կափարիչը հագցրեց շշին:– Էս մի կրակին՝ վերջ: Տեսնենք՝ մյուսն ի՞նչ է լինելու...

Հրամանատարի խոսքերը թախիծ ու մտահոգություն ծնեցին: Յուրաքանչյուրն ամփոփվեց ինքն իր մեջ:

– Ռուսերեն խոսեք,– ասաց բուլղարուհին,– ի՞նչ ասացիք, որ բոլորը տխրեցին:

– Ասացի՝ բնակիչները հեռանալու են, իսկ մենք մնալու ենք...

– Իմաստ ունի՞,– հարցրեց բուլղարուհին,– նրանք շատ-շատ են ու այդպես զինված...

– Ունի: Նրանք միշտ էլ շատ են լինելու ու այդպես զինված...

– Ո՞րն է կոնկրետ ձեր նպատակը:– Բուլղարուհու ներսում խլրտաց լրագրողը:

Հրամանատարը նպատակը բացահայտելու փոխարեն ծխեց, և բուլղարուհին մտածեց, որ դա, երևի, ռազմական գաղտնիք է: Բայց քիչ անց նա ուրիշ, ավելի սարսափելի բան մտածեց, հրամանատարից սկսած բոլորն էլ կամավոր մահապարտներ են: Նա հայացքը դանդաղ սահեցրեց մեկառմեկ տղաների վրայով: Մայրությո՞ւնը, քույրությո՞ւնը, թե՞ պարզապես կինը գլուխ բարձրացրեց ներսում՝ բուլղարուհին փշաքաղվեց, գոցեց աչքերը, խորը շունչ քաշեց և իր համար էլ անսպասելի երգեց.

– Իմալա մայկա էդըն մի չեգո...

Երգեց սկզբում ցածրաձայն, գնալով ձայնը բարձրացավ, տարածվեց, զրնգաց դատարկ դպրոցով մեկ: Երգում էր ու նրա գոց աչքերից դանդաղ սահում էին արցունքներ: Հասկացա՞վ բուլղարուհին, որ իր այս երգով նա միանգամից մայրացավ, քույրացավ, հարազատ դարձավ ջոկատի տղաներին: Երգը վերաջացրեց, ափերով սրբեց այտերը, տխուր ժպտաց,

– Բացատրեմ: Մայրը ուներ մի մինուճար որդի: Քաջ ֆիդայի էր որդին: Նա արծվի պես սավառնում էր Բալկանյան լեռներում, իր հետևից ջոկատներ տանում ու զարկում հայրենիքը նվաճած թուրքերին... .

– Էլի թուրքը, - ասացին կողքից ու նորից լռություն տիրեց:

– Որդին սպանվե՞ց...

Բոլորի հայացքները դարձան բուլղարուհուն:

– Չգիտեմ,– հոգոց հանեց բուլղարուհին:

Հեռվից ուղղաթիռի սուլոց-հռնդյուն լսվեց, որ մոտենա¬լով ահագնանում էր:

– Օդ,– կանչեց հրամանատարը:

Մի ակնթարթում, տղերքը զենքը վերցրած, որը դռնով, որը լուսամուտով դուրս նետվեցին: Բուլղարուհին տեսախցիկը ձեռքին, լուսամուտից ելավ: Ուղղաթիռը ՄԻ – 24 էր, «կրոկոդիլ» էին ասում, ցածր թռիչքով պտույտներ էր գործում գյուղի վրա:

***

Գյուղխորհրդի մոտ խմբված գյուղացիները լսեցին բուլղարուհու երգը, որոշեցին, որ նա էլ պակաս ալկոհոլիկ չէ ու հուսախաբ եղան: Եվ հուսախաբությունը ջոկատից, բուլղարուհուց ու հիմա արդեն ուղղաթիռի սարսափազդու պտույտները իրենց գործն արեցին, մի քանի րոպեում գյուղխորհրդի դիմացի ոչ մեծ հրապարակը դատարկվեց: Ջոկատը գիտեր այս իրադրության մեջ իր անելիքը՝ հրամանատարը աֆղանական կռվի մեծ փորձ ուներ: Միակ չնախատեսված բանը բուլղարուհու ներկայությունն էր:

– Տիգրան,– կանչեց հրամանատարը, և տասնութամյա պատանին վազքով մոտ եկավ:– Հետն եղիր,– նա գլխով ակնարկեց բուլղարուհուն:– Մյուսները՝ տեղերում...

Բուլղարուհին, որ ուղղաթիռի պտույտներն էր նկարահանում, չնկատեց էլ թե ինչպես ջոկատը ներծծվեց գյուղում, չնկատեց իրենից ոչ հեռու կանգնած Տիգրանին, բարձրացավ մոտակա բլուրն ու սկսեց այնտեղից տեսագրել գյուղն ու ուղղաթիռը:

***

Խուճապի մատնված գյուղը տեղահանվում էր: Լքում էին իրենց տները, պապենական օջախներն ու գերեզմանները: Տղամարդու՝ մռնչյունը մեջը արտասուք էր և կանացի աղեկտուր ողբ ու աղաղակ, երեխաների միամիտ լաց էր, շների հաչոց, անասունի բառաչ ու մարդու բառաչ...

Բուլղարուհին համակերպվել էր Տիգրանի ներկայությանը, և նրանք արդեն որերորդ Ժամն էր բակից բակ էին անցնում, փողոցից փողոց ու նկարահանում այս նորօրյա Սոդոմ Գոմորը: Բակերում ու փողոցներում ցրված- թափված էին գրտնակ ու խմորի տաշտ, կաթսա ու ափսե, կճուճ ու կարպետ, ճոճք ու ինքնաեռ, բուրդ ու սանդերք, ու երեխայի խաղալիքներ, խաղալիքներ... Ուղղաթիռը չկար, փոխարենը գյուղի վրա թևածում էր սիրտ քրքրող վայնասունք: Տեսախցիկը փակում էր բուլղարուհու դեմքը, մարդիկ նրա դեմքի արտահայտությունը չէին տեսնում, բայց նկատո՞ւմ էին, թե՞ չէին նկատում, որ նրա ատամների մեջ սեղմած շուրթերից արյուն է հոսում: Բուլղարուհին խոշոր պլաններ վերցնելիս տեսնում և հասկանում էր իրեն ուղղված հայացքների իմաստը, ոմանք կշտամբող էին, ոմանք գլխիկոր, ամոթահար... Ու բոլորը՝ լուռ: Մտամոլոր մարդկանց ու անասունների վտակները փողոցների հետ ոլոր-մոլոր տալով շարժվում, դուրս էին գալիս գյուղից, միանում իրար, դառնում գետ ու այդ ծանրաքայլ, հառաչանքով լեցուն գետը գյուղից ելնող միակ ճանապարհով շարժվում էր դեպի Վերինշեն: Արևամուտին բուլղարուհին հանկարծ իրար անցավ, արագ շարժումներով ինչ-որ բաներ էր անում տեսախցիկի հետ, որ Տիգրանը չէր հասկանում:

– Ի՞նչ է պատահել...

– Մարտկոցները նստեցին: Պիտի մի տուն մտնենք, քանի չեն կողպել, գնացել՝ լիցքավորենք:

– Չի ստացվի,– ասաց Տիգրանը:– Գյուղի ենթակայանը պայթեցրել են:

– Ո՞վ է պայթեցրել...

– Զորքը, էլ ո՞վ...

Բուլղարուհու ծնկները թուլացան, նա դանդաղ առաջ գնաց, փլվեց դիմացի տան դարպասի մոտ դրված հսկայական քարին, գլուխն առավ ափերի մեջ, մնաց-մնաց, լեզվով անցավ շուրթերի վրայով,

– Արյուն է գալի՞ս...

– Մի քիչ: Կչորանա՝ կանցնի:

– Մոտիկում որտե՞ղ էլեկտրականություն կա:

– Ամենամոտիկը Վերնիշենն է:

– Քանի՞ կիլոմետր կլինի...

– Ճանապարհով՝ քսան, անտառով՝ յոթ-ութ: Բուլղարուհին խայթվածի պես վեր թռավ.

– Անտառով գնացինք:

– Ո՞ւր, է՞, ուր...

– Ուր էլեկտրականություն կա:

– Չեմ կարող: Ես իրավունք չունեմ:

Բուլղարուհին թափ տվեց ձեռքն ու գնաց: Տիգրանը նայեց նրա հետևից, նայեց.

– Թու,– զայրացած թքեց և վազեց:

***

Ուշ երեկոյան հետախուզության ուղարկված զույգերը եկան:

– Չկան,– զեկուցեցին առանձին-առանձին: Բուլղարուհուն ու Տիգրանին էին փնտրում: Պետք է նաև պարզեին՝ ինչ վիճակ է գյուղում:

– Տուն առ տուն՝ մեկ-մեկ ստուգե՞լ եք...

– Ստուգել ենք, չկան:

– Ժողովուրդը մնացե՞լ է...

– Քսանհինգ տուն՝ հազիվ: Լուսադեմին կգնան: Մանր երեխեք կան՝ գիշերով վախենում են:

Դասասենյակի լուսամուտները վարագուրված էին, սեղանին ճրագն էր՝ թռթռացող լույսով, ջոկատի տղերքը շարվել էին պատերի տակ, փռել տարածել ոտքերը, որը ծխում էր, որը գլուխը պատին հենած, ննջում: Ջիվանն ու Դավիթը նստած էին սեղանի մոտ:

– Բուլղարուհին փախավ, - խախտեցին լռությունը:

– Բա Տիգրա՞նը...

– Ռազգավորչիկի,– ձայնը խստացրեց Ջիվանը, մի պահ սպասեց:– Երկուսը պոստում են: Էստեղ քսան հոգի ենք: Տասը առաջին `տանն է դիրքավորվում, տասը՝ երկրորդ: Առաջին տանը հրամայում է Դավիթը, երկրորդում ես կլինեմ: Հիմա գնացեք ու քնեք, վաղը ծանր օր է լինելու:

Տղաները գնացին: Դավիթը գրպանից բլոկնոտ ու գրիչ հանեց և թղթին կքված, գծելով, ջնջելով նրանք նորից քննարկեցին վաղվա ռազմական գործողությունների պլանը: Պլանը պարզ էր, նախ պետք է փոխեին իրենց գտնվելու վայրը, որովհետև այն հաստատ թշնամուն հայտնի էր և կարող են տանկերից մի կրակոցով իրենց ջարդուցրիվ անել: Դավթի հետ միասին նախապես ընտրել էին իրարից ոչ հեռու գտնվող քարե պարիսպներով, քարե ամուր պատերով, դպրոցին մոտիկ երկու տուն: Երկու տարբեր տների ընտրությունը պատահական չէր, մարտն ընդունելիս թշնամին ստիպված պիտի լիներ ուշադրությունը սևեռել երկու տարբեր կետերի վրա, ցրել ուժերը: Իսկ մարտ ընդունել նրանք չէին ուզում: Ջիվանն ու Դավիթը համոզված էին, որ թշնամին շարժվելու է ուղիղ դեպի դպրոցը, և իրենք կողքից անսպասելի հարձակումով կկարողանան գերել զրահամեքենայի գոնե մի անձնակազմ ու թշնամուն թելադրել իրենց պայմանները: Պայմանը՝ հեռանալ գյուղից և բնակիչներին հնարավորություն տալ վերադառնալու իրենց տները:

***

Գիշերվա չորսին բուլղարուհին ու Տիգրանը գյուղ մտան, գնացին դպրոց, ջոկատը չգտան, մտան մի դասարան, մեջքները հենեցին պատին, տարածեցին ոտքերն ու քնեցին: Առաջինն արթնացավ բուլղարուհին, նայեց ժամացույցին՝ յոթն անց էր քսանչորս րոպե:

– Տիգրան,– շշնջաց,– Տիգրան...

Տիգրանը խարխափելով գտավ ավտոմատը ու նոր բացեց աչքերը:

– Մերոնք չեկա ն...

– Չեկան:

– Նրանք, ախր, մնալու էին: Կարո՞ղ է՝ գյուղացիների հետ փախան...

– Չգիտեմ: Բարձրանանք կողքի բլուրը, ես պետք է զորքի մուտքը տեսագրեմ:

– Ախ բուլղարուհի, ախ բուլղարուհի... Ինձ կրակը գցեցիր:

Բուլղարուհին չպատասխանեց, ելավ, գործնական քայլերով առաջ ընկավ: Տիգրանը փնթփնթալով գնաց նրա հետևից: Բլրակից, որ ընկած էր զորքի և դպրոցի միջև, ամբողջությամբ երևացող գյուղը և կար և չկար: Ոչ մի երդիկից ծուխ չէր բարձրանում: Առանց շարժումի ու անկյանք էր գյուղը: Ամպերն իջել, հպվել էին դիմացի սարն ի վեր ձգվող անտառի կատարին ու արածող հոտի պես դանդաղ տեղափոխ էին լինում: Հեռու հեռուներից եկավ հասավ կովի բառաչը: Տիրո՞ջն էր կորցրել, թե՞ հիվանդ-հաշմված էր՝ փախչելիս չէին վերցրել: Կովի բառաչյունը անկյանք, անարձագանք գյուղում թխպոտ երկնքի տակ, տխուր էր ու սարսափազդու:

– Ծարժիչի ձայն եմ լսում...

– Մտնենք կողքի անտառը, բուլղարուհի, անտառից կնկարես:

– Ինձ մի սովորեցրու,– զայրացավ բուլղարուհին և գուցե էլի բաներ ասեր, բայց կրակոցը լռեցրեց նրան: Կրակում էին հատ-հատ, ընդհատումներով:– Նշանառու է խփում, նա նշանակետ ունի...

Նորից կրակեցին, բուլղարուհին տեսախցիկն այս ու այն կողմ ուղղեց և նկատեց, թե ինչպես է մեկը սողում դպրոցի երկայնքով: Նա կադրը մոտեցրեց ու կանչեց,

– Հրամանատարն է: Նրանք չեն փախել, հրամանատարն է:

Դարձյալ կրակեցին: Ջիվանը սողաց, հասավ շենքի վերջը, սկսեց շենքի լայնքով սողալ ու քիչ անց անհետացավ շենքի հետևում: Նշանառուն դադարեցրեց կրակը:

– Դպրոցում, ախր, մարդ չկա,– ասաց Տիգրանը: – Նա դպրոցում ի՞նչ էր անում:

– Մեզ էր փնտրում,– ասաց բուլղարուհին ու տեսա-խցիկի միջից տեսավ, թե ինչպես Ջիվանը վազքով անցավ դպրոցից երկրորդ տունն ընկած տարածությունն ու անհետացավ տան մեջ:

– Իրենց տեղը մատնեց,– տեսախցիկն իջեցնելով՝ գլուխն օրորեց բուլղարուհին, լռեց մի պահ:– Բայց, հո չէր կարող անընդհատ դպրոցի հետևում մնալ:

Ճարժիչի ձայնը կամաց-կամաց մոտենում էր:

– Զրահատեխնիկա է գալիս,– ասաց բուլղարուհին: – Իսկ նրանք չեն լսում...

– Գար՝ տղերքը ազդանշան կտային,– ասաց Տիգրանը:– Հրթիռ տեսա՞ր...

– Հրթիռո՞վ է,– բղավեց բուլղարուհին:– Ջոկատը– կշրջապատեն :

Նրանք չգիտեին, որ պահակակետի երկու անփորձ ջահելները վախեցան ազդանշան տալ՝ չցուցադրելու համար իրենց տեղը ու քաշվեցին անտառ:

– Գնանք անտառ, բուլղարուհի: Քանի ուշ չի՝ գնանք անտառ...

– Բռիր, նապաստակ, դու անտառ թռիր,– ասաց բուլղարուհին ու վազեց բլուրն ի վար:

Բուլղարուհու ու Տիգրանի մուտքը շատ էր անսպասելի:՝ Դավիթն ու Ջիվանը տղաներից քիչ կողք քաշված խորհրդակցում էին, երբ դռան մեջ հայտնվեցին նրանք: Բուլղարուհին խոշորացրած աչքերով հևում էր:

– Այ քեզ բուլղարուհի,– ժպտաց հրամանատարը: - Իսկ մենք մտածում էինք՝ փախաք...

– Զրահատեխնիկան գալիս է,– ցածրաձայն ասաց բուլղարուհին:– Նրանք ձեզ կշրջապատեն...

– Ինչո՞ւ հրթիռ չկա,– գոռաց հրամանատարը:

– Չգիտեմ:

– Տեղերում,– կանչեց հրամանատարը, դարձավ Դավիթին:– Անելիքդ գիտես:

– Գիտեմ:

– Իրադրությունը փոխվելու դեպքում իրար իմաց ենք անում:

Դավիթն ու Ջիվանը գրկախառնվեցին ու Դավիթը արագ քայլերով գնաց: Երևաց բլուրն ի վար սահող առաջին տանկը: Բուլղարուհին մոտեցավ լուսամուտին, բարձրացրեց տեսա խցիկը:

– Չեղավ,– բուլղարուհուն մոտեցավ հրամանատարը: – Խցիկդ նկատեցին՝ տանկերից մի թանի հարվածով մեզ ցաք ու ցրիվ կանեն: Իսկ էնպես՝ նրանք պիտի ուզենան մեզ գերի վերցնել:

– Ես պետք է նկարահանեմ:

– Պետք է աննկատ մնաս:

Բուլղարուհին քաշվեց լուսամուտի անկյունն ու այնտեղից սկսեց տեսագրել: Առաջին տանկի հետևից գալիս էր երկրորդը ու նրանց հետևից՝ հետևակի երեք զրահամեքենա: Տանկերը քիչ էլ մոտեցան, կանգնեցինք առաջին տանկը կրակեց դպրոցի շենքի վրա:

– Սկսվեց,– ասաց հրամանատարը:

Տանկից մի անգամ էլ կրակեցին: Դպրոցի շենքը հին էր, հողաշեն, նոր սկսել էին կառուցել՝ կիսատ էր մնացել: Երբ փոշին տարածվելով նստեց, ինչ-որ մնացել էր դպրոցի շենքից, բուլղարուհին հսկայական գերեզմանաթմբի նմանեցրեց: Երևաց ինչպես տանկի լյուկը բացվեց, մեկը գլուխը հանեց, հեռադիտակն ուղղեց դպրոցի շենքին ու քիչ անց կրկին անհետացավ:

– Համոզվեցին, որ դպրոցում մարդ չկա,– ինքն իր հետ խոսեց հրամանատարը:

– Հիմա թեքվելու են մեր կողմը:– Նա շրջեց գլուխն ու ձայն տվեց:– Առանց հրամանի՝ չկրակել:

Ասես Ջիվանն էր թելադրում թշնամու գործելակերպը, իսկապես թեքվեցին, իրար հետևից գյուղ մտան, մի պահ անհետացան տեսադաշտից, լսվում էր միայն մոտեցող հռնդյունը, ու ապա երևաց առաջին տանկը:

– Դավիթ ջան, մենակ չվռազես,– նորից խոսեց հրամանատարը:– Հիմա մեկն աջ է թեքվելու, մեկը՝ ձախ, քիչ առաջ են գնալու, որ ԲՄՊ-ներին տեղ բացեն... Էդպե՛ս, բա՞ ոնց: Հենց առաջին ԲՄՊ-ն մտավ խաչմերուկ՝ պիտի խփես:– Նա սպասեց, սպասեց ու գոռաց.– Խփիր...

Նրանց միջև, իհարկե, ռադիոկապ չկար, նրանք իրար ձայն չէին լսում, բայց Դավիթը ճիշտ ժամանակին խփեց: Տանկից ծուխ դուրս եկավ: Երկրորդ կրակոցով Դավիթը մյուս տանկը խփեց, ու ապա հարվածեց հետընթացքով փախչել փորձող զրահամեքենային: Գյուղական նեղ խաչմերուկը խցանվեց:

– Ցավը~դ տանեմ,– բղավեց Ջիվանը, պայծառացավ: – Ես չէի դիմանա, շուտ կխփեի, այ թե ներվեր ունես, Դավի թ ջան...

Տանկերից ու զրահամեքենայից անձնակազմերը դուրս թափվեցին:

– Կրակ,– կանչեց հրամանատարը, և երկու տներից ավտոմատներն ու ձեռքի գնդացիրը ձարձատեցին:

Վերջին զրահամեքենան հետընթացքով փախավ, մյուսին Դավիթը երրորդ կրակոցից կանգնեցրեց:

– Էս ինչ ենք անում, տղերք ջան...

Տղերքս իսկապես անկում էին: Տանկերից ու զրահամեքենաներից դուրս ճողոպրածներին կրակահերթեր ով ստիպում էին ծեփվել գետնին և ով կենդանի էր՝ փորձում էր սողալ դեպի այգու պարիսպը, պարսպով պատնեշվել:

Բուլղարուհին մի լուսամուտից մյուսն էր վազում, տեսագրում էր մարտը: Թշնամին, իհարկե, պատասխանում էր, բայց նրանց կրակոցներն ու այգի նետած նռնակները միայն տան ու տանից ոչ հեռու կառուցված մառանի ապակիներն էին փշրում: Մի նռնակ ուղիղ տան մոտ պայթեց:

– Այգի են մտել,– մի պահ կրակելը դադարեցրեց հրամանատարը:– Երեք հոգի՝ ներքև, երկուսը՝ լուսամուտների մոտ, մեկը՝ դռան...

Տիգրանն ու նրա տարիքին երկուսը իջան առաջին հարկ: Բուլղարուհին՝ նույնպես: Ներքևից լսվեց ավտոմատների ճարճատյունը: Մարտով ընկած՝ նրանք չնկատեցին, թե ինչպես տանկն անտառի փեշով առաջ եկավ, կանգնեց այն բլրակին, ուր առավոտյան Տիգրանն ու բուլղարուհին էին կանգնած ու սկսեց կրակել: Տղաները հետ ցատկեցին, կպան տան միջնապատին: Երբ փոշին նստեց, հրամանատարը թքեց բերանի կեղտը, թևքով սրբեց քրտինքից ու փոշուց գոյացած դեմքի կեղտն ու նայեց պատերին գոյացած խոռոչներին, մեկը՝ լուսամուտից քիչ վերև էր, մյուս երկուսը՝ հատակից քիչ բարձր:

– Ես էս տունը շինողին մեռնեմ,– ասաց Հրամանատարը:– Ի՞նչ կասես, Վարդան...

– Որ տանկից են խփում՝ գերի վերցնելուց ձեռք քաշեցին,– ասաց Վարդանը, ճակատից հանեց, քամեց աչքերը քրտնքից պաշտպանող լենտը, կրկին ճակատին անցկացրեց:– Պինդ տուն են սարքել...

– Բա էլ ո՞ւր ենք կանգնել...– հրամանատարը գնաց, դիրք գրավեց առաջին խոռոչի մոտ:– Իսկը... Ոնց որ պատվեր տված լինեինք...

– Չտեսնված է,– ձայն տվեց մյուս խոռոչի մոտից Վարդանը:

Նռնակը պայթեց տան դռան մոտ: Տանկի կրակոցներից առաջացած փոշուց ու շփոթից օգտվելով, այգի էին թափանցել:

– Էս ինչի՞ չեք կրակում,– բղավեց հրամանատարը, սպասեց մի քանի վայրկյան, ապա վեր թռնելով՝ վազքով ցած իջավ: Տիգրանն ու նրան հասակակից մյուս երկուսը քաշվել էին տան անկյունն ու պպզել: Բուլղարուհին լուսամուտի անկյունից շրթունքները կրծոտելով տեսագրում էր:

– Ինչի՞ եք պպզել,– կանչեց հրամանատարը:

– Չոքերս դողում են,– ասաց Տիգրանը,– չեմ կարողանում կանգնել:

– Ես իմացա տունը փլվեց գլխներիս,– ասաց մյուսը, շարունակեց ձեռքի ափերը գլխին պահել:

– Սա փլվող տո՞ւն է,– զայրացավ Ջիվանը:– Թե՞ լցրել եք տակներդ, չեք կարողանում կանգնել:– Նա ձեռքը պարզեց բուլղարուհու կողմը: Էս կնկանից ամաչեք: Մայրը ուներ մի մինուճար որդի... Երգիր բուլղարուհի, երգիր, հասկանամ՝ սրանք արծի՞վ են, թե՞ ագռավ...

Բուլղարուհին երգեց: Հանկարծ հայտնված երգն էր երևի պատճառը՝ կրակոցները մի պահ դադարեցին:

– Երգիր, բուլղարուհի ջան, երգիր, – կողքի տանից լսվեց Դավիթի ձայնը:

– Երգիր, բուլղարուհի,– կանչեցին վերևից ու կրակեցին:

Տիգրանն ու մյուս երկուսը ելան, վազեցին պատուհանների մոտ ու սկսեցին կրակել:

– Երգիր, բուլղարուհի,– գոռում էին ու կրակում:

– Իմալա մայկա էդըն մի լեդո,– երգում էր բուլղարուհին և մի լուսամուտից մյուսն անցնում:

Ոչ ոք չհաշվեց, թե քանի անդամ կրկնվեց երգը: Բլրից տանկը նորից սկսեց կրակել:

***

Բուլղարուհին հետո պիտի ասեր, որ մարտը շարունակվեց երեք ու կես ժամ: Իսկ հիմա, երբ հասկացան, որ դիմացն այլևս թշնամի չի մնացել, երբ տեսան փամփուշտների դատարկ ցինկե արկղերը և հասկացան, որ զինամթերքը վերջանալու վրա է ու նկատեցին դեպի գյուղն առաջացող վեց զրահամեքանաները՝ Ջիվանը կապավոր ուղարկեց Դավթի մոտ.

– Շտապ հեռանում ենք երրորդ ճանապարհով: Նախավերջին տան մոտ սպասում ենք: Կրկնիր:

Կապավորը կրկնեց ու գնաց: Քիչ անց սուլոց լսվեց: Առաջին տան հետնամուտքից նախ Դավիթը դուրս ելավ, ապա տղաներր, վազքեվազքով անցան տների միջով, շրջանցեցին դպրոցը ու կորան Ջիվանի տեսադաշտից:

– Տաս հոգի,– թեթևացած շունչ քաշեց հրամանատարը:– Աստծուն փառք՝ վիրավոր էլ չունենք,– ասաց, դարձավ բուլղարուհուն, որ տեսագրում էր նրանց նահանջը: – Գնա, բուլղարուհի...

– Իսկ դո՞ւք...

– Ես վերջինն եմ:

– Ես ձեզ հետ կգնամ:

Բուլղարուհին կարծում էր, որ հրամանատարը իրեն կստիպի և մտքում պատրաստի առարկություն ուներ, բայց հրամանատարը շրջեց հայացքն ու ասաց.

– Տիգրան:

Տիգրանը գնաց: Փոքրիկ ընդմիջումներով մյուսները գնացին: Բուլղարուհին նկարահանում էր:

- Մնացինք մենք,– ասաց հրամանատարը:– Ատրճանակ տա՞մ...

– Ատրճանակն ի՞նչ եմ անում,– տեսախցիկն իջեցրեց բուլղարուհին:

– Մենք նրանց ձեռքը պիտի կենդանի չընկնենք...

– Ատրճանակի հետ ես վարվել չգիտեմ,– շփոթվեց բուլղարուհին, ապա շփոթմունքը զսպեց:– Նռնակ տվեք: Օղակը մի կերպ կձգեմ:

Նա նռնակը վերցրեց, տեղավորեց կաշվե բաճկոնի գրպանում:

– Գնա՞մ, հրամանատար...

– Գնա:

Բուլղարուհին ձեռքը պարզեց, ամուր սեղմեց Ջիվանի ափը, նայեց աչքերին, նայեց ու շշնջաց.

– Արծիվ...

***

Ջոկատն առանց միջադեպի անտառ մտավ: Երբ քիչ խորացան՝ հրամանատարը Դավթի հետ ինչ-որ բան խորհրդակցելուց հետո դադարի հրաման տվեց:

– Կոլյա, Վարդան, Ջավեն՝ աջ, ձախ, վերև՝ ժամապահ եք:

Երեքը խմբից անջատվեցին, գնացին իրենց ուղղություններով: Մյուսները նստեցին, հենվեցին ծառերի բներին, կոճակ-կապանքներից ազատեցին կրծքերը և աչքերը գոցելով՝ քրտնած դեմքերը այս ու այն կողմ շրջեցին, փորձեցին քամի որսալ: Քամի չկար: Թուխպերը ցածրացել, կիտվել էին անտառի վրա, խոնավացրել օդը ու դրանից քրտինքն ավելի էր շատանում :

– Ո՞ւր էր՝ անձրև գար, - ասացին մի երկուսը:

Հրամանատարից ոչ հեռու նստած բուլղարուհին անհանգիստ էր: Նա ձգեց, մինչև ծնոտը հասցրեց կաշվե բաճկոնի շղթան, կծկվեց ու սկսեց ցնցվել:

– Ի՞նչ է պատահել,– հարցրեց հրամանատարը:

– Մրսում եմ,– ատամ-ատամի զարկեց բուլղարուհին:

– Մրսո՞ւմ...

– Քո հորդ տունը շինվի,– ասացին կողքից, ժպտացին;:

– Երևի վախս է միջից դուրս գալիս,– մեղավոր ժպտաց բուլղարուհին:– Դողում եմ...

– Արաղն ո՞ւմ մոտ է:

Տղաներից մեկը ուսապարկից հանեց օղու շիշը, ձգվեց, պառկելով հանձնեց հրամանատարին: Հրամանատարը մոտեցավ բուլղարուհուն, պպզեց դիմացը, օղի լցրեց մատնոցաչափ կափարիչի մեջ.

– Խմիր: Մենակ խմելուց հետո նախ արտաշնչիր, հետո շնչիր: Պա՞րզ է...

– Պարզ է:

Բուլղարուհին խմեց, երկար արտաշնչեց: Հրամանատարը քիչ սպասեց.

– Անցնո՞ւմ է...

– Դեռ ոչ:

– Մեկն էլ տա՞մ...

– Տուր: Ոնց որ օգնում է,– ժպտաց բուլղարուհին:

– Բա ո՞նց չի օգնի,– ասացին կողքից:– Ղարաբաղի արաղը հազար ցավի դեղ է:

Քիչ անց բուլղարուհին արձակեց բաճկոնի շղթան, թաշկինակ հանեց, չորացրեց ուսերին փռված մազերի տակ մնացած ծոծրակը: Ցածրաձայն սուլոց- ազդանշան լսվեց, ապա երևաց

Վարդանը: Նա մոտեցավ, բան շշնջաց հրամանատարին, հրամանատարը ելավ գնաց Վարդանի հետ: Ջոկատից հիսուն մետր հեռավորության վրա նստած էին երկուսը: Նրանցից մեկը մոտեցող հրամանատարին տեսնելով, դեմքն առավ ափերի մեջ, սկսեց հեկեկալ, մյուսը՝ շիկամազը, ծնոտը հենեց բռունցքներին ու հայացքը մի կետի՝ անշարժացավ: «Պոստի» տղերքն էին, հազիվ 18–19 տարեկան: Հրամանատարը կանգնեց նրանց դիմաց, լռեց, լռեց ու ծանր հոգոց հանեց.

– Էդ լաց լինելդ ի՞նչ է...

– Չգիտեմ,– հեկեկաց տղան: – Ինքն իրեն է ստացվում...

– Տեսա՞ք, որ տեխնիկան գալիս է:

– Տեսանք,– ասաց մյուսը և հայացքը պահեց անշարժ:

– Աչքերիս նայիր,– խստացավ հրամանատարը:

– Ամաչում եմ:

– Ինչի՞ ազդանշան չտվեցիք...

– Վախեցանք մեր տեղն իմաց անել: Ախր նրանք շատ էին մոտիկ:

– Ու փախաք անտա՞ռ...

– Անտառ: Մտածեցինք դուք էլ կփախչեք, տեխնիկան շատ է:

– Ու մենք էլ անտառ փախանք,– քմծիծաղ տվեց Ջիվանը:

– Չփախաք: Կռիվ տվեցիք:

– Ինչի՞ չեկաք, որ դուք էլ կռիվ տայիք...

– Մտածեցինք՝ շրջապատած կլինեն:

– Մի քիչ շատ չե՞ք մտածել,– զայրացավ հրամանատարը:– Ինչի՞ չէիք ռադներդ քաշում ու գնում...

– Սրտներս ձեզնից չէր կտրվում,– բռունցքները ծնկներին զարկելով մղկտաց հեկեկացողը:

Հրամանատարը ծխախոտ վառեց, ծխախոտի տուփն ու լուցկին գցեց նրանց դիմաց: Երկուսն էլ իսկույն ծխեցին: Անձրևի առաջին կաթիլները կտկտացին ծառերի տերևներին:

– Դուք ամենաճիշտ տեղով եկաք,– վերջապես լռությունը խախտեց լաց լինողը, հինգ հարյուր մետր ներքև, ոլորքին ԲՄՊ կա կանգնած:

– ԲՄՊ-ն էնտեղ ի՞նչ է անում...

– Երևի գնում էին փախչողներին թալանելու: Դուք որ սկսեցիք՝ կանգնեցին, մնացին,

– Նրանցից քիչ հեռու խփված ԿՐԱԶ կա, Կաբինում երեք մարդ սպանված, ընկած են: ԲՄՊ-ից խփեցին,– ասաց շեկլիկը, – Վարորդն է ու երկու պառավ:

– Վարորդի հերն ու պառավների տղան անտառում են: Սպասում են ԲՄՊ-ն գնա, որ իրենց մեռելներին հանեն, թաղեն, – ասաց մյուսը:

Հրամանատարը կարծես ուշադրություն չդարձրեց նրանց խոսքերին, ինքնամփոփ, տխուր հայացքով տմբտմբացրեց գլուխը:

– Վերինշեն եք գնալո՞ւ, հրամանատար...

– Ընդունենք՝ Վերինշեն,

- Գիշերով պիտի գնաք: Էս կողմից մի ջոկատ անցավ:

Թուրքեր էին: Անտառի կածաններին դարան կլինեն մտած:

– Ի՞նչ գիտես՝ թուրքեր էին...

– Թուրքերեն էին երգում: ՕՄՕՆ-ն է:

– Ըհը:

Հրամանատարը էլի հարցեր ուներ տալու, բայց գյուղից կրակոցներ լսվեցին: Նա քիչ առաջ գնաց, կանգնեց, հեռադիտակը մոտեցրեց աչքերին: Տանկից, զրահամեքենաներից, կրակ էր, որ թափվում էր իրենց թողած, ակերի վրա: Ջիվանը հեռադիտակն իջեցրեց, լարվեց մի պահ ու բան որոշեց.

– Գնացինք:

Նրանք արագ քայլերով մոտեցան ջոկատին:

– Մարտի պատրաստ, – հրամայեց Ջիվանը: Ջոկատը ոտքի ելավ:

– Մոտերքում ԲՄՊ կա: Քանի էնտեղ աղմուկ է,– հրամանատարը գլխով ակնարկեց գյուղը, – մենք սրա հարցը պիտի լուծենք... Ցույց տվեք,– ասաց նա «պոստի» տղաներին: Տղաներն առաջ ընկան: Գնում էին մեկ-մեկ, աշխատում քայլերը անաղմուկ, անլսելի դարձնել: Շուտով ճանապարհի եզրին կանգնած զրահամեքենան երևաց: Նրանից քիչ հեռու, ճանապարհից գոտս ընկած, թեքված, կանգնած էր ԿՐԱԶ-ը:

Զրահամեքենայի անձնակազմը բարձրացել նստել էր անտառի փեշին: Ոմանք ծխում էին, ոմանք հեռադիտակը ձեռքից-ձեռք փոխանցելով դիտում էին գյուղում մղվող կռիվը:

– Գերի չվերցնե՞նք,– հրամանատարի ականջին շշնջաց Դավիթը.

– Էսքանին ո՞նց ենք հետներս տանելու: Ասում են՝ գարաններ են դրել: Կողքից ու մեջքից հարձակումը շատ էր անսպասելի: Նույնիսկ չհասցրեցին զենք վերցնել:

Ջոկատի տղաները արագ-արագ հավաքեցին սպանվածների զենքերը ու անտառ մտան: Անտառում երկուսը ելան նրանց ընդառաջ: Մեկը տարիքով էր, մյուսը՝ 40-ին մոտ:

– Ձեզ Աստված ուղարկեց... Աստված ուղարկեց, - ծնոտը դողդողացնելով աչքերը թրջեց տարիքավորը:

Մյուսը լուռ գլխահակ կանգնած էր:

– Տրակտորիստը չե՞ս,– հարցրեց հրամանատարը: Տրակտորիստը անսպասելի կռացավ, բռնեց համբուրեց հրամանատարի ձեռքը:

– Էդ ինչի՞ համար...

– Ներող կլինես... ներող կլինես,– կրկնում էր տրակտորիստը:

– Սպանվածներն ովքե՞ր են:

– Ծնողներս են ու սրա տղան: – Օգնե՞նք թաղեք,,.

– Պետք չի,– ասաց տարեցը:– Կտանենք անտառ, կդնենք, լաց կլինենք վրաները ու հանգիստ կթաղենք:

Հրամանատարը ձեռքով մոտ կանչեց Դավթին, ականջին բան ասաց:

– Գնացինք, բուլղարուհի,– ասաց Դավիթը:

– Ո՞ւր...

– Կառքով՝ Վերինշեն:

– Ես ջոկատի հետ կգնամ,– բուլղարուհին նայեց հրամանատարին:

– Սրան համոզել չի լինի,– ասաց հրամանատարը: – Դուք գնացեք:

– Վարդան, Կոլյա,– ձայն տվեց Դավիթը,– գնացինք:

Նրանք գնացին, մտան զրահամեքենա, ու զրահամեքենան շարժվեց Վերինշենի ուղղությամբ: Ավելի ուշ, երբ անտառում խորացած մթնելուն էին սպասում, բուլղարուհին հրամանատարին ասաց.

– Ձեր արածը սպանդ էր:

– Սպանդը կլիներ, եթե ԲՄՊ-ն հասներ փախստականներին,– խոժոռվեց հրամանատարը:

***

Գիշերով գնացին: Մանր անձրև էր մաղում: Շարժվում էին դադարներով, հետախույզներ էին ուղարկում, ստուգում տեղանքը ու նորից անաղմուկ շարժվում: Միակ միջադեպն այն եղավ, որ բուլղարուհու մազերը խճճվեցին մացառներին ու նա ստիպված եղավ դանակով կտրել մազերը: Հրամանատարը ձգում, պահում էր մացառի ճյուղը, բուլղարուհին՝ կտրում: Մութուլուսին ջոկատը հասավ Վերինշեն, միացավ տեղի պաշտպանական ջոկատին:

– Ինձ հարկավոր է հասնել Երևան, մոնտաժել ժապավենները և ուղարկել ուր հարկն է,– ասաց բուլղարուհին:

– Հենց հիմա՞,– զարմացավ ընդհանուր հրամանատարությունն իր վրա վերցրած Ձիվանը:

– Հենց հիմա:

Մի քանի րոպեից մեքենան պատրաստ էր: Բաժանվելիս բուլղարուհին գրկեց, համբուրեց առանձին-առանձին ջոկատի տղաներին ու հայերեն ասաց.

– Ցավդ տանեմ...

Մեքենան բուլղարուհուն տարավ Գյուլիստան, ու այնտեղից նա վիրավորներ տեղափոխող ուղղաթիռով հասավ Երևան:

Վերինշենի պաշտպանները սպասում էին, որ սովետական զորքն ու ադրբեջանական ՕՄՕն-ը նախորդ օրվա խայտառակությունից հետո կատաղած վրա կտան: Բայց այդպես չեղավ: Զորամասի և ՕՄՕն-ի հրամանատարությունը նախ ռադիոծածկագիր ուղարկեց կենտրոն, ուր ասվում էր.

1. Բնակչությունը ինքնակամ, ազատեց գյուղը: Բնակչության կողմից հայտարարությունը ստորագրված է:

2. Գյուղ մտնելիս դիմադրություն եղավ հայկական էքստրեմիստների կողմից: Մեր կորուստներն են՝ 2 տանկ, 3 ԲՄՊ, 41 սպանված: Էքստրեմիստները ջախջախվեցին գլխովին, զոհերի թիվը՝ 103:

3. Խնդրում ենք համալրել հետևակն ու զրահատեխնիկան՝ Վերինշեն շարժվելու համար:

Միայն իրիկնադեմին զորքը հայտնվեց գյուղի գլխավերևում ու դիրքավորվեց:

***

Հեռուստակենտրոնում բուլղարուհուն մոնտաժի համար կարողացան միայն գիշերային ժամեր հատկացնել: Նա մոնտաժելիս մինչև լուսաբաց կադր առ կադր վերապրեց և իմաստավորեց այն ամենը, ինչ մեկ օր առաջ տեղի ունեցավ իրենց հետ:

Իսկ Վերինշենում նույն այդ գիշերը որոշեցին մարտն ընդունել Գյուղից դուրս: Քանի որ դիրքերի կողմից տեղահանության մասին առաջարկություն չեղավ, հասկացան, որ առանց նախազգուշացման հարձակվելու են տեղի բնակիչներով ու փախստականներով գերհագեցված գյուղի վրա: Իսկ դա չէր կարելի թույլ տալ: Ջոկատը գիշերով դիրքավորվեց գյուղից քիչ հեռու: Ջիվանը հրամանատարությունը հանձնեց Դավթին և Վարդանի, Կոլյայի հետ նռնականետներր վերցրած, նրանք դիրքերից մի կիլոմետրի չափ առաջ գնացին՝ զրահատեխնիկայի գրոհը կասեցնելու համար: Գրոհն սկսվեց վաղ առավոտյան: Երեք տանկ և չորս զրահամեքենա առաջ շարժվեցին: Ջիվանը, Վարդանը, Կոլյան նրանց թողեցին մոտենալ, և երբ նրանց միջև ընկած տարածությունը կրճատվեց, դարձավ 100 մետրի չափ, սկսեցին նռնականետներից կրակել :

- Երգիր բուլղարուհի, – կանչում էին ու զարկում: Գուցե բուլղարուհին լսո՞ւմ էր նրանց կանչը, ի՞նչ իմանաս: Նույն այդ պահին նա մոնտաժում էր տեսաժապավենը և արտասուքն աչքերին քթի տակ մրմնջում. – Իմալա մայկա էդրն մի չեղո...

Վերինշենում ջոկատի դիրքերից հաշվեցին խփված 3 տանկ և 4 զրահամեքենա: Զրահատեխնիկայի գրոհը կասեցվեց, բայց ջոկատը չհասցրեց ուրախանալ: Մի քանի ականանետներից կրակով ծածկեցին Ջիվանի, Վարդանի, Կոլյայի դիրքերը, և տիրեց վաղորդյան խոր լռություն...